Գիրքը համացանցում է **տեղադրվել** Գրքամոլ Նախաձեռնության կողմից՝ «Նոր Նախագիծ Հայ Գրողների Համար» ծրագրի շրջանակներում:

Բոլորիդ կողմից սիրված «Գրքամոլ»-ը մեկնարկել է մի նախաձեռնություն, որի նպատակն է համացանցում էլեկտրոնային տարբերակով տեղադրել բոլոր այն գրքերը, որոնք սիրված են հայ ընթերցասերների կողմից և ցանկանում են դրանք ընթերցել նաև էլեկտրոնային տարբերակով: Ժամանակի ընթացքում մեր կողմից համացանցում կհայտնվեն բոլոր այն գրքերը, որոնք մինչ այս ձեզ համար եղել են դժվար ձեռքբերելի:

Գրքամոլը, ունենալով իր ուրույն տեղը ընթերցասերների հարթակում, իր առջև նպատակ է դրել հասարակության մեջ բարձրացնել սերը դեպի ընթերցանությունը, առաջացնել հետաքրքրություն դեպի դասական և արդի գրականությունը, և կոտրել բոլոր այն կարծրատիպերը, թե այսօրվա հայ իրականության մեջ ընթերցողներ չկան:

Սիրելի՛ ընթերցողներ, մենք շատ ուրախ կլինենք, եթե կլինեն մարդիկ, ովքեր կցանկանան օգնել մեզ այս հանրօգուտ գործում: *Էլեկտրոնային գրքերի պատրաստման և մեր կայքում դրանք տեղադրելու հարցում մենք չունենք որևէ շահ և չենք չհետապնդում որևէ եկամուտ*, բացի հայ և արտասահմանյան գրականությունը հայ ընթերցասերներին հասանելի դարձնելուց, և մենք բաց ենք բոլոր նվիրյալ ու օգնել ցանկացող մարդկանց համար: Եթե դուք ունեք լուսապատճենահանման սարքեր, և ուզում եք միանալ մեր կողմից ձեռնարկվող գործին, ապա գրեք մեզ grqamol@gmail.com հասցեով:

Շնորհակալություն, որ հետևում եք մեզ: Ցանկանում ենք բոլորիդ հաճելի ընթերցանություն:

**Գրքամոլ Նախաձեռնություն**
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Since 2012 © Grqamol. All Rights Reserved.

ԱՆԻ
ՄԻՐԶՈՅԱՆ

# Հայր



Անտարես

ԱՆԻ ՄԻՐԶՈՅԱՆ

# ՀԱՅԸ

Անտարես

**Միրզոյան Անի**
Հայը: Վեպ/Անի Միրզոյան:– Անտարես, 2021.– 168 էջ:

ISBN 978-9939-76-701-7

© Միրզոյան Ա., 2021
© Անտարես, 2021

# Նախաբան

Բարև, սիրելի՛ ընթերցող: Ես շատ քիչ մարդու եմ հանդիպել իմ կյանքում, ով գրքերի նախաբանը կարդում է: Ի դեպ, ես էլ չեմ կարդում: Այնուամենայնիվ, միգուցե դու այն կարդում ես: Նախապես նշեմ, որ ես պրոֆեսիոնալ գրող չեմ, սակայն գիրքը կարդալուց հետո, հուսամ՝ Դու ինքդ կարծիք կկազմես՝ կարելի է արդյոք այս դեբյուտային աշխատանքը համարել, իրոք, ստացված, թե ոչ: Գիրքը հիմնված չէ իրական պատմության վրա, բոլոր նկարագրված հերոսները և իրենց պատմությունները հորինված են, եթե կլինեն որոշ համընկնումներ, ապա դա զուգադիպություն է: Գիրքը կատակ ոճի մեջ չէ: Չնայած, բնավորությանս համաձայն, տեղ-տեղ կատակի երանգներ հաղորդել եմ. կարծում եմ՝ առանց դրա չի լինի: Գիրքը կարդալու ընթացքում կգտնես խորհելու շատ թեմաներ, որոնց վերաբերյալ կարելի էր առանձին գրքեր գրել, սակայն այդ կուտակված պոռթկումը խտացրել եմ մի գրքի ու մի ընդհանուր պատմության մեջ: Կարևորել եմ աններելին ներելու և մարդ մնալու դժվարին հատկությունը, ծնողին գնահատելու կարողությունը: Գրքում ամենաառանցքային դիլեմաներից է՝ հայրենիք, թե զավակ դիլեման: Ի՞նչ ենք հասկանում մենք հայրենիք ասելով: Դա զուտ բաժակաճա՞ռ է, դա զուտ բա՞ռ է

*սովորական, որ ուղղակի ասում ենք ու անցնում առաջ, թե՞ մենք իրոք գիտակցում ենք՝ ինչ է հայրենիքը, ինչ է ուզում նա մեզնից և ինչ է տալիս նա մեզ: Նրանում ապրել է պետք և ոտքի կանգնեցնել:*

*Պատմությունը շաղկապված է մեր իրողությունների հետ, այն սկսվում է 88-ի արցախյան շարժումով և ձգվում մինչև մեր օրեր: Որոշ դրվագներում նուրբ թելով շոշափվում է Հայոց ցեղասպանության թեման, նաև հայի և թուրքի հայացքների բախման միջոցով:*

*Սիրելի՛ ընթերցող, այս գրքում արտահայտած մտքերի հետ հնարավոր է՝ համաձայնվես, հնարավոր է՝ ոչ, հնարավոր է՝ հիանաս, հնարավոր է՝ բարկանաս, սակայն ամենագլխավորն այդ ամենում այն է, որ կսկսես մտածել: Իսկ ինձ հիմնականում հենց դա է պետք: Քանի որ գիրք լինի, թե ֆիլմ, պետք է ոչ թե զուտ էսթետիկ հաճույք պարգևի կամ ժամանցի ձև լինի սոսկ, այլ ստիպի մարդուն մտածել, ինչը շատ հաճախ մոռանում ենք անել կամ ավելի ճիշտ չենք սիրում անել հատկապես մենք՝ հայերս:*

# Գլուխ 1

88 թվականն էր... Ցույցեր, ցույցեր ու էլի ցույցեր: Արցախյան շարժում... Ազատության հրապարակը ողողված էր մարդկային հոծ բազմությամբ: Այս ժողովրդին ճնշել հնարավոր չէ. նրանք հաստատակամ են և անվախ: Ազգը ոտքի էր ելած, և ոչինչ չէր կարող նրան կանգնեցնել: Այդ ժամանակ գաղտնիք չէ, որ Խորհրդային Միությունը դժվար խնդիրների առաջ էր կանգնած: Կենտրոնական իշխանությունը չէր կարողանում առաջվա նման մի ճիպոտի հարվածով ամեն ինչ, ըստ սեփական պատկերացումների, իր տեղը գցել, ինչից էլ նյարդային ջղաձգումների մեջ էր: Խորհրդային իշխանությունը սիրում էր ամեն ինչ բռի մեջ պահել: Իսկ ժամանակի պահանջը արդեն սկսում էր հակառակ հոսանքը հանել հունից և շարել նրա դեմ՝ դիմադրելով ընդհանուր համակարգի՝ նախկինում լճացման ուղին բռնած ու այդօրեական ուշացած բարեփոխումների քաոտիկ, անորոշ դրսևորումներին: Խորհրդային Միությունը կարող էր շարունակել համառորեն ժամանակի սլաքները կանգնեցնել, բայց այն միակ բանն էր, որ ինչքան էլ ուզենար նրա ցանկությամբ չէ, որ շարժվելու էր կամ կկանգներ մեկ հրահանգով: Ժամանակի սլաքները չեն ենթարկվում ոչ մեկին:

Անարդարության շղարշը մեր ազգի անբաժան ուղեկիցն է եղել դարեր շարունակ: Հայ ազգը մաքառել է իր ինքնության պահպանման համար: Կիլիկյան թագավորության անկումից հետո, մոտ

6 դար չունենալով անկախ պետականություն, չի կորցրել ինքն իրեն. պահել-պահպանել է դիմագիծը, լեզուն, կրոնը, ավանդույթները: 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը վերապրած ազգն ենք. այդչափ դաժանությամբ բնաջնջում, քաղաքակրթական կոդի միտումնավոր ու հատուկ ծրագրված վերացում այն էլ սեփական բնօրրանում, Աստվա՛ծ իմ, ինչո՞ւ: Հարց, որի պատասխանը պիտի ինչի ոճրագործի շուրթերից, իսկ ոճրագործը, իր իսկա մասշտաբներով հանդերձ, այնքան թույլ է, որ ինքն իրեն հայելու մեջ նայել չի կարողանում: Դրա համար ուժեղ է պետք լինել իրականում, ոչ թե ձևական՝ սեփական «ես»-ին դրանում անընդմեջ համոզելու համար միայն: Հետևաբար թույլը նրանք էին, և ոչ թե մենք, որ մեր հարցերը լուծելու միայն այդ տարբերակը գտան, որը և կիրառեցին՝ համոզված լինելով, որ աշխարհը չի նկատի: Այո՛, իրավացի էին, աշխարհը չնկատեց. շարժվեց առաջ՝ ետ չնայելով: Նույն պետության մեջ էինք, նրանք մեզ պիտի պաշտպանեին, բայց չէ... կոտորում էին: Մենք փորձում էինք դիմադրել, ինչքան հնարավոր էր: Այդ դաժան օրերին մենք մեր արյան գնով կանխում էինք նաև ավելի մեծ արհավիրք՝ Մեծ Թուրանի գաղափարախոսության տարածական առաջխաղացումը: Մենք գիտակցում էինք մեր պայքարի իմաստը: Պայքար, որ միայն հանուն հայի չէր: Պայքար, որ նաև քրիստոնյա աշխարհի համար էր, սակայն այդ քրիստոնյա առաջադեմ աշխարհը չէր նկատում, չէր ընկալում մեր պայքարի գինը, քանի որ մենք միայնակ էինք այն վճարում: Այդ տառապանքն ու ցավը մերն էր, իրենցը չէր: Ցեղասպանությունից մազապուրծ եղած հայերը ապաստան գտան աշխարհի շատ երկրներում: Աշխարհը մեզ հանգրվանելու տեղ տվեց, որի համար անվերջ շնորհակալ պիտի լինենք, բայց արդյո՞ք դա բավարար էր: Աշխարհի տերություններ այն ժամանակ ինչ-որ չափով ձայն բարձրացրեցին, մտահոգություն հայտնեցին ու, իրենց միսիան այդքանով ավարտած համարելով, անցան իրենց առօրյա խնդիրներին: Շատ չանցած՝ Օսմանյան կայսրության փլուզումից հետո, աշխարհի գերտերությունները նորից սկսեցին թուրքի ձեռքը սեղմել, սեթևեթել, գլուխը շոյել,

համոզել, որ Թուրքիա պետությունը շատ կարևոր գործընկեր է իրենց համար, շատ կարևոր միջազգային խաղացող, հզոր պետություն, ինչը և մինչ օրս շարունակում են անել: Ավելին՝ Թուրքիան իր տեսակի «քոփի փաստ» տարբերակն է առաջացրել մեր մյուս կողմում ռուսների հետ համատեղ ուժերով: Ներկայումս էլ նրանք՝ ադրբեջանցիները, մեզ հանգիստ ապրել չեն տալիս: Փորձում են ամեն գնով կրկնօրինակել իրենց մեծ եղբայրներին սեփական «քաջագործություններով»: Աշխարհում չեն արձագանքում կամ արձագանքում են ոչ բավարար չափով, որ ո՛չ մեզ նեղացնեն, ո՛չ էլ ադրբեջանցիներին: Խաղ է, անխիղճ խաղ, որ կոչվում է մեծ քաղաքականություն, մեծ տերությունների քաղաքականություն: Ամենաստոր բանը, որ եղել էր, կա ու կմնա այս աշխարհում: Այն դեմք չունի: Փորձում է իրեն քողարկել, որ մեղավոր չհանես: Նրա քմահաճույքներն են, որ բերում են անարդարության, որն էլ իր հերթին՝ պատերազմների, արյան ու ճակատագրերի կործանման: Այդպիսի մի անարդարություն էր նաև Արցախի ու Նախիջևանի նվիրումը Ադրբեջանին: Եվ պետք է ֆիկսել՝ ո՛չ աշխարհին է փոխվել, ո՛չ թշնամին, իսկ ե՞րբ ենք մենք փոխվելու: Ե՞րբ ենք այդ անարդար աշխարհի խաղի կանոնները վերջապես ընդունելու և գործելու ըստ այդմ Հայաստանում, Արցախում և սփյուռքում: Միասին կոչվում ենք Հայ: Մենք մոլորակ չենք կարող փոխել, ասենք չենք կարող հանրաքվե անել որոշելու համար ազգովի թռնենք Մարս, թե՞ Յուպիտեր: Այդ «օպցիան» չկա «մենյու»-ում: Պետք է ընդունել աշխարհի կանոնները, ինչքան էլ դրանք մեզ դուրեկան չլինեն, ինչքան էլ դրանք բարոյական չլինեն: Այդ կանոնները որպեսզի ընդունենք, դրանք նախ ընկալել է պետք: Պետք է կարողանանք աշխարհից նայել Հայաստանին, ոչ թե Հայաստանից նայել աշխարհին:

***

Արցախում ևս սկսել էին ցույցերը վերամիավորվելու պահանջով: Ստեփանակերտում մեկնարկել էին հանրահավաքները: Այդ ոգեղեն էներգիայի տարափի մեջ անկյունում նկատելի խրոխտ ու

ձիգ կեցվածքով 18 ամյա մի աղջիկ լուռ նայում էր, հետևում ըն-թացքին: Սև երկար մազեր ուներ, սև աչքեր, խորաթափանց ու գե-րող հայացք, սլացիկ մարմին. գեղեցկուհի էր: Արմինե էր անունը: Չնայած չէր գոռում-գոչում՝ միացում, բայց նրա լռությունն ու աչքե-րի թախիծը շատ բան ունեին ցույց տալու, ասելու: Լսողը լսում էր, տեսնողը՝ տեսնում: Եղբորն էր կորցրել: Իրենից մոտ 2 տարի մեծ էր: Ազերի ուժայինների դահճի զոհն էր դարձել Բաքվում, ուսա-նող էր այնտեղ: Անմեղ մարդուն ձերբակալել և դատապարտել էին մի սպանության համար, որի հետ ինքը կապ չուներ: Իսկ Արցա-խում ցույցերի ֆոնին որոշել էին հաշվեհարդար տեսնել հետը հենց բանտում: Եվ ոչինչ... նորմալ է, ոչ մի պատասխանատվություն: Իսկ ուրիշ ի՞նչ էր սպասելի: Ուզում էին լռեցնել, սխալ ճանապարհ էին ընտրել, շատ սխալ: Բայց Ադրբեջանը ունակ էլ չէր այլ ճանապարհ ընտրելու, քանի որ մնացած ճանապարհներն անհասկանալի են այդ պետության համար: Ցավը սպանում էր, վրեժը հյուծում հոգին: «Բայց վրեժ ո՞ւմից հանել: Գնալ ու մեկին էլ նրանցի՞ց սպանել, խա-ղաղ բնակչի՞, ո՞ր ինչ լինի, որ ևս մեկ անմեղ մարդու հարազատին վրեժի ճամփան ցույց տա՞մ: Եվ այդպես մինչև ո՞ւր, ո՞ւր ենք հաս-նելու». մտքեր, որ պտտվում էին աղջկա գլխում և սթափության կոչ անում: Նաականջալուր էր այդ կոչին: Ինչքան էլ դժվար լիներ, նա գիտակցում էր, որ սթափությունը խելացի գործողությունների գրավականն է:

Խառը ժամանակներ էին. Խորհրդային միությունը ճգնաժամի մեջ էր, ազգամիջյան տարաձայնությունները պայթում էին՝ մեկը մյուսին հերթ չտալով: Հարաբերությունները երկու ազգերի միջև անտանելի են դառնում, ջրբաժանը չափից դուրս շատ էր խորացել: Սումգայիթյան ցեղասպանությունը միայն սկիզբն էր, շարունակու-թյունը կարելի էր կռահել: Այո, դա սկիզբն էր, իսկ այս աղջնակի կյանքում՝ ամենասարսափելին դեռ առջևում: Շարժման սկզբից մի քանի ամիս էր անցել, մի քանի ադրբեջանցիներով ներխուժեցին նրանց տուն, սպանեցին հորն ու մորը աչքի առաջ, իսկ իրեն բռնա-բարեցին: Երեքով էին ու հաստատ գիտեին՝ իրենց բան չի լինի սրա

համար: Այնուհետև, տեսնելով, որ արդեն անգիտակից վիճակում է աղջիկը, բենզին են շաղ տալիս տնով մեկ և վառվող լուցկու չոփը գցում հատակին: Օգնության ոչ մեկ չեկավ, որովհետև Արմինենց տունը գտնվում էր գյուղի պռնկին, մնացած տներից որոշակի հեռավորության վրա, ասես մեկուսացած լիներ: Այն ավելի շատ կարելի էր համարել մոտ կողքի գյուղին, չնայած փաստաթղթերով այլ բան էր նշվում: Նրանք հեռանում են՝ իրենց հետ տանելով տնից գողացված թանկարժեք իրեր: Ադրբեջանցիները չէին նկատել, որ կողոպտված իրերի մեջ էր նաև Արմինեի անձնագիրը, որը պատահաբար վայր է ընկնում նրանց ձեռքից տան բակում: Ինչ-որ հրաշքով Արմինեն կարողանում է արագ ուշքի գալ և, չնայած ուժերը լքում էին նրան, վերջին ջանքերը ներ է դնում ու հասնում դռանը, մի կերպ իրեն դուրս գցում այրվող տնից: Արդեն մի քանի րոպե էր, ինչ հորդառատ անձրև էր սկսել տեղալ և կրակը հանգցնել: Մեծ քանակի ծխով էր պատվել շրջակայքը: Ժամեր անց դարպասների ճռռոց լսվեց: Կողքի գյուղից Վարդգեսն էր, նկատել էր հեռվից ծուխն ու շտապել դեպքի վայր: Արմինեն նորից ուշագնաց էր: «Աստվա՜ծ իմ, ո՛չ»՝ գլխակորույս ցասման մեջ գոռում էր Վարդգեսը, ով անձամբ ճանաչում էր նրանց ընտանիքը: Դողացող ձեռքերով գրկել էր Արմինեին ու լաց էր լինում: Արմինեն գիտակցության գալու թույլ նշաններ սկսեց ցույց տալ: Վարդգեսի աչքերը նորից փայլեցին երջանկությամբ: Գրկեց աղջկան և իր մեքենայով տարավ իրենց տուն: Մորն ասաց, որ աղջիկը ահավոր վիճակում է, անհավասարակշիռ, հատուկ ուշադրության ու խնամքի կարիք ունի: Ասաց նաև, որ անհրաժեշտ է աչքը վրան պահել, թե չէ զգացվում է՝ ինչ-որ բան կարող է իր հետ անել: Սա ասելով՝ Վարդգեսը դուրս է գալիս տնից:

Մի քանի օր անց Վարդգեսենց բարեկամներն այցելեցին իրենց: Արմինեն, ցանկություն չունենալով որևէ մեկի հետ շփվել, խնդրեց, որ մնա սենյակում: Հասցրել էր տան դանակներից մեկը թռցնել և ուզում էր իր կյանքին վերջ տալ. ապրելը մահվանից ծանր էր թվում: Հանկարծ դուռը բացվում է, և չորեքթաթ ներս է մտնում հյուրերից ամենափոքրը՝ մեկուկես տարեկան Լուսինեն:

Չոչ անելով մոտենում է Արմինեին և իր ուրախ շարժումով ու մանկան անմեղ ժպիտով ակամայից հետ պահում նրան այդ մտադրությունից: Անկեղծ խինդով լցվեցին Արմինեի՝ արցունքների տեղատարափի ֆոնին խամրած աչքերը, որոնք թվում է, թե էլ երբեք չէին ժպտալու: Խելագարության մոլեռանդ նոպաներից տառապյալ դեմքը փոքր-ինչ լուսավորվեց: Լավ, ասենք ինքը վերջ տվեց իր կյանքին ու հանգստություն գտավ, բա այս մարդի՞կ, ի՞նչ է նրանց հետ լինելու: Նա իրենց ավելի շատ է պետք, նա իր ժողովրդին է պետք: Արմինեն մի կողմ նետեց դանակը, մոտ եկավ և իր գիրկն առավ երեխային: Համբուրեց ու շշուկով երգ սկսեց երգել նրա համար: «Մեռնելու ցանկությունը թույլերին է տրված, իսկ ես, ինչպես և հայ ազգը թույլ չենք, հետևաբար ապրել է պետք ու ապրեցնել». մտքում ասաց ինքն իրեն: Նա ուժ գտավ իր մեջ պայքարելու համար և չխելագարվելու ու ինչն ամենադժվարն էր՝ չկորցնելու իր մեջ մարդ տեսակը:

Այս դեպքերին հաջորդող օրը Վարդգեսը տուն վերադարձավ, տեսավ Արմինեին: Զգաց, որ արդեն համեմատաբար հանգստացած վիճակում է, բայց դա միայն արտաքուստ էր այդպես թվում: Վարդգեսը պատահաբար հիշեց, որ Արմինեի անձնագիրը նրա տան բակում նկատել և հետը վերցրել էր: Վերադարձրեց այն Արմինեին: Արմինեն բացեց այն, նայեց, դեմքը միանգամից մռայլվեց: Նետեց անձնագիրը բուխարու մեջ այրվելու: Վարդգեսը վայրկյանական բորբոքվեց.

– Ի՞նչ ես անում: Դա անելո՞ւ բան էր: Պատահաբար էր աչքովս ընկել, շատ ուրախացա, որ գոնե դա կարողացա ինձ հետ վերցնել: Հիմա առանց փաստաթղթի մնացիր:

Ինչին ի պատասխան՝ Արմինեն ասաց.

– Իսկ, որ ունեի ի՞նչ: Ի՞նչ-որ բան փոխվեց դրանից: Թե՞ ընտանիքս վերացնելուց առաջ հատուկ ստուգում էին անձնագիր ունենք, քաղաքացի ենք արդյո՞ք, եթե ոչ, նոր որոշում սպանել:

Լարվածությունը չէր թուլանում, այլ ավելի էր խորանում: Գալիք բախումների ուժգնացումը արդեն կարելի էր նախանշել: Մի

քանի ամիս անց Արմինեն իմանում է, որ հղի է: Հեշտ չէր ընկալել այդ փաստը: Նա լաց էր լինում, անիծում Աստծուն, որ նման բախտ էր իր համար պատրաստել: Նա չէր ուզում այդ երեխային ունենալ, այն էլ այդպիսի դեպքերի բերումով: Ո՞ւմից էր այդ երեխան, այն վիժվածքներից մեկից, ով սրբություն չունի: Այդ դեպքում ո՞նց ընդունել այդ երեխայի գոյությունը: Այն ինչ սովորաբար երջանկություն պիտի պարգևի մարդուն, հիմա իրեն ցավ է պատճառում՝ հիշեցնելով, թե ինչերի միջով է անցել, և, փաստորեն, այդ ամենը ոչ առանց հետևանք: Արմինեն առանձնացավ բոլոր հարազատներից, չէր շփվում նրանց հետ, մնաց ապրելու Վարդգեսենց տանը: Նա գնաց Ստեփանակերտի հիվանդանոց, մոտեցավ գլխավոր բժշկին.

– Խնդրում եմ, օգնեք ինձ ազատվել պտղից:

– Ի՞նչ,– բժիշկ Դավթյանի մռայլված դեմքն էլ ավելի է խոժոռվում,– դու դրանով ի՞նչ ես ուզում ասել, դու հիմա սթա՞փ ես:

– Ավելին քան, բժի՛շկ,– հպարտ հայացքով, բայց արցունքներն աչքերին ասաց Արմինեն: Հետո մի պահ լռեց և արդարացումներ փնտրող ու պաշտպանվող տոնով գլխիկոր արտաբերեց.– Դուք չգիտեք, թե ինչ է եղել ինձ հետ:

– Չեմ էլ ուզում իմանալ, որովհետև ինչ էլ, որ եղած լինի, քո մտադրությունից սարսափելի չէ:

– Ես ինքս եմ մեռնել ուզում, չե՞ք հասկանում Դուք,– սկսեց բղավել Արմինեն:

– Հենց դրա համար ես քո ուզածը չեմ անի: Հե՛տ կանգնիր այդ մտքից: Քո երեխան է քեզ ապրելու ուժ տալու, դու հիմա դա չես գիտակցում:

Արմինեն արտասվելով հեռացավ՝ ինչ-որ տեղ հասկանալով, որ ասվածի մեջ ճշմարտություն կար: Օրերով մտածելուց հետո, նա հանգեց այն եզրակացության, որ բժիշկն իրավացի է:

Ծնվեց երեխան, և Արմինեն նրան կոչեց Էդուարդ՝ սպանված եղբոր անունով: Երբ առաջին անգամ գրկեց փոքրիկին, ասաց բժիշկ Դավթյանին, որ ճիշտ էին նրա խոսքերը. մայրական բերկրանքից թանկ ոչինչ չկա այս աշխարհում:

Ադրբեջանի գործողությունները Արցախի հանդեպ դառնում էին ավելի սանձարձակ: Նրանք հանդուգն կերպով ջանում էին կատարել իրենց վաղեմի երազանքը՝ ամբողջովին հայաթափել Արցախը: Հայերի շրջանում շարունակվում էին կամավորների հավաքագրումը ինքնապաշտպանության և թշնամուն դիմագրավելու նպատակով: Արմինեն մնաց իր երեխայի հետ մինչև գրեթե 1 տարեկանը: Նա պետք էր հայրենիքին, սակայն հայրենիքը չէ, որ նրան ասում էր այդ մասին, այլ իր ներքին համոզմունքը, որ եթե մեզանից ոչ մեկ չպայքարի, և բոլորը որոշեն մի կողմ քաշվել, ապա մենք բոլորս ենք կործանված: Իսկ հաղթելու համար անձնական զոհաբերություններ, ջանք ու հավատք է հարկավոր: Ամեն մարդ չէ, որ կզոհաբերի ամենաթանկ պահերն իր կյանքի կամ հենց իր կյանքը, և կտրվի անձնուրաց պայքարին: Այդպիսին են լինում հերոսները: Արմինեն փոքրիկ Էդուարդին թողնում է իր ընկերուհու՝ Սառայի և նրա ամուսնու խնամքին: Ավելի ճիշտ հենց Սառայի խնամքին, քանի որ ամուսինն էլ էր ազատամարտիկ: Նրանք երեխա դեռ չունեին, և Սառան հաճույքով համաձայնեց խնամել երեխային մինչև ժամանակները խաղաղվեն, և մայր ու որդի նորից միանան:

Արմինեն ժամանակ առ ժամանակ, կախված իրավիճակից, գալիս, տեսակցում էր իր բալիկին: Մնում Սառայենց տանը մի քանի օրով, ինչքան որ դրությունը թույլ էր տալիս կամ վիրավորումներից հնարավորինս բուժված էր լինում: Վերջին անգամ կարողացել էր գալ, երբ երեխան երեք տարեկան էր: Ցերեկ էր, Արմինեի հետևից նրա մարտական ընկեր Ռուբենը եկավ մեքենայով: Մտավ ներս, ողջունեց Սառային ու ասաց, որ շատ ժամանակ չունեն, պիտի գնան: Սառայենց տնից դուրս գալիս Արմինեն սկսեց դանդաղ քայլել, չէր կարողանում կենտրոնանալ, հոգին խեղդում էր այն միտքը, որ ինքն այս ամենի միջով է անցնում: Ծնկի իջավ ու սկսեց լաց լինել: Ռուբենը՝ մոտ 50 տարեկան մի ամրակազմ տղամարդ, ով Երևանից էր ու ինչպես շատ-շատերը կամավոր միացել էր ազատագրական պայքարին, մեր հերոսուհու պատմությանը քաջածանոթ էր ավելին, քան որևէ մեկը: Ռուբենը հասկանում էր, որ կյանքը զոհասեղանին

դրած ու հայրենիքի ազատության համար մաքառող այդ խիզախ կնոջը հեշտ չէր միշտ բյուրեղային սառնասրտություն պահպանել այն իրավիճակում, երբ իր սեփական կյանքը խորտակված էր, իսկ որդին իրեն որպես մայր չէր ճանաչում: Ինչո՞ւ պիտի այդպես լիներ, հարց է առաջանում, և ինչպե՞ս հաշտվել այդ ցավալի իրողության հետ: Ռուբենը մոտեցավ նրան և ասաց.

– Արմինե՛, մնա՛ որդուդ մոտ, ու վե՛րջ տանք այս պատմությանը: Մենք առանց քեզ էլ գլուխ կհանենք, դու դա լավ գիտես: Դու արդեն շատ բան ես արել. լինելով հրամանատար, զինվորներից 10 մետր առաջ ընկնելով՝ դու ես քեզ առաջինը գցում մարտի: Քանի՞ անգամ ես վիրավորվել, քանի՞ փամփուշտ են հանել մարմնիցդ: Քո մշակած ռազմական օպերացիաներով քանի՞ հաջողություն ենք գրանցել, մի՞թե դա քիչ է: Պատերազմը վաղ, թե ուշ կավարտվի, բայց այս օրերը ետ չես բերի: Գնա՛, տե՛ր կանգնիր զավակիդ:

Ինչին ի պատասխան՝ Արմինեն, արցունքների մեջ խեղդվող աչքերը վեր բարձրացրեց ու նայելով Ռուբենին, ասաց.

– Ես տասը միլիոն զավակ ունեմ:

– Դու անուղղելի ես,– գլուխը անհույս աջ ու ձախ տարուբերելով՝ ասաց Ռուբենը:

Նրանք մոտեցան հեռվում կանգնեցված Ռուբենի ավտոմեքենային ու շարժվեցին:

Փոքրիկ Էդոն թխադեմ, ժիր եղեխա էր, մեծ ու սևուկ աչուկներով, արտաքինով շատ նման մորը: Բավականին աշխույժ էր ու համառ: Անընդհատ ուզում էր ինչ-որ նոր բան սովորել, պահանջում էր, որ իրեն սովորեցնեն: Շատ շուտ ընկալում էր ամեն ինչ, շուտ զարգանում, մի տեսակ ուրիշ էր, յուրահատուկ: Անընդհատ երաժշտություն էր լսում: Դեռ նորմալ քայլել չգիտեր, բայց սանրը ձեռքը վերցրած՝ իբր երգելով իր փոքրիկ թաթիկներով ու տոտիկներով փորձում էր երգել ու պարել տարբեր երգերի ռիթմերի տակ, մեկ էլ դը՛խկ, ընկնում գետնին: Պուճուրը հատկապես շատ էր սիրում Շերի կատարմամբ «The shoop shoop song» երգը: Սառան սրա-նրա միջոցով Նահանգներից գտնել ու բերել էր տվել այդ երգի սկավառակը

և վիդիոն: Լավ էր չէ՞, խառը ժամանակները և պատերազմը չէին խանգարում երազանքը ի կատար ածելուն: «Միևնույն է գալիս էին պատերազմելու, թող մի լավ գործ էլ ձեռքի հետ անեն». կատակում էր Սառան: Սակայն շուտով նրանց էլ այցելեց դժբախտությունը: Սառայի ամուսինը զոհվեց մարտերում:

***

Արմինեն, չնայած իր հետ կատարվածին, ձգտում էր այնպես անել, որ թիրախավորվեն միայն թշնամու զինվորներն ու մարտական տեխնիկան: Նա չափազանց գթասիրտ էր հակառակորդի խաղաղ բնակչության հանդեպ. համարում էր, որ իր կռիվը անզեն, խաղաղ մարդկանց դեմ չէ, այլ Ադրբեջան կոչվածի վերնախավի դեմ: «Հարվածելու ժամանակ խելքը չեն անջատում». հաճախ կրկնում էր նա:

Մռայլ գիշեր էր: Անտառի ծառերի ճյուղերը երերուն ճոճվում էին քամու մերթընդմերթ ուժգնացող հոսանքի ներքո: Հետո նորից հանդարտվում՝ հիշեցնելով, որ ինչքան էլ մարդն իրեն ամենակարող զգա երկրագնդի վրա, իսկ «բնություն արքա»-ին էլ անտեսի կամ չկարևորի, բնության ուժի դեմ անզոր են բոլորը: Ուղղակի պատերազմի պայմաններում այդ բնության մասին ամենաքիչը կարող էին հիշել մարդիկ: Ազգեր, որոնք իրենց հարցերն ունեին լուծելու և բնության խոհեմ երգը ընկալելու ու նրան ձայնակցելու բնավ տրամադրություն ու ժամանակ չունեին: Ծառերի շղարշի ներքո հոսող գետակի վրա փայտից կառուցված նեղլիկ կամրջի անդորրը խախտեցին անհանգիստ ոտնաձայներ. մերոնք էին: Լարված սպասում էին ինչ-որ բանի, բնավ բնությամբ զմայլվելու համար չէին եկել: Հերթական անգամ պիտի գերիների փոխանակում կատարվեր: Մեր կողմից ադրբեջանցիները կերած-խմած, առողջ վիճակում, առանց վնասվածքների սպասում էին մեքենայի մեջ յուրայիններին հանձնվելու երազելի արարողությանը: Իսկ ահա նրանց կողմից գերեվարված հայերը մեզ վերադարձվեցին կիսամեռ վիճակում: Գերությունից ազատված տղաներին հասցրեցին

հենց անտառում բացազատված վրանային զինվորական հոսպիտալ: Հոսպիտալի մոտակայքում տեղակայված վրաններից մեկում Վարդգեսն ու Արմինեն էին նստած: Ընկերների՝ անկողնում գամված վիճակը հոսպիտալում տեսնելուց հետո, արցունքները չկարողացավ զսպել Վարդգեսը: Միևնույն ժամանակ նա նաև զայրացած էր: Սկսեց վիճել Արմինեի հետ և վերջում ասաց նրան. «Լավ էլ ի՞նչ պիտի լինի քեզ հետ, որ դու մի քիչ չարանաս»: Այդ վերջին խոսքերն արտաբերելով՝ Վարդգեսը, անգամ պատասխանը չցանկանալով լսել, նեղացած դուրս թռավ վրանից: Արմինեն, որ սկզբից մի կերպ էր զսպում իրեն, և հոգում խառնված հույզերը ի ցույց չէր դնում, Վարդգեսի վրդովված տոնից ընկճված, սկսեց սաստիկ լաց լինել: Ասես հասկանում էր, որ այս աշխարհում միշտ չէ, որ պետք է այդքան ճիշտ ապրել և դաժանության տեսանկյունից նույն կերպ չպատասխանել թշնամուն:

Մի քանի ամիս չանցած Վարդգեսի կյանքի թելն էլ կտրվեց թշնամու գնդակից: Նա ադրբեջանցի երեխային իր մորը հասցնելու համար որոշեց անցկացնել նրան վարար հոսող գետի միջով, որի մյուս կողմում կանգնած էր փոքրիկի մայրը: Ռուբենը և մյուս մարտական ընկերները, որոնք մի քիչ հեռու էին գտնվում այդ պահին գետի մոտից, ձայն էին տալիս Վարդգեսին, որ հետ վերադառնա, առաջ չգնա: Սակայն Վարդգեսը չլսեց նրանց. խիղճը թույլ չէր տալիս թողնել երեխային դժբախտության մեջ: Փոքրիկի լացի ձայնը սիրտն էր խոցում, և նա որոշեց՝ ինչ գնով էլ լինի, պիտի վերադարձնի նրան ծնողին: Թշնամու զինվորները չհասկացան, որ նա ոչ թե վնասել է ուզում երեխային կամ նրա մորը, այլ ուղղակի միավորել նրանց: Ազերիները կրակեցին Վարդգեսի վրա: Չնայած վիրավոր, սակայն նպատակասլաց հայորդին իր գրկում դողացող երեխային այնուամենայնիվ հասցնում է գետի մյուս ափ ու տալիս մորը: Ադրբեջանցի կինը, տեսնելով, որ զինվորը մահանում է, և էլ ոչինչ նրան չի փրկի, Վարդգեսի ծոցագրպանից հանում է ծխախոտի համար նախատեսված արծաթեպատ փոքրիկ մի պատյան որպես հուշ, գիրկն առնում իր երեխային և հեռանում: Մինչ

Ռուբենը և ջոկատի մյուս անդամները հասան գետի մերձակայքը, Վարդգեսն արդեն հոգին ավանդել էր: Վիշտն ու կսկիծը կեղեքում էին Ռուբենի սիրտը: Վրեժի զգացումը գլուխ էր բարձրացրել: Աչքին ոչինչ չէր գալիս, միայն Վարդգեսի խնդուն ու կենսուրախ հայացքն էր մտաբերում, նրա անթիվ կատակները, նաև նրա էմոցիոնալ ու բռնկուն խառնվածքը: Կռվի ժամանակ էին ծանոթացել, սակայն ասես մի ամբողջ կյանք իրար հետ ապրած լինեին: Սա է պատերազմը. միավորում ու բաժանում է մարդկանց, բայց միայն ֆիզիկապես: Գլուխը դրած Վարդգեսի անշնչացած մարմնին՝ Ռուբենը աննպատակ շարունակում էր խրատել նրան՝ բարձր գոռալով. «Քեզ պե՞տք էր բա, հը՛ն, ասա՛, քեզ պե՞տք էր, կյանքդ անիմաստ տվեցիր հանուն ինչի՞»:

✷✷✷

Երեկոյան ժամերին մոտ զինվորներով նստել էին ճաշելու, մի քիչ հեռու ադրբեջանցի գերիներն էին: Արմինեն, տեսնելով, որ նրանց ուտելիքի հետ հաց չէին տվել, սեղանից մի քանի կտոր հաց վերցրեց, որ տանի բաժանի գերիներին: Սա արդեն վերջին կաթիլն էր: Ընկերները հունից դուրս եկան: Նրանք, չնայած իր ենթականերն էին, սակայն վրդովված թողեցին սեղանը և հեռացան: Դա մի լավ ապտակ էր Արմինեին: Բայց նա իր սկզբունքներին հավատարիմ կերպար էր: Համոզմունքները, որ նա ուներ, և, որոնց երբեք չէր դավաճանում, իր և՛ թույլ, և՛ ուժեղ կողմն էին: Ցավ էր ապրում ընկերների այդ պահվածքից, բայց իր սեփական Ճշտին երբեք չէր հակառակվի: Այդ Ճիշտը հասու չէ այն աշխարհին, որում մենք բոլորս ենք: Այդ Ճիշտը այս աշխարհի սխալն է, իսկ այդպիսի Ճշտի համար պայքարն՝ անիմաստ ու չհասկացված: Այդ պահին լքվածության ու միայնության մեջ Արմինեի ներաշխարհում միախառնվել էին գիտակցությունն ու էմոցիաները, դատելու անկարողությունն ու անօգնականությունը: Թողնվելով մենակ՝ նրան ոչինչ ուրիշ չէր մնում, քան գնալ և միանալ մի փոքր հեռվում նստած ազերի գերիներին, որոնք իրենց հերթին ապշած էին աչքի տեսածից: Արմինեն

նստեց նրանց կողքին ու հայացքը ուղղեց դեպի աչքի առաջ բացվող երկնքի՝ խառնիճաղանջ գույներով իրար միաձուլված հորիզոնը. արցունքները շարունակում էին հոսել: Նման պարագայում լռությունն էր ամենալավ դարմանը: Այդպես լռել էին բոլորով: Հանկարծ ադրբեջանցիներից մեկը, այնուամենայնիվ, ռիսկ արեց խախտել բոլորի ականջին դուրեկան դարձած լռության երգը.

– Հացն էլ արդեն կուլ չի գնում:

Նրանք, իհարկե, իրենց վատ զգացին կատարվածի համար, քանի որ գիտակցում էին՝ կատարվածի պատճառն իրենք էին: Արմինեն սառած հայացքը երկնքի հորիզոնից դանդաղ, առանց շտապելու ուղղեց դեպի նրանց և ասած.

– Միևնույն է, ինչ էլ հիմա պատահի, նրանց սերունդներն ինձ հերոսացնելու են, իսկ ձեր սերունդներն՝ ատելու:

* * *

Հաջորդ օրը թշնամին հարձակում է սկսում որոշ ուղղություններով: Սառայենց գյուղը վտանգի տակ է հայտնվում: Մեր ուժերը չկարողացան պատշաճ դիմադրություն ցույց տալ և տեղի տվեցին: Դիվերսիոն ներթափանցմամբ հակառակորդը մխրճվել էր խորքը: Այդ մասին լուրը հասնում է Արմինեին: Աչքերի առաջ սևացավ ամեն ինչ, ասես աշխարհը գլխին փուլ գա: Տեղեկացրեց իր վերադասին, որ համալրում ուղարկեն իրենց դիրքեր, քանի որ իրենք պատրաստվում են շարժվել այլ ուղղությամբ: Ճանապարհին հնարավոր չէր Արմինեի հետ մի բառ փոխանակել, կարծես իրեն լրիվ կորցրել էր: Բայց երբ մոտեցան նպատակակետին, նա շատ արագ հավաքեց մտքերը և գծեց հակահարձակման պլանը: Օպերացիան հաջող անցավ. կարողացան թշնամուն դուրս մղել: Արմինեն վազեց դեպի Սառայի տուն: Այն գտավ ավերված: Սառան սպանված էր, իսկ երեխան չկար: Արմինեն այլայլված գոռում էր, լաց լինում, անիծում ինքն իրեն, անիծում տմարդի թշնամուն.

– Ինչո՞ւ պիտի ինձանից ամեն ինչ խլեիք, ինչո՞ւ: Ընտանիքս վերացրիք, կյանքս խորտակեցիք, տունս ավիրեցիք, հիմա էլ երեխե՞ս:

Ամեն ինչ արեցիք, որ իմ մեջ մարդը մեռնի, բայց այն թարսի պես չի մեռնում, համառում է:

Նյարդային ջղաձգումների մեջ ընկավ, չէր նկատում շուրջը ոչինչ ու ոչ մեկին: Միևնույն էր ամեն ինչ. ծառը, խոտը, օդը, ջուրը, մարդիկ, նրանց արձագանքը: Մտքում կռվում էր թշնամու դեմ ու բարձրաձայն պոռթկալով՝ շարունակեց.

– Սա էլ վերջին կաթիլն էր, հա՞, ծանր հրետանին, որ պահել էիք վերջում կրակելու համար: Ստացվեց... ստացվեց ձեզ մոտ, ինձ խելագարության եք հասցնում: Իմ մեջ մարդն էլ ի վիճակի չի պայքարելու մարդ մնալու համար: Ձեր նման գազան եք ուզո՞ւմ սարքել: Ասեմ՝ սարքեցիք: Այո՛, ես այսուհետ անմարդկային գազան եմ, որ պատրաստ է բոլորիդ հոշոտել:

Մոտակայքում ամենուր զինվորներն ընկած երեխային էին փնտրում, չկար ու չկար: Արմինեին փորձում էին հանգստացնել, որ դիակը ամեն դեպքում չկա, հետևաբար հնարավոր է, որ ողջ է, ու անպայման կգտնեն: Գնացել էին կողքի գյուղերը, սակայն դրանք նույնպես ամայացած էին, բնակիչները դրանք ևս լքել էին: Վտանգավորն այն էր, որ կարծիք էր շրջանառվում, որ ամենայն հավանականությամբ թուրքերը տարել էին նրան, ու այդ միտքն ավելի էր սարսափեցնում: Հոգեկան անհավասարակշիռ վիճակից դուրս չէր գալիս Արմինեն: Հիմա էլ մեղքը իր մեջ փնտրելու փուլին էր հասել, և հանկարծ ամենահարազատ մարդուն տեսան իր աչքերը: Անճարությունից բացականչեց.

– Ռուբեեեեեեե՜ննն, ես ինչո՞ւ քեզ չլսեցի, հը՞ն, ասա՛, ինչո՞ւ,– գոռում ու կուրծքն էր ծեծում մեր հերոսուհին,– ո՞ւր է հիմա նա, ասա՛, ո՞ւր: Աստված պատժում է ինձ: Հաստատ նա պատժում է ինձ, որ թողեցի երեխայիս, որ հոգ չտարա նրա մասին, որ կողքին չմնացի: Ա՛խ, Աստվա՜ծ իմ, մի՞թե սա էիր ինձ համար պատրաստել: Այդ անաստվածները ինձնից իմ երեխային էլ խլեցին: Ինձնից ամեն ինչ խլեցին, ինչի՞ համար է իմ այս ճակատագիրը, ազգիս այս ճակատագիրը,– հետո, արդարացնող խոսքեր փնտրելով, փորձեց բացատրել իր քայլի դրդապատճառները: – Ես կարևորեցի հայրենիքը

ու կորցրի նրան, ում ամենաշատն էի պետք այս կյանքում: Նա իմ կարիքն ուներ, իսկ ես ի՞նչ արեցի: Բայց ինչպե՞ս ճղվեմ մեջտեղից ես, երկու քարի արանքն եմ ընկած եղել: Ի՞նչ անեի, ո՞նց վարվեի, ասա՛, Ռուբե՛ն, մեղքս այդչափ մե՞ծ է: Ես էլ երեխայիս վերցնեի ու փախչեի այստեղից, հա՞: Հետո ո՞նց պիտի ապրեի այն մտքով, որ ինչպես միշտ թուրքը իր ուզածին հասավ ու խլեց մեզնից ամեն ինչ:

– Հիմա ո՞րն էր ճիշտը,– այս նախադասությամբ ակամայից արդեն իր շուրջը հավաքված զինվորներին դիմեց Արմինեն՝ անգամ չհասկանալով, որ զինվորներից ոչ մեկը, բացի Ռուբենից, տեղյակ չէ իր պատմությանը: Հետո վերջապես փոքր-ինչ հանգստացավ: Ապա, գիտակցելով, որ արդեն ուժասպառ է եղել, ցանկացավ բնության գիրկը գցել իրեն: Առանձնանալ էր ուզում բոլորից, աննկատ ձուլվել մութ երկնքում իր սիմֆոնիան նվագող քամու հետ:

* * *

Էդոն թուրքերի մոտ չէր: Մի ուկրաինացի վարձկան, ով գումարի դիմաց կռվում էր ադրբեջանական կողմի համար, ներս էր մտել տուն ու գտել Սառայի դին հյուրասենյակում ընկած: Դրանից հետո սկսեց շրջել տնով մեկ և ննջասենյակներից մեկի գորգի տակ նկատեց թաքստոցի նման մի բան: Բացեց այն, ու խորքից լսվող լացի ձայները իջացրին նրան ներքև: Պատին հենված ու կուչ եկած, սարսափած մի բալիկի նկատեց: Ուկրաինացին մի պահ այլայլվեց, շփոթվեց, չէր հասկանում, թե ինչ էր զգում: Բայց ի՞նչն էր տարօրինակ, հայ երեխա է: Ինքն էլ գիտեր, թե նման դեպքերում ինչպես պիտի վարվի. տանի և երեխային հանձնի իր վերադասին: Սակայն խիղճը տանջում էր. գիտեր, թե ինչ ճակատագրի կարժանացնեն խեղճին: Փոքրիկի դողացող մարմինը ու վախեցած հայացքը հասկացնել էին տալիս, որ անմարդկային քայլի է գնալու այդպես վարվելով, նամանավանդ, որ դիմացի կանգնածն իր պես քրիստոնյա է: «Վերջ, թքած հրամանների վրա, իմ խիղճն ինձ ամբողջ կյանքում հանգիստ չի տա, եթե նրանց ասեմ քո մասին, գիտեմ՝ ինչ կանեն: Մի բան մտածել է պետք». մտքում խոսում էր ինքն իր հետ ու միևնույն

ժամանակ նայում փոքրիկի լացակումած աչքերին, որոնք չգիտեին օգնություն խնդրեին, թե ընդհակառակը տեղ գտնեին փախչելու այդ անծանոթից: Ուկրաինացին ուզեց հանել երեխային դուրս, սակայն դրան զուգահեռ հանկարծակի սկսեցին լսվել ադրբեջանցիների խոսակցությունը և ոտնաձայները: Նրանք նույնպես մտել էին տունը խուզարկելու և թանկարժեք իրերն իրենց հետ վերցնելու համար: Ուկրաինացի վարձկանը հասկացավ, որ երեխային հիմա պետք չի հանել դուրս: Մի կերպ բացատրեց, որ պետք է այստեղ դեռ սպասի մինչև մթնի: Դուրս եկավ ադրբեջանցիներին ընդառաջ և ասած, որ այստեղ ամեն ինչ մաքուր է, միայն մի կնոջ դի է:

Երեկոյան ուկրաինացին, մոլորեցնելով Ադրբեջանի բանակի զինվորներին, կարողացավ ազատվել նրանց անդադար ուղեկցությունից և իր մեքենայով սլացավ դեպի իրեն քաջ ծանոթ տնակը: Բացեց թաքստոցը և Էդոյին հանեց այնտեղից: Էդոն պատահաբար նկատեց հյուրասենյակում մոր անշնչացած մարմինը գետնին ընկած և, բարձր բղավելով՝ «մամա՛», վազեց դեպի նա: Ուկրաինացին հազիվ կարողացավ հանգստացնել Էդոյին՝ բերանը շորի պատառիկով փակելով: Նա փաթաթեց ծածկոցով նրան, գրկեց ու տարավ դեպի մեքենան: Արագ քշեց դեպի ավելի ապահով վայր: Նա տեղանքը հասցրել էր լավ ուսումնասիրել ցերեկվա ժամերին և մշակել էր ադրբեջանական վերահսկողության տարածքից երեխային դուրս տանելու պլան: Ճիշտ է, նա ռիսկի էր գնում, ինքն էլ չէր հասկանում՝ ինչու է դա անում: Համոզված էր, որ իր մոտ ստացվելու է: Նա կարողացավ դուրս պրծնել ադրբեջանցիների վերահսկած տարածքներից: Լուսադեմին, երբ արդեն մոտենում էին հայկական մի գյուղի տարածքին, ուկրաինացին կանգնեցրեց մեքենան, և դրանից հետո նրանք ոտքով գնացին: Ոչ այնքան հեռու նկատվեց մի մարդ: «Հավանաբար ձերոնցից է... ճիշտ պահն է: Այստեղ պիտի բաժանվենք». մտածեց ուկրաինացին: Ջերմագին հայացքով նայեց փոքրիկ բալիկին, նա վախեցած էր.

– Մամա՛ – արտասունքներն աչքերին, հուսահատ ու դողացող ձայնով արտաբերեց Էդոն: Բառ, որ խորհրդանշում է երեխայի համար տագնապի ու վախի պահին իր միակ հույսը:

Ուկրաինացին գլխի շարժումով հասկացրեց նրան, որ մայրն այլևս չկա, և նկատեց ձեռքին ամուր պահած ինչ-որ բան: Մեդալիոն էր: Ուկրաինացին երեխայի ձեռքը ամուր բռնեց ու դեմքի միմիկայով հասկացրեց, որ Էդուարդն ամուր պահի այդ մեդալիոնն իր մոտ: Մանչուկը արդեն հասցրել էր վստահությամբ լցվել նրա հանդեպ: Չնայած այդ ժամանակ լիարժեք չէր գիտակցում՝ ինչ մեծ զոհողության է այդ անծանոթը գնացել հանուն իրեն՝ վտանգելով սեփական կյանքը, ու դեռ պարզ էլ չէր՝ կկարողանար մինչև վերջ թաքուն պահել իր այդ քայլը, թե ոչ, բայց նման դեպքերում երեխաները ենթագիտակցորեն երբեմն ավելին են հասկանում, քան կարելի էր պատկերացնել:

Ուկրաինացին երեխայի հետ մոտեցավ մի քանի մետր հեռու քայլող ծերունուն, ճշտեց, որ հայ է: Ծերունին ասաց նրան, որ իրենք էլ են հեռանում, իրերը հավաքել են, պիտի արագ փախչեն, քանի կարող են: Ուկրաինացին խնդրեց, որ իրենց հետ տանեն նաև այս հայ երեխային: Պատմեց, որ մայրը մահացել է, խնդրեց բացատրել դա նրան իրեն հասու ձևով, երբ մի քիչ մեծանա:

Ուկրաինացին գրկեց ու համբուրեց փոքրիկին, ապա ասաց նրան.

– Ամեն ինչ լավ է լինելու:

Էդոն մի քանի քայլ առաջացավ, հետո կանգ առավ, դանդաղ շրջվեց, կարծես մի վայրկյան ավել էր ուզում ֆիկսեր իրեն փրկողի կերպարը: Զգաց, որ ինչ-որ բան պակաս է արել, հետ վազեց նորից, ամուր գրկեց իրեն հարազատ դարձած անծանոթին, համբուրեց ու ասաց՝ «շնորհակալություն»: Փոքրիկի թախծոտ, վառվռուն ու սևուկ աչքերը այդ պահին սկսեցին փայլել անսահման երախտագիտության զգացումով, ու մանկական մաքրությամբ տոգորված հայացքը կարծես ամենաերջանիկը լիներ այդ պահին աշխարհում: Հայացք, որ անհնար էր մոռանալ, մարդու մտքում հավերժ դաջվող ակնթարթներից էր դա: Ուկրաինացի վարձկանը այդժամ հասկացավ, թե ինչքան ճիշտ է վարվել՝ տեղի չտալով հրամաններին և գործելով իր խղճի թելադրանքով:

# Գլուխ 2

Երևան: Մանկատան սառը պատերը իրենց անողոք սառնությամբ հուշում էին, որ այստեղ միայն պատերը չէ, որ սառն են: Էդոն փորձում էր հարմարվել նոր միջավայրին, սակայն դա նրա մոտ չէր ստացվում: Նա փոքր էր, շփոթված, առանձնապես շատ չէր խոսում. հոգեկան ծանր հարվածը դեռ երկար պիտի կարողանար մարսել: Սակայն ոչ մեկ չգիտեր՝ ինչ է իր հետ եղել. նա չէր պատմում ոչ մի բան: Մտքում միայն մանկատնից փախչելու ձև գտնելն էր: Տուն էր ուզում վերադառնալ, սակայն չգիտեր՝ այդ տունը որտեղ է, ոնց հասնի, և ինքը հիմա ուր է: Այդ մտքերը խնամքով պահում էր իր ներսում, ոչ մեկի հետ չէր կիսվում և սպասում էր հարմար պահի մանկատնից փախչելու համար: Եվ ահա այդ պահին, ըստ իրեն, հասունացել էր, և ինչպես ինքն էր համարում. «այդ «բանտարկությունից» դուրս գալ էր պետք»: Տուն վերադառնալու երազներով տարված՝ կարողանում է փախչել մանկատնից: Սկսում է թափառել փողոցներով: Ոստիկանությունը մի քանի օր փնտրելուց հետո, դադարեցնում է որոնումները. խառը ժամանակներ էին, այդպիսի քանի՜ երեխա էր անճարությունից փողոցներն իր տունը դարձրել:

Հայաստանում մութ ու ցուրտ տարիներն էին: Երեկոյան դուրսը անհագուրդ մթով էր պատվում: Մայր Հայաստան հուշարձանն ինչպես միշտ խրոխտ կանգնած էր ու հսկում էր քաղաքն իր բարձունքից, որտեղից օրենքով գեղեցիկ տեսարան պիտի բացվեր: Սակայն ինչպես ասում են օրենք ասվածը մեր երկրում մեղմ ասած մի քիչ

այդքան էլ հակված չի գործելու անգամ այս պարագայի համար: Ի՞նչ գեղեցիկ տեսարանի մասին կարող էր խոսք գնալ, եթե շուրջ-բոլորը մթությունն իր քովը քաշել ու չարախնդում էր քաղաքի բնակիչների վրա: Երկրում էներգետիկ ճգնաժամ էր: Քաղաքն անշնչացած կարծես լիներ, կյանքը կանգ էր առել, զմայլվելու ոչինչ չկար: Միայն հետաքրքրությունն էր մնացել առ այն, որ ցանկանում էիր մտնել ամեն մեկի տուն ու պարզել, թե այս ճահճացած կյանքում ինչ զբաղմունք էին գտնում մարդիկ իրենց զբաղեցնելու համար, որ չխելագարվեին: Մոմի լույսը յուրաքանչյուր օջախի ամենամտերիմ ընկերն էր դարձել: Երկու ժամով ջուր էին տալիս, լույս էին տալիս, տներում ուրախությունն անսահման էր: Այդպես ապրում էին մարդիկ, չէին տրտնջում, չէին բողոքում: Մի պլիտկա շոկոլադը, 27 մասի պատառներ սարքելով, բաժանում էին շենքով մեկ ու ծիծաղում իրենց բաժին հասած ճակատագրի վրա: Այդպես անգամ մի փոքր լավ բանից միանգամից երջանկանում էին մարդիկ, քանի որ հույսը դեռ մեռած չէր: Հույս կար, որ ամեն ինչ շուտով ավարտվելու է, և մեր ժողովրդի վրա արևը, առանց կողմնապահություն անելու, հավասար իր շողերը փռելու է, ինչպես ուղղակի անկախացած ու այդ անկախության համար պատերազմի բովի միջով չանցած որոշ այլ ժողովուրդների համար է արել և անում:

Էդոն կանգնած էր Մոնումենտի բարձունքին: Փոքրիկը շատ բան չէր հասկանում, բայց ակամայից տխրում էր, ընկճված էր, մթությունը ճնշում էր նրան: Ուզում էր հասկանալ դա նորմալ է, թե՞ այնուամենայնիվ ինչ-որ բան այն չէ իր շուրջը: Թվացյալ ամայության մեջ, որտեղ Էդոյին թվում էր, թե միայն ինքն է ու քամու չարաճճի խաղը ծառերի ճյուղերի հետ, շրջվելուն պես հանկարծ մի մարդու կերպար տեսիլքի նման ուրվագծվեց իր առջևում: Նա դանդաղ մոտենում էր: Պատկառելի տարիքով տղամարդ էր, ով նկատել էր միայնակ երեխային և որոշել հարցուփորձ անել, թե ուր են ծնողները: Էդոն խաբեց նրան՝ ասելով, թե ինքը ծնողներից փոքր-ինչ հեռացել է: Էդոն շատ բան չէր խոսում. մի տեսակ կասկածելի էր այդ մարդն իրեն թվում: Նրա հարցերին հարցով

էր պատասխանում՝ ցանկանալով խոսակցության ընթացքը շեղել դեպի իր ուզած կողմը: Տղամարդը տանջված աչքերը հառեց երկնքին, հետո հայացքը նորից ուղղեց դեպի երեխան ու մեղմ ժպիտով ասաց.

– Է՜հ, մի օր մեր բախտն էլ կբերի, այս մղձավանջից դուրս կգանք ու կապրենք, ինչպես աշխարհի շատ այլ երկրներ, բարեկեցիկ ու խաղաղ: Ես հավատում եմ դրան:

Էդոն զարմացած աչքերով նայեց նրան, կարծես հասկացնել տալով, որ երեխա է վերջիվերջո, ինչ-որ բան լավ չհասկանալու իրավունք ունի: Մանկական միամտությունից դրդված՝ հարց ուղղեց նրան.

– Իսկ ինչ է, կա՞ տեղ, որ այսպես չի՞:

Անծանոթ տղամարդը շփոթվեց հարցից: Երեխայի միամիտ հարցը իրեն նորից աշխարհին անիծելու առիթ տվեց: Մի՞թե այս երեխան արժանի է նման մանկություն ունենալուն, ինչպես շատ երեխաներ: Ինչո՞ւ նա պիտի անգամ չիմանա, որ այլ կերպ էլ է հնարավոր, որ ավելի լավ կյանք կա աշխարհում, ուղղակի մեզ չի հասնում: Այս իրականությունը ճնշվողի և հավերժ անարդարությունների մեջ արդարություն փնտրելու արդյունքն է, որին փորձում ենք հակադրել և հակակշռել մեր փառավոր անցյալը որպես սփոփանք: Բայց ո՞ւմ է դա հիմա հետաքրքիր: Հզոր ես հիմա, ուրեմն կարող ես անել ամեն ինչ, թույլ ու տկար ես հիմա, ուրեմն պատրաստ պիտի լինես դիմադրել քեզ հոշոտել ցանկացող ուժերին: Եվ մենք դիմադրում էինք: Ավելին՝ կարողացանք հաղթել, ու այդ հաղթանակով սկսեցինք ապրել: Բայց ինչպես ժամանակը ցույց տվեց ապրելն ու ոգեշնչվելը քիչ էր, պետք էր ամրացնել, պետք էր հենց հաջորդ օրվանից սկսել ներսից հզորանալ, պետք էր «չքնել», այ սրա մասին ցավոք չխոսվեց: Պարտությունը կոփում է, հաղթանակը՝ թուլացնում գիտակցությունը, հետևաբար նաև մնացած ամեն ինչը:

Տղամարդը լուռ նայեց մի պահ Էդոյին, բարի ժպտաց ու ուզում էր օգնել, ուզում էր ուղեկցել ծնողների մոտ, քանի որ տարօրինակ էր համարում՝ եթե ծնողների հետ է, ապա ինչո՞ւ են թողել՝ մենակ

այսքան հեռու գնա նրանցից: Տեսնելով երեխայի համառությունը, չցանկացավ դեմ գնալ նրա կամքին: Տղամարդու կերպարը ինչպես անակնկալ հայտնվեց, այնպես էլ անակնկալ անհետացավ մշուշի մեջ: Վերջինս այդպես էլ խորթ ու անհասկանալի մնաց Էդոյի համար. ինչո՞ւ հայտնվեց, ինչո՞ւ հեռացավ, ընդհանրապես ո՞վ էր այդ մարդը:

1995 թվականի սեպտեմբերի սկիզբն էր: Էդոն երկու ամիս է, ինչ շարունակում էր այս ու այն կողմ թափառել, գիշերել որտեղ պատահի: Օրվա ընթացքում մի կտոր ցամաք հաց էր խնդրում ուտելու հացի փռերի վաճառողներից, որ սովից չմեռնի: Մարդիկ բարի էին. ընդառաջում էին: Ամեն անգամ տարբեր տեղ էր գնում, որ չկասկածեին, թե անտուն թափառում է: Ընդհանրապես այն ժամանակվա դժվարին կյանքը մարդկանց չէր չարացրել, ինչը չես ասի այսօրվա մասին, երբ կյանքը անհամեմատ ավելի բարեկեցիկ է: Մութ գիշեր էր, հերթական դեգերումների մեջ էր: Քայլում էր մի նեղլիկ փողոցով, երբ հանկարծ լսեց, թե ինչպես է թափառական մի շուն հաչում իր վրա, իսկ հետո այդ շունն ընկավ իր հետևից: Երեխան սարսափած վազում էր պարզ չէ, թե ուր: Այդ արագության տակ սայթաքեց ու վայր ընկավ, սակայն շունը չհասավ նրան, այլ մեկն այդ պահին, փայտով հարվածելով շանը, հեռու քշեց տարածքից: Այդ մեկը, ինքնավստահ կեցվածքով, անվախի դիմակը քշտած դեմքին, մոտավորապես 13 տարեկան տղա էր: Մի պահ իրեն սուպերմեն զգալուց հետո, կողմնորոշվեց ու, լույսի լամպը ձեռքն առած, քայլեց դեպի Էդոն: Երբ արդեն շատ մոտ էր, ասաց.

– Ա՛յ կոպերֆիլդ, էս որտեղի՞ց հայտվեցիր: Շունը վախդ բռնե՞լ էր: Լավ, վե՛ր կաց, տեսնեմ հո՞ բան չի եղել քեզ,– օգնում է, որ էդոն վեր կենա և շարունակում,– հանգիստ եղիր, նա այլևս այս կողմերում չի երևա: Իսկ եթե երևա, ես կողքիդ եմ, շանսատակ կանեմ դրան:

– Ես Էդոն եմ, իսկ դո՞ւ:

– Իմ անունը Արթուր է: Ասա տեսնեմ՝ ինչ ես կորցրել այս կողմերում:

– Ես ոչինչ էլ չունեմ, որ մի հատ էլ կորցնեմ:

– Տուն-տեղ չունե՞ս,– մի փոքր կոպիտ տոնայնությամբ հարցրեց Արթուրը:

– Չէ՛, թափառում եմ այս ու այն կողմ, ուզում եմ ետ վերադառնալ, որտեղից, որ ինձ բերել են, բայց չգիտեմ՝ դա որտեղ է,– խուճուճ պատասխան տվեց Էդոն: Որից հետո մի փոքր լռություն տիրեց, քանի որ Արթուրն ուղեղում մարսում էր լսածն ու տեսածը: Իսկ վերջին նախադասությունից, քանի որ ընդհանրապես գլուխ չհանեց, որոշեց Էդուարդին տանել իրենց տուն. մայրը հարցուփորձ կանի: Դրա համար ասաց.

– Լավ, արի՛ քեզ տանեմ մեր տուն:

Արթուրը Էդոյի ձեռքը բռնում է, ու երկուսով մոտակա մուտքից մտնում են շենք, բարձրանում վերև: Արթուրի մայրը ուրախությամբ ընդունում է փոքրիկին ու կերակրում, թեյ խմեցնում: Ընթացքում փորձում է պարզել, թե որտեղից է նա: Ինչ-որ կցկտուր բաներ է պատմում Էդոն, դժվար է լինում կապել իրար դրանք, սակայն մի բան է հասկանում, որ երեխան մանկատնից է փախել, ու դա լավ չէ: Էդոն նրան պաղատում էր չհանձնել իրեն նորից մանկատուն, ավելի լավ է ուղղակի թողնի նա գնա: Սակայն ինչպե՞ս կարող էր այդ կինը թողնել երեխային փողոցներում նորից անտեր թափառելու: Որոշում է հայտնել մանկատանը, որ երեխան իր մոտ է և որդեգրման դիմում ներկայացնել: Չնայած լավ գիտեր, որ առողջական խնդիրներ ունի, որոնք ամենայն հավանականությամբ շուտով սրվելու էին, բայց դրա մասին մանկատան աշխատողներին ոչ մի խոսք չասաց: Էդոն էլ իր հերթին համառորեն չէր նահանջում. սպառնում էր, որ նորից է փախչելու:

Արթուրի ծնողներն իր հետ միասին Սումգայիթի ջարդերից մազապուրծ եղած մի կերպ հասել էին Երևան: Տատիկին ու պապիկին Սումգայիթում սպանել էին: Մնացած բարեկամները ցրվել էին աշխարհով մեկ, նրանցից լուր չկար: Իսկ Արթուրի հայրը պատերազմի ժամանակ Երևանից մեկնել էր ռազմաճակատ, որտեղից մեկ տարի անց լուր էր ստացվել, որ նա զոհվել է: Այդպես ողջ էին մնացել միայն Արթուրն ու իր մայրը՝ Արփինեն:

Էդոն մանկատանը էլի մի որոշ ժամանակ զոռով մնում է մինչև Արփինեն ավարտին հասցնի որդեգրման գործընթացը: Վերջապես նա դուրս է գալիս մանկատնից և տեղափոխվում Արփինեի ու Արթուրի հետ ապրելու: Լավ ընկերանում են մինյանց հետ, ասես երկու եղբայր լինեն: Արթուրը շատ է օգնում, որ Էդոն կրթվածության պակաս չզգա, միասին դասերն էին սովորում: Դա իհարկե լավ էր, քանի որ այդպես նա կարողացավ Էդոյին ետ պահել վատ շրջապատ ընկնելու վտանգից: Արթուրն իր մայրիկից այնպիսի դաստիարակություն էր ստացել, որ հասուն մարդու պես էր դատում արդեն այդ տարիքում:

Արփինեն հիվանդ էր: Օրերից մի օր ինքնազգացողությունը կտրուկ վատացավ: Հարևանները շտապօգնություն կանչեցին: Արթուրն ու Էդոն փայտերի կույտը ձեռքներին ներս են մտնում, և Արթուրը բղավելով փայտերը նետում է գետնին ու վազում դեպի մայրը: Թանկարժեք բուժում էր նրան հարկավոր, սակայն նրանք նման հնարավորություն չունեին: Սեփական տուն էլ չունեին, հանրակացարանում էին ապրում: Արփինեի վիճակը գնալով վատանում էր: Արթուրը ուզում էր թողնել դպրոցը, սակայն մայրը նրան արգելեց: Այստեղից-այնտեղից տարբեր աշխատանքներ էին կատարում դպրոցից հետո երկու ընկեր, որ կարողանային գոնե ապրուստ վաստակել և իրենց մորը պահել: Արփինեն արդեն անկողնային հիվանդ դարձավ, և շտապ վիրահատական միջամտություն էր անհրաժեշտ, սակայն չէին կարող դիմել այդ քայլին, քանի որ աղքատ էին: Արթուրն իր տեղը չէր գտնում անճարությունից: Մի օր Արփինեն նկատեց, որ տղաները ինչ-որ բան են փսփսում իրար ականջի, թաքուն խոսում են, ինչ-որ պլաններ են գծում: Նա կանչեց իր մոտ Արթուրին և ասաց.

– Եթե դու համարձակվես գողություն անել, իմացիր, որ այդ պահին դու ինքդ քո ձեռքով ինձ սպանել ես:

– Մա՛մ, բայց...

– Ոչ մի բայց,– կտրուկ առարկեց մայրը:

– Ես չեմ ուզում քեզ կորցնել, մա՛մ, հասկանո՞ւմ ես: Ի՞նչ անեմ ուրիշ, ես տարբերակ չունեմ,– լացելով կմկմաց Արթուրը:

– Դա տարբերակ չի, դա կործանում է, ընդ որում ոչ միայն քո կործանումն է, այլ նաև էն մի մատ էրեխու: Շատ հաճախ մարդիկ իրենց սխալ քայլերն արդարացնում են՝ ասելով, թե հանգամանքներն են ստիպել: Դա ինքնախաբեություն է, քանզի ցանկացած փորձություն պետք է հաղթահարել պարզ ճակատով: Երկընտրանքի առաջ կանգնելով՝ ընտրել ճիշտ կյանքը, ինչքան էլ այն ցավալի հետևանքների քեզ հանդիպեցնի,– խրատեց իր զավակին Արփինեն: Այնուհետև շարունակեց իր խոսքը: – Մարդիկ հավերժ չեն, ճակատագրերը՝ տարբեր: Կներես, տղա՛ս, որ ստիպված ես այս ամենի միջով անցնել, և դեռ ավելի դժվար կյանք պիտի սպասի քեզ, առանց ինձ, մենակ: Սակայն կենդանի, թե մեռած, ես ուզում եմ միշտ հպարտանալ քեզնով: Դրա համար ապրիր քո կյանքի ամեն մի վայրկյանն այնպես, որ չստիպես ինձ երկնքում ամաչել քո փոխարեն: Միշտ հիշիր, թե ինչ եմ ես քեզ հասցրել սովորեցնել այս կարճ կյանքիս ընթացքում,– մայրը մի պահ հոգոց հանեց, դժվարանում էր խոսել, արցունքները հոսում էին, բայց պիտի միտքն ավարտին հասցներ:– Բալե՛ս, ես միշտ երկնքից պահապան կլինեմ քեզ, բայց խոսք տուր ինձ, որ կյանքդ ազնիվ ու արդար կապրես մինչև վերջ: Թեկուզ դժվարությամբ, բայց հալալ քրտինքով կվաստակես քո հացը: Հավատա՝ Աստված չի կարող դա չնկատել: Անգամ եթե մարդիկ ապաշնորհ գտնվեն, նա կտա քեզ արժանի երջանկությունը: Կներես ինձ նորից, բալե՛ս, որ քեզ ու Էդոյին մենակ եմ թողնում այս գազան աշխարհում: Երբեք չդադարեք մարդ լինել, դա է ամենադժվարն այս կյանքում:

– Մա՛մ, մամա՛... մա՛մ, խնդրում եմ, թող մի բան անեմ քեզ համար, հա՛, թող ես հետո զղջամ իմ արածի համար, միայն թե քո կյանքը կարողանամ փրկել: Այդ անտեր փողն ի՞նչ է, որ մենք չունենք, հը՛: Դրա պակասից մարդ պիտի մեռնի հա՞, այդպե՞ս է ձևը:

– Ես, ինչ որ պետք էր, քեզ ասացի: Հուսամ ինչպես առաջ էր, հիմա էլ է քեզ համար իմ խոսքը թանկ,– ցածրաձայն ասաց Արփինեն:

– Հա՛, բայց ոչ քո կյանքից թանկ:

– Մարդու խոսքն ու արարքները հենց իր կյանքն է, իր տեսակն է պատկերում: Ես քեզ արդեն պատկերեցի իմ սրտում, թե ինչպիսին կուզեի, որ իմ որդին լիներ: Դու այդպիսին ես հիմա, մի փչացրու ինքդ քեզ ու ոչ միայն քեզ, խնդրում եմ: Ապրիր քեզ բաժին ընկած մնացած կյանքը մարդու պես: Դա ամենամեծ բանն է, որ դու կարող ես ինձ համար անել: Դրանից առավել ես ոչինչ չեմ ուզում քեզնից,– Արփինեն դժվարությամբ արտաբերեց վերջին խոսքերը. ուժասպառ էր, էլ չէր կարողանում շարունակել զրույցը:

Այս կետում նրանց խոսակցությունն ավարտվեց: Արթուրը գնաց սենյակ ու փակվեց այնտեղ. ոչ մեկին չէր ուզում տեսնել: Անդադար լալիս էր, վհատված էր ու հուսահատ: Իր տարիքի համար դժվար ընտրության առջև կանգնած լինելով՝ չէր կարողանում կողմնորոշվել՝ ենթարկվի մայրիկի խոսքերին և կտրուկ քայլերի չդիմի, թե ամեն դեպքում գործի իր մտածածի պես և փորձ անի մեծ գումար հայթայթել գողությամբ: Էդոն Արփինեի սենյակում էր. չհամարձակվեց մտնել Արթուրի մոտ: Ինքն էլ էր սրտնեղած, բայց ամեն ինչ անում էր, որ իրեն ուժեղ պահեր: Չէր ուզում ցույց տալ իր ներքին վախերը, ասես ցանկանում էր ապացուցել, որ ինքն արդեն մեծ տղա է և ունակ է մեծ մարդու պես իր սեփական «ես»-ին հրամաններ տալ: Արփինեի կիսաբաց աչքերից ոչ մի մանրուք չէր վրիպում, այս մեկն էլ չվրիպեց: Նա կամաց ձայնով կանչեց երեխային իր մոտ: Էդոն մոտեցավ և ասես մոռացել էր, թե ինչպիսի պինդ կերպարանք էր ինքն իրեն պարտադրել, միանգամից թուլացավ ու ընկավ Արփինեի գիրկը:

Մի ամիս անց Արփինեն աչքերը փակեց ու ընկղմվեց հավերժ քնի մեջ: Արթուրն իրեն պատեպատ էր տալիս, հարևաններն էին հավաքվել, այս ու այն կողմ էին վազվզում, փորձում էին հանգստացնել երեխաներին: Այս անգամ արդեն նրանց երկուսին տարան նույն մանկատունը, որտեղից փախել էր Էդոն:

– Վերջը ես էլ հայտնվեցի այնտեղ, որտեղ միշտ վախեցել եմ հայտնվել,– խորը հոգոց հանելով՝ ասաց Արթուրը, երբ մոտեցան մանկատան դարպասներին:

Երեք տարի անց:

Տղաները հարմարվել էին իրենց ճակատագրի հետ և գոհ էին, որ գոնե միասին են: Երազանքներ էին հյուսում գիշերվա ժամերին, երբ քունը երկուսին էլ լքում էր, և իրենց առջև բազմում էր աստղազարդ երկինքն իր ողջ խորհրդավորությամբ:

Գարնանային պայծառ օր էր, երկինքը ջինջ, կապույտ: Արևը գցել էր իր շողերն ամենուր բնությանը, մարդկանց ջերմություն պարգևելու համար: Չնայած քաջ գիտեր, որ մարդկանց ջերմացնելը հեշտ առաջադրանքներից չէ, երբ իրենց հոգու ներսում նրանք ավելի սառն են, քան 36,6 ստանդարտ ջերմաստիճանի նորման: Մանկատան երեխաները, սենյակում խումբ-խումբ կազմած, աղմկելով խառը խաղեր էին խաղում իրար հետ, երբ հանկարծ դուռը բացվեց, և մի խումբ մարդկանց ուղեկցելով ներս՝ նրանց հետ միասին ներս մտավ նաև մանկատան տնօրեն տիկին Սուսաննան:

– Երեխանե՛ր, դադարեցրե՛ք ձեր խաղերը, հյուրեր ունենք... Ի՞նչ է, չե՞ք ուզում դիմավորել նրանց: Արտերկրից են... Դե՛, ի՞նչ է պատահել ձեզ, ապա մի կանգնեք, տեսնեմ: Բոլորդ այստեղ եք չէ՞:

Երեխաները իրենց աշխույժ խաղը մի պահ դադարեցրին: Մի գանգրահեր մանչուկ, արագ-արագ առաջ եկավ և փորը ցցած, հպարտ ու ձիգ դիրք բռնելով տիկին Սուսաննայի ու մյուս հյուրերի առջև, բոցկլտացող ու զվարթությամբ փայլող կայտառ շագանակագույն աչուկները ինչքան ուժ ուներ գլխի հետ միասին վերև հառած՝ հայտարարեց ի լուր աշխարհին Էդոյի տարածքում չլինելու մասին: Այնքան գոհ էր իր այդ արարքից, քիչ էր մնում մյուսներին հավատացներ, թե, ինչպես ինքն է կարծում, այդ լուրով աշխարհի փրկության սկիզբն է դնում:

– Իսկ ո՞ւր է,– շփոթված հարցրեց մանկատան տնօրենը գանգուր մազերով փոքրիկ տղային, ով դեռ չէր սպառել ինքն իրենով ու իր անչափ մեծ համարձակությամբ հիանալու ցանկության պաշարը:

– Գնացել է բակն ավլի,– քմծիծաղով ասաց տղան և շարունակեց հեգնել՝ ծիծաղը մի կերպ զսպելով,– դե, երևի մեզ հետ ձանձրալի է:

– Ի՞նչ է ուզում ասել դրանով, որ բակն ավլելը ավելի հետաքրքիր զբաղմո՞ւնք է,– մի քիչ բարկացած տոնով արձագանքեց տիկին Սուսաննան, ասես չնկատելով, որ մի տեսակ անհարմար զրույց ստացվեց անծանոթ մարդկանց ներկայությամբ, բայց երբ նկատեց, արագ փոխեց խոսակցության թեման: – Դե՛ ինչ, սիրելինե՛րս, ծանոթացեք, պարոն Մեթյու Բրիսթոնը և նրա տիկինը՝ Էնջին, եկել են ձեզ այցելության հեռավոր Ամերիկայի Միացյալ Նահանգներից: Նրանց հետ շփման հարցում մեզ օգնելու է իրենց հարևանուհին՝ գեղեցկուհի Անուշը, ով նույնպես մեր հյուրերի հետ ԱՄՆ-ից է եկել: Ազգությամբ հայ է: Մինչ դուք նրանց կզբաղեցնեք, ես փորձեմ մեր ունեցած համեստ հնարավորություններով փոքրիկ հյուրասիրություն կազմակերպել մեր հարգարժան հյուրերի համար:

Երեխաների հետ մի լավ զբաղվելուց հետո, ամերիկացի հյուրերը Անուշին խնդրեցին դուրս գալ իրենց հետ միասին բակ մի քիչ դրսում քայլելու և առանձին զրուցելու տեսածի և լսածի վերաբերյալ: Նրանք ցանկանում էին կողմնորոշվել՝ արդյոք այս մանկատնից ի վերջո երեխա որդեգրելու են, թե մի քանիսը ևս այցելեն: Հանկարծ տեսան հեռվում մի տղայի, ով ավելը աջ ու ձախ էր տանում, իբր ուզում էր ավլել, բայց արդյունքում լրիվ ուրիշ բան էր ստացվում. տարածքի մի հատվածից աղբը քշում էր կամ ավելի ճիշտ տշում էր նույն տարածքի մեկ այլ հատված: Էդոն էր, մի քանի ժամ է, ինչ բակում էր, և չէր ցանկանում ներս գնալ: Արթուրն էլ այդ օրերին հիվանդ պարկած էր, դուրս չէր գալիս ու Էդոն իրեն առանց ընկերոջ ուղեկցության շատ անսովոր ու տխուր էր զգում: Սրտնեղած էր, մանկատան բանտարկյալ մթնոլորտը շատ էր ճնշում նրան, չնայած հասկանում էր, որ այդ դարպասներից դուրս այնպես չի, որ կյանքը վայելք է (արդեն մեկ անգամ փորձել էր և համոզվել): Միևնույն ժամանակ անցյալի աղոտ պատկերներն էին իր մտքերի հորիզոնը փակում: Նա չէր կարողանում հասկանալ՝ մոռանալ է ուզում ամեն ինչ, թե ընդհակառակը, վերհիշել ամենն ամենայն մանրամասնությամբ: Բայց ինչի՞ համար, դա ի՞նչ կտար իրեն, իր որբացած ու միայնակ վիճակը չէր թեթևացնի:

Էնջին Անուշին խնդրեց, որ կանչի այդ երեխային իրենց մոտ: Նա այդպես էլ արեց: Էդոն, մտքերի մեջ տարված լինելով, միանգամից չնկատեց, որ իրեն են ձայն տալիս: Հետո սթափվեց, գլուխը վերև բարձրացրեց, նկատեց անծանոթներին և մի քիչ վախեցած հայացքով սկսեց դանդաղ քայլել դեպի այդ կողմ: Էնջին բավականին բարետես կին էր՝ միջին հասակի, բաց կանաչավուն աչքերով, շատ կարճ սանրվածքով, հրեգույն մազերով, հասարակ հագնված: Կրում էր մուգ շագանակագույնի և կարմիրի խառնուրդից ստացված գույնով մի վերարկու, սպիտակ տաբատ ու սև բլուզ: Նրա հայացքից խոհեմություն էր հորդում: Մեթյուն պրոֆեսորի դեմք ուներ, ակնոցներով էր, զոռով ուզում էր լուրջ դեմք ընդունել, որ բոլորը նկատեն, թե ինչքան լուրջ կերպար է ինքը: Հագին սպիտակ բաճկոն էր, մուգ կանաչ վերնաշապիկ և ջինսե տաբատ: Մեջների հայավարի հագնվածը Անուշն էր՝ ամբողջը սև: Դիմագծերը ևս պարզ արտահայտված հայի դիմագծեր էին. խոշոր, սև աչքեր ուներ, չափազանց գրավիչ ու շատ բարեհամբույր աղջիկ էր:

– Այդ ինչո՞ւ ես տխուր,– հարցրեց Էնջին անգլերենով՝ մոռանալով, որ դիմացինը չի հասկանա:

Էդոն էլ ավելի զարմացած հայացքով նայեց անծանոթուհուն և ակամայից նշան արեց, որ ուզում է փախչել նրանցից: Անուշը հետ պահեց նրան, երբ բացատրեց, թե ինչ հարցրեց Էնջին օտար լեզվով: Էդոն, իր մայրենի լեզվով խոսք լսելուն պես, պատասխանեց.

– Էնպես չի, որ նրանք, ում դեմքին ժպիտ է հաճախ նկատվում, իրականում ժպտում են, իսկ իմ տխրությունն իր պատճառներն ունի: Այն գոնե կեղծ կամ անարժեք չէ, այն նույն է և՛ իմ ներսում, և՛ այդ «ներսից» դուրս:

– Անո՛ւշ, ո՞վ է այս տղան, այս մանկատնի՞ց է,– շփոթված հարցրեց Էնջին:

– Այո՛, կարծում եմ այն տղան պետք է, որ լինի: Սենյակ մտնելուց նրա մասին խոսակցություն գնաց, հիշո՞ւմ ես բակը ավլելու գնացած երեխայի մասին,– մտաբերելով պատասխանեց Անուշը:

– Հա՛, հիշեցի, ճիշտ նկատեցիր, հաստատ նա է,– հաստատեց Էնջին:

– Իսկ ինչո՞ւ ես բակը ավլում: Դու ի՞նքդ ես ուզել դա անել, թե՞ քեզ ստիպել են: Միայն թե անկեղծ պատասխանի՛ր,– հարցերի շարանը շարունակեց Էնջին:

Էդոն հետախույզի նման երկար-բարակ զննեց հետաքրքրասեր ամերիկուհուն, խելքը աշխատացրեց ու հարցին հարցով պատասխանեց.

– Իսկ դա Ձեզ ինչո՞ւ է այդքան հետաքրքրում, ո՛չ սեփականատերն եք տարածքի, ո՛չ էլ հայ:

Հարցին հարցով պատասխանելը Էնջիին և՛ բարկացրեց, և՛ ուրախացրեց: Բարկացրեց այն պատճառով, որ նման հանդգնություն և կոպիտ խոսելու սովորությունը կարող է լավ չանդրադառնալ այլ անծանոթների հետ նրա հետագա շփումների վրա, եթե դիտարկենք այն տարբերակը, որ դիցուկ բոլոր անծանոթներին է նման կասկածամտությամբ դիմավորում և ճանապարհում: Մյուս կողմից էլ ուրախացրեց, քանի որ ոչ ստանդարտ մտածելակերպը մի ինչ-որ խորհրդավոր երանգ էր տալիս, և ո՞վ գիտի՝ ինչ է թաքնված այդ փոքրիկ, կծկված, բայց առյուծի սիրտ խաղացնող մարդուկի մեջ: Ինչևէ, մտորելու երկար ժամանակ չուներ և պատասխանեց իրեն վայելուչ կոռեկտությամբ ու հանդարտությամբ.

– Հասկանում ես, ուղղակի քո տարիքի երեխաները կամ հիմնականում քեզնից փոքր, ինչքան նկատեցի, հիմա ներսում խաղում են, ժամանակ են անցկացնում: Մտածեցի՝ կարող է քեզ ինչ-որ մեկը նեղացրել է, որ դու առանձնացել ես նրանցից, կամ լավ չեն վերաբերվում:

– Հանգիստ եղեք, ինձ ճակատագիրն արդեն մի լավ նեղացրել է: Այնպես որ... ով էլ ինչ անի, ինձ վրա այլևս չի ազդում, տիկի՛ն:

Տղայի պատասխանը նորից զարմացրեց տիկնոջը: «Այսքան խո՞րը, չէ սա արտառոց երեխա է». մտքում ինքն իրեն ասաց Էնջին:

– Անո՛ւշ, ես այս երեխայի հետ կապված ինֆորմացիա եմ ուզում իմանալ տնօրենից, դա ինչպե՞ս կազմակերպենք,– հապճեպորեն Անուշի ականջին շշնջաց Էնջին՝ զուգահեռաբար հայացք գցելով նաև Մեթյուի դեմքին, ասես նրանից ևս թույլտվություն խնդրելով դիմելու այդ քայլին:

– Հիմա կկանչեմ նրան,– ասաց Անուշն ու միանգամից վազեց դեպի մանկատան տնօրենի աշխատասենյակը:

Մի քանի րոպե անց Անուշը վերադարձավ տնօրենի հետ միասին:

– Ա՜յ քեզ ավազակ, այս ի՞նչ չարքաշ գործի է բռնվել, էլ ի՞նչ պատուհասություն ուներ գլխներիս բերելու,– ծիծաղկոտ դեմքը չթաքցնելով՝ կատակեց Սուսաննան, այնուհետև, զգալով, որ իր խոսքերն այդքան էլ տեղին չդիտվեցին, հավելեց: – Լավ ինչևէ, տղա՛ ջան, բարձրացի՛ր վերև, Արթուրը քեզ է սպասում, ասում է. «ինչո՞ւ է ինձ այսքան ժամանակ մենակ թողել ընկերս»,– թույլ նկատվող պահանջկոտությամբ և հյուրերի մոտ աչքի ընկնելու համար իրեն վայել սեթևեթանքով Էդոյին դիմեց Սուսաննան:

– Չէ՛, դուք խնդրում եմ չմտածեք, թե ես եմ նրան այս հանձնարարությունը տվել, մենք երեխաներին շատ լավ ենք նայում: Ուղղակի մեր Էդուարդը սիրում է առանձնանալ, մենակով իր համար ինչ-որ զբաղմունք գտնել ու զբաղվել, անգամ եթե այդ զբաղմունքը հարիր չէ նրան,– սկզբում դժգոհ հայացքը դեպի մանկատուն քայլող Էդոյի վրա սևեռած, ապա արդեն ժպտադեմ հայացքը ինքնաարդարացման ճառն ասելուն զուգահեռ հյուրերին ուղղելով՝ ասաց տիկին Սուսաննան:

– Չէ՛, խնդիր չկա, տիկի՛ն Սուսաննա, իսկ ի՞նչ կպատմեք մեզ նրա մասին,– հարցրեց Մեթյուն, ով չնայած այդ խոսակցությունների մեջ աչքի չընկավ ակտիվությամբ, բայց կողքից զգուշորեն զննում էր երեխային, ասես իր հոգեբանի մասնագիտական կարողություններն էր ուզում լարել պատեհ պահին:

– Նրա մասին շատ բան հայտնի չէ: Ինքն էլ, ինչպես հասկացաք, բավականին ինքնամփոփ տղա է իր բնույթով: Նրան այստեղ

Արցախից են բերել, և բերողն էլ շատ բան չգիտեր նրա մասին: Մի ծերուկ էր: Նա հայտնեց, որ երեխայի ծնողները ամենայն հավանականությամբ մահացել են, մայրը հաստատ մահացել է, իսկ հոր մասին տեղեկություն չուներ: Մի որոշ ժամանակ հոգ են տարել մարդ ու կին այս երեխայի մասին: Երբ էլ հնարավորությունները չէին ներում. նրանք էլ էին փախստական, ստիպված որոշեցին հանձնել մանկատուն: Այդպես նա հայտնվեց մեզ մոտ, 1994 թ.-ի դեկտեմբերն էր դա: Երեխան մի որոշ ժամանակ չէր սնվում, քչախոս էր, մենք շատ անհանգստացած էինք նրա առողջական վիճակով և ավելի շատ հոգեվիճակով, իսկ հենց անձամբ իրենից միայն մոր անունն ենք կարողացել պարզել: Սառա է անունը,– իմացած-չիմացածը կմկմաց տնօրենը:

– Իսկ, ներեցեք, հիմա քանի՞ տարեկան է նա,– հարցեց Էնջին:

– Տասներկու: Մի անգամ արդեն որդեգրել են նրան այս մանկատնից, սակայն խնամակալը երկու տարի հետո ծանր հիվանդությունից մահացավ, և նրա որդու՝ Արթուրի հետ միասին նորից բերեցին մեր մանկատուն:

– Լավ, տիկի՛ն Սուսաննա, մոտավորապես պարզ է ամեն ինչ: Միգուցե ինչ-որ մի օր ավելին խոսի, եթե իհարկե հիշում է: Չմոռանանք, որ այդքան էլ հասուն չի եղել այդ ժամանակ, հնարավոր է, որ ուղղակի չի հիշում կամ չի հասկացել, թե ինչ է կատարվել իր շուրջը, դրա համար էլ չի արտահայտվում: Մենք հիմա գնանք, հնարավոր է նորից գանք, պետք է քննարկենք մեր հետագա անելիքները: Բարով մնաք, շատ հաճելի էր այստեղ գտնվելը և հատկապես նման ջերմ հյուրընկալության արժանանալը Ձեր կողմից: Շնորհակալ ենք,– մեծ գոհունակությամբ շեշտեց վերջին խոսքերը Մեթյուն, և նրանք հեռացան:

Մի քանի օրից ամերիկացի հյուրերը նորից են հայտնվում և խնդրում են տիկին Սուսաննային թույլ տալ Էդուարդին Երևանով զբոսնելու տանել: Մի քանի ժամից վերադառնում են: Էդոն այդքան ուրախ երբեք չէր եղել. աչքերը պսպղում էին, ուրախ թռչկոտում էր ու ուզում էր անընդհատ գրկել ու համբուրել թե՛ Անուշին, թե՛ Էնջիին:

– Հավանաբար ընտիր ժամանակ եք անցկացրել հա՞: Էդոյի դեմքին ամեն ինչ փորագրված է,– ժպտալով ասաց Սուսաննան:

– Այո՛, տիկի՛ն Սուսաննա: Դուք ճիշտ եք նկատել, իսկ որդեգրման հարցերով կարո՞ղ ենք Ձեզ հետ առանձին խոսել,– հարցրեց Էնջին:

– Իհարկե, եկեք անցնենք իմ սենյակ:

Ի վերջո որդեգրման գործընթացը բարեհաջող ընթացք ունեցավ:

– Հը՛ն, ընկե՛րս, խոստացիր, որ չես մոռանա ինձ,– ասաց Արթուրը:

– Անգամ չկասկածես, դու իմ եղբայրն ես, ու միշտ մնալու ես իմ եղբայրը,– հուզմունքը զսպելով՝ ասաց Էդուարդը հրաժեշտի պահին:

✷✷✷

Նյու Յորք: Մեծ մեգապոլիս, որտեղ կյանքը վազում էր այդ նույն կյանքից ավելի արագ: Ամերիկան մեծ շոկ էր Էդոյի համար, չափից դուրս մեծ էր իր չափերով: Վախենալու չափ անեզր էր թվում, որտեղ դեռ ոտք չդրած արդեն քեզ կարող ես մոլորյալ համարել: Բայց շնորհիվ Անուշի, ով ստանձնել էր երեխայի խնամքի պատասխանատվության ամենամեծ բաժինը, մասնավորապես կրթության մասով, քանի որ ծնողներն աշխատում էին ամբողջ օրը, Էդոն կարողացավ մնալ հայ և միևնույն ժամանակ դառնալ ամերիկացի: Էդուարդը շատ ընդունակ էր, հերիք չի հասցնում էր իր ամերիկացի դասընկերների չափ դաս անել, մի բան էլ առաջ էր ընկնում ծրագրից: Անուշը չէր թողնում, որ մի րոպե նա պարապ մնա: Իր պարտքն էր համարում պատշաճ ծանոթացնել նաև հայկական մշակույթի գոհարներին, մանավանդ, որ ինքը՝ Անուշը, ժամանակին՝ մինչև Նյու Յորք տեղափոխվելը, երգելիս է եղել Գլենդելի հայկական եկեղեցիներից մեկում: Նա և՛ պահպանողական, և՛ ժամանակակից կյանք վարող անձնավորություն էր: Կարծում էր, որ մարդ չպիտի մերժի ժամանակակիցը՝ միևնույն ժամանակ չթերագնահատելով նախնիների թողած ժառանգությունը: Նրա կերպարը շատ

մեծ ազդեցություն ունեցավ Էդոյի՝ որպես տեսակ ձևավորվելու և կայանալու հարցում: Անուշը ոչ միայն դարձավ նրա դաստիարակը պատանի հասակում, այլ շարունակեց իրեն ուղեկցել նաև ավելի հասուն տարիքում նրա բռնած բոլոր գործերում:

Բրիսթոնների ընտանիքը ոչինչ չէր խնայում, որ Էդուարդն իրենց ընտանիքում իրեն շատ լավ զգա: Դա կարծես ստացվում էր, մանավանդ, որ Անուշն էլ նրանց կողքին էր, և նրանք մի կաթիլ չէին կասկածում, որ Անուշը կարող էր վրիպել լավ մարդ դաստիարակելու գործում: Բրիսթոնները մի փոքրիկ բնակարանում էին ապրում, շատ հարուստ չէին, սակայն տանը սերն ու ջերմությունն անպակաս էր:

Այս անգամ նյույորքյան պայծառ առավոտներից էր, ոչ թե Արարատյան դաշտի, սակայն այդ հանգամանքը արևին բացարձակ չէր խանգարում նույն շռայլությամբ իր ջերմությունը սփռել մարդկանց վրա: Ակնհայտ էր միայն, որ այդ մարդկանց առանձնապես դա չէր հետաքրքրում: Դա ամերիկացիների կյանքի ռիթմն էր՝ մարդկային հեղեղի հետ շտապել մի կողմ, հետո այդ նույն հեղեղի հետ սլանալ հակառակ կողմ: Խելագարվել կարելի է, սակայն նրանք արդեն սովոր էին: Շուրջբոլորը խառնաշփոթ վազք էր, ինչպես լինում է ցանկացած մեգապոլիսում ամեն օր ու ամեն ժամ: Էդուարդը այդպես էլ այդ խառնաշփոթ ու արագ սլացող կյանքին չէր հարմարվում: Նրա սիրտը լեռներում էր, նրան այդ լեռներն էին ձգում, որոնց նա կարգին չէր էլ տեսել, ուղղակի ձգում էին ու վերջ, առանց բացատրության: Ինչքան ժամանակներն անցնում էին, այնքան ավելի շատ էր նա իր հասուն կյանքում հետաքրքրվում իր հայրենիքով, ընդհանրապես չէր ասիմիլացվել: Արդարության համար պետք է նշել, որ դա իր ամերիկացի խնամակալների բարձր գաղափարախոսական մտածողության շնորհիվ էր նաև: Պարզ էր, որ եթե նրանք ցանկանային ամբողջությամբ կտրել Էդուարդին Հայաստանից ու հայերից, դա անելը չափազանց հեշտ էր, սակայն նրանք այդ ճանապարհով չգնացին: Չնայած նրանց նման շատերը միգուցե հենց այդ ուղին են բռնում օտարերկրյա երեխաներին որդեգրելուց հետո:

– Էդուա՛րդ Բրիսթոն, հեռու մի՛ գնա: Տեսնում ես չէ՞, ինչքան մարդ կա փողոցում, այնպես որ ուշադի՛ր եղիր, մեզ մոտիկ քայլի՛ր,– ասաց Էնջին՝ նայելով Էդոյի կողմը, ով վազվզում էր մոտակայքում՝ ուշադրությունը միայն շենքերի առաջին հարկերի գայթակղիչ ցուցափեղքերի վրա սևեռած:

– Թե չէ կարելի է կարծել, նա մեզ երբևէ լսում է: Չգիտե՞ս՝ ինքն իր մտքերի հետ վիճաբանությունների մեջ է անընդհատ: Մի քանի անգամ պետք է նույն բանն ասես, որ վերջապես հարցական դեմքով նայի վրադ ու ասի՝ «ի՞ն, ի՞նձ հետ էիք»,– կատակով արձագանքեց Մեթյուն:

– Ուշադիր եմ, դուք հանգիստ եղեք, ձեր հետևից գալիս եմ,– արագ բլբլաց Էդոն՝ ուշքն ու միտքը խանութների ցուցափեղքերից չկտրելով:

– Հա՛, ուշադիր ես, բայց դեռ հարց է՝ ինչին ես ուշադիր: Պատասխանեմ՝ ամեն ինչին, բացի մեզնից,– կատակները շարունակեց Մեթյուն:

Այդպես ուշադիր փողոցների շրջակայքը զննելով՝ հանկարծ կանգնեց մի հզոր շինության առաջ ու մոռացավ, որ ընտանիքի հետ է: Շինությունը վեր էր խոյանում խրոխտ կերպարանքով, ասես միակը լիներ շրջակա նմանատիպ մեծ շինությունների մեջ, սակայն այն միակը չէր բնականաբար: Ուղղակի մեր հերոսին այդպես թվաց, իսկ իրեն հենց այնպես ոչինչ չի թվում. միշտ ինչ-որ զուգադիպությամբ ներքին ձայնի ելևէջները նրան ճիշտ բաներ էին հուշում: Դա նա հասցրել էր նկատել իր մեջ և այս անգամ էլ չալարեց ու գնաց իր ներքին ձայնին ընդառաջ: Ներս մտավ… Զգում էր, որ ինչ-որ կարևոր բաներ էին տեղի ունենում այդտեղ, ինչպես և Ամերիկայի ցանկացած այլ նման շքեղ շենքում: Այս երկրում դժվար է պրպտող մարդու համար պարապ մնալ, միշտ ինչ-որ բան կարող ես գտնել առաջ տանելու համար, դրա համար էլ ինտուիցիաստներին այն ձգում է: Մի խոսքով ասում ենք Ամերիկա, հասկանում ենք գործ: Էդուարդին այդտեղ շատ նկատողներ չեղան, անվտանգության աշխատակիցներից կարողացավ հմտորեն ճողոպրել՝

առանձնապես շատ ջանք չթափելով, քանի որ չէր էլ կենտրոնացել նրանց վրա: Բախտ է, ի՞նչ ասեմ. երբեմն հանգամանքները դասավորվում են քեզնից անկախ, բայց քո օգտին: Գնաց թաքնվեց մի ինչ-որ աննկատ վայրում, բայց այնպես, որ կարողանա հետևել հետաքրքիր ընթացքին: Իսկ ընթացքը հետևյալն էր. տեսահոլովակ էին նկարահանում, կիսամերկ աղջիկներ, պարային համար ու հենց ինքը երգչուհին: Տպավորությունն այնպիսին էր, որ տանն ինչ կար-չկար ոսկեղենից խփել էր վզին, ինչպես հարիր է R&B ոճի մեջ հանդես եկող ամերիկյան շոուբիզնեսի հպարտ ներկայացուցչին: Մատներին 15 գույնի մանիկյուրի խառնուրդ քսած, բայց արդեն համը հանող (հետագայում Ադելի տրիումֆը բոլորիս ապացույց) ու չարչրքված թեմաների մեջ իր կարիերայի իմաստը տեսնող մի աղջնակ էր: Մի խոսքով, թեթև ռիթմով մի երգ, և համապատասխան տրամադրության էլ տեսահոլովակ: Ռեժիսորը բավականին խիստ մարդ էր երևում, աջ ու ձախ կարգադրություններ էր տալիս և բարձր բղավում.

– Մի քիչ արագացրե՛ք, ինչո՞ւ եք այդքան դանդաղ շարժվում: Բան եմ ուզում, արագ գնացե՛ք և բերե՛ք, քանի՞ օր կարող ենք ձգձգել նկարահանումները:

Հետո զգաց, որ ինքն էլ է չափն անցնում: Շատերի դեմքին հոգնածության ու դժգոհության նշույլներ նկատեց և անմիջապես մեղմեց տոնը ասելով.

– Լավ, ինչևիցե, տեսնում եմ ձեր նեռվերն էլ են իրենց պիկում: Կես ժամ ընդմիջում: Ազատե՛ք նկարահանումների հրապարակը, գնացե՛ք հանգստանալու:

Բոլորը ուրախացած արագ վազեցին դուրս, իրենց հետևից նաև ռեժիսորը: Էդոն շատ ուրախացավ՝ հասկանալով, որ բոլորն ասես իր համար տարածքը ազատած լինեին, որ ինքն իրեն այդ՝ իր համար անչափ հետաքրքիր տարածքի լիիրավ տերն ու տիրակալը զգար թեկուզև կարճ ժամանակով: Իսկը իր տեղն էր. այնքան ուսումնասիրելու բան կար: Էսպես աջ ու ձախ վազվզելով ու այս կամ այն գործիքին կամ սարքին ձեռք տալով՝ չնկատեց, թե

ինչպես պատահաբար սեղմեց գլխավոր նկարահանող տեսախցիկի «record» կոճակը, երբ ուսով միամիտ դիպավ տեսախցիկին: Ու մեկ էլ կադրում հայտնվեց ինքը, դանդաղ քայլերով հասավ կենտրոնական հատված՝ գլխավոր բեմին: Այն ամեն կողմից սպիտակ էր: Դրանից աջ՝ վերևում, լուսամուտ կար, որը մինչև դուրս գալը բացել էին օդափոխելու համար: Այդ լուսամուտից արևի լույսն էր վառ ճառագում ու ներթափանցում տարածք, լուսավորում այն: Պատահաբար նրա ուշադրությունը գրավեց այդ պատուհանը: Նայում էր այդ լույսին ու մոռացավ ժամանակի ու տարածության մասին ընդհանրապես: Ասես իր հոգին էր ուզում խոսել ու գոչել, որ ինչ-որ կարևոր բանի պակաս ունի: Ինչ-որ ներքին ձայն դրդեց նրան երգել: Շուրթերը երգում էին, բայց խոսում էր հոգին.

*Կանչէ՛, կռո՛ւնկ, կանչէ՛,*
*Քանի՜ գարուն է, քանի՜ գարուն է,*
*Ղարիբներու սիրտը կուծ-կուծ արուն է,*
*Ղարիբներու սիրտը կուծ-կուծ արուն է.....*
*..................................................................*
*Մի՛ լար, մայրի՛կ, մի՛ լար*
*Ես ղարիբ փեղ եմ, ես ղարիբ փեղ եմ,*
*Վարդանի հող ու ջրին, ես կարոտցել եմ,*
*Վարդանի հող ու ջրին, ես կարոտցել եմ.....*

Տղայի ձայնը աստվածային հնչեղություն էր ստացել: Երգը տարավ իրեն հեռու, ինքն էլ չգիտեր, թե կոնկրետ որտեղ, բայց նրա մոտ անսպառ ցանկություն առաջացավ գնալ ու հասնել այդ հեռվին: Հեռուն անծանոթ էր թվում, բայց միևնույն ժամանակ հարազատ, ասես այդտեղ է սկիզբ առել այն զրոյական կետը, որից սկիզբ էր առնում ամեն ինչ՝ և՛ անորոշությունը, և՛ այսքան տարվա ծագած ինչուների պատասխանները: Երգը տարավ նրան դեպի արևի ճառագայթներից ժայթքող լույսից արծաթաշող դարձած անտառներ, խայտաբղետ գույներով լեցուն արահետներ, գետերի

շառաչյուն, սարերի քրքիջ ու խինդ, դաշտերի սահող տարափ: Այդ ամենը նա պատկերացնում էր, Հայաստանով մեկ շրջագայած չկար, բայց հոգին մտովի ճախրում էր իր պատկերած հայրենիքով: Այդ հայրենիքից լավ հուշեր չկային, բայց անբացատրելի ձգողականություն կար: Մի քանի րոպե էր երգել ընդամենը, բայց ասես հավերժություն անցած լիներ, և հավերժության միջով անցած լիներ: Ժամանակը գոյություն չուներ Էդոյի համար այդ պահին, սակայն Ամերիկայում, հիշեցնեմ, ամեն ինչն է ժամանակ, և դրա շուրջն է ամեն ինչ ֆռում ու կառուցվում: Հենց այդ ժամանակապաշտ Ամերիկան կես ժամը լրանալուն պես ամենապունկտուալ կերպով հիշեցնել տվեց իր միշտ չհերիքող ժամանակի մասին ու խառնեց ամեն ինչ իրար:

– Դե՛, եկե՛ք, արագացրե՛ք, ո՞ւր եք, ասեցինք չէ՞, կես ժամ: Պարտադիր պետք է ինձ բարկացնեն, այսի՞նչ մարդիկ են,– կողքերը շուռումուռ գալով՝ նկարահանման հրապարակին էր մոտենում ռեժիսորը՝ «տրիվոգա» գցելով:

«Տրիվոգան» առաջին հերթին Էդոյի համար էր: Նա արագ տարածքում մի տեղ թաքնվեց, վախից կուչ էր եկել, սկսեց դողացնել: Կարծես հասկացավ, որ պետք չէր այդքան տարվել իրեն ընձեռնված հնարավորությունով, որն իրականում իրեն ոչ մեկ էլ չէր ընձեռնել, ուղղակի ինքն իրեն որոշել էր յուրահատուկ պարգևատրում նշանակել:

– Այս ինչո՞ւ է ամեն ինչ խառնած իրար: Մենք այսպե՞ս էինք թողել... Այս տեսախցիկը ինչո՞ւ է միացրած մնացել: Ես հաստատ հիշում եմ, որ անջատել էինք: Այս ի՞նչ խաղ է, չեմ հասկանում, մեկդ կբացատրի՞, թե ինչ է կատարվում,– ձայնը բարձրացրեց ներկաների վրա ռեժիսորը:

Էդոն այդ ժամանակ ավելի էր խառնվել իրար: Գիտեր, որ բռնացնեին, լավ չէր լինելու: Հնար էր փնտրում փախչելու, բայց խելքը բան չէր կտրում:

Մեկ էլ հանկարծ լսվեց օպերատորի զարմացած ձայնը ուղղված ռեժիսորին.

– Պարո՛ն Էդիսոն, կմոտենաք, բան եմ ցույց տալիս:

– Ասա՛, հիմա ի՞նչ ես հայտնաբերել,– անտարբեր քայլվածքով, առանց շտապելու մոտեցավ նրան ռեժիսորը:

– Ինչ չէ, ում,– սրամտեց օպերատորը՝ քմծիծաղը դեմքին:

– Այսի՞նքն ում... հանելուկներով մի խոսա հա՛, առանց այդ էլ տեսնում ես՝ տրամադրություն չունեմ,– բարկացավ ռեժիսորը:

– Այստեղ մի պատանի տղա է կադրում, ես մի քիչ հետ տարա ժապավենը և տեսա նրան,– ասաց օպերատորը:

– Ապա մի բեր տեսնեմ... Սա ի՞նչ նոր խաղեր են, միայն պատանյակն էր այս մեծական գործում պակաս,– հետաքրքրությունը չթաքցնելով՝ ուշադրությունը սևեռեց տեսախցիկին ռեժիսորը:

Ու լսեց առաջին հայացքից տարօրինակ թվացող ձայնն ու երգը:

– Կարո՞ղ ես այնպես անել, որ ավելի լավ լսվի՝ ինչ է երգում, կարգավորումներ արված չէին, դրա համար էլ ձայնը շատ թույլ է լսվում: Մեկ էլ խոշոր պլանով ցույց տո՛ւր նրան,– հրահանգեց ռեժիսորը:

Ներկաները մի պահ քարացան, բոլորի ուշադրությունը ռեժիսորի դեմքի միմիկայի վերլուծությանն էր ուղղված: Իսկ ռեժիսորը հուզմունքը չէր կարողանում խեղդել կոկորդում, արցունքները վար էին հոսում, իսկ ձեռքը բռունցք սարքած սեղմել էր կծքին: Գոռալ էր ուզում, գոռալ, որ լսում է հարազատ երգ, հարազատ լեզու: Նա ցածրաձայն սկսեց կրկնել. «սա իմ մոր լեզուն է, իմ մոր լեզուն»: Արտասվում էր ու կամացուկ մեղմ ձայնով, որ միայն իրեն շատ մոտ գտնվողները լսեն, ասաց.

– Նա հայուհի էր, այս երգը ես հիշում եմ, թե ինչպես էր նա ինձ երգում, իսկ ես չէի ուզում սովորել: Ինձ հետաքրքիր չէր, բայց մորս մահից հետո, երազում էի ևս մեկ անգամ այն լսել: Մայրս ասես երբեք այսքան մոտ չէր ինձ, ինչպես հիմա:

Մի որոշ ժամանակ լռություն տիրեց: Ոչ մեկ չէր համարձակվում խոսել: Բոլորը լուռ սպասում էին մինչև...

– Ո՞վ է այս տղան, գտե՛ք նրան, որտե՞ղ է նա,– հանկարծ բացականչեց ռեժիսորը, այնպես, որ սենյակի բոլոր անկյուններում լսվի:

Էդոն միայն այդ վերջին խոսքերը լսեց, մինչ այդ չէր կարողանում կենտրոնանալ, թե ինչ է կատարվում: Վերջին բառերը, որոնք փաստորեն իրեն էին ուղղված, ստիպեց նրան արագ և հանդուգն քայլեր ձեռնարկել: Նա, չմտածելով նրա մասին, որ իրեն միևնույն է նկատելու էին, արագ վազեց դեպի դուռը: Նրան բոլորը նկատեցին, ռեժիսոր Էդիսոնը ևս: Էդոն վայրկյանական դուրս թռավ շենքից, նրա ետևից ռեժիսորը: Վազում էին անդադար: Ռեժիսորը անընդհատ բղավում էր, որ կանգ առնի, սակայն ապարդյուն: Երկար փողոցները չափելով՝ հասան մի լեն ու բոլ մայրուղի: Ռեժիսորը բարձր գոռաց՝ «ես էլ եմ հայ» ու հենց այդ պահին հանկարծակի Էդոն կանգ առավ ու դողացնելով դանդաղ շրջվեց դեպի նա: Էդիսոնը ինքն իր վրա զայրացած մտքում մտածեց. «մի՞թե այդքան հեշտ էր քեզ կանգնեցնելը, գրո՛ղը տանի..... բա ո՞ւր էի էշի նման այսքան վազում»:

– Ես Ռոբ Էդիսոնն եմ,– ծնկները բռնած ու հազիվ շունչը տեղը բերելով՝ ասաց ռեժիսորը:

– Ես Էդուարդն եմ:

– Լավ անուն է: Միայն նորից չսկսես վազել, թե չէ կգժվեմ: Դու ինձ էն ասա՝ որտեղից այդ երգը գիտեիր:

– Անուշն է սովորեցրել:

– Ու քեզ թվում է՝ ես Անուշին պետք է այդպես լավ իմանայի, նա ո՞վ է,– պատասխանից չբավարարված, մի փոքր էլ զայրացած տոնով հարցրեց Էդիսոնը:

– Նա մեր հարևանուհին է ու միաժամանակ նաև իմ դայակը:

– Ի՞նչ դայակ, մեծ տղա ես, քեզ դայակն ինչի՞ն է պետք:

– Ես չհասկացա Ձեզ, պարո՛ն Էդիսոն,– հարցականի նշանը դեմքին գամեց Էդուարդը:

– Իսկ ինչի՞ քեզ թվում է, թե ե՞ս քեզ հասկացա: Լավ ինչևէ, դու էն ասա, թե ձայնդ որտե՞ղ են այսպես լավ մշակել, բացի այդ ընտիր տեմբռ ունես: Քանի՞ տարեկան ես:

Անծանոթ զրուցակցի խոսքերից շոյված՝ Էդոն իրեն սկսեց ավելի համարձակ պահել և պատասխանեց.

– 15 տարեկան եմ: Անուշն է ինձ հետ վոկալ պարապել մոտ երեք տարի:

Էդիսոնի դեմքին իր համար անսովոր քնքուշ ժպիտ առաջ եկավ: Առաջին անգամ էր այսպիսի կապվածություն զգում լրիվ անծանոթ մեկի նկատմամբ: Նրան անգամ լիովին անծանոթ Անուշն էր հարազատ թվում, ում հետ կապված էլ շարունակեց հարցադրումը.

– Չէ՛, ինչպես հասկանում եմ, դու ինձ այդ Անուշի հետ պետք է ծանոթացնես, մի տեսակ շատ հաճախ ես նրա անունը տալիս:

– Արժանի է, դրա համար էլ տալիս եմ,– հակահարված տալու իր հերթին անհամբերությամբ սպասող Էդուարդը միանգամից ճիշտ տեղում մեխեց:

– Լավ տեղն ես դնում հա՛: Արի՛ թեման փոխենք, լա՞վ: Ես այդպես էլ մի բան լիարժեք չհասկացա: Հիմա դու հա՞յ ես, թե՞ չէ:

– Այո՛, հայ եմ, Հայաստանից եմ եկել,– հպարտ-հպարտ բլբլաց Էդոն և աչքերին յուրահատուկ փայլ հայտնվեց, չէ՞ որ իր սիրելի Հայաստանի անունը տվեց:

– Ահա՛, իսկ քեզ ի՞նչ է թվում՝ ես ինչու այսքան քո հետևից ընկա:

– Երևի շատ բարկացրել եմ Ձեզ, քանի որ Ձեր նկարահանման սարքերին եմ ձեռք տվել, ժապավենը փչացրել ու էլի այդպիսի լիքը բաներ,– սա ասելով՝ Էդոն գլուխը կախեց և իր արարքներից ամոթխած չէր նայում դիմացինի աչքերին:

– Ո՛չ, տղա՛ս, դու ճիշտ չես հասկացել: Իմ մայրն էլ էր հայ: Մորս լեզուն շատ վաղուց չէի լսել, սիրտս տեղից պոկվեց այդ երգի հնչյուններից:

Այդ պահին չնախատեսված դադար եղավ նրանց խոսակցության մեջ: Չնայած պատճառն ավելի քան երբևէ պարզ էր երկուսին էլ: Էդոն նկատեց, թե ինչպես մի ակնթարթում վշտացան պարոն Էդիսոնի դարչնագույն աչքերը, նրանցից յուրաքանչյուրից հատիկ-հատիկ սկսեցին թափվել արցունքներ: Նա մի քանի րոպե լուռ նայում էր երկնքին, կարծես կապույտ երկնքում՝ ամպերի խառնիխուռն դասավորության մեջ, փնտրեր մոր վերացական

կերպարանքը: Գտավ նա այն, թե ոչ, Էդոն այդպես էլ չիմացավ, բայց պարզ էր, որ ուղղակի այդ պահին պիտի համբերատար ու լուռ սպասեր, մինչև իր զրուցակիցը հետ վերադառնար այն կետին, որում կանգ էր առել նրանց զրույցը: Էդիսոնը արցունքների մեջ խեղդեց բոլոր հույզերն ու հիշողությունները ու նորից անցավ իր առօրեական ստանդարտ հոգեվիճակին: Դա շատ լավ երևաց նրա հաջորդ մտքերում, որոնք ունեին խիստ ֆիկսված գործնական բնույթ.

– Ասեմ, ես նաև պրոֆեսիոնալ պրոդյուսեր եմ, շատերի ուղին եմ հարթել, դա իմ աշխատանքի մի մասն է: Ես այսքան վազեցի քո ետևից, որովհետև հասկացա, եթե հանկարծ քեզ բաց թողնեմ իմ ճանապարհից, բաց կթողնեմ այն շանսը, որ Աստված ընձեռում է ինձ: Աստված շանսը ձեռքից բաց թողնողներին մեղմ ասած դժվար թե հարգի, մանավանդ, որ այդ շանսը, այսինքն՝ հաջողությունը, միշտ չէ, որ բերում ու քո դիմաց է կանգնեցնում, որ դու էլ որոշես օգտվել կամ չօգտվել: Դու ինձ պետք ես, ես քո նմանին շատ-շատ եմ փնտրել: Ես հասկացա, որ քեզ հետ կարող եմ բարդ, բայց հրաշալի ուղի կերտել: Հրաշալի բոլոր առումներով, թե՛ ինձ համար, թե՛ քեզ: Պատրա՞ստ ես ինձ հետ քայլել նոր ուղիով, որ կգծագրեմ քեզ համար:

– Դե չգիտեմ: Իսկ ինձ ի՞նչ է սպասվում,– տարակուսած հարցրեց Էդուարդը:

– Դա արդեն իմ ու քո գործելաոճից պարզ կդառնա: Չնայած ասեմ, քանի որ ձայնիդ հասունության փուլում ես, ձայնդ խնայել է պետք: Լավ, էսպես կանենք: Ես քեզ աչքի տակ կառնեմ: Սկզբնական փուլում ուղղակի կաշխատենք պլաստիկայիդ ու երաժշտական գործիքներին տիրապետելու վրա, այնուհետև երբ արդեն վախենալու չլինի ձայնդ շատ ծանրաբեռնելը, ա՛յ, այդ ժամանակ կինոն կսկվի,– Էդիսոնը այս խոսքերով արդեն մտովի պատկերացնում էր Էդոյի փառքը ու նաև իր ստանալիք միլիոնները այդ փառքի քողի տակ:

Վերջապես Էդոյի դեմքին ժպիտ երևաց, որոշակիություն մտցվեց խոսակցության մեջ: Նա հասկացավ, թե իրականում այս

տարօրինակ արկածն ինչ էր ու ինչի համար էր: Իրոք որ, շանսը բաց թողնել չի կարելի, սակայն մի բայց կար: Մեր հերոսը բավականին համառն էր, եթե ինչ-որ բան նրա սրտով չէ, իսկ ինքը շատ մեծ ճաշակ ուներ, և դեռ այն կզարգացներ անշուշտ, ապա անհնար է նրան համոզելը, որ անի մի բան, որը չի ուզում: Նա զգուշացրեց դրա մասին Ռոբ Էդիսոնին և ստացավ համապատասխան հավաստիացումը պրոդյուսերի կողմից, որ համատեղ գործունեության մեջ որոշումներ կայացնելու դերը համատեղ կկիսեն: Խոստացավ, որ Էդոյի անհատականությունն ու նրա ցանկությունները առաջին պլանում կլինեն: Ինչից հետո կոնտակտներով փոխանակվեցին, պայմանավորվեցին նորից հանդիպել և արդեն բավականին ջերմ մթնոլորտում բաժանվեցին իրարից: Էդիսոնը հարցրեց, թե որտեղ է նա ապրում, և ճանապարհեց տուն:

Երբ Էդուարդը ուրախ-ուրախ տուն մտավ, մայրը քիչ էր մնում խելագարվեր: Անհանգստությունից գլուխը կորցրել էր, և ջղայնությունը բնականաբար թափեց գլխավոր մեղավորի վրա:

– Այդ ո՞ւր էիր, ավազա՛կ: Սրտներս տեղից դուրս էր թռել: Ամենուր քեզ էինք փնտրում, ոստիկանություն ենք զանգահարել: Կարելի՞ էր այդքան մեզ վախեցնել: Հիմա էլ ինչ-որ տաքսիից արքայավայել դուրս ես գալիս ու քեզնից գոհ բարեհաճում տուն:

– Մա՛մ, պա՛պ, կներեք ինձ, ես չէի ուզում... Ուղղակի ինչպես միշտ պատմության մեջ էի ընկել, դե երևի արդեն սովոր եք,– խոսքը կարճ կապեց օրվա հերոսը:

– Այո՛, սովոր ենք, դրա համար մեկը ես արդեն համակերպվել եմ: Այդ իսկ պատճառով հիմա տեսնում ես՝ ինչ հանգիստ վիճակում սուրճ եմ ըմպում՝ ի տարբերություն մայրիկիդ, չէ՞ Էնջի,– արձագանքեց Մեթյուն:

– Չէ՛, մայրը չի կարող համակերպվել իր որդու պատահականորեն անհետանալու փաստի հետ և քեզ նման հանգիստ տանել եղելությունը ու համոզված լինել, որ ոչինչ էլ չի պատահել նրա հետ ու շուտով կվերադառնա: Ես քո սառնասրտությունից չունեմ, Մեթյո՛ւ:

– Չունես, ասա՛ պարտքով տամ, ի՞նչ խնդիր կա, դրանից հեշտ բան,– սրամտեց Մեթյուն:

– Ես քո կատակների հավեսն էլ չունեմ, այնպես, որ խնդրում եմ լռի՛ր:

– Խնդրում եմ մի վիճեք իմ պատճառով,– խոսակցությունը կտրեց Էդոն:

– Ա՜յ, տե՛ս, ասում է իմ պատճառով, նշանակում է հասկացել է, որ սխալ է վարվել, – ասաց Մեթյուն՝ Էնջիին նայելով, կարծես բացատրում էր, որ ահավոր ոչինչ էլ չի պատահել և հանդարտվել է պետք: Այնուհետև հայացքը նորից որդու վրա գամելով և ձեռքը Էդուարդի ուսին դնելով՝ հայրական ջերմությամբ կես կատակ-կես լուրջ շարունակեց: – Տղա՛ս, բայց մյուս անգամ արի դու քո սխալները նախորոք հասկացիր, դե մինչև դրանք անելը էլի, ու մի՛ արա, որպեսզի մորդ հիստերիկությունները տանելը վզիս չմնա, գիտես՝ հեչ հաճելի երևույթ չէ:

– Վա՜յ, ես ինչ անլուրջ դեմքերի հետ եմ ես ապրում, աստվա՛ծ իմ,– բացականչեց Էնջին ու գնաց իր սենյակ՝ սթրեսը առանց այդ երկու երեսառածների միայնակ հաղթահարելու համար:

Էդուարդը ամեն ինչ պատմեց ծնողներին, երբ որ Էնջիի մոտ բարկությունն անցել էր, իսկ Մեթյուն համեմատաբար պատրաստ էր լուրջ խոսակցության: Նրանք բնականաբար զարմացան: Մտահոգվեցին, որ միայն իրենց՝ արկածների մեջ ընկնող որդու հետ կարող էր նման հաջողություն պատահեր, սակայն չէին շտապում ուրախանալ: Նշում էին, որ Էդուարդն էլ լավ կլինի, որ ժամանակից շուտ չուրախանա և զգուշավորություն ցուցաբերի իր հետագա քայլերում:

– Ես ուզում եմ, որ իմ բեմական անվան մեջ նաև հայկական ազգանունս լինի, կարելի է չէ՞:

– Ես չէի էլ կասկածում, որ այլևս չես կարողանում քեզ զսպել և վերջիվերջո հայկականությունդ մեջ ես գցելու,– ասաց Մեթյուն:

– Դու միշտ էլ կռահել ես իմ մտքերը, հայրի՛կ:

– Այո, ճիշտ ես, ափսոս գումարի վրա պոկեր չենք խաղում, թե չէ հաստատ միլիոնատեր էի դարձել: Իրար հետ կխաղանք, ես

մտքերդ կկարդամ, վաստակելիք գումարներդ կթռցնեմ վրայիցդ ու կծախսեմ ինձ վրա, հը՛ն, ի՞նչ կասես, լավ եմ չէ՞ մտածել:

– Բրա՛վո, հայրի՛կ, դու քո մտքերի փայլատակման գագաթնակետում ես:

– Ես, քանի որ ինչպես հասկացա մեջներիդ սթափն եմ երևում, ցանկանում եմ տեղեկացնել, որ խոսակցության կարևոր մասից շեղվել ենք: Եկեք չմոռանանք՝ ինչի համար ենք հավաքվել: Տղա՛ս, ասա տեսնեմ՝ ինչ հայկական ազգանվան մասին ես խոսում,– մեջ ընկավ մայրը:

– Ուզում եմ կոչվել Էդուարդ Բրիսթոն Պետրոսյան,– հպարտ հայտարարեց Էդոն:

– Միգուցե Էդուարդ Բրիսթոն Պետրոսյան Ֆիկացու Նակամուրա Քուչամիրա Լաուկա Էֆի՞, թե չէ այդպես մի տեսակ կարճ է աչքիս թվում,– նորից իր կիսակատակ ոճի մեջ մտավ Մեթյուն:

– Բայց մի րոպե: Տղա՛ս, դու հայկական ազգանուն չունես ինչքան գիտեմ, ամեն դեպքում մեզ հայտնի չէ: Մանկատանն էլ չէին տեղեկացրել, ասել էին, որ չգիտեն: Այդ դեպքում այդ Պետրոսյանը որտեղի՞ց բուսնեց,– բոլորին իր խոսքով երկրի մակերևույթ վերադարձրեց Էնջին:

– Չգիտեին, որովհետև ես չեմ ասել, որ ունեմ մեդալիոն, և վրան փորագրված կա այն:

– Եվ ինչի՞ համար էր այդ գաղտնապահությունը,– վերջապես մի լուրջ հարց տվեց Մեթյուն:

– Չգիտեմ, հայրի՛կ, մի տեսակ չէի ուզում շատ մարդ իմանար: Համարում էի՝ դա իմ գաղտնիքն է ու վերջ: Անգամ մոտ ընկերոջս սրա մասին երբեք չեմ ասել, Արթուրին, երևի հիշում եք:

– Ապա մի բե՛ր տեսնենք՝ ինչ է դա,– տղային գործի դրեց հայրը:

Էդոն վազեց իր սենյակ ու դարակներից մեկում խորը պահած մի թաշկինակի մեջ փաթաթված մեդալիոնը հանեց ու բերեց հյուրասենյակ ծնողներին ցույց տալու: Դրա մեջ երկու փոքրիկ նկարներ կային՝ մեկը Սառայինն էր, մյուսն իր ամուսնու՝ Գևորգի նկարն էր: Էդոն տխուր ու հուզված նայեց նրանց ու ասաց.

– Նրանք իմ իսկական ծնողներն են, ես նրանցից միայն սա ունեմ: Տեսնո՞ւմ եք, այստեղ կողքով փորագրված է Սառա և Գևորգ Պետրոսյաններ: Ահա այստեղից գիտեմ դա:

– Լավ, պարզ է, որդի՛ս, վարվիր ինչպես ուզում ես, մենք քեզ հանդիմանելու առիթ չենք տեսնում: Ուզում ես երկու ազգանուն ունենալ, ունեցիր, մենք դեմ չենք, չէ՞ Էնջի,– հայացքը ուղղելով Էնջիին և նրա գլխի դրական շարժումը տեսնելով՝ խոսակցությունը ավարտեց Մեթյուն:

Սակայն պարզվեց, որ դեմ էր պարոն Էդիսոնը: Հաջորդ օրը նրանց երկուսի զրույցը այլ հարցերի հետ միասին այդ թեմայի շուրջ ևս ծավալվեց, ու պրոդյուսերի պատասխանը կոպիտ էր.

– Իբր մի շատ գոհ եմ այդ երկար-բարակ Էդուարդ Բրիսթոն բառակապակցությունից, մի հատ էլ վրայից բոնուս: Այդպես չեղավ, մանավանդ, որ ես քեզ համար մականուն ընտրել եմ: «Էդյուվինգս» մականունով հանդես կգաս, հաստատ ավելի մտապահվող է: Ու էլ չվիճես, տե՛ս՝ մնացած հարցերում բավականին ընդառաջելու եմ քեզ, ու ըստ ինձ դրանք ավելի կարևոր հարցեր պիտի լինեն քեզ համար, քան սա:

Էդոյի համար իրոք ավելի կարևոր էր ստեղծագործական ազատությունը և սեփական ճաշակի թելադրման հնարավորությունը իր հետագա գործունեության մեջ, հետևաբար նա համակերպվեց Էդիսոնի տվյալ պահանջի հետ գոնե այն ժամանակահատվածի համար, որ միասին էին աշխատելու:

# Գլուխ 3

1993 թ. դեկտեմբեր: Թշնամին լայնածավալ հակահարձակման է անցնում շփման գծի ողջ երկայնքով, ասես վերջին ճիգերը գործադրի, որ գոնե ինչ-որ բան կարողանա փոխել ի օգուտ իրեն: Դաժան մարտեր էին: Արմինեն ծանր վիրավորվեց: Վիրահատվեց, սակայն խնդիրները լուրջ էին, և պիտի նրան արտերկիր տեղափոխեին հետագա վիրահատությունների համար, քանի որ դրա տեխնիկական և մասնագիտական հնարավորությունները ո՛չ Արցախում, ո՛չ էլ Հայաստանում այդ ժամանակ չկային: Ամերիկայի հայ համայնքի ներկայացուցիչներից մի խումբ հայրենասերների օժանդակությամբ Արմինեին տեղափոխեցին ԱՄՆ: 4 մտերիմ հայ ընկերներ իրենց վրա վերցրեցին պատասխանատվությունը: Նրանք ջանք չէին խնայում, որ Արմինեի կյանքը կարողանային փրկել: Դիմեցին երկրի լավագույն բժիշկներին՝ նշելով, որ գումարը խնդիր չէ. կճարեն, կբերեն, կտան որքան, որ հարկավոր լինի, միայն թե արվի հնարավորն ու անհնարինը: Կատարված մի շարք բարդ վիրահատություններից հետո Արմինեն ուշքի չեկավ, այլ ընկավ կոմայի մեջ: Անցավ մեկ ամիս, երկու, երեք, վեց, և շարժ չկար: Տղաները հուսահատ էին: Բժիշկները նշում էին, որ հնարավոր է կոմայից դուրս չգա ընդհանրապես: Սակայն մերոնք անդրդվելի էին և շատ խիստ պնդեցին, որ նրան պահեն հիվանդանոցում այն հույսով, որ հնարավոր է՝ մոտ ժամանակներս մի հուսադրող փոփոխություն նշմարվի: Նրանք չէին ուզում հավատալ, որ անվերադարձ կորցրել

են իրենց հերոսուհուն, ում ուղղակի պաշտում էին՝ անձամբ չճանաչելով: Դա հայության մեջ մի յուրահատուկ գիծ է, որ ուրիշ ազգերի մեջ չկա: Հայը հային մի ուրիշ կերպ է զգում: Հայը հայի ցավով է ապրում, անծանոթը մի ակնթարթում դառնում է հարազատ, երբ օտարության մեջ իմանում ես, որ քո ազգից է, հայ է: Իսկ պատերազմում հերոսացած անձին կյանքով պարտական էին համարում: 4 ընկերներից երկուսը նույն բնակարանում էին ապրում, մյուս երկուսը՝ տարբեր: Այդ երեք բնակարանները վաճառում, գնում են մեկը և խմբվում են այդ մեկ տան մեջ ապրելու, որպեսզի կարողանան մնացած գումարով հոգալ Արմինեի վիրահատությունների հետ կապված բոլոր ծախսերը և հիվանդանոցում այդքան երկար նրա գտնվելը: Արմինեի ապրելը իրենց բոլորի համար ավելին էր, քան որևէ այլ բան աշխարհում: Իրենց կյանքի հոգսերը և սովորական ընթացքը չէին թողնի ու այդքան շատ բան զոհաբերեին հանուն մի անծանոթ աղջկա, եթե չլիներ անսահման սերը դեպի իրենց փոքրիկ ու հեռավոր հայրենիքը, իսկ այս աղջիկը նրանց աչքերում մարմնավորում էր այդ հայրենիքը:

Օրերից մի օր բժիշկը հայտնում է նրանց, որ դրական տեղաշարժ կա. Արմինեն ձեռքը շարժել է: Տղաները միանգամից հավաքվում են հոսպիտալում և բժշկի ուղեկցությամբ միասին արագ քայլերով շտապում դեպի պալատ: Ներս մտան, ու քարացած կանգ առան բոլորը: Արմինեն ուշքի էր եկել, շուրջն էր զննում ու փորձում հասկանալ, թե ուր է ընկել: Մերոնք հրաշքից ցնցված հենվել էին հիվանդասենյակի պատերին և հուզմունքից արտասվում էին, չէին կարողանում հասկանալ, թե ինչ են զգում այդ պահին՝ երջանկություն, զարմանք, նաև վախ, թե այդ ամենը միասին: Ներկաները ապշահար իրար էին նայում: Որևէ մեկը չէր համարձակվում որևէ քայլ անել ու առաջ գալ, որևէ բառ ասել: Այդ անորոշությունը հենց Արմինեն էլ խախտեց, թվում էր, թե նրանց միջի ողջամիտն ինքն էր.

– Ինչի՞ համար են ձեր այս տարօրինակ հայացքները դեպի ինձ ուղղված, որտե՞ղ եմ ես, և դուք ո՞վ եք:

Վերջապես ընկերներից տարիքով ամենաավագը՝ Գառնիկը, իրավիճակն իր ձեռքը փորձեց վերցնել՝ առաջինը Արմինեի հետ զրույցի բռնվելով.

– Մենք քեզ հարազատի պես ենք վերաբերվում: Դու մեզ հետ ապահով կլինես, մի՛ անհանգստացիր, կանենք ամեն ինչ քեզ համար: Դու մեզ չես ճանաչում: Ուղղակի հաշվի առնելով կռվի ժամանակ քո հետ կատարվածը՝ մենք…

– Ի՞նչ կռիվ,– զարմացած ընդհատեց Գառնիկի խոսքը Արմինեն:

Տղաները ապուշ կտրած կանգնած էին: Մի երկու րոպե ուշքի էին գալիս: Սառած հայացքները տեսնելով՝ Արմինեն անհամբեր ուզում էր հասկանալ՝ ինչ է իր շուրջը կատարվում: Երբ ուշքի եկան, Գառնիկը, մյուս ընկերները ափսոսանքով գլուխները կախեցին ու աչքերով իրար ուզում էին ինչ-որ բան հասկացնել՝ չիմանալով ինչ պատասխանել աղջկան: Գառնիկը նայեց բժշկին ու ուզում էր բացատրություն ստանալ նրանից միմիկայով գոնե, բայց ոչինչ չկար բացատրելու. կյանք է, որի տերը մենք չենք: Բժիշկը հայացքով հասկացնել տվեց, որ ոչինչ չունի ասելու նրանց: Չնայած անչափ ուրախ էին ու շնորհակալ Աստծուց, որ կյանք է վերադարձրել Արմինեին, բայց հիշողության կորուստը թերևս անչափ հուսահատեցնող էր:

– Հիմա դուք ինձ բան չունե՞ք ասելու: Ես որտե՞ղ եմ, ի՞նչ է եղել: Վերջը խոսելո՞ւ եք, թե՞ չէ,– քարացած լռությունը նորից խախտեց Արմինեն:

– Կամաց-կամաց ամեն ինչ կգիտակցես, մենք քեզ հետ ենք ու քեզ կօգնենք,– հայրական քնքշանքով դիմեց նրան Գառնիկը:

Լիարժեք ապաքինվելուց հետո ընկերներով Արմինեին բերեցին իրենց տուն՝ Ֆրեզնո քաղաք, Կալիֆորնիա: Դա այն տունն էր, որտեղ բոլորով ապրում էին բնակարանները վաճառելուց հետո: Նման որոշումը հնարավոր էր եղել, քանի որ նրանցից ոչ մեկ ընտանիք չուներ: Միայն Գառնիկն էր ամուսնացած եղել, այն էլ դժբախտ պատահարի հետևանքով կորցրել էր սիրելիին ու աղջկան: Այդ չորս տղաներին միավորում էր իրենց ազնիվ ընկերությունը: Դա ամենաթանկ բանն էր, որ ունեին: Նրանք դա գնահատում էին որպես

իրենց բաժին ընկած ճակատագրի ամենագլխավոր մեխը, որից կառչած պիտի մնային հավերժ, քանի որ դա իրենց ամրոցն էր: Ընկերության հիմքերը խարխլելը հավասարազոր էր ամրոցի փլուզման: Հիմա նրանց կյանքում նոր լիցք էր հայտվել՝ ի դեմս մեր գեղեցկուհու: Արմինեն իր տեսակով այնքան մաքուր մարդ էր, որ չնայած հակառակ սեռի էր, այդ ընկերության մեջ մխրճվելով՝ չվնասեց այն, այլ ընդհակառակը՝ լրացրեց:

– Հը՛ն, ինձ ո՞վ անգլերեն կսովորեցնի: Ո՞ւմ եմ պարտական լինելու իմ հետագա հաջողությունների համար,– խինդով հարց բարձրացրեց Արմինեն հյուրասենյակում հավաքված իր նոր ընկերներին:

– Իհարկե ինձ,– միանգամից բացականչեց Լևոնը՝ բարձրահասակ, առնական մի տղամարդ, սևաթույր աչքերով, կանանց խելքահան անող կազմվածքով, բայց այդ նույն կանանց բանի տեղ չդնող կուսական միամտությամբ մի անձնավորություն: Կյանքով լի էր նա: Այդ կյանքից միշտ ինչ-որ բան պահանջող, բայց այդ պահանջները իր ներսում իսկ նորմալ չձևակերպող անհատ մը,– առարկություններ չկան չէ՞, ժողովո՛ւրդ,– դիմեց նա մյուսներին, ապա շարունակեց՝ գլուխը նորից թեքելով Արմինեի կողմը,– իսկ, ներողություն մի անհամեստ հարց՝ այդ ի՞նչ հետագա հաջողությունների մասին է խոսքը:

– Արի դու առաջ մի՛ ընկիր, քեզանից միայն հասնում է լեզու սովորեցնելը, լա՞վ, բարեկա՛մս,– պատասխանեց Արմինեն:

– Հասկացա, կենացները դեռ քաղցրանալու են: Ի՞նչ կասեք, ժողովո՛ւրդ, բա մի հատ էս փաստը չնշե՞նք, դե հետագա հաջողությունների պահով եմ ասում էլի,– բազմոցից վեր կենալով և պաշտոնական դիրք բռնելով՝ հայտարարեց Լևոնը:

– Էս արդեն փաստի տեսքով ես հա՞ խոսում դեռ չեղած հաջողություններից, շտապո՛ւմ ես, շտապո՛ւմ ես, հարազա՛տս,– ժպիտը չթաքցնելով՝ խրատեց Գառնիկը:

– Ու դեռ շտապողն էլ ես եմ հա՞: Ո՞վ իր պլանների մասին ժամանակից շուտ ակնարկ անի, ո՞վ նկատողություն ստանա դրա համար:

Բայց մի րոպե, տղե՛րք, ի՞նչն եմ սխալ ասում: Այդ, ո՞վ չգիտի, որ Արմինեի ասածը արած է, էդպես չի՞, գեղեցկուհի՛ ջան:

– Աչքիս իզուր ձեզ բան ասեցի, հիմա թերթերում կտպեք:

– Ջա՛նս, թերթերում տպելը չգիտեմ, բայց Լևոնին խմելու առիթ էր պետք, դու այն ընձեռեցիր: Էլ անմասն մնալ նրա՝ այդ խնջույքի մտադրությունից անհնար է, բոլորս քաշվանք, դու էլ մեզ հետ միասին,– կատակեց Դավիթը՝ տղաներից ամենաերիտասարդը:

Անգլերենի դասընթացները գնում էին առավելագույն ինտենսիվությամբ: Շուտով Արմինեն այնպես էր շփվում ամերիկացիների հետ, ասես իր մայրենին լիներ: Մտքերի մեջ, սակայն, հայի ճկունությունը իրեն զգացնել էր տալիս, և դա շատ յուրահատուկ ձևով ընդգծում էին իր շրջապատում անընդհատ ավելացող ամերիկացիները: Արմինեն շատ արագ յուրացրեց մենեջմենթի գաղտնիքները, ֆինանսիստի մասնագիտությունն էլ՝ վրայից: Հաջողացրեց դիրքավորվել ամերիկյան կրթական համակարգում: Սկսեց դասավանդել Ֆրեզնոյի համալսարաններից մեկում: Սակայն նա շուտ էր հոգնում մի գործից: Ինչ-որ նորություն էր միշտ փնտրում, ամբիցիոզ էր: Օրեցօր մեծացնում էր իր հանդեպ հարգանքը: Փորձ էր անում մտնել բիզնես միջավայր և կառավարչի իր թեորետիկ հմտությունները տեղափոխել պրակտիկ դաշտ: Նրա տաղանդը չվրիպեց ոմանց աչքից: Արդյունքում սկսեց հրավերներ ստանալ աշխատելու տարբեր կազմակերպությունների համար, որպես կադրային մենեջեր, այնուհետև՝ ֆինանսական դեպարտամենտի ղեկավար, հետո նաև՝ գլխավոր տնօրեն: Մի կազմակերպությունում, սակայն, նա երկար չէր սիրում մնալ: Անընդհատ փոխում էր աշխատանքի վայրը, միևնույն ժամանակ անուն էր թողնում դրանցից յուրաքանչյուրում: Նրան անվանում էին «կազմակերպչական շտապօգնություն», շատ արագ էր կողմնորոշվում ճգնաժամային իրավիճակում: Սովորաբար նախընտրում էր այնտեղ աշխատել, որտեղ գործերը շատ վատ էին: Գալիս էր և կայծակնային, ռեֆորմիստական քայլերով հանում այդ

ֆիրմաներին անդունդից: Ամերիկայի նման երկրում սուպերմենե-ջերի նման բարձր կլասի անձինք անգնահատելի էին համարվում: Այս երկրում քաջ գիտակցում էին, որ կառավարման ոլորտում մարդու պրոֆեսիոնալ ընդունակություններից ստացվող օգուտը համեմատելի չէ երկրի հարուստ պաշարներ ունենալու հանգամանքի հետ: Այդ դարն անցել է, հիմա մարդու դարն է, խելքի, մտքի ու գաղափարների դարը:

Մի օր լուր ընկավ Արմինեի ականջը, որ իրեն բուժող հոսպիտալի այն բժիշկը, որտեղ նա անգիտակից ժամանակ գտնվում էր, մի անախորժ պատմության մեջ է ընկել, խնդիրներ ունի ոստիկանության հետ: Միանգամից զանգեց իր փաստաբանին և կարգադրեց, որ այդ հարցերը արագ և հմուտ ձևով լուծի: Ինչը և տեղի ունեցավ: Արմինեն գնաց նրան տեսակցելու: Երբ ոստիկանության բաժանմունքից բժիշկը դուրս էր գալիս, Արմինեն մոտեցավ հարցնելու նրա որպիսությունը, մի քիչ զրուցելու և ևս մեկ անգամ երախտագիտություն հայտնելու համար:

– Է՜հ, Արմինե՛, իմ արածն ի՞նչ էր՝ համեմատած ընկերներիդ անձնազոհ քայլի հետ:

– Մի րոպե, ի՞նչ անձնազոհ քայլի մասին է կոնկրետ խոսքը գնում... Հա, ես մի որոշ ժամանակ ապրել եմ նրանց տանը, բայց փորձել եմ հնարավորինս քիչ նեղություն տալ: Այդ իսկ պատճառով առաջին հնարավորության դեպքում տեղափոխվել եմ առանձին ապրելու: Ինքս էլ չեմ սիրում ուրիշի հաշվին ապրել, ինձ համար դա շատ տհաճ երևույթ է:

– Դու չգիտե՞ս այն մասին, որ նրանք իրենց բնակարաններն էին վաճառել, որպեսզի քո թանկարժեք վիրահատությունների ու հոսպիտալում մնալու ծախսերը հոգան:

– Ինչպե՞ս թե,– զարմացած քար կտրեց Արմինեն,– նրանք ինձ ասել են, որ մի շարք հայկական բարեգործական կազմակերպություններ են հոգացել այդ ծախսերը՝ հաշվի առնելով պատերազմում իմ ունեցած ավանդը: Մի պատերազմ, որի մասին ես այդքան լավ չեմ հիշում, կամ ավելի ճիշտ ընդհանրապես չեմ հիշում:

– Ես երևի պետք է չասեի, հիմա նրանք մի լավ կբարկանան ինձ վրա,– փոշմանեց խոսք բացելու համար բժիշկը.– Չեմ կարողանում էլի ինձ չվերաբերվող հարցերի մեջ չխորանալ:

– Չէ՛, չէ՛: Ես շատ շնորհակալ եմ Ձեզ այս անկեղծության համար: Դուք չեք պատկերացնում՝ հերթական անգամ ինչ մեծ բան արեցիք ինձ համար: Ինձ այս ճշմարտությունն իմանալը շատ էր պետք, որպեսզի կարողանամ շտկել անարդարությունը: Ուղղակի չեմ հասկանում՝ ինչու ինձ ճիշտը չեն ասել,– մտածմունքների մեջ ընկավ Արմինեն:

– Երևի չեն ուզեցել համարես, որ ինչ-որ հարցում պարտք ես իրենց: Նրանք դա մեծ սրտով են արել: Դու նրանց հետ ազգակցական կապ չունես, բայց նրանք քեզ պաշտում են: Առաջին անգամ եմ նման բան հանդիպում իմ կյանքում: Մեզ՝ ամերիկացիներիս համար դա մի փոքր անհասկանալի երևույթ է, բայց ինչպես հասկանում եմ դուք՝ հայերդ, ունակ եք նյութականից հրաժարվել հանուն այլ կարևոր բաների:

– Իսկ ի՞նչ կասեք իմ հիշողության մասին: Հնարավո՞ր է այն գոնե աստիճանաբար վերականգնվի: Ես փորձում եմ հիշողությունս լարել և վերհիշել ինչ-որ բաներ, սակայն ապարդյուն: Ի՞նչ անեմ, չգիտեմ: Տղաները ինչ-որ բաներ ընթացքում ինձ պատմել են, բայց, միևնույն է, շատ տարօրինակ զգացողություն եմ ապրում, երբ իմ մասին ինձ են պատմում:

– Չեմ կարող ասել: Քո դեպքը շատ արտառոց էր, հետևաբար ապագայի մասին կանխատեսելը դժվար է: Բայց այնուամենայնիվ բացառել ոչինչ չի կարելի: Այնպես որ հնարավոր է կարծում եմ, սակայն չգիտեմ՝ դա երբ կլինի և կլինի արդյոք ընդհանրապես,– ասաց բժիշկը:

– Լավ, ինչևէ... Դուք մի՛ անհանգստացեք ընկերներիս պահով, ես այնպես իմ շնորհակալությունը կհայտնեմ նրանց, որ չնկատեն, թե ինչի համար է: Այնպես, որ Ձեր անունը չի շոշափվի:

– Դու ուրիշ ես, ամեն մանրուք հաշվի ես առնում քո քայլերում: Ու շնորհակալ եմ ինձ օգնության ձեռք մեկնելու համար, պատրաստվում էի իմ փաստաբանին դիմել, մեկ էլ քո ուղարկած փաստաբանը

այնքան արագ հայտնվեց և հարցերը լուծեց, որ անգամ չնկատեցի ինչպես հայտնվեցի այնտեղ և ինչպես դուրս եկա:

– Շնորհակալության կարիք չկա, ես դա սիրով եմ արել,– ասաց Արմինեն:

Նրանք բաժանվեցին: Շուտով մոտենում էր տարվա այն օրը, երբ տարիներ առաջ Արմինեն իր աչքերը բացել և ետ էր եկել կոմայից: Մեր հերոսուհին մտածեց, որ շատ հարմար առիթ է իր լավ ընկերներին շնորհակալություն հայտնելու համար: Այդ օրը բոլորը թղթային ծրարներ ստացան փոստատարների միջոցով: Նամակներում նրանցից ամեն մեկը գտավ բնակարանի բանալիներ, նաև հատուկ գրություն, որ այդ բնակարանները Արմինեն գնել և պատրաստվում է նվիրատվություն կատարել նրանցից յուրաքանչյուրի անունով: Դրանք նույն մակերեսով և իրար բավականին մոտ հեռավորությունների վրա գտնվող բնակարաններ էին, վերանորոգված և պատշաճ կահավորված: Ասել, որ անակնկալի եկան, հավասարազոր է ոչինչ չասելուն: Նրանք չգիտեին՝ երախտագիտության ինչ խոսքեր արտահայտեին: Որոշեցին հավաքվել և նշել իրենց բնակարանների նորամուտը, և որպեսզի ոչ մեկ չնեղանար, հին տանն էին հավաքվել: Ինչպես արդեն կռահում եք՝ Լևոնի նախաձեռնությամբ: Մի լավ զվարճացան, այդ տանն անցկացրած իրենց համատեղ ապրելու տարիների արկածները հիշեցին: Արմինեն չբացահայտեց, թե ինչու է նա այդ նվերներն արել, քանի որ խոստացել էր բժշկին: Նա իր այդ քայլը պայմանավորեց որպես լավ ընկերության լավ շարունակություն, և ոչինչ ավելին: Իհարկե ո՛չ Լևոնը, ո՛չ մյուսները դրան այդքան էլ հակված չէին հավատալու, սակայն ձևացրին, թե իբր հավատացել են:

Արմինեն մի պահ առանձնացավ: Սենյակում մի տեսակ սառնություն էր զգացվում: Լևոնը ներս մտավ ու տեսավ նրան մահճակալին նստած, լուռ ու մտազբաղ: Արմինեն կլանված նայում էր պատուհանից եկող լույսին: Ցանկություն ուներ այդ տարածական լույսի մեջ մաղել իր սրտի հույզերը, տարօրինակ տագնապը, չանհետացող անհագստությունը: Նա զգում էր՝ ինչ-որ բան կիսատ է, ինչ-որ բան իրենը չէ: Կյանքը որում ինքը կա, օտար է իրեն: Հոգում

մարդկային դերերն են խճճվել, որոնցից մեկն անհայտ է, սակայն փաստ է, որ այն կա, ու մինչև չկարգավորվի իր ներսում իրար դեմ պայքարող այդ հույզերի շքերթը, ինքը հանգստություն չի ստանա: Լևոնը մի քանի րոպե լուռ նայում էր: Հետո որոշեց խառնվել ու հարցրեց՝ ինչ է պատահել, սակայն կռահում էր, որ պատասխան չի ստանալու. իրեն այդ սենյակում լսող չկար: Դա Արմինեից չէր՝ մտածեց Լևոնը ու ավելի մոտիկ գնաց:

ԼԵՎՈՆ – Ամեն ինչ նորմա՞լ է:

ԱՐՄԻՆԵ – Այո՛:

ԼԵՎՈՆ – Բա ինչո՞ւ ես տխուր: Քեզ այդպիսին չեմ տեսել:

ԱՐՄԻՆԵ – Սիրտս է ուղղակի լցված, ուշադրություն մի՛ դարձրու, կանցնի:

ԼԵՎՈՆ – Բայց մի րոպե, դրա համար պատճառ է պետք:

ԱՐՄԻՆԵ – Պատկերացրու՝ պատճառ չկա: Զարմանալի է, բայց այդպես էլ է փաստորեն լինում: Հոգիս տխուր է, սակայն ինձ չի բացատրում՝ ինչու: Ասես նա առանձին ինչ-որ ուրիշ կյանքով ապրելիս լինի, միայն անհասկանալի զգացողություններ է հաղորդում մտքիս, որոնք խորթ են ինձ կամ ես եմ խորթ դրանց: Մի խոսքով ներսս ամեն ինչ խառնվել է իրար, իսկ ես չեմ կարողանում դարակների մեջ հարմար դասավորել, քանի որ այդ դարակների տեղը ինքս չգիտեմ:

ԼԵՎՈՆ – Պարզ է: Բարդ վիճակ է, ինչո՞վ կարող եմ ես օգնել:

ԱՐՄԻՆԵ – Դուք արդյո՞ք ինչ գիտեիք իմ մասին, ինձ պատմել եք:

ԼԵՎՈՆ – Այո՛, այլ հարց է, որ մենք ինքներս շատ բան չգիտենք:

ԱՐՄԻՆԵ – Դուք ասել եք, որ ծնողներս սպանվել են, սակայն չեք ասել՝ ինչ հանգամանքներում:

ԼԵՎՈՆ – Դե՛, մեզ այդ տեղեկատվությունն է հասել, այլ մանրամասներ չգիտենք:

ԱՐՄԻՆԵ – Իսկ ո՞վ գիտի:

ԼԵՎՈՆ – Արմինե՛, քո ինչի՞ն է պետք այդքան խորանալը:

ԱՐՄԻՆԵ – Իսկ ի՞նչ կա տարօրինակ, կամ էդ ու՞ր եմ խորանում, որ չի կարելի: Իմ անցյալն է, որից ես տեղյակ չեմ: Նեղվում եմ դրանից,

հասկանո՞ւմ ես, հետապնդող ստվերի կերպարի մեջ է մտնում այդ անցյալ կոչվածը ու կեղեքում հոգիս, երբ մենակ եմ լինում:

Լևոնը, չցանկանալով շատ ծավալվել այդ թեմայի շուրջ, քանի որ միևնույն է անվերջ պտտվելու էին տարաբնույթ ու բազմաբովանդակ խոսքերի շարանի մեջ, բայց ոչ մի կոնկրետ կետի չէին հասնելու, փորձեց խուսափել իրեն անիմաստ թվացող այդ խոսակցությունից և կենտրոնացնել Արմինեի միտքը ներկայիս խոստումնալից կետի վրա: Այդ իսկ պատճառով զրույցի դրվածքը փոխեց՝ ասելով.

ԼԵՎՈՆ – Այստեղ դու ամեն ինչի հասել ես, հարուստ ես, ճանաչված ու հարգված, ապրիր էլի քո կյանքով: Անցյալը այդքան խաղաղ ու ջինջ չէ, պղտոր է ու ցավոտ, դա քեզ հաստատ պետք չի:

ԱՐՄԻՆԵ – Պետք է, քանի որ այդ ցավը ես ակամայից միևնույն է զգում եմ ու չեմ կարողանում ըմբռնել՝ ինչու եմ ես այն զգում: Անորոշությունն ավելի է սպանում ինձ, մանավանդ երբ մենակ եմ մնում ինքս ինձ հետ, ուղղակի հանգիստ չի տալիս: Դա է պատճառը, որ հնարավորինս փորձում եմ ինձ աշխատանքով ծանրաբեռնել, որ չմտածեմ, շեղեմ մտքերս: Մեկ-մեկ էլ ինձ թվում է, որ ուզում եմ գնալ տեսնել այն երկիրը որտեղից, որ բերել եք ինձ այստեղ, ծնողներիս գերեզմանը գտնեմ վերջիվերջո: Սակայն ինչ-որ անբացատրելի ուժ ինձ կանգնեցնում է... հնարավոր է վախը:

Լևոնը զգաց, որ մեկ է՝ Արմինեն նորից շրջում է ամեն ինչ ու զրույցը դնում այն նույն սկզբնակետի վրա, որից սկսել էին խոսել: Նրա մտահոգությունները փարատել չստացվեց: Լևոնին այլ բան չէր մնում, քան դժկամ հայացքով հոգոց հանելը: Նա այլևս ոչինչ չասաց: Սենյակի սառնությունը նորից իրեն զգացնել տվեց այդ լռության մեջ, ուր չարտասանված խոսքեր էին սավառնում օդում, բայց իրար չէին հանդիպում, որովհետև իրարից էին փախչում:

***

Էդոյի կյանքում աստղերի փայլով պայծառացած երազկոտ գիշերների հանգիստ քունը փոխարինվեց ստուդիաներում բազմոցին մի քանի ժամ աչք փակելուց հետո զարթուցիչի տհաճ ու

նյարդայնացնող ձայնի ղողանջով: Կյանքը լավ իմաստով գլխիվայր շուռ էր եկել: Այն լույսի արագությամբ սլանում էր հայտնիության փառահեղ ուղով, ու ինքն էլ այդ ընթացքում պետք է վազեր, հասներ իր իսկ կյանքի հետևից: Մեծ փառք էր թափվել գլխին: Երաժշտական կարիերան զուգակցվեց նաև դերասանական տաղանդի բացահայտմամբ և ոչ միայն: Նա հակում էր դրսևորում ռեժիսորական և պրոդյուսերական աշխատանքներում ևս: Ուղեղը հազարի տակ էր աշխատում, ասես ինչ-որ մեկը հետևից ընկած լիներ, բայց երբ շրջվում էր, այդ ինչ-որ մեկն անհետանում էր: «Ամեն ինչ արագ է պետք հասցնել, բայց որակով: Որակը ոչ մի դեպքում չպիտի տուժի». համոզված խրատում էր իր մեծ թիմին: Պարոն Էդիսոնի հետ մի քանի տարի աշխատելուց հետո, որոշել էր առանձնանալ ու սեփական պրոդաքշընը հիմնել, անունը դժվար չէր կռահել՝ «Էդուարդ պրոդաքշըն»: Հսկայական կորպորացիա էր ստեղծել, պրոֆեսիոնալ կադրերով լի: Նա մի հոգի էր, սակայն կարծես ամենուր էր իր ձեռագրով ու համոզմունքներով: Որևէ գործ չէր կարող հանձնվել հանդիսատեսի դատին, եթե չէին պահպանվել Էդոյի սկզբունքները, որոնցից ամենաառաջնայիններից էր. «ոչ մի դեպքում չպետք է շարժվել լսարանի նախընտրություններով, այլ պետք է ինքներս ձևավորենք այդ նախընտրությունները: Հնարավոր չէ, որ որակյալ գործը լսարան չգտնի»: Արագ թռչող տարիներ էին դրանք. անդադար կենդանի համերգներ բազում քաղաքներում, բազմաթիվ տեսահոլովակներ, ձայնասկավառակներ, հեղինակավոր մրցանակաբաշխություններում ստացած մրցանակներ, ճանաչում, փառք: Նաև ֆիլմում էր նկարահանվել ու մի քանիսի պրոդյուսինգով և ռեժիսուրայով անձամբ էր զբաղվում: Սակայն գերակշիռ էր մնում հիմնականում համաշխարհային երգարվեստում նրա ներդրումը: Երգում էր տարբեր լեզուներով՝ անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն, հայերեն: Նրա մոտ չխաթարվող ավանդույթներից էր այն, որ այն երկրում, որում նախապատրաստվում էր համերգով ներկայանալ, պարտադիր սովորում էր այդ երկրի ազգային երգերից որևէ մեկը, յուրահատուկ և ժամանակակից շունչ էր տալիս նոր գործիքավորմամբ

և մատուցում այդ երկրի հանդիսատեսին հատուկ բեմադրված համարով: Դրանով նա փորձում էր ընդգծել իր հարգանքը այլ ազգերի մշակույթների նկատմամբ՝ համարելով, որ ամենավեհ բանն այս կյանքում մշակույթն է, որի միջոցով տարբեր ազգեր ճանաչում ու բացահայտում են մեկը մյուսի ամենամաքուր կողմերը: Քանի որ իսկական մշակույթը չի կարող կեղտոտվել, այն համակված չէ չարությամբ կամ նենգ գաղափարներով: Այն պարզ է, գերի է վերցնում հույզերդ ու սիրել տալիս: Սիրել տալիս այն ազգին, որը ստեղծում ու կրում է այդ մշակույթը:

Իր բեմական ծրագրերի անբաժանելի մասը հայկական ժողովրդական երաժշտությունն էր նոր շնչով, բայց էթնիկ մոտիվների նուրբ ներկայացմամբ: Դա պարտադիր էր, ընդ որում համերգային ծրագրի այդ հատվածը ավելի հաճախ էր թարմացվում և փոփոխության ենթարկվում թե՛ դեկորացիաների իմաստով, թե՛ երգացանկի, թե՛ բեմադրությունների: Իր շրջապատում շատերը թերահավատորեն էին մոտենում իր այդ վարքագծին ազգայինի ներկայացման առումով՝ նշելով, որ դա կարող է խանգարել նրա կարիերայի վերելքին, ճիշտ չհասկացվել հանդիսատեսի կողմից: Էդուարդը այդ հարցում իրեն հակադարձողներին պատասխանում էր. «.....քանի դեռ չեմ ներկայացել այդ աշխատանքներով աշխարհի հանդիսատեսին, ինչպե՞ս իմանամ, թե ոնց կընդունվի: Մարդիկ հիմա նորություն են փնտրում, հոգնել են նույն ռիթմերից, ինչքան էլ դրանք հիթային լինեն, միևնույն է դժվար է միշտ կատարելություն ստեղծել, իսկ հայկական ժողովրդական ելևեջները կարող են հենց այդ նորությունը լինել այն հանդիսատեսի համար, ով ուզում է զարմանալ ինչ-որ բանից: Ո՞վ է ասել, որ հայկական երաժշտությունը չի կարող ականջ շոյել, չի կարող գրավել արտասահմանցիների սրտերը: Որևէ մեկը դրանք երիտասարդ մասսայական լսարանին ներկայացրե՞լ է մինչ այս, որ կարողանա հստակորեն պնդել, որ սա ձախողված գործ է, իհարկե ո՛չ, հետևաբար ինչո՞ւ չփորձել....»: Իսկ հայազգի ընկերների հետ շփումներում մի ուրիշ կռիվ էր. «....Ո՞վ է ասել, որ հայկական երգարվեստի գոհարները պետք է այնպես

պահել, որ միայն ընտրյալներին կամ ինտելեկտուալներին հասու լինի, մնացածի տեսադաշտից հեռու: Սա նման է նրան, որ զգեստապահարանում բազմաթիվ թանկարժեք ու շենշող զգեստներ ունենաք, սակայն ափսոսաք հագնել, քանի որ կմաշի, արդյունքում ոչ մեկ չի իմանում, որ դուք դրանք ունեք: Հետո էլ կասեն, թե մեր մշակույթին աշխարհը լայն առումով ծանոթ չէ: Է՛ բա ներկայացնո՞ւմ եք, որ ծանոթ լինի....»:

Էնջիի և Մեթյուի համար հպարտություն էր նման որդի ունենալը: Ի՜նչ երջանիկ էին նրանք, որ մանկատնից հենց Էդուարդին էին վերցրել իրենց խնամակալության տակ: Էդոն ևս պաշտում էր նրանց: Նրանք որևէ հարցում չէին ճնշում Էդոյին, պարտադրանքի լեզվով չէին խոսում նրա հետ ո՛չ նախկինում, ո՛չ էլ հիմա: Դա էր պատճառը, որ Էդոն սիրում էր ամերիկյան ազատական դաստիարակության այդ նրբությունները և հակադրում դրանք հայկական ծանր, միշտ պարտավորող, շրջապատի համար ապրելու ազգային բնավորության հետ: Երբ սկսել էր արդեն մեծ գումարներ ինքնուրույն վաստակել, առաջին բանը, որ արեց, Էնջիի ու Մեթյուի համար մեծ առանձնատուն գնելն էր: Այն բնականաբար մեծ շքեղություն էր նրանց համար, համեմատած իրենց նախկին փոքրիկ բնակարանի հետ, որտեղ և տղայի ամերիկյան պատանեկությունն էր անցել:

Էդուարդը հանրային լայն ճանաչում էր վայելում, ոչ միայն որպես տաղանդավոր երգիչ, ռեժիսոր և պրոդյուսեր, այլ նաև որպես հասարակական գործիչ կամ մտավորական: Ամերիկայի նման բիզնեսի մեջ խրված ու դրանում կյանքի իմաստը տեսնող երկրում դժվար է մտավորական բառի ճիշտ ընկալումն ապահովել, այն չի հասկացվում, ամեն դեպքում Էդուարդը տարբերվում էր: Հաճելի էր նրան յուրաքանչյուր թեմայով լսել, այն դեպքում, երբ լիարժեք չես հասկանում՝ ինչու էր այդքան հաճելի: Սա էին երևի մտքներում մտածում ամերիկացիները, երբ ամեն անգամ նրան հեռուստատեսությամբ տեսնելիս և լսելիս, գամվում էին էկրանին:

Հատված 2016 թ.-ի մայիսին ամերիկյան հայտնի պարբերականներից մեկին տրված հարցազրույցից.

**Զրուցավար:** Ի՞նչ կարելի է անել մշակույթով:

**Էդուարդ Բրիսթոն Պետրոսյան:** Հաղթել:

**Զրուցավար:** Հաղթել ո՞ւմ կամ ի՞նչը:

**Էդուարդ Բրիսթոն Պետրոսյան:** Ամեն ինչը: Երբ երկրիդ տնտեսությունը հզոր է, կարող ես այնպես անել, որ մշակույթդ թևեր առնի և անխոչընդոտ ճախրի ավելի լայն հորիզոնում: Դրա համար ուղղակի ցանկություն է պետք՝ ԱՄՆ-ն Ձեզ օրինակ: Երբ երկրիդ տնտեսությունը հզոր չէ կամ ազդեցիկ չես որպես պետություն, մշակույթդ ինչքան էլ հզոր լինի, կապանքի մեջ է, այն ճանաչելի չէ, և մեծ ջանքեր պիտի գործադրես, որ ճեղքես պատը և դուրս գաս լայն լսարան, ժամանակի թելադրող շունչը դարձնես:

**Զրուցավար:** Դուք հայտնի աստղերից եք, երգիչ, սակայն նման հարցազրույցներում ամենաքիչը Ձեր երաժշտական կարիերայից եք սիրում խոսել: Ինչո՞վ է դա պայմանավորված:

**Էդուարդ Բրիսթոն Պետրոսյան:** Հավանաբար պատճառն այն է, որ նպատակս ոչ թե բուն երգեցողությունն է կամ աստղային կյանքով տարված սեփական հայտնիությամբ զմայլվելը, այլ երաժշտության և դրա հետ անմիջական առնչություն ունեցող այլ ոլորտների միաձուլման միջոցով մտքիս մեջ շարահյուսված գաղափարները մարդկանց հասցնելը, որպեսզի նրանք էլ սկսեն մտածել: Երաժշտությունն ընդամենը գործիք է այդ ասելիքն ավելի պատկերավոր ձևով տեղ հասցնելու համար: Ես իմ բոլոր շոուների ընթացքում կամ թեկուզ դրանց առանձին հատվածներում ցանկանում եմ մարդկանց ուշադրությունը սևեռել ինչ-որ կարևոր խնդրի կամ խնդիրների վրա: Միգուցե խնդրի հետ կապ չունեցող պատկերներ եմ դնում բեմադրության կամ տեսահոլովակների մեջ, սակայն շարժառիթը նա է նաև, որ մարդիկ մեր շուրջը կատարվող դեպքերին կարողանան նայել մեկ այլ ռակուրսով: Համեմատել դրանք միգուցե կյանքի ավելի պրիմիտիվ ու կենցաղային օրինակների հետ, բայց գտնել դրանցում ավելի գլոբալ խնդրի պատճառահետևանքային կապ:

**Զրուցավար:** Ճիշտ եք, քանի որ եթե անդրադառնանք Ձեր տեսահոլովակներին, կնկատվի այդ խորությունը: Օրինակ ես մի

տասն անգամ պետք է նայեմ, որ մինչև վերջ կարողանամ ընկալել, թե ինչ էիք ուզում այդ տեսահոլովակով ասել:

**Էդուարդ Բրիսթոն Պետրոսյան:** Այո, ես փորձում եմ այնպիսի էֆեկտ ստանալ իմ ընտրած առարկաներով և ստացված կադրերով, որ այն դիտողը սկսի հետաքրքրությամբ գուշակել, թե ինչ էր դա նշանակում, այսինքն՝ ստիպում եմ մտածել: Ներկայիս երգարվեստը փոքր-ինչ պրիմիտիվացել է: Դա լավ չէ: Ես այդ բացը փորձում եմ ինչ-որ կերպ լրացնել:

**Զրուցավար:** Օրինակ, մտքովս նոր անցավ այն տեսահոլովակը, որտեղ Դուք ամբողջ տեսահոլովակի ընթացքում ռեստորանի անկյունում նստած էիք, մի աննկատ վայրում, որ աչքի չընկնեք: Ռեստորանում ոչ մի մատուցող կամ նվագող չկար, բացարձակ ոչ մի անձնակազմ, սեղանները դատարկ էին, հյուրեր ևս չկային, աթոռները բացակայում էին: Սպիտակ սավաններով ծածկված կլոր սեղաններից յուրաքանչյուրի վրա մեջտեղում դրված էին տարբեր չափի բաժակներ՝ մեջը ջրի տարբեր պարունակությամբ, մեկը մի քիչ ավել, մյուսը մի քիչ պակաս, բայց ոչ մեկը լիքը չէր: Յուրաքանչյուր սեղանին այդպիսի մեկական բաժակ էր դրված ուղիղ կենտրոնում: Դռները բաց էին, և թեթև քամի էր փչում, մերթընդմերթ ուժեղանում էր այն, հետո՝ հանդարտվում: Ռեստորանում սեղանների արանքներով մի քանի մարդ էր պտտվում, երբեմն պարային շարժումներ էին անում, բայց կարևորը իրար վրա սպառնացող հայացքներ էին գցում՝ անթարթ զննելով մեկմեկու: Նրանք ուշադիր հետևում էին մեկը մյուսի քայլերին: Մոտենում էին տարբեր սեղաններին և այդ սեղանների վրա դրված բաժակները կենտրոնից դանդաղորեն քաշում էին դեպի իրենց: Որոշները ոչ ամբողջությամբ, այնքան որ կենտրոնից տեղաշարժեն՝ միևնույն ժամանակ նայելով մյուս մի քանի հոգու արձագանքին: Նրանցից ոմանք ջուր էին լցնում այդ բաժակների մեջ, ոմանք, ընդհակառակը՝ խմում էին դրանցից: Երբեմն երկու հոգի նույն սեղանի շուրջ էին հայտնվում, սկսում քաշքշել բաժակը ամեն մեկը իր կողմը: Որոշ դեպքերում բաժակները ճաքում էին, որոշ դեպքերում՝ կոտրվում, և միջի ջուրը թափվում

էր կա՛մ մասամբ, կա՛մ ամբողջությամբ՝ կախված, թե ինչ ջանասիրությամբ էին քաշքշել: Վերջում Դուք Ձեր անկյունի մոտի սեղանիկի վրա դրված ու գրեթե ամբողջությամբ խմված փոքրիկ բաժակը վերցնում եք այնպես, որ դրանից խմողը չնկատի: Թաքցնում եք Ձեր վերարկուի տակ և թաքուն դուրս եք հանում ռեստորանից: Դրսում պահում եք բաժակը անձրևի տակ, որ անձրևը ինքը թափվելով լցնի այն: Ես կարծես հիմա սկսում եմ ըմբռնել դրա իմաստը: Մենք այդ փոքր բաժակին շուտով կանդրադառնանք:

**Էդուարդ Բրիսթոն Պետրոսյան:** Այո, ես իմ արվեստը մատուցում եմ «Աչքի պես պարզ, աչքի պես բարդ» սխեմայով: Օրինակ, այս պահին մեկն էլ ես հիշեցի: Հիշո՞ւմ եք, վերջերս էի թողարկել: Կլիպում ավերված քաղաքում ժամանակը ասես հետ է պտտվում դանդաղ, և ավերածությունների կադրերը հետշարժ են կատարում: Ապակիների փշրանքները նորից կպչում են իրար, քարերն իրար վրա են ընկնում ինքնաբերաբար, որ վերականգնեն կառույցների նախկին տեսքը: Ասես ժամանակն ենք հետ տալիս: Այսինքն, նորից հետ է վերականգնվում ջարդված, փշրված ամեն ինչը: Շուրջն ամեն ինչ սկսում է նորից պլպլալ, մաքուր փողոցներ, գեղեցիկ ճեմուղիներ, բարձրահարկ երկնաքերեր: Սակայն տեսահոլովակի սկզբում ավերակների մեջ կանգնած փոքրիկ աղջնակի դեմքը՝ արցունքների մեջ թաթախված աչքերով, նույն կերպ մնացել էր: Եվ այդ աղջկան լուսանկարող լուսանկարչի բոլոր ջանքերը այնպես անել, որ աղջիկը այդ վերականգնվող քաղաքի ֆոնին սկսի ժպտալ, որպեսզի լուսանկարում ժպիտով դուրս գա, ապարդյուն են անցնում: Աղջիկը չէր ժպտում, նույն մռայլ ու հուսահատ դեմքով էր նայում լուսանկարչին: Գիտե՞ք՝ ինչու, որովհետև ինչքան էլ ամեն ինչ վերականգնվի, երեխաների տեսածն ու ապրածը չես մաքրի իրենց հիշողություններից, ինչպես մաքրում, դզում-փչում ես փողոցները, մայթերը, քաղաքն ամբողջապես: Եթե մեծահասակներն ամուր են ու կոփված հոգով, ապա երեխաները խոցելի են ու շատ փխրուն: Պատերազմներն ու աղետները նրանց փոխում են շատ: Յուրաքանչյուր նման դիպված բացի զոհերից բերում է շատ ու շատ ճակատագրերի քանդման, իսկ

երեխաների հոգում թողնում է անդառնալի հետք: Բնական աղետների դեպքում դեռ հասկանալի է, մեր ձեռքում չէ, ինչևիցե, իսկ ա՛յ պատերազմները, դրանք մենք ենք մեր գլխին բերում, և ոչ մի բնություն այստեղ մեղավորություն չունի:

**Զրուցավար:** Ճիշտ եք, կան բաներ, որոնք մեր ձեռքում են, սակայն մենք չենք ուզում ընդունել, որ այդպես է:

**Էդուարդ Բրիսթոն Պետրոսյան:** Սա կյանքն է, այն մեր շուրջն է: Ուղղակի նկատել է պետք և ավելի երկար խորհել այն աշխարհի մասին, որում մենք ապրում ենք: Մենք ենք աշխարհը դարձնում այնպիսին, ինչպիսին այն կա: Մարդկության պատմությունը առաջ է ընթանում, մարդկությունը զարգանում է, բայց մարդկային հոգեբանությունը պտտվում է նույն առանցքի շուրջը, որ կարելի է կոչել մարդկային հոգու հավաքական կերպար: Չնայած այն 7.5 մլրդ տարբեր դրսևորումներ ունի և դեռ ավելին կունենա, բայց «մարդ» արարածն ինչպես խփում էր այլ մարդու վրա քարով քարե դարում, այդ նույն «մոդիֆիկացված մարդն» այսօր խփում է մեկ այլ մարդու արդեն միջուկային կամ քիմիական զենքով: Փոխվում է միջոցը, բայց նպատակը փոխող այդպես էլ չի գտնվում: Հիսուս Քրիստոսը փորձեց: Փրկեց մեզ մինչ այդ գործած մեղքերի համար պատասխան տալուց և վերցրեց այդ մեղքերն իր վրա: Բայց հիմա ինքներդ Ձեզ ազնիվ հարց տվեք՝ անգամ դրանից հետո մարդկությունը փոխվե՞ց: Ո՛չ, չփոխվեց: Մարդու միջից չարը չհաջողվեց հանել:

**Զրուցավար:** Դուք ներքին համոզմունք ունեք, որ մարդը կարող է անել անհնարինը: Նոր էլ խոսք բացեցիք Հիսուս Քրիստոսի մասին: Դուք հավատո՞ւմ եք Աստծուն:

**Էդուարդ Բրիսթոն Պետրոսյան:** Այո, միանշանակ: Մի դեպք հիշեցի այս պահին, երբ ես, երկար ընդմիջումից հետո, առաջին անգամ ժամանել էի Հայաստան 2013 թ.-ին և զբոսնում էի Սանահին վանական համալիրի տարածքում, մի ռուս զբոսաշրջիկ ինձ մոտեցավ, ճանաչել էր հավանաբար, խոսեցինք մի քանի բառ: Նա ինձ վերջում մի հարց տվեց, թե ինչու ենք մենք՝ հայերս, այդքան շատ կառուցում եկեղեցիներ, դրանք չափից շատ են: Դրա փոխարեն

հնարավոր է ավելի օգտակար բան անել: Ես նրան պատասխանեցի, որ Աստված միակն է, որ օգնում և պաշտպանում է՝ առանց դրա փոխարեն որևէ բան պահանջելու կամ վերցնելու: Սա էր իմ պատասխանը: Այո, Աստված ուժ է, իսկ եթե կա ինչ-որ մի բան, որ քեզ ուժ է տալիս, թեկուզ զուտ հավատալը այդ ուժի գոյությանը, ինքնին ձևավորում է պայքարելու ներքին մղում, ինչը չի կարելի անտեսել: Բայց ես հավատում եմ նաև «մարդուն»: Մեկը մյուսին չի խանգարում: Շատերը կարծում են՝ ով որ հավատացյալ է, հետևաբար չպիտի համարի, որ մարդն ամենակարող է և հակառակը, ով որ կարծում է, թե մարդն ամենակարող էակն է տիեզերքի մեջ, նա չի կարող հավատալ Աստծուն: Ես եկել եմ քանդելու այդ միֆը: Ես հավատում եմ Աստծուն, իսկ Աստված հավատում է մարդուն, եթե չհավատար, չէր ստեղծի: Ուրեմն հավատալ Աստծուն նշանակում է հավատալ նաև ինքդ քեզ, որ դու որպես Աստծո արարչագործության վերին մակարդակ, չպիտի հիասթափեցնես նրան: Պիտի մտածես արարել ինքդ, պետք չէ բթանալ, այլապես ինչո՞ւ է Աստված մարդուն մտածելու կարողություն և խելք տվել ավելի շատ, քան այս մոլորակի որևէ այլ էակի: Ինչո՞ւ այստեղ՝ երկրագնդի վրա, մեզանից հզոր էակ չկա, ուրեմն հույսը մեզ վրա է դրել չէ՞ և տվել է նաև ամենակարևորը՝ ընտրության հնարավորություն ամեն ինչում: Կյանքը ընտրություն է սկզբից մինչև վերջ, անթիվ-անհամար ընտրությունների շղթա, անգամ չընտրելն է ընտրություն: Վերջում ունենում ենք այն ճակատագիրը, որը կառուցել ենք մեր ընտրությունների շնորհիվ:

**Զրուցավար:** Դուք բազմիցս նշել եք, որ շատ եք սիրում Ամերիկան, բայց այն երբեք Ձեզ համար տուն չի դառնա: Ինչո՞ւ եք այդքան համոզված դրանում, ի՞նչն է Ձեզ վանում այստեղից:

**Էդուարդ Բրիսթոն Պետրոսյան:** Այո, շատ եմ սիրում, բայց այն իմը չէ: Այն Ձերն է, այն մարդկանցն է, ովքեր ուզում են այն իրենցը լինի: Ես չեմ ուզում: Վիլիամ Սարոյանը գրում էր. «իմ սիրտը լեռներում է», իմն էլ է այդ նույն լեռներում: Հեռու եմ այդ լեռներից, բայց ինձ ուժ տվողն այն հողն ու ջուրն են, որից ճակատագրի բերումով հեռացել եմ, բայց դեն չեմ նետել իմ հոգուց: Ամերիկան հզոր է, այն

հնարավորությունների երկիր է: Ես այն համարում եմ ինքնադրսևորման համար օազիս, որտեղ եթե տաղանդ ունես, մեկ էլ բախտ, դրան գումարած նաև աշխատասիրություն, ապա կարողանում ես կառուցել քո երազանքների բուրգը: Կարևորը դրա տակ չմնալն է վերջում, կարևորը, որ այդ երազանքի ճանապարհը չփոխի քո ներքին «ես»-ը: Լինես տնօրինողը քո ճանապարհի և ոչ՝ դրա գերին:

**Զրուցավար:** Օրինա՞կ:

**Էդուարդ Բրիսթոն Պետրոսյան:** Օրինակ, մի անգամ ավել ամսագրերի շապիկներին հայտնվելու համար չդիմես էժանագին մանիպուլյացիաների քո աստղային կյանքը ևս մեկ օրով զոռով երկարացնելու համար: Եթե աստղը պիտի մարի, ապա այն պիտի մարի, ու դրա արդյունքում աշխարհը փուլ չի գա գլխիդ: Ուղղակի պետք է դրան ընթացս մոտենալ որպես բնական երևույթ: Սթրեսի ճիրաններում հայտնվելը միայն տվյալ անձին է վնասում:

**Զրուցավար:** Ի՞նչն է Ձեզ ամենաշատը գրավում Ամերիկայում:

**Էդուարդ Բրիսթոն Պետրոսյան:** Ժողովրդավարությունը, ազատությունը: Սրանք տերմիններ են, որ յուրաքանչյուր պետության համար թթվածին են: Բռնապետերը սովորաբար այդ թթվածինը հավաքում են մի տեղ և իրենց կարծիքով «արդարացի» իրավունք վերապահում իրենք իրենց միայնակ կամ հավատարիմների «կռուգով» վայելել, մինչդեռ այդ ընթացքում ժողովուրդը խեղդվում է առանց այդ թթվածնի: Երկիրը առաջ տանողը միայն ժողովուրդն է, իսկ խեղդվող ժողովուրդը չի կարող առաջ տանել ոչ մի բան. նա միայն մտածում է՝ ինչպես շնչել: Ժողովրդավարություն և ազատություն բառերը իրար հետ են ընկերություն անում: Ինչ-որ տեղ կարելի է ասել, որ ժողովրդավարությունը այն ազատությունն է, որը տնօրինելու իրավունք է տրված: Ազատություն, որի ճիշտ չափաբաժինը քեզ համար անհատապես գտնելու դեպքում, հասցնում ես այդ ազատությունը գիտակցական մակարդակի վրա, և դա այն հիմնասյունն է, որի վրա հասարակությունն ինքը կառուցում է իր բարեկեցությունը: Սակայն դրա համար նախ և առաջ այդ ազատությունը կամ ժողովրդավարությունը պետք է տալ կամ ավելի ճիշտ

ժողովուրդը պետք է վաստակի այն (հենց այնպես ոչ մեկ սկուտեղի վրա ժողովրդավարություն չի մատուցելու): Միևնույն ժամանակ պետք է նաև բացատրել մարդկանց, թե այն ինչի համար է, որպեսզի պատկերացնեն, թե դրա հետ ինչ կարելի է անել, իսկ ինչ՝ ոչ: Մարդիկ պետք է հասկանան՝ ինչպես պետք է բանիմաց ձևով այն օգտագործել հանուն ընդհանուր բարօրության և ոչ քաոս ստեղծելու համար, այն էլ դրանից դուրս գալու մեթոդներին չտիրապետելու իրողության պայմաններում: Բայց այստեղ ամենակարևորն այն է, որ միտքը ազատ է, եթե այն չի սահմանափակվում, ապա դրա խմորումների արդյունքում ծնվում է իրական ճշմարտությունը:

**Զրուցավար:** Բայց բացատրող սովորաբար չի լինում:

**Էդուարդ Բրիսթոն Պետրոսյան:** Դրա համար էլ այդքան երկար ժամանակ է պահանջվում, որ այդ ազատությունը ստանալուց հետո ժողովուրդները ուշքի գան և սովորեն ճիշտ գործել իրենց տրված ազատության ծովում:

**Զրուցավար:** Ես ոնց հասկանում եմ Դուք խոսքը տանում եք դեպի ռևոլյուցիան: Ի՞նչ է այն Ձեզ համար նշանակում, և ի՞նչն է գլխավոր պատճառը դեպքերի նման զարգացման տարբեր երկրներում տարբեր ժամանակներում:

**Էդուարդ Բրիսթոն Պետրոսյան:** Ռևոլյուցիան անում է ժողովուրդը: Եթե ժողովուրդը դուրս չգա այն անելու, ապա որևէ ուժ չի կարող դա հենց այնպես անել: Ռևոլյուցիայի պատճառն այն է, որ արդար հիմունքներով անարդար համակարգում ժողովուրդը չի կարողանում իր շահերի պաշտպան մարդկանց բերել իշխանության: Եթե երկրում ժողովրդավարական պրոցեսները կարողանում ես հասցնել իր եզրակետին, որը չափազանց խորդուբորդ ու երկար տառապալից ճանապարհ է, և հեղափոխությունը միայն սկզբնակետն է այդ երկար ճանապարհի մեջ, ապա հետագայում ռևոլյուցիաների մասին կարող ես երկար ժամանակ մոռանալ, որովհետև ինստիտուցիոնալ բյուրեղացած անկախ ու արդար համակարգը ինքնին կարգավորում է ամեն ինչ: Ամերիկան և եվրոպական շատ երկրներ, նաև ասիական որոշ երկրներ անցել են

այդ ճանապարհը: Սակայն ռևոլյուցիա ասվածը կարող է նաև հակառակ էֆեկտն ունենալ, երբ ազատություն փնտրող ժողովուրդը հայտնվի ոչ այն իրականության մեջ, որի համար պայքարում էր: Պատմությանը այդպիսի օրինակներ էլ են հայտնի, սակայն գերակշիռ ծավալով ռևոլյուցիայի շնորհիվ առաջ են գալիս դրական փոփոխություններ: Եվ փաստը մնում է փաստ, որ բոլոր դեպքերում ժողովուրդը ազատության և դրական փոփոխությունների համար է պայքար մղում, ինչն ինքնին ազնիվ մոտիվով պայքար է: Ցանկացած փոփոխություն տևական լճացումից միշտ լավ է:

**Զրուցավար:** Լավ, հիմա գանք այն փոքր բաժակին, որի մասին քիչ առաջ խոսք գնաց: Հայաստան ասվածը հենց այնպես բառ չէ Ձեզ համար: Չնայած Ձեր հող ու ջրից հեռու եք, սակայն կարծում եմ հոգով այնտեղ եք ավելի շատ, քան այնտեղ ռեալ գտնվողները, քանի որ ամեն առիթով շեշտում եք Ձեր սերը Ձեր արմատների և հայրենիքի նկատմամբ: Իսկ եթե ավելի մանրանանք, ես գիտեմ, որ Դուք Լեռնային Ղարաբաղից եք:

**Էդուարդ Բրիսթոն Պետրոսյան:** Արցախից:

**Զրուցավար:** Ի՞նչ կարծիք կհայտնեք այդ ծանր կոնֆլիկտի վերաբերյալ, որ տասնամյակներ շարունակ լուծում չի ստանում, իսկ վերջերս էլ՝ մոտ մեկ ամիս առաջ, նորից իրավիճակի էսկալացիա տեղի ունեցավ, որին համոզված եմ՝ ուշիուշով հետևել եք: Բնականաբար խոսքը Ձեր սուբյեկտիվ կարծիքի մասին է:

**Էդուարդ Բրիսթոն Պետրոսյան:** Աշխարհում շատ կոնֆլիկտներ կան, որոնց անլուծելիության կամ դժվար լուծվող լինելուն նպաստում է այն, որ կողմերից յուրաքանչյուրը ունակ չէ հարցին նայել դիմացինի աչքերով: Պարզ բան է դա, սակայն Արցախի հարցում դրա հետ մեկտեղ կան մի շարք բայցեր, մի քիչ ուրիշ բայցեր: Մեր ուզածն է ընդամենը, որ թողնեն մեր ժողովուրդը ինքնորոշվի ու հանգիստ, անվտանգ ապրի այն հողում, որում հազարամյակներ շարունակ ապրել է: Իսկ իրենք Երևանն էլ են ուզում գրավել, Սևան էլ է իրենցը պարզվում է, Սյունիքն էլ, ամեն ինչը: Ու դա առանց ամաչելու պաշտոնապես ասվում է բարձրագույն ղեկավարության

մակարդակով: Տարբերությունը նկատելի է չէ՞: Ադրբեջանը պատմությունը գլխիվայր շուռ է տալիս, և իր կյանքի երազանքը սարքում ամեն պատեհ առիթի դեպքում մի հայի գլուխ ավել կտրելը, քանի դեռ մենք՝ հայերս, իրենց ուզածը չենք արել: Հասկացեք, սա հայերի կապրիզը չէ. մենք կռիվ ենք մղում այն մինիմումի համար, որ կարողանանք մեր գոյությունը պահպանել այս տարածաշրջանում: Աշխարհը չգիտեմ՝ ինչքանով է դա ընկալում, հավանաբար չի էլ ընկալում:

**Զրուցավար:** Այդ դեպքում սրա վերջը ի՞նչ է լինելու:

**Էդուարդ Բրիսթոն Պետրոսյան:** Վերջի համար, այդ վերջին նպաստող քայլ է պետք անել: Այդ քայլը չարած՝ վերջ ենք ուզում: Բայց այդ քայլը երկու կողմն էլ պիտի անեն ու միաժամանակ, եթե ինչ-որ մեկի շահը թողեցիր հետո, ստեղծվելու է անարդարության նոր մթնոլորտ և ընկնելու ենք նոր տեղապտույտի մեջ: Արդարացի լուծման է պետք հասնել, թե չէ եթե էլի սկսեն վերմակն ամեն մեկն իր կողմը մինչև վերջ քաշել, նորից քաշված ենք:

**Զրուցավար:** Դուք ֆիլմ եք նկարահանել Հայոց ցեղասպանության մասին, սակայն բուն ցեղասպանությունը պատկերված չէ ֆիլմում: Դա ինչ-որ հատուկ որոշո՞ւմ էր Ձեր կողմից, որ չպիտի ցուցադրվեն դրվագներ բուն ցեղասպանության տարիների իրադարձություններից, թե՞ ուղղակի այդպես է ստացվել:

**Էդուարդ Բրիսթոն Պետրոսյան:** Առաջին տարբերակը: Ես գտնում եմ, որ պետք է նկարել այն, ինչն ինքդ կկարողանաս դիտել: Պարտադիր չէ դաժան տեսարաններ ցույց տալ, որ մարդկանց դրդես արտասվել քեզ պես, հասկանալ քեզ, ինչպես ինքդ քեզ ես հասկանում: Դա դժվար է նայվում: Իսկ ինձ պետք չի հանդիսատեսին մտովի տանջել այդ տեսարանների միջոցով, որպեսզի ցույց տամ, թե նայեք, տեսեք՝ իմ ազգը ինչքան է տառապած: Դա, ըստ ինձ, հանդիսատեսին վանում է ավելի շատ, քան ձգում դեպի ֆիլմը: Ավելի ճիշտ է զգացնել տալ հոգին, հայի հոգին:

# Գլուխ 4

2013 թ.-ի աշունն էր: Այդքան տարիների ընդմիջումից հետո Էդոն որոշեց այցելել հայրենիք: Խառնիխուռն մտքեր էին նրա գլխում. չգիտեր՝ ինչ սպասել այդ ճամփորդությունից: Վախենում էր թե՛ հիասթափվելուց, թե՛ ընդհակառակը ուրախանալուց: Երբ ինքնաթիռն իջավ, հուզմունքը չկարողացավ զսպել և սկսեց լաց լինել, չնայած դեռ ոչ մի բան կարգին չէր տեսել: Արարատի ճերմակ գագաթը նկատեց, ու միանգամից սիրտը հովացավ: Բայց չէ, մի րոպե... ինքը հո այն սփյուռքահայերից չէ՞ր, որ նախկինում երբևէ հայրենիքում չէր եղել: Իրեն պետք է, որ այդքան հուզառատ չթվային առաջին զգացողությունները, սակայն ոչ, մի պահ իրոք իրեն սփյուռքահայ էր զգում: Ինչպես և սպասվում էր այդ հոգեվիճակը կարճ տևեց: Սթափվեց, կողմնորոշվեց ու իր վերջին տարիներին ձևավորված բնավորության համաձայն սկսեց էլի ինչ-որ տեղ շտապել: Ուզում էր րոպե առաջ հասնել իր մանկատունը, տեսնել՝ ինչ է փոխվել, վերհիշել ծանր ու մռայլ օրերը, ժամանակի հեռավորությունից իրեն նայող իր փոքր տեսակը: Տեսակ, որ մեծ հաշվով դարձավ ներկայիս ձևավորված «Էդուարդ Բրիսթոն Պետրոսյան» անհատի հիմնաքարը: Կյանքի դառնությունն է իրականում բերում մարդկային կյանքի խորը ընկալման: Այլապես մակերեսային կյանքը չի ստիպում խորհել, ընկալել քեզ շրջապատող մարդկային փիլիսոփայության նրբությունները:

Հյուրանոցում իրերը թողնելուց հետո ուղևորվեց այդտեղ: Ի՞նչ տեսարան բացվեց նրա աչքի առաջ, հաստատ ոչ այն, ինչ ինքը

սպասում էր: Մանկատունը քանդել էին, և տեղը մեծ, շքեղ, թագավորական պալատի նմանվող առանձնատուն էր կառուցված: Դարպասին վերապահված «գաղտնապահ»-ի առաքելությունն անգամ չէր կարողանում թաքցնել այդ վեհաշուք կառույցի մի քանի արծիվների պատկերով արձանների վեր խոյացող հպարտ դատարկությունը: Դրանք հուշում էին, որ փողերն ա՛յ, ա՛յ հենց այսպիսի բաների վրա պետք է ծախսել, թե չէ ի՞նչ բարեգործություն, ի՞նչ օգնություն, ի՞նչ զարգացման նախագծեր, ի՞նչ աշխատատեղեր, հո չե՞ք գժվել, ա՛յ իրենց վրա պետք է ծախսել, որ «ճիշտ» լինի:

Էդոն տխրել էր, հուսահատություն էր զգում, վրդովմունք: Զգաց էլ, ինչպես կիսաձայն արտաբերեց. «Սա՞ է ձեր սարքած երկիրը, ավելի ճիշտ՝ չսարքած»: Մեղադրում էր իշխանություններին, բայց ինչ օգուտ, իրականությունն այն էր, ինչը և աչքերի առաջ էր: Դարպասի դիմաց նկատեց երկու «պահարան» և մեկ «շկաֆ»: Այդ մեկ «շկաֆ»-ն ու երկու մի քիչ կոլոտ «պահարաններ»-ը կանգնած հսկում էին մերձակա տարածքը, որ ոչ մեկ հանկարծ չհամարձակվի խանգարել իրենց շեֆի «համամոլորակային կարևորության անդորրը»:

Էդոն չկամությամբ, բայց ստիպված էր մոտենալ նրանց, քանի որ այդ պահին ուրիշ ոչ մեկ չկար տարածքում, ումից կարող էր ինչ-որ բան ճշտել.

– Տղանե՛ր, կներեք, այստեղ առաջ մանկատուն էր չէ՞, եթե չեմ սխալվում:

– Այո՛, չես սխալվում,– գլուխները հեռախոսների մեջ մտցրած պատասխանեցին նրանք:

– Իսկ ինչո՞ւ են քանդել,– հետաքրքրվեց Էդոն:

– Էրեխեքը պրծել են, քանդել են,– բոռի ծիծաղը միացնելով՝ ասաց թիկնապահներից մեկը:

– Ներողություն, իհարկե, բայց ցանկալի է առանց հումորների լա՞վ: Մի տեսակ Ձեզ մոտ այն չի ստացվում,– քամահրանքով խոսեց Էդոն:

– Ի՞նչը լավ չի ստացվում: Տո՛ դու ո՞վ ես, որ ինձ ասես՝ ինչն ա լավ ստացվում մոտս, ինչը չէ,– վրդովված առաջ եկավ թիկնապահը:

– Տեսնում եմ՝ դրբով ես, կերած-խմած ես, բայց փոքր ես, եղբա՛յր, շատ փոքր ես:

Այս խոսքերն ասելով, առանց սպասելու պատասխանի՝ Էդոն հեռացավ այդտեղից, տհաճ էր օդը դառնում արդեն: Քայլում էր ու մտքում կրկնում. «կործանվում ես, Հայաստա՛ն, կործանվում ես»: Իր ետևից թիկնապահները շարունակեցին արձագանքել կատարվածին:

– Վլե՛, դու բա՞ն հասկացար սրա ասածներից:

– Չէ, չի՞ երևում՝ դեբիլի մեկն ա:

– Ախպե՛ր, բայց սա, ինչքան գիտեմ, հայտնի դեմք ա էն Ամերիկաներում, Եվրոպաներում:

– Արա՛, ինչքան ուզում ա, թող հայտնի լինի, մեր շեֆից հաստատ հայտնի չի, էդ հարյուր տոկոս:

Էդուարդը սկսեց թափառել փողոցներով իր սովորության համաձայն: Սիրտը կսկիծից մռմռում էր, քանզի տեսնում էր մարդկանց աչքերում լույսն ու պայծառությունը մարել էին: Որոշեց՝ քանի դեռ այստեղ է ժամանակն օգտագործի ու բարեգործական ծրագրեր կազմակերպի կարիքավորների համար, բայց քաջ գիտակցում էր, որ դա հարցի լուծում չէ: Ուրիշ բան է պետք: Նա ուրախ էր երեկոյան ժամերին նորից նայել քաղաքին բարձունքից և տեսնել, որ քաղաքը լուսավոր է: Իր հիշողությունների մեջ դաջված այն մութ ու մռայլ մշուշի մեջ թաղված ուրվական քաղաքը այլևս չկար, դա միակ սփոփիչ բանն էր, որը հեչ էլ փոքր բան չէր: Քաղաքը մեռած չէ, իսկ դա շատ բան է ասում: Հասարակությունը ինքն իրեն առաջ է մղելու:

Իրականում Էդոն գործով էր եկել: Ինչպես արդեն վերևում զետեղված հարցազրույցի հատվածում նշվեց, Էդոն Հայոց ցեղասպանության մասին ֆիլմ էր նկարահանել: 2013 թ.-ին այդ ֆիլմի որոշ դրվագներ Հայաստանում պիտի նկարահանվեին: Շուտով Հայաստան ժամանեցին նկարահանող խմբի մյուս անդամները ևս

և թևերը քշտած անցան գործի: Ֆիլմը նվիրված էր Հայոց ցեղասպանության հարյուրամյակի տարելիցին: Պրեմիերան տեղի ունեցավ Լոս Անջելեսում 2015 թ.-ի հունվարի 22-ին: Ինչից հետո սկսվեց ֆիլմի հաղթարշավը աշխարհով մեկ: 2015 թ.-ի ապրիլին Հայաստանում պիտի կայանար հայաստանյան պրեմիերան, և Էդոն որոշել էր իր երկրում լինել այդ օրերին: Նախքան ցուցադրությունը նախատեսված էր մեծ մամլո ասուլիս, հետո մի քանի հանդիպումներ ևս: Մի խոսքով գրաֆիկը շատ լեցուն էր:

***

Գարունը իր ողջ գեղեցկությամբ ու զարթոնքով համակել էր Հայաստանը: Թռչունների ծլվլոցը մեղմ շոյում էր Ռուբենի ականջը՝ օգնելով, որ հոգին սավառնի այդքան հարազատ հեռուները, վերհիշի անցյալը: Կարոտում էր: Եկել էր Եռաբլուր ընկերների շիրիմների մոտ խնկարկության: Նա անշտապ, հանդարտ քայլում էր Եռաբլուրում: Նրա համար այդ վայրում ժամանակը կանգ էր առնում: Թողնեին՝ այդտեղից տուն չէր վերադառնա: Մարտական ընկերների հետ էր մտովի զրույցի բռնվում, կռվում նրանց հետ, հետո հաշտվում ու նորից կռվում: Հիշում մարդկային հոգատարության աներևակայելի կրակը, որ վառվում էր հենց նման դժվարին ժամանակներում, հետո մարում է, երբ ամեն ինչ խաղաղվում է: Հանկարծ նրան իր մտքերից շեղեց այլ լեզվով խոսացող մեկի ձայնը: Լեզուն օտար էր, բայց անծանոթ չէր, ադրբեջաներեն էր: «Այդ ինչպե՞ս կարող էի նման լեզվով խոսակցություն լսեի այստեղ: Չէ՛, հաստատ թվացել է... անհնար է». մտքում ինքն իրեն հանգստացրեց Ռուբենը: Բայց ձայնը նորից էր լսվում, շրջվեց ու տեսավ մի անծանոթ տղայի, ով հեռախոսով ադրբեջաներեն ինչ-որ խոսքեր էր ասում: Փորձեց մոտենալ, բացականչեց.

– Հե՜յ, այդ ո՞վ է այդտեղ:

Ռուբենի ծերացած, բայց զրնգուն ձայնը երիտասարդին ստիպեց շրջվել, և երբ հասկացավ, որ իրեն նկատել են, ծաղիկները դրեց գերեզմանաքարին ու անմիջապես դիմեց փախուստի:

Վազում էր շատ արագ. մի քանի վայրկյան, և նա անհետացավ: Ռուբենը մոտ եկավ այն գերեզմանաքարին, որի մոտ երիտասարդը ծաղիկները դրել էր: Վարդգեսի գերեզմանն էր: Գերեզմանաքարի կողքին նկատեց գետնին ընկած մի իր: Երիտասարդը, հանկարծակիի գալով, գցել էր այն գետնին: Ռուբենը միանգամից հիշեց, որ խնամքով պահված այդ արծաթյա պատյանը պատկանում էր Վարդգեսին: Ինչ Արմինեն արգելել էր ծխախոտ օգտագործել, Վարդգեսը դրա մեջ ծխախոտի փոխարեն իր նկարով քարտն էր պահում՝ անուն ազգանունն ու ծննդյան ամսաթիվը կողքը գրված: Դրանով էլ տղան կարողացել էր գտնել նրան: Ծերության հետ Ռուբենը շատ փխրուն էր դարձել, հուզմունքը պատեց ամբողջ հոգին: Սկսեց լռելյայն արտասվել, աչքերը սեղմվել էին, իսկ արտասուքները հատ-հատ գլորվում էին ներքև: Նա բարձրաձայն սկսեց խոսել Վարդգեսի հետ և ասաց միայն մի ֆռազա. «Ճիշտ էիր, Վարդգե՛ս, փաստորեն պետք էր...»:

Այդ արտասովոր դեպքից հետո, հոգնած նոր էր տուն մտել, երբ տնեցիներից կյանքի պայծառությամբ եռուն իր թոռնիկ Մանեն եկավ պապիկին դիմավորելու իր անչափ բարի, քնքուշ ու լուսե ժպիտով.

– Ռուբեն պապի՛կ, Ռուբեն պապի՛կ, նայի՛ր, թե ով է Հայաստան գալու: Այն աշխարհահռչակ հայը, գիտե՞ս նրա մասին: Ես այսօր վիկիպեդիան էի բացել, նրա մասին էի կարդում՝ Էդուարդ Բրիսթոն Պետրոսյան: Արմատներով արցախցի է, պապի՛կ, որտեղ դու կռվել ես:

– Հա՜, դե լավ է, բալե՛ս... լավ է, որ գալիս է: Իսկ ինչ գործով է գալիս գիտե՞ս, դե դա էլ ասա, պապիկը նորություններից հետ չմնա:

– Իհարկե գիտեմ: Ֆիլմ է նկարահանել ցեղասպանության մասին, Մոսկվա կինոթատրոնում ցուցադրելու են Հայաստանում առաջին անգամ ապրիլի 21-ին՝ վաղը: Դրանից հետո էլ մամուլի ասուլիս է տալու: Հուսով եմ, որ ցույց կտան հեռուստատեսությամբ, հետաքրքիր կլինի դիտել,– կայտառ ու վառվռուն աչուկները պապիկի դեմքից չկտրելով՝ ուրախ-ուրախ պատմում էր գանգուր մազերով օրիորդ Մանեն:

– Ա՛խ այդպես... դե ինչ ասեմ, հրաշալի է... էդուարդ Բրիսթոն Պետրոսյան... Էդուարդ Բրիսթոն Պետրոսյան,– Ռուբենն ինքն էլ չհասկացավ, թե ինչու դադարներով բարձրաձայն սկսեց կրկնել մի քանի անգամ նրա անուն ազգանունը, ասես փորձում էր ծանոթ հնչյուններ գտնել դրանցում:

Ամբողջ օրը այդ անունը պտտվում էր նրա գլխում: Երեկոյան ժամ էր, տնով մեկ մտամոլոր շուռումուռ էր գալիս, կասկածները տանջում էին նրան: Մեկ էլ չդիմացավ ու թոռնիկին նորից խնդրեց բացել վիկիպեդիայի այդ էջը ու կարդալ, թե ինչ է գրված այնտեղ ավելի մանրամասն:

– Մանե՛, գյուղը, գյուղը գրված չէ՞: Որտե՞ղ է ծնվել,– անհամբեր հարցրեց Ռուբենը:

– Չէ, պապի՛կ, դա չկա: Միայն գրված է, որ ծնվել է Լեռնային Ղարաբաղում 1989 թվականի փետրվարի 10-ին,– նորից տնտղելով էջը՝ պատասխանեց գեղեցկադեմ Մանեն:

– Իսկ ծնողնե՞րը,– ավելի անհամբեր դարձած նստած դիրքից վեր կենալով՝ հարցրեց Ռուբենը:

– Էնջի և Մեթյու Բրիսթոն:

– Միայն ի՞նձ է թվում, որ այս պատմության մեջ ինչ-որ բան չի կպնում:

– Չէ՛, պապի՛կ, ինձ էլ է թվում: Դե երևի որդեգրել են, ուրիշ բան խելքիս չի գալիս,– իր «նյուտոնյան գիտակ գլուխը» շարժելով՝ ասաց Մանեն:

– Ապա մի տո՛ւր տեսնեմ դեմքը,– ավելի խորացավ թեմայի մեջ Ռուբենը՝ անհույս կարծելով, թե դեմքին նայելով ինչ-որ բան հնարավոր է հասկանալ: Ինքն իրեն համոզում էր մտքում, որ նմանություն կա, բայց ինքն էլ գիտեր, խենթություն է մտածածը, իսկ միգուցե խենթությո՞ւն չէ, իսկ մի՞գուցե զգացողությունը ճիշտ է, չէ՞ որ իրոք նմանություն կար:

Հաջորդ օրը Ռուբենը արթնացել էր շատ անհանգիստ վարքագծով: Չէր նկատում տան անդամներին, ցրված էր: Տանջվում էր, ինչ-որ բան էր ուզում հիշել, չէր կարողանում: Մեկ էլ հանկարծ

սկսեց ավելի կտրուկ շարժումներ անել: Հուզված մոտեցավ թոռնիկին ու շփոթմունքը էլ չէր զսպում: Հարցին, թե ինչ է պատահել, պատասխանեց հարցով առանց նկատելու, որ իրեն էին հարց տվել.

– Իսկ ինչպե՞ս կարող ենք հայտնվել այդ մամուլի ասուլիսին:

– Պապի՛կ, կարող ենք ուղղակի նախատեսված ժամին այնտեղ լինել, մուտքը ազատ է: Մոտ մեկ ժամից կսկսի:

– Դե բա ո՞ւմ ենք սպասում, արագացրո՛ւ,– անսպասելի բղավեց Ռուբենը,– դու ինձ հետ կգաս, որովհետև ես նման վայրերում դժվար եմ կողմնորոշվում:

– Լավ, բայց կասե՞ս ինչ է պատահել: Ինչո՞ւ ես այսքան խառնվել իրար:

– Մանե՛, գլուխս խառն է, սրտովս գնա՛: Երկար պատմություն է, դու ավելի լավ է պատրաստվի՛ր, մենք պետք է շուտ այնտեղ հասնենք:

Հասնելուն պես Ռուբենը թոռան ձեռքը ամուր բռնած մտավ սրահ: Զբաղեցրեցին դեռևս դատարկ սրահի առաջին շարքի նստատեղերից երկուսը: Ասուլիսը սկսվեց: Էդոն նստել էր Անուշի կողքին, իր նախկին դայակի, հավատարիմ օգնականի ու նաև խորհրդատուի, ով դարձել էր Էդոյի աջ ձեռքը: Անուշը միշտ կողքն էր, առանց Անուշ գործերը ձախողման կգնային, նրա հավասարակշռությունը շատ էր պետք գալիս մեր «բռնկուն տաղանդին»: Տարատեսակ հարցեր էին հնչում դահլիճում ներկա լրագրողների կողմից: Ռուբենը դրանք չէր լսում: Աչքը չէր կտրում ուղիղ իր առջև նստած այդ սևաչյա երիտասարդից: Նրա աչքերում հարազատ հայացք էր փնտրում կամ գոնե փորձում համոզել ինքն իրեն, որ գտել է այդ հայացքը: Մտովի նմանեցնում էր, շատ էր ուզում ճիշտ դուրս գալ և սրտի տրոփյունով սպասում էր նրա արմատների մասին ավելի մանրամասն հարցի, որը սակայն չէր հնչում: Բոլորը տարված էին ֆիլմի պրեմիերայով և հարցերը ուղղում էին ֆիլմի ստեղծման մասին, բովանդակության կամ Հայոց ցեղասպանության վերաբերյալ: Ասուլիսն արդեն մոտենում էր ավարտին, երբ Ռուբենը հասկանալով, որ եթե հիմա ինքը չխոսի, կստացվի, որ անիմաստ են եկել և

իրեն հուզող հարցի մասին այդպես էլ չի տեղեկանա: Նա գտավ իր մեջ համարձակություն, չնայած երբեք այդքան մարդաշատ վայրում հանդես չէր եկել, որոշեց, որ այս պահին նախաձեռնությունն իր ձեռքում կենտրոնացնելու ճիշտ ժամանակն է:

– Կներեք, ևս մեկ հարց կարելի՞ է:

– Համեցե՛ք խնդրեմ, բայց վերջինը հա՛ խնդրում եմ, մենք արդեն շտապում ենք, այլ պլանավորված հանդիպումներ էլ ունենք,– ներողամիտ ձայնով ասաց Անուշը:

– Ձեր մոր անունը Սառա՞ է եղել:

Հարցը անակնկալի բերեց Էդոյին այն աստիճան, որ թուքը քարացել էր բերանում: Ջուր էր խմում ու չէր հագենում: Նրա անհանգիստ պահվածքը նկատել էին նաև ներկաները, ու շշուկով իրար ականջի ինչ-որ բան էին փսփսում: Էդոյի հավատը չէր գալիս, որ իրեն նման հարց են տալիս: Շփոթվեց, նայում էր դիմացը կանգնած արդեն տարիքն առաջ կամուֆլյաժով ծերունուն ու սիրտը հուշում էր, որ ինչ-որ կարևոր բան գիտի այդ մարդը: Նայում էր նրա զինվորական համազգեստին ու փորձում էր գուշակել. «նման հարց է տալիս, որովհետև ի՞նքն էլ է Արցախից կամ միգուցե կռվե՞լ է հոր հետ»: Անուշի սթափեցնող հայացքը հետ բերեց Էդոյին: Զգաց, որ արդեն անհարմար իրավիճակ է ստեղծվում: Դրա մեղավորը իր վարքագիծն ու իր լռությունն է: Վերջապես խոսեց.

– Կներեք, ես չէի ուզի այդ թեմայով այսպես հանրային անդրադարձ կատարել, եթե հնարավոր է հիմա ավարտենք, ես Ձեզ մի փոքր ուշ կմոտենամ, մենք հանգիստ կզրուցենք:

Ռուբենը գլխի դրական շարժումով տվեց իր համաձայնությունը: Նա իր տանջված աչքերում ուրախությունը չէր կարողանում թաքցնել: Փաստորեն ստացվեց ավելի լավ, քան հնարավոր էր պատկերացնել: Ասուլիսն ավարտվեց, Անուշը ամփոփիչ խոսքն էր ասում հավաքվածներին: Այդ ընթացքում Էդոն վայրկյաններն էր հաշվում: Սովորաբար անկարևոր թվացող այդ ակնթարթները կարծես մի ամբողջ հավերժություն ձգվեին: Վերջապես

Անուշը շնորհակալություն հայտնեց ներկաներին և բարի դիտում մաղթեց:

Էդոն անհամբեր կեցվածքով ու արագ քայլերով մոտեցավ ծերունուն: Ու ավելի անհամբեր հարցրեց.

– Դուք ի՞նչ գիտեք մորս մասին:

– Ուրեմն Սառա է եղել,– բռունցքով իր կրծքին հարվածելով՝ խորը հոգոց հանեց Ռուբեն պապը:

Ռուբենը և՛ ուզում էր ճիշտ դուրս գալ իր մտածմունքներում, և՛ միևնույն ժամանակ վախենում էր այդ ճշմարտությունից: Անուշը Էդոյի կողքին կանգնած լուռ հետևում էր ծերունու պահվածքին, փորձում գուշակել խոսակցության հետագա ընթացքը, որը գնալով ավելի լարված էր դառնում:

– Դուք այդպես էլ չասացիք՝ ինչ-որ բան Ձեզ հայտնի է, թե ոչ: Երկա՞ր ենք մուկն ու կատու խաղալու, հայրի՛կ: Համբերությունս մի՛ չարաշահիր: Կարևոր հարց է ինձ համար:

– Բա որ կարևոր հարց է, ինչո՞ւ շուտ չէիր հետաքրքրվում,– հեգնանքով հարցրեց Ռուբենը:

Էդոն լռեց, առաջին անգամ նրան այնպիսի իրավիճակում բռնացրին, որ չիմացավ, թե ինչ պատասխանի:

– Հորդ մասին ի՞նչ գիտես կամ գիտե՞ս արդյոք, թե դա էլ է «կարևոր», դրա համար էլ չես հետաքրքրվել,– հարցրեց Ռուբենը:

– Հետաքրքրվել եմ, նա ևս մահացած է: Հայաստան կատարած նախորդ այցիս ժամանակ այցելել եմ Արցախ նրանց երկուսի գերեզմանին էլ, սակայն ինչքան հարցուփորձ արեցի, շատ բան չկարողացա իմանալ, գուցե լավ չեմ փնտրել:

Խորհրդավոր լռություն տիրեց դահլիճում, երկուսն էլ ամաչեցին իրենց վարած զրույցից, իսկ զրույցին ներկա Մանեն և Անուշը ճիշտ գտան չմիջամտել:

– Ի՞նչ-որ բան քեզ մոտ ունես նրանցից պահպանված,– հանկարծ լռությունը խախտեց Ռուբենը:

– Այո, մեդալիոն նրանց նկարներով: Այն միշտ հետս է, իմ թալիսմանն է:

– Կարո՞ղ եմ տեսնել:

– Կներեք, ես այն հազվադեպ եմ հանում:

– Դե ուրեմն այսօր այդ հազվադեպ դեպքերից մեկն է:

– Լավ, բայց խոստացեք, որ ինչ-որ բան եթե գիտեք, անպայման ինձ ասելու եք դրա մասին,– պայման կապեց Էդոն:

– Տարիքս հարգի՛ր, տղա՛, ես այդքան նյարդերից ամուր չեմ, չե՞ս տեսնում՝ քեզնից վատ եմ հիմա,– նորից սիրտը բռնեց ծերուկը:

Ծերունու խոսքերից ազդված՝ Էդոն վերջապես հասկանում է, որ իրեն է ավելի շատ հետաքրքիր՝ այս արտառոց հանդիպումն ինչով կավարտվի: Հանում է մեդալիոնը, բացում ներսի պատկերը և մոտեցնում է այն Ռուբենին: Ռուբենը տեսավ Սառայի ու Գևորգի նկարները: Մարմնով մեկ սառսուռ անցավ, գետինը չէր զգում, ոտքերը թուլացան ու քիչ էր մնում վայր ընկներ: Նստեցրին նրան դատարկ դահլիճի աթոռներից մեկի վրա, որ ուշքի գա: Նա գիտակցությունը չէր կորցրել, բայց կորցրել էր իրեն, հեղեղի նման արցունքները հոսում էին աչքերից, կուրծքն էր ծեծում: Ուզում էր գոռալ ալամ աշխարհին, որ գտել է, գտել է նրան, ողջ է, թուրքերի ձեռքին չէ, բայց չէր կարողանում խոսալ, անգամ մի բառ չէր կարողանում արտաբերել: Հանկարծ մի տարօրինակ զգացողություն պատեց նրան. ինքն իր բացահայտումից մի տեսակ սկսեց վախենալ, ուրախությունը փոխարինվեց տագնապով: Կտրուկ ետ վերադարձրեց մեդալիոնը, շրջվեց և սկսեց արագ քայլերով գնալ դեպի դահլիճի դուռը:

– Է՛յ, մի րոպե՛, այդ ո՞ւր եք գնում: Ա՛խր խոստացաք, որ մի հստակ բան կասեք, եթե ճանաչեք նրանց:

Ուզում էր վազել ծերունու հետևից, բայց Անուշը նրան կանգնեցրեց՝ հիշեցնելով, որ ուշացնել մյուս հանդիպումները չեն կարող, պետք է գնան: Երեկոյան նորից խոսք բացվեց օրվա կատարվածի մասին: Էդոն կատաղած էր.

– Ինչո՞ւ չթողեցիր ես նրա հետևից գնայի, հը՛: Հիմա ես ո՞նց նրան գտնեմ:

– Հանգիստ եղիր, նա քեզ կգտնի,– նախանձելի հանդարտությամբ մեկնաբանեց Անուշը:

– Իսկ եթե ոչ: Չուզենա գտնել, ես այդպես էլ չեմ իմանա՝ նա ինչու այդ վիճակի մեջ ընկավ: Հաստատ մի բան գիտի չէ՞: Ես դրանում համոզված եմ, այդ հարցում կասկած չկա:

– Ինձ թվում է՝ այս կծիկը վաղ թե ուշ բացվելու է, ամեն դեպքում ոչինչ պատահական այս կյանքում չի լինում, այնպես որ դու քո կյանքն ապրի, ճակատագիրը ապագադ իր ուղով գծած դիմացդ է դնելու,– խորհուրդ տվեց Անուշը՝ պահպանելով նախկին սառը և անտարբեր հանգստությունը:

Այդ օրվանից սկսած Ռուբենը վատ էր: Առողջական խնդիրները գլուխ էին բարձրացրել, տեղի ունեցածն էլ վրայից: Մինչև լիարժեք խելքի եկավ, մի քանի օր պահանջվեց: Վերջապես հավաքեց մտքերն ու անելիքները գծագրեց: Զանգահարեց որդուն Նահանգներ:

– Տղա՛ս, կարող ես կազմակերպել իմ գալն Ամերիկա, ձեզ մոտ որոշ գործեր կան կարևոր:

– Իհարկե, հայրի՛կ, բայց ասա տեսնեմ 73 տարեկան հասակում այդ ի՞նչ գործեր պիտի ունենաս այստեղ: Կյանքո՞ւմ ես Հայաստանից ոտքդ կտրել:

– Երկար պարզաբանել չեմ կարող, սակայն շատ կարևոր է, խնդրում եմ զբաղվես այդ հարցով:

Ամերիկա: Երազանքների երկիր: Երկիր, որտեղ կարող ես տապալվել, սակայն այդքան ցավոտ չթվա, քանի որ տապալվել ես Ամերիկայում, ինչն արդեն առավելություն էր թվում, ինչքան տարօրինակ դա չհնչեր: Երկիր, որտեղ ունեցածդ հաջողությունը մուլտիպլիկատիվ էֆեկտով ավելի հասանելի է դարձնում աշխարհում ամեն ինչ, ամեն տեղ:

Ռուբենը չէր խորշում իր մտադրությունից, հստակ կերպով արդարացված էր համարում իր այդտեղ գտնվելը և գալու նպատակը: Նա գիտեր Արմինեի հետ տեղի ունեցածի մասին, գիտեր նաև՝ ինչպես գտնել նրան: Խոսակցությունը դյուրիններից չէր լինելու, բայց պետք էր դրա միջով անցնել ու ինչքան հապաղեր, այնքան ավելի բարդ էր դառնալու խոստովանելը, որ ինքը գիտի մեր հերոսուհու կյանքի մասին մի բան, որ հնարավոր է՝ ոչ մեկ չգիտի: Ռուբենը

չգիտեր՝ պատերազմի տարիներին կար ինչ-որ մեկը ուրիշ, ում այդքան իր կյանքի մանրամասների մասին անկեղծացած լիներ Արմինեն, բացի բժիշկ Դավթյանից, ով մի քանի տարի առաջ վախճանվել էր, Սառայենց ավիրված գյուղում էլ նրա վրդովմունքին ականատես եղած զինվորներն ընդհանրապես իրավիճակին անծանոթ էին: Իսկ Ռուբենը շուտ չէր եկել խոսելու դրա մասին, որովհետև չէր ցանկանում իզուր տակնուվրա անել այդ կնոջ ներաշխարհը, մանավանդ, որ որդու ճակատագիրը մինչև վերջերս անհայտ էր: Հնարավոր է մահացած լիներ, սակայն հիմա ճակատագրի բարեգութ գտնվելու շնորհիվ լավ լուր ուներ Արմինեին հայտնելու: Ասելիք, որ նրա կյանքը պիտի 180 աստիճանով փոխեր: Մտովի փորձում էր շարադրել մտքերը, որ պիտի ասի մի կնոջ, ով նոր պետք է իմանա, որ անցյալում ինքը երեխա է ունեցել, և այդ երեխան ողջ է, ապրում է: Տարօրինակ կարգավիճակ է, բայց ինչ արած: Ռուբենը մի բան կարող էր համոզված պնդել, որ այս խրթին պատմությունը սկզբնական կետից մինչև վերջին կետը իրեն հայտնի էր: Հաշվի առնելով նաև դա՝ այս պարագայում իր կողմից անտարբերությունը ուղղակի աններելի կլիներ: Ռուբենը պայմանավորվեց Լևոնի հետ, որ հանդիպում կազմակերպի:

– Լևո՛ն, խնդրում եմ, խոսի՛ր նրա հետ: Դա շատ կարևոր է, ես պիտի տեսնեմ նրան: Կյանքի ու մահվան հարց է:

– Լավ, լավ... հասկացա... մի՛ անհանգստացիր, կկազմակերպենք: Իսկ չե՞ս ուզում ասել՝ ինչ է եղել, որ այսքան հուզված ես:

– Ես դա նրան պիտի ասեմ, կներես, անձնական է:

– Լավ, ինչպես ճիշտ ես գտնում, չեմ խառնվում այլևս,– եզրափակեց Լևոնը:

Վերջապես եկավ այդ կարևոր օրը, Արմինեն Ֆրեզնոյի իր առանձնատանն էր, բայց այդ առանձնատան աշխատասենյակից հազվադեպ էր դուրս գալիս: Իբր արձակուրդի մեջ էր, բայց իր արձակուրդը նման էր մի վիճակի, որ մեկ է աշխատում էր՝ ուղղակի տնից: Տնային մթնոլորտը հնարավորություն էր տալիս կարծել, թե վայելում ես սեփական հանգիստը: Մի բան, որ տանը համակարգչի

առջև նստած և գրասեղանին առկա թղթապանակների երբեք չնվազող խրձերի պայմաններում նվազագույնը տարօրինակ էր, բայց իր համար սովորական:

Դռան զանգը դժվարությամբ, բայց կարողացավ շեղել Արմինեին իր «տնային աշխատանքներից»: Դժկամությամբ կտրվելով աշխատանքային ռեժիմից՝ տանտիրուհին շտապեց դեպի դուռը: Բացելուն պես նկատեց զինվորական հագուստով, կարոտած ժպիտով ու հայրական գուրգուրանքով իրեն նայող մի ծերունու, ում աչքերում նույն պահին հայտնվեցին՝ իրենց երևան գալուն սպասող արցունքի կաթիլներ: Դրանք վկայում էին այն մասին, թե ինչքան սպասված էր այս հանդիպումը այդ մարդու համար: Արմինեն, բնականաբար, որպես տանտիրուհի, առաջինը խախտեց լռությունը.

– Նե՛րս եկեք: Դուք երևի Ռուբենն եք չէ՞: Ինձ Ձեր մասին ասել էին:

– Հա՛, հա՛... այդ ես եմ,– քնքշաձայն պատասխանեց Ռուբենը:

– Նե՛րս եկեք, համեցե՛ք: Ուրախ եմ շատ, որ եկել եք, ի՞նչ կցանկանաք հյուրասիրեմ:

– Չէ՛, ոչինչ պետք չի իսկապես... Իսկ ի՞նչ էին ասել քեզ իմ մասին, դե ի նկատի ունեմ, ո՞նց էին ներկայացրել իմ գալը,– հետաքրքրական հայացքը նորից պարզեց դեպի Արմինեն, երբ նստեց հյուրասենյակի մեծ բազմոցին:

– Ասել էին, որ Երևանից եք եկել, ինձ շատ վաղուց գիտեք, դեռ պատերազմի տարիներից: Ուզում եք ինձ հետ անպայման խոսել... առանձնապես այդքանը, ուրիշ ավել բան ինձ հայտնի չէ:

– Իսկ ինձ հայտնի է,- հարցը միանգամից այլ հարթություն տեղափոխեց Ռուբենը:

– Ի՞նչ է Ձեզ հայտնի,– զարմացած նրա արտահայտած մտքի տոնից՝ մի պահ այլայլվեց Արմինեն:

– Կասեմ, մի՛ վռազիր, դա հիմա ինձ խանգարում է: Պետք է դեռ կարողանամ ճիշտ խոսքեր գտնել, որ ինձ ճիշտ հասկանաս, աղջի՛կս:

– Այդ դեպքում, Դուք հարմարվեք: Ես հիմա թեյ դնեմ, մի փոքր հյուրասիրություն կազմակերպեմ Ձեզ համար: Հետո կզրուցենք:

Նա գնաց խոհանոց, իսկ Ռուբենը կարծես փոշմանած լիներ, որ եկել է, քանի որ չէր կարողանում կառավարել էմոցիաները: Չգիտեր, թե որտեղից սկսել, ինչպես պատմել և այս ամենի արդյունքում ինչ կստացվի: Մի քիչ անց, Արմինեն վերադարձավ բարձր տրամադրությամբ, թեյ հյուրասիրեց, սեղան գցեց, շատ ջերմ էր տրամադրված: Դա ավելի էր լարում Ռուբենին, չէր ցանկանում փչացնել այդ մթնոլորտը:

– Դուք ինձ ինչքա՞ն ժամանակ է, որ ճանաչում եք,– հարցրեց Արմինեն:

– 1991 թ.-ի սկզբից, երբ ես միացա պայքարին, հետագայում դու մեր հրամանատարն էիր:

– Ե՛ս, հրամանատա՞ր,– թեթև ծիծաղ իջավ Արմինեի դեմքին,– հավատս չի գալիս, որ դա իրոք եղել է: Տղաները, որ խոսում են դրա մասին մի տեսակ լուրջ չեմ ընդունում. մտածում եմ՝ միևնույն է ոչինչ չեմ հիշում, հիմա ինչ կուզեն, կասեն,– կատակի տվեց նա:– Տարօրինակ է չէ՞: Ձեզ իմ մասին եմ հարցնում, սակայն ինչ արած հանգամանքներն այսպես դասավորվեցին: Չեք պատկերացնի այս վիճակը ինչքան ցավոտ է ինձ համար: Ես «ես» չեմ, ես երկու «ես» եմ, որոնցից մեկին չեմ ճանաչում ու անկեղծ ասած վախենում եմ ճանաչելուց:

– Վախենալ պետք չի, վախը քեզ համար չէ, դու իրոք փոխվել ես: Դու շատ անվախ բնավորություն ունեիր, դա էր պատճառը, որ չնայած երիտասարդ տարիքիդ, միանգամից նկատվել ես բարձր հրամանատարության կողմից, և նրանք քեզ վստահել են այնպիսի առաջադրանքներ, որ տվյալ տարիքում գտնվողներից եզակիներին կվստահեին: Իմ առջև իրոք որ ուրիշ մարդ է նստած հիմա, ավելի փխրուն, ավելի կոտրվող: Այդպես չպիտի լինի:

– Բայց ես ի՞նչ անեմ, ասե՛ք: Իմ մեղքը ո՞րն է,– վշտալից ձայնով ու լցված աչքերով պատասխանեց Արմինեն:

– Գիտեմ, դու մեղավոր չես: Չէ՛, չէ՛, աղջի՛կս, լաց մի՛ եղիր, կներես չմտածեցի, որ այդքան ծանր կթվան իմ խոսքերը քեզ: Ես պետք է վերջապես խոստովանեմ, թե ինչու եմ եկել այստեղ, բայց վախենում եմ արձագանքից:

– Ասե՛ք վերջապես:

– Դու որդի ունես: Նա կա, գոյություն ունի ու ապրում է առանց քո մասին իմանալու:

– Ի՞նչ: Այդ ի՞նչ եք ասում: Չէ՛, մի րոպե՛... Դուք այդ ի՞նչ եք խոսում... ես երեխա՞ ունեմ... ես մա՞յր եմ...

Էլ չկարողացավ խոսել, սիրտը տեղից դուրս եկավ, և՛ երջանկանալու առիթ էր, և՛ տխրության, որ այսքան ժամանակ չի իմացել, հիմա զգացմունքները խեղդում են հոգին:

– Աստվա՛ծ իմ... ինչո՞ւ ես չեմ հիշում որևէ բան... մի ուղղություն տո՛ւր, դո՛ւրս հանիր ինձ այս վիճակից... խոսե՛ք... գոնե Դուք խոսե՛ք... Խնդրում եմ, մի բան ասեք, ինչո՞ւ եք լռում,– բղավում էր Արմինեն:

Ռուբենը պատմեց Սառայի մասին ու ասաց նաև, թե ով է իր որդին հիմա:

– Իսկ երեխան ո՞ւմից է, ի՞նչ է եղել դրանից առաջ ինձ հետ:

Ռուբենը լուռ էր, չէր խոսում, աչքերը սևեռել էր վրան: Տեսնում էր, թե ոնց է նա տանջվում, բայց չէր ուզում ավելին ասել: Կարևորը իմացավ, որ որդի ունի:

– Հիմա, ես նրա հետ հանդիպեմ ու ի՞նչ ասեմ... բա՞ն ունեմ ասելու: Ասեմ, որ իր մայրն եմ, բայց ոչինչ չեմ հիշում... Դա նորմա՞լ է ըստ ձեզ:

– Կներես, բայց ես ավել բան չունեմ քեզ ասելու, պիտի գնամ,– գլխիկոր պատասխանեց ծերունին ու արագ շարժվեց դեպի առանձնատնից դուրս տանող ճանապարհը:

– Չէ՛, մի րոպե՛, այդ ո՞ւր եք գնում... սպասե՛ք... Դուք այդպես էլ չպատասխանեցիք իմ հարցին, հե՜յ,– Արմինեն բղավելով գնաց նրա հետևից մի փոքր և կանգ առավ: Տարակուսած էր, չէր էլ կարողանում վազել, հենվեց իր տան այգու մոտակա պատնեշին, որ հույզերի մեջ խեղդվող շնչառությունը տեղը բերեր:

Այդ գիշեր Արմինեն արթուն լուսացրեց: Լաց էր լինում ու դրան զուգահեռ վերլուծում Ռուբենի արտահայտած յուրաքանչյուր բառը, միմիկան: Ուզում էր վեր կենալ տեղից, գնալ որդու մոտ, բայց

սարսափում էր նրա հարցերից, նրա արձագանքից, նրա ատելությունից: Սակայն մի բան է չիմանալ ու չփնտրել, մեկ այլ բան է իմանալ ու փորձ չանել շտկելու ճակատագրի խարխլված ու թեկուզ դյուրեկան, բայց սխալ ընթացքը: Այդ օրվանից սկսած տարօրինակ բաներ սկսեցին կատարվել: Կարծես ուղեղը ենթագիտակցության միջոցով ընկալած լիներ ճիշտ ուղերձը և ինքնաբերաբար ազդակներ ուղարկեր անցյալից: Գլխում խառը մտքեր էին սավառնում, դրանք սկսեցին հաճախ այցի գալ նրան, հատկապես գիշերները: Աղոտ պատկերներ էին գալիս աչքին... դաժան պատկերներ: Արմինեն չէր կարողանում հասկանալ, թե ինչ է իր հետ կատարվում, սարսափում էր սկզբից դրանցից: Մտածում էր, որ խելագարվում է, մինչև որ գլխի ընկավ՝ հիշողությունն է կամաց-կամաց վերականգնվում:

– Լավ, մենք ինչո՞ւ թողեցինք ընդհանրապես, որ Ռուբենը քեզ հետ խոսի հը՞: Լավ էիր մինչև այդ: Քեզ հայելու մեջ նայած կա՞ս ընդհանրապես, վիճակդ տեսե՞լ ես,– բարկացած վրա տվեց Լևոնը:

Արմինեն գլուխը վեր բարձրացրեց ու կիսաարցունքոտ աչքերով հակադարձեց Լևոնի կշտամբանքին.

– Նրա գալը պետք էր, ինչքա՞ն պիտի խաբված ու ինքս ինձ օտար մեկի կերպարով ապրեի:

– Բայց ասա՛, որ ի՞նչ խաղաղ կերպար էր... հանգի՜ստ, առանց ցնցումների, իսկ հիմա, քեզ նայի՛ր, տեղդ չես գտնում: Գժի նման այս ու այն կողմ ես ֆռում տանդ մեջ, գործերիդ տիրություն չես անում: Արմի՛ն, սթափվի՛ր, դու միշտ հավասարակշռված ես քեզ պահել, իսկ հիմա էմոցիաներդ, որ բռնկվում են, էհէհեեե՜յ գնա գալիս եմ,– վրա պրծավ նորից Լևոնը ու խոսքը շարունակեց,– այս ի՞նչ վիճակ է, բոլորը հին Արմինեին են պահանջում, այդ թվում քո գործընկերները, ինչո՞ւ չէ, նաև մենք:

– Վերադարձել եմ, հիմա այնտեղ եմ: Տուն եմ վերադարձել, դրա համար էլ այստեղ չեմ:

Արմինեն դադարել էր արդեն լաց լինել և չափազանց հանգիստ կեցվածք էր դրսևորում խոսակցության ժամանակ ու այդ նույն տարօրինակ հանդարտությամբ էլ հարցերին էր պատասխանում:

– Տեսնում եմ, որ այստեղ չես, հինգ ժամ է խոսում եմ ու... դատարկություն: Փչացած միկրոֆոնի դերում եմ, լսող չկա, հիմա ասա՝ ինչ ենք անելու, էսպես ցնորված ապրելու ենք, հա՞,– կատաղության հերթական նոպան դուրս թռավ Լևոնի շուրթերից:

– Ինձ ժամանակ է պետք, ես դեռ լիովին չեմ վերհիշել ամենը, ինչ-որ բաներ կիսատ են ու անհասկանալի: Ինձ համար բարդ շրջան է, բայց ես ուրախ եմ, որ վերագտնում եմ ինքս ինձ, ինչպիսին որ լինեմ, դա կապ չունի, կարևորը, որ դա ես լինեմ, իրական Արմինեն,– գոհունակությամբ հայտնեց Արմինեն և շարունակեց հարցադրումով.– Ի՞նչ է, չէի՞ք ուզում, որ ես հիշեմ վերջապես իմ ապրած կյանքը:

– Ուզում էինք, բայց ոչ այս գնով: Ա՛խր, հիմա ավելի շատ ես տանջվում, քան մինչ այդ էր, երբ ուրախ-զվարթ ապրում էինք միասին: Հետո նաև առանձին-առանձին, բայց կապ չունի, գիտեինք, որ լավ ես, հանգիստ էինք քեզ համար, հիմա ամեն պահի վախենում ենք: Շատ գիտե՞նք, թե էդտեղ՝ գլխումդ, ինչեր դեռ կհիշես, Աստված չանի, մի վնաս տաս քեզ, մենակ չասես, որ այդ վտանգը չկա, լավ էլ կա: Կույր չենք, տեսնում ենք ու վախենում կյանքիդ համար: Այսքան պայքարեցինք, որ ապրես, մեկ էլ առըըհաաա՛ քեզ, ամեն ինչ մի վայրկյանում փլուզվի՞, դա որտե՞ղ է գրված:

Արմինեն հասկանում էր, որ իր մասին հոգ տանելով է, որ այդքան կշտամբում են իրեն: Ամեն դեպքում չէր հանձնվում, փորձում էր հանգստացնել Լևոնին.

– Ես ինձ ոչինչ էլ չեմ անի:

Ինչին Լևոնը ընդհանրապես հակված չէր հավատալ և արձանագրեց իր դիրքորոշումը՝ ուղիղ ասելով դա նրան.

– Այդքան վստահ մի՛ եղիր, մանավանդ, որ իրականում վստահությունդ կեղծում ես: Հենց նոր խոսքիդ մեջ կասկածամտություն զգացի, այդ էլ քեզ ապացույց, որ տեղին են իմ վախերը:

Եվ իրոք տեղին էին: Այդ գիշերն ամենաչարաբաստիկն էր, քանի որ Արմինեն մտաբերեց իր կյանքի ամենասարսափելի օրը, երբ սպանեցին ծնողներին ու բռնաբարեցին իրեն. թե ինչպես էին փակել դուռը և վառում տունը, և թե ինչպես մազապուրծ եղավ այդ

դժոխքից: Արթնացավ, արտասվելով, կիսախելագարված մոտեցավ ծորակին, որ ջուր խմի, ուշքի գա, բաժակը գցեց գետնին, ինքն էլ հետևից ընկավ: Սկսեց ձեռքերով հարվածել ջարդված բաժակի ապակու մնացորդներին, հետո մեծ դժվարությամբ վեր կացավ, գնաց պատուհանի մոտ... բացեց այն: Օդը չէր հերիքում, սկսեց ինչքան ուժ ուներ գոռալ, վանկարկել անհասկանալի բառեր: Հարևանները շտապեցին իրենց տուն, բայց առանձնատան դարպասները փակ էին: Լևոնը սրնթաց արագությամբ հասավ Արմինեի տուն. հարևանները առաջինը իրեն էին տեղյակ պահել, բացի դրանից սիրտը վատ բան էր գուշակում և մոտակայքում էր, շատ չէր հեռացել տարածքից: Հասնելուն պես մեքենայից մի ծանր բան հանեց ու սկսեց խփել դարպասների կողպեքին: Մի քանի հարված, և դարպասները բաց էին, արագ վազեց դեպի դուռը, այն նույնպես հարվածելով ջարդեց ու...

Հյուրասենյակում կոնյակի շիշը մի կողմում շպրտած, կեսը թափված, ընկած էր նա գետնին, երակներն էլ կտրած: Լևոնը մտքում իրեն էր մեղադրում՝ ինչու մենակ թողեց, ախր սիրտը վատ բան էր հուշում, բայց արդեն ուշ էր, եղածը, եղած էր: Նրան արագ հասցրին հիվանդանոց: Բարեբախտաբար կյանքին վտանգ չէր սպառնում:

# Գլուխ 5

2016 թ., փետրվար: Կարմիր գորգով անցնում էր ֆիլմարտադրության բնագավառի աստղային բոմոնդը: Ամենասպասված իրադարձությունը կինոարվեստում՝ Օսկար: Մրցանակաբաշխություն, որը գագաթնակետն է կինոյի մասին երազող բոլոր մարդկանց համար: Սա այն կետն է, որին հասնելուն պես կարող ես ասել վերջ... հասել եմ: Շքեղ սև լիմուզինը կարմիր լույսի տակ կանգնած, սպասում էր ճանապարհը շարունակելու իր հերթին: Ներսում բոլորն անհամբեր էին, միայն մի հոգի կար անտարբեր: Լուռ նայում էր պատուհանից ու չէր կիսում մյուսների հետ հուզմունքի ու լարվածության միախառնված զգացողությունը: Նա տխուր էր, ասես իրեն չէր վերաբերվում գալիք աժիոտաժը, բայց հենց գլխավոր հավակնորդն իրենց ֆիլմն էր: Մեքենայի ապակուց այն կողմ ոմանք վիճաբանում էին փողոցում, ոմանք թափառականի կյանքով էին ապրում, ոմանք ինչ-որ տեղ էին շտապում: Նա պատուհանից տեսնում էր անարգել ընթացող մարդկային կյանքի ռիթմը, այն ոչ մի վայրկյան կանգ չէր առնում, բայց կանգ էր առել ինքը՝ Էդոն, որ մտածի: «Ընդհանրապես բոլորին է մտածել պետք, բայց դա հաճախ չենք անում». ինքն իր հետ անձայն խոսում էր: Մեկ էլ հանկարծ կողքին նստած Անուշը ականջին շշնջաց. «Հասնում ենք արդեն, մի՛ հեռացիր մեզանից, թե չէ քեզ հետ բերելը էլի իմ վրա է մնալու, գոնե այս ուրախ օրով ինձ խղճա»: Ջարթուցիչի՝ իր համար արդեն սովորական դարձած ֆունկցիան այս անգամ էլ կատարած համարելով՝ Անուշը շարունակեց իր զրույցը մեքենայում գտնվող մյուս անձանցից մեկի հետ,

ով ֆիլմի գլխավոր դերակատարն էր՝ Թելմանը: Հասան, դուրս եկան մեքենայից: Էդոն էլի տեղում չէր, չէր նկատում շուրջը կատարվող իրադարձությունները: Մտքերով իր ֆիլմում էր. դուրս չէր եկել նկարահանման հրապարակից, շարունակում էր հրահանգներ տալ: Ներս մտան թատրոնի շենք, աղմուկ էր, լարված, միևնույն ժամանակ շատ տոնական մթնոլորտ: Բոլորը բոլորին շնորհավորում էին, խառը անցուդարձ էր: Քանի չէր սկսվել արարողությունը, Էդոն զգաց, որ իրոք կարիք ունի ցրվածությունը հանելու, գնաց լվացվելու... միգուցե այդպես կարողանար տրամադրել իրեն անցուդարձին մասնակիցը լինելուն: Այդպես էլ վարվեց, դեպի դահլիճ ետ գալու ճանապարհին էր, մեկ էլ հանկարծ Էդոյի ականջին լսվեց մի ձայն, օրօրոցայինի հնչյուններ՝ Օoooրիիիիի՜մ օրիիիիի՜մ, oooooooo՜-րիիիիիիմմմմ............

Արմինեն էր երգում: Էդոն դանդաղ շրջվեց պարզելու համար, թե որտեղից են այդ ձայները: Արմինեն նույնպես շրջվեց: Արցունքներն աչքերին նայեց որդուն: Այսքան տարիների ընդմիջումից հետո նա իր առջև էր: Բարի, թախծոտ աչքերով մի երիտասարդ: Նա այդ պահին այնքան հարազատ էր թվում Արմինեին, որ մի պահ մայրական սիրտը մոռացնել էր տվել իր ամենամեծ վախի մասին, թե ինչ կլինի, երբ իմանա ճշմարտությունը: Սակայն այդ պահը երկար չտևեց: Թելմանը գտավ Էդոյին ու շտապեցնելով տարավ դեպի դահլիճ: Էդոն նստած էր իր ընկերների կողքին՝ արարողության ընթացքում մտքում այդ ձայնից ուշքի չգալով: Չէր էլ փորձում գոնե մեկ-մեկ կենտրոնանալ բեմում ընթացող գործողությունների վրա: Որոշ ժամանակ անց կարողացավ ցրել մտքերն այդ դիպվածից, բայց հիմա էլ ընկավ մեկ ուրիշ աշխարհ: Ընդհանրապես ինքը միշտ ուրիշ տեղ էր, միշտ այլ մոլորակում էր: Նրա արտահայտած մեկնաբանությունները այս կամ այն հարցի շուրջ միշտ արտառոց են եղել և մտածելու տեղիք տվող, որովհետև նա էլ իր տեսակով մտածող էր, անվերջ մտածող...

Վերջապես մոտենում էր երկար սպասված վայրկյանը՝ տարվա լավագույն ֆիլմ նոմինացիայում հաղթող կինոնկարի անունն

արտասանելու պահը: Մեկ էլ հնչեց իրենց ֆիլմի անունը: Ծափահարությունները թնդացին: Էկրանին հայտնվեց Էդոյի մտամոլոր դեմքը: Նրանում ամենևին չէր նկատվում ժամի ու վայրի կարևորության գիտակցումը: Նրա աշխարհը ուրիշ էր, խորն էր: Ամեն մի ձայն, հնչյուն ու կադր այդ աշխարհում մի պատմություն պիտի պատմեին, այլապես դա Էդոյի աշխարհը չէր լինի: Նա չէր եկել մյուսների նման հուզվելու, արտասվելու, ծնողների առաջ խոնարհվելու, գործընկերներին շնորհակալություն հայտնելու: Ոչ, այդ ստանդարտ տեքստերը նրա համար չէին: Նա միշտ ստանդարտից դուրս էր, և դրանում էր նրա տաղանդի ուժը: Այդ փոքրամարմին երիտասարդը ստանդարտ սահմանող էր, ոչ թե ստանդարտներին հետևող:

Նա հանդարտ բարձրանում էր աստիճաններով դեպի բեմ, ու ոչ մի հուզմունք, ոչ մի խառնվածություն, ինչպես միշտ: Մինչ այդ միայն մտերիմների շրջանում հայտնի ցրվածությունը դատապարտված էր ակնթարթորեն անհետանալուն, երբ գալիս էր պատասխանատու պահը, և արտահայտման համապատասխան միջոցը հայտնվում էր իր դիմաց: Տվյալ պարագայում դա միկրոֆոնն էր:

Նայեց մի պահ այդ արիստոկրատ դահլիճի լույսերին, նայեց ներքև, նկատեց ներկաներին, որոնք անհամբերությամբ սպասում էին նրա խոսքին... նա սպասեցնում էր: Վերջապես սկսեց խոսել դանդաղ, հանդարտ, բայց ոչ այն բառերը, որոնց սովոր էին բոլորը, որոնք տասնամյակներ շարունակ հնչել էին այդ ամենամյա մրցանակաբաշխության ժամանակ.

– Աշխարհը վազում է: Հա՛, հա՛... ես տեսա այստեղ գալիս՝ ճանապարհին: Աշխարհը վազում է, բայց ո՞ւր է վազում, ինքը գիտի՞, թե այդ ուր է այդպես շտապում... չգիտի: Կինոարտադրողնե՛ր, ինչո՞ւ են պետք ձեզ սցենարներ, երբ մարդն է սցենարների սցենարը: Ֆանտաստիկա՞ եք փնտրում, ամենամեծ ֆանտաստիկան մարդկային հոգին է: Սարսափ ֆի՞լմ եք նկարահանում, ամենամեծ սարսափը մարդ արարածն է աշխարհիս վրա: Կատակերգությո՞ւնն է լավ իրացվում, կատակերգությունը մեր կյանքն է ինքնին: Ողբերգությո՞ւն եք նկարահանում, ողբերգությունը մարդու՝

կարծրացող, և միևնույն ժամանակ հեշտությամբ մանիպուլացման ենթարկվող ուղեղն է, որ պրիմիտիվացել է մեր ժամանակներում, իսկ մենք՝ կինոարտադրողներս, այն շարժելու փոխարեն, ավելի ենք քարացնում մի կետում: Պարզեցնում եք... պարզեցնում եք, ընկերնե՛ր: Պարզունակ ժամանցի եք վերածում ժամանակի այդքան թանկ սլաքների ընթացքը, որ դրանք շարժվեն ու շարժվեն, և մեծ փողեր բերեն ֆիլմինդուստրիային: Իսկ տակը ի՞նչ է մնում... մակերես, առանց խորության: Իսկ խորություն մարդկությանը պետք է, որ մարդիկ քայլ անելուց առաջ մտածեն, իսկ միգուցե ցավեցնո՞ւմ են դիմացինին: Առանձին վերցրած Մարդը ճշմարտություն սիրում է, բայց մարդկությունը՝ ոչ: Մարդկությունը լռություն է սիրում: Այն անպաշտպան է, որովհետև քնած է. չնայած թվում է, թե արթուն է, քան երբևէ:

Հաղորդավարները տարակուսանքի մեջ էին, կազմակերպիչները ևս, սովոր չէին նման երկար ու արտասովոր ելույթների: Մտածում էին ընդհատել, թե ոչ, բայց ընդհատել ինչպե՞ս. մթնոլորտն ուրիշ էր, հանդիսատեսն էլ կլանված ու ոչ պակաս զարմացած լսում էր:

– Էս ի՞նչ ա հետը կատարվում, էս նորմա՞լ ա,– նայելով Անուշին հարցրեց Թելմանը:

– Իբր նո՞ր ես ճանաչում նրան: Դու քեզ նայիր... նրա աչքին աննորմալը մենք ենք,– քամահրանքով պատասխանեց Անուշը:

Էդոն սահուն շարունակում էր՝ չնկատելով աջ կողմում կանգնած հաղորդավարների անհանգիստ շարժումները.

– Այս ֆիլմը իմ ազգի պատմության դաժան դրվագներից հետո յուրաքանչյուր հայի սրտում դաջված խորը սպիի մասին է: Այն չի նկատվում, անտեսանելի է, պետք է զգալ, իսկ դրա համար պետք է ներսում լինել, հայի հոգու ներսում: Այլապես չես հասկանա, թե նա ինչ է զգում, երբ Արևմտյան Հայաստանում՝ ներկայիս Թուրքիայում, ճամփորդելիս, նախնիների հողի վրա քայլելու ընթացքում տեսնում է, թե ինչպես մի աղջնակ տուն մտնելուց առաջ ոտքերը մաքրում է մի շորի կտորի վրա, որի տակ հայկական հինավուրց խաչքար է: Իմ

հերոսը գիտակցում է, որ այդ աղջիկը մեղավոր չէ: Նրան ատելու փոխարեն արցունքներն աչքերին մոտենում է և ճանապարհին քաղած ծաղիկ նվիրում: Բայց իմ հերոսի հոգու արցունքները մաքրող այդպես էլ չի գտնվում: Այն կարող էր մաքրել խոսքը, խոստովանությունը, որ 100 տարուց ավել է չի ասվում: Խոսք՝ հզորագույն մի զենք, որ զինվորական պառադներով չի անցնում: Դրանով իրար պայթեցնելու համար փորձարկումներ չեն անում, բայց խոցում է ավելի դիպուկ, ոչ մի պաշտպանություն չի դիմանում, որովհետև խոցում է հոգին, այլ ոչ թե մարմինը: Խոսքով կարող ես սպանել կամ նորից կենդանացնել: Երբ Թուրքիան մեզնից ներողություն խնդրելու փոխարեն նորից հոխորտում է, գիտե՞ք՝ դա ինչ զգացողություն է: Հասկանում եք՝ դա հենց բուն ցեղասպանությունից էլ վատ է: Նրանք չեն պատժվել, մարսել են և սա է արդյունքը: Չկա երաշխիք, որ նորից չի կրկնվի մեզ հետ նույնը: Ոչ ոք այդ երաշխիքը չի կարող տալ... Ափսոս են ծառերը... ափսոս են ծառերը, որ աննպատակ թուղթ պիտի դառնան: Դրանց վրա տոննաներով սիրուն, պսպղուն մտքեր պիտի շարադրվեն մարդու իրավունքների մասին... հանդիսավորությամբ, ծափերի ներքո կնքվեն ու ստորագրվեն: Իսկ երբ գործը հասնում է մեզ ու էլի շատ ուրիշ անօգնական ժողովուրդներին... դրանք չկան, դրանք չեն աշխատում, դրանք ձև են... Գիտե՞ք՝ ինչու չեն աշխատում, որովհետև այս մոլորակում միայն մի բան է լավ աշխատում՝ շահը... ափսոս են ծառերը...

*Երկիր հնամյա, երկիր հայրենի,*
*Ոչ մի ասպղ պայծառ և ոչ մի լուսին*
*Քո հավերժական հմայքը չունեն՝*
*Լեռներից այն կողմ, ամպերից անդին:*

*Որքան էլ քեզնից, ես ուրամ հեռու,*
*Որքան էլ օտար հողերում լինեմ,*
*Անհունության մեջ, միջոցին թափուր,*
*Ես քեզ կորոնեմ, հայրենի իմ տուն:*

*Դու առաջին սեր և վերջին կարոտ,*
*Հուշերի նման ուրախ ու ցավոտ,*
*Շրթերիս վրա կմնաս միշտ դու՝*
*Մայրական համբույր, իմ կարոտ փխուր:*

*Երկիր հնամյա երկիր պապենի*
*Քո հոգուց շաղված լեզու մայրենի,*
*Քո հոգուց բուսած փենչանք ու կարոտ,*
*Ի՞նչ եմ առանց քեզ, միայն անփունի.......*

Երգում էր, իսկ մտքերով Անիի եկեղեցիների պատերի ներսում էր քայլում: Աչքերի առաջ այդ ավերված, բայց վեհաշուք քաղաքն էր, որ թեկուզ կիսաքանդ, բայց հուշում էր իր ոգեղեն ուժի մասին, որ Հայից լավ ոչ մեկ չէր զգա, քանի որ այդ ուժը Հայից էր ստացել, Հայն էր կառուցել ու հենց Հայի համար է պահված: Ֆիլմի նկարահանման ժամանակ Արևմտյան Հայաստանում անցկացրած ամբողջ ժամանակը մի քանի րոպեների ընթացքում անցավ դիմացով: Երգելուն զուգահեռ աչքերից դանդաղ արտասուք էր թափվում, ասես ուզում էր մարդկության փոխարեն լաց լինել: Քանի որ մարդկությունը սովոր չի լացել անգամ այն պարագայում, երբ նրանում տառապանքը շատ է ու ամենուր: Երջանկությունը նույնիսկ չի կարողանում մրցակցել տառապանքի հետ, քանի որ այն քիչ է... քանի որ՝ քչինն է: Այո, նույնիսկով եմ խոսում, որովհետև մեր օրերում, երբ կյանքը դարձել է հազար անգամ ավելի բարեկեցիկ համեմատ անցյալ դարի, չարիքը չի վերացել, իսկ մարդիկ շատ փխրուն են: Մարտահրավերներին դիմակայում են, բայց բարձր գին են վճարում, որովհետև չեն սովորել մեկը մյուսի ցավը սեփականը համարել:

Երգի վերջին հնչյունի սավառնելու հետ միասին Էդոն էլ վայրէջք կատարեց նորից Օսկարի բեմահարթակի վրա ու նկատեց, որ իր հետ միասին ներկաներից շատերին ևս բարձրացրել էր երկինք: Նա տարել էր նրանց հեռու, բայց արդեն ամեն մեկն իր նախընտրած ճանապարհով էր գնացել իրեն հարազատ վայրեր: Դահլիճը

քարացել էր թե՛ Էդուարդի խոսքերից, թե՛ կատարումից: Մի քանի վայրկյան անսասան լռություն էր տիրում, հետո հաղորդավարի ձայնից սկսեցին բոլորը կամաց-կամաց վերադառնալ իրականություն:

***

2016 թ.-ի ապրիլյան պատերազմի մասին լուրը սթափեցրեց Արմինեին: Նա քիչ-քիչ վերագտնում էր իր հին կերպարը: Երբ այգում նստած ծանոթ ամերիկացի պրոֆեսորներից մեկի հետ զրուցում էր այս թեմայով, պրոֆեսորը փորձում էր նրան համոզել, որ քիչ տարվի այդ հեռու հայրենիքով: Համոզում էր, որ Արմինեի հայրենիքը Ամերիկան է, ուր ամեն ինչ հանգիստ է, խաղաղ, անվտանգ.

– Էս զարգացած կյանքը թողած ո՞ւր ես վազում ինչ-որ կորած, քրքրված մի երկիր: Խելքդ գլխի՞դ է ընդհանրապես: Ո՞վ ունենա քո հնարավորությունները ու այդպիսի անխելք քայլի դիմի: Դու ինքդ քո ձեռքով կործանում ես այսքան տարիների չարչարանքով ձեռք բերածդ անունը: Հանուն ինչի՞, որ գնաս, խրվես էդ չորս կողմից աշխարհագրորեն սեղմված, շնչելու տեղ չունեցող աղքատիկ մի երկրո՞ւմ: Ի՞նչ ունի այդ երկիրը:

– Հայաստանն ի՞նչ ունի,– հոնքերը կիտեց Արմինեն և բարկացած պատասխանեց.– Հայաստանն ինձ ունի, ում կիսել է ձեզ հետ, իսկ դուք չեք ընկալում, որ միայն կեսն է ձերը,– մի պահ հոգոց հանեց, գլուխը կախեց... ինչ-որ բան էր մտածում, ապա նորից բարձրացրեց, որ նայի պրոֆեսորին, ու շարունակեց: – Հայաստանը ես եմ, ու ամեն մի հայ Հայաստան է: Մարդկությանը շատ երկար ժամանակ պահանջվեց հասկանալու համար, որ ամեն ինչի սկիզբը, մեջտեղն ու ավարտը մարդն է, ու նրա ստեղծագործելու ունակությունը, այլ ոչ թե գետնի տակից հորդող այդ սև կեղտը, որ հարստության հետ մեկտեղ դժբախտություն է բերում, քանի որ գայթակղիչ է: Գայթակղիչ է շատերի համար: Շատերն են ուզում տիրանալ դրան, հետևաբար նաև դրա տիրոջը կամ կործանել տիրոջը, որ տիրանան դրան: Մարդու իրական արժեքը չի գնահատվում ու

փայփայվում, ոտնատակ է տրվում երկրագնդի տարբեր հատված-ներում: Սա դժբախտություն է և մնալու է դժբախտություն, այնքան ժամանակ, քանի դեռ մարդիկ չեն գիտակցել, որ այդ դժբախտու-թյան պատճառը հենց իրենց ընկալումն է իրենք իրենց և հասարա-կության դերի մասին:

✷✷✷

2016 թ. հունիս ամիսն էր: Էդոն Երևան պիտի գար: Արմինեն գիտեր դրա մասին, որոշեց ինքն էլ ժամանի Հայաստան: Արմինեն ավելի շուտ էր ժամանել Հայաստան: Նա ցանկանում էր հնարա-վորին չափ ճանաչել երկիրը, զգալ նրա զարկերակը, քանի որ այս ճամփորդությունն առաջինն էր մեծ ընդմիջումից հետո: Արմինեն իր ծանոթությունը Հայաստանի հետ չցանկացավ սկսել Երևանից, այլ ուղևորվեց սահմանամերձ գյուղեր, քանի որ երկիրը սկսվում է սահ-մանից: Սկզբից Արմինեն գնաց Արցախ: Այցելեց ծնողների գերեզ-ման, որի տեղը Ռուբենից էր իմացել: Հուզված քայլում էր, զարմա-նալի է պատերազմական գոտում փնտրել խաղաղություն, սակայն այն կար ու ավելի խաղաղ էր օդն այդտեղ, քան աշխարհի ցանկա-ցած այլ ապահով կետում... բայց կյանքը ծանր էր:

Մի քանի օրում շրջեց Սյունիքի, հետո Տավուշի գյուղերում ևս: Վիճակը մեղմ ասած հուսադրող չէր: Տավուշում սահմանամերձ գյուղերից մեկում շրջելիս կանգ առավ մի կիսաքանդ տան մոտ, որի վրա կրակոցների հետքեր կային: Կրակոցներ պարբերաբար լինում էին, դրանք մարդկանց համար վաղուց սովորական էին: «80 մի-լիմետրանոց ականանետով են խփել». բարձրաձայն արտաբերեց Արմինեն:

– 80 չի, մորքո՛ւր, 120 ա,– լսվեց հետևից կայտառ մի երեխայի ձայն:

Արմինեն շրջվեց և նայեց այդ երեխային: Նրա մարմնով սար-սուռ անցավ: Սա է սողացող պատերազմի ամենավառ վկայու-թյունը, երբ երեխաները զենքերից ավելի լավ են հասկանում, քան մուլտֆիլմերից:

– Գալի՞ս ես քեզ իմ «Nissan Tida»-ով տանեմ տուն,– հարցրեց տղան:

– Ինչի՞ դու «Nissan Tida» ունե՞ս,– ծիծաղելով հարցրեց Արմինեն:

– Հա՛, թափ-թազա, յուղը վրան,– ուրախ-ուրախ բլբլաց տղան:

– Բայց փոքր չե՞ս քշելու համար,– երեխայի հոգու հետ շարունակում էր խաղալ Արմինեն:

– Չէ՛, քշողը քշում է անկախ հանգամանքներից,– հանգիստ պատասխանեց տղան նույն կենսախնդությամբ:

Այդ պահին Արմինեն հանկարծակի վեր թռավ ետևից հնչած ինչ-որ տարօրինակ ձայնից:

– Ըհը՛ն, ես էլ իմ «Nissan»-ը,– բացականչեց նորից տղան:

– Սա՞,– քամահրանքով ասաց Արմինեն,– բայց սա էշ ա:

– Հա ի՞նչ անենք, էշի անունը չի՞ կարող «Nissan» լինել:

– Դե կարող է, բայց.......

– Էլ ի՞նչ բայց: Մեկն էլ կմտածի Հիսուսը Երուսաղեմ «Bently»-ով էր մտել, նույն էշն էր էլի,– սա ասելով՝ տղան նստեց իր հիրավի արքայական փոխադրամիջոցը և «սլացավ» իր կիսատ թողած ճանապարհով:

Վրաստանի սահմանին հարող Լոռվա գյուղեր էլ գնաց: Մոտեցավ սահմանային անցակետին ու տեսավ, թե ինչքան մարդիկ են լքում երկիրը ու դա դեռ միայն այդ անցակետով: Հայաստանում արտագաղթը չէր դադարում, մեկը՝ ինքնաթիռով, մյուսը՝ ավտոմեքենայով, երրորդը՝ ավտոբուսով, ընտանիքին կերակրելու համար արտերկիր էին ուղևորվում, մեծամասամբ Ռուսաստան, մի կտոր հաց վաստակելու համար:

– Չէ, մի րոպե՛... այդ ո՞ւր եք գնում... ինչո՞ւ եք գնում: Տե՛ր Աստված, ես սրա համա՞ր էի կռվել, որ երկիրս անօրենները հյուծեի՞ն ներսից հիմա... Ի՞նչ է կատարվում»,– խելագարի նման գլուխը բռնած բացականչում էր Արմինեն:

Ոչ մի արձագանք. մարդիկ ինչպես շարժվում էին դեպի անցակետ, այդպես էլ շարունակում էին շարժվել: Վհատված էր,

տաքսիով ուղղություն բռնեց դեպի Երևան: Երևանում բազմաթիվ մեծահարուստի դղյակներ էին աչքին զարնում, ու կատաղությունից քիչ էր մնում պոռթկար, նյարդերը տեղի էին տալիս, ու համբերությունն էլ սպառվելու վրա էր, բայց զսպում էր իրեն:

✷✷✷

Վառ ու արևոտ օր էր: Երևանը գեղեցիկ էր ինչպես միշտ, իսկ նրա սրտում՝ Հանրապետության հրապարակում, անշտապ քայլում, զբոսնում էին մարդիկ, զբոսաշրջիկները: Էդոն ևս վայելում էր մայրաքաղաքի հարազատ դարձած վայրերը: Նկատեց, որ նստարաններից մեկի վրա միայնակ նստած էր անհանգիստ շարժումներով աչքի ընկնող ու բարկացած հայացքով սպիտակամաշկ, շիկահեր մի աղջիկ: Ինչպես և հարիր է իսկական ռեժիսորին, հետաքրքրասիրությունը ուտում էր ներսից, չդիմացավ, որոշեց հենց նրա կողքը գնալ և նստել:

ԷԴՈՒԱՐԴ – Բարև Ձեզ, դեմ չե՞ք, եթե նստեմ այստեղ:

ԱՆԻ – Ո՛չ իհարկե, իմ սեփականությունը չի:

ԷԴՈՒԱՐԴ – Կասե՞ք ձեր անունը:

ԱՆԻ – Անի:

ԷԴՈՒԱՐԴ – Իսկ իմը չե՞ք ուզում իմանալ:

ԱՆԻ – Ի՞նչ կարիք կա, եթե գիտեմ:

ԷԴՈՒԱՐԴ – Ճանաչեցիք փաստորեն:

ԱՆԻ – Այսքան ժամանակ հանդիպե՞լ եք մեկին այստեղ, ով Ձեզ տեղը չի բերել:

ԷԴՈՒԱՐԴ – Պատահել է... տխուր ե՞ք:

ԱՆԻ – Չէ՛, պարզապես տրամադրություն չունեմ:

ԷԴՈՒԱՐԴ – Կարո՞ղ եմ օգնել:

ԱՆԻ – Դժվար թե:

ԷԴՈՒԱՐԴ – Ինչո՞ւ եք այդպես մտածում:

ԱՆԻ – Ամեն մարդու խնդիր իր խնդիրն է, ու մարդիկ հիմնականում հետաքրքրվածությունից դրդված են մտնում ուրիշի կյանք, որ բամբասելու թեմա ունենան, իսկ եթե պիտի ուրիշի խնդիրն իրենցը

դարձնեն, այդ դեպքում սիրուն թռնում են… ճիշտ են անում… թող գնան գրողի ծոցը բոլորը:

ԷԴՈՒԱՐԴ – Ձեզ ինչ-որ մեկը նեղացրե՞լ է:

ԱՆԻ – Ո՛չ, ուղղակի հոգեվիճակս է հուսահատ:

ԷԴՈՒԱՐԴ – Ի՞նչ առումով:

ԱՆԻ – Այն առումով, որ փորձում ես ապագադ գծագրել այստեղ, բայց մեկ էլ հասկանում ես, որ անիմաստ գործով ես զբաղված:

ԷԴՈՒԱՐԴ – Ինչո՞ւ է անիմաստ:

ԱՆԻ – Այստեղ ապագա չկա, ես չեմ տեսնում: Ձեզ ի՞նչ կա: Դուք Ամերիկայում եք, կյանքն եք վայելում, ամեն ինչ ունեք: Ի դեպ, ես էլ եմ ուզում մեկնել ԱՄՆ: Զարմանում եմ մեկ-մեկ՝ ինչու եք այսքան հաճախ գալիս Հայաստան: Ա՜խր, զարգացած երկրներում մեկ անգամ լինելուց հետո, էլ չես մտածի հետ վերադառնալու մասին:

ԷԴՈՒԱՐԴ – Սխալվում եք: Ես այստեղ է, որ շնչում եմ: Ձեր ասած զարգացած երկրներում ես շնչահեղձ եմ լինում: Ես այնտեղ կարող եմ ուրախանալ, բայց այստեղ է, որ երջանիկ եմ:

ԱՆԻ – Այստեղ ի՞նչ կա: Քարուքանդ երկիր, կոռումպացված իշխանություն, երկիրը ներսում իրար մեջ ծվեն-ծվեն արած անմակարդակ օլիգարխներ, որոնք իրենց անսահման հարստության մեջ ալարում են, թե տաբատների ծակ գրպանները կարեն: Իսկ ինչո՞ւ եմ համոզված, որ ծակ են, որովհետև երբեք չեն լցվում: Ու այս երկրում նպատա՞կ դնեմ, որ ի՞նչ լինի, որ ամեն անգամ հիասթափվե՞մ, որ թևերս թռչելու համար դեռ չբացած, դրանք կտրե՞ն: Ես ուզում եմ օրենքի գերակայությամբ, ազատ, ժողովրդավար երկրում ապրել: Դուք դրանք այստեղ տեսնու՞մ եք:

ԷԴՈՒԱՐԴ – Հայրենիքը սիրելու համար է… հայրենիքը կառուցելու համար է… հայրենիքը պայքարելու համար է…

ԱՆԻ – Հա՜… ըըըըը… հասկացա, ես սիրում եմ իմ հայրենիքը:

ԷԴՈՒԱՐԴ – Այդ դեպքում ինչո՞ւ չեք պայքարում:

ԱՆԻ – Ինչի՞ համար պայքարեմ, կամ ո՞ւմ համար:

ԷԴՈՒԱՐԴ – Քեզ համար, որովհետև հայրենիքը նաև դու ես:

Աննկատ խոսակցության մեջ արդեն երկուստեք անցան «դու» -ին:

ԱՆԻ – Ի՞նչ հեշտ ես այդ աբստրակտ բառապաշարդ շփացնում վրաս: Զզվում եմ...

ԷԴՈՒԱՐԴ – Ո՞ւմից ես զզվում:

ԱՆԻ – Ամեն ինչից ու բոլորից:

ԷԴՈՒԱՐԴ – Է՛, չեղավ ու այդպես մունաթ դեմքով էլ գնալու ես ուրիշ երկիր մունաթովդ վարակես: Արի դու լավություն արա, այդ մունաթդ միայն այստեղ տարածիր էլի:

ԱՆԻ – Հեգնանքդ տեղին չէր, մունաթս ո՞ւմ վրա եմ տարածում:

ԷԴՈՒԱՐԴ – Օրինակ իմ: Ես էլ, ինչպես նկատում ես, արհամարհում եմ այն:

ԱՆԻ – Իմա՞ստը:

ԷԴՈՒԱՐԴ – Իմաստը այն է, որ հոգնես ինքդ քո մունաթից ու տեսնելով, որ չի ազդում, դադարեցնես, անցնենք ավելի լուրջ խոսակցության:

ԱՆԻ – Իսկ մինչև հիմա քո կարծիքով ի՞նչ էինք անում, լուրջ չէի՞նք խոսում:

ԷԴՈՒԱՐԴ – Ըստ ինձ՝ ոչ:

ԱՆԻ – Դե ասա տեսնեմ՝ լուրջը որն է:

ԷԴՈՒԱՐԴ – Հասկանում եմ քեզ: Ժողովրդավարությունը արտահայտվում է նրանում, երբ հայրենիքդ սիրելուց բացի, նաև սիրում ես նրանում ապրել: Բայց այն երկրները, որտեղ ուզում ես գնալ, դրա համար վաղուց պայքարել են, դրա համար էլ այդքան գրավիչ են քեզ նման խելացի ու նպատակասլաց մարդկանց համար:

ԱՆԻ – Հա՛, էդ սկսեցիք արդեն հաճոյախոսություններով մեղքերը քավել: Մինչ այս պահը խոսակցության մեջ ինձ աջ ու ձախ կոպտում էիք:

ԷԴՈՒԱՐԴ – Իսկ ա՞ջ էի ավելի շատ կոպտում, թե՞ ձախ:

ԱՆԻ – Բայց ի՞նչ ջրիկ անձնավորություն դուրս եկաք, ազնիվ խոսք:

ԷԴՈՒԱՐԴ – Էդ նորից անցար «Դուք»-ի՞ն:

ԱՆԻ – Չէ՛, ուղղակի մինչ այդ էի սխալմամբ անցել «դու»-ին: Հաջո՛ղ:

ԷԴՈՒԱՐԴ – Է՜յ, սպասի՛ր: Այդ ո՞ւր: Նստած խոսում ենք մեր հավեսին, ինչո՞ւ ես լքում ինձ այս միապաղաղ հրապարակում:

ԱՆԻ – Քիչ առաջ քո պաշտելի հայրենիքի մի մասն էր այդ «միապաղաղ հրապարակը»:

ԷԴՈՒԱՐԴ – Հիմա էլ է պաշտելի, ինձ մոտ ոչինչ չի փոխվել այդ առումով, բայց ա՛յ քեզ մոտ փոփոխության կարիք կա:

ԱՆԻ – Ի՞նչ փոփոխության:

ԷԴՈՒԱՐԴ – Ե՛տ արի, նստի՛ր, կասեմ:

ԱՆԻ – Դե եկա, նստեցի, հիմա ասա:

ԷԴՈՒԱՐԴ – Արի՛ մի բան ֆիկսենք: Ուզում է Հայաստանը մտած լինի ԵԱՏՄ, ուզում է Եվրամիության հետ ասոցացման պայմանագիր ստորագրի ու հետո մի կերպ խցկվի Եվրամիություն, տո՛ ուզում է Մարս մոլորակի հետ փոխըմբռնման վերաբերյալ հուշագիր կնքի, ուզում է Յուպիտերի հետ դաշնակցային հարաբերություններ հաստատի, սպասի՛ր, Նեպտունին չնեղացնենք հանկարծ, աստվածները մեզ չեն ների, Նեպտունից էլ միջմոլորակային վարկ վերցնի, միևնույն է, էս երկիրը սարքողն ու քանդողը դու ես:

ԱՆԻ – Ե՞ս:

ԷԴՈՒԱՐԴ – Հա հենց դու, ու քառակուսի աչքերով վրաս մի՛ նայիր:

ԱՆԻ – Ես ի՞նչ կապ ունեմ:

ԷԴՈՒԱՐԴ – Ա՛յ դրա համար էլ ասում եմ՝ լրիվ կապերդ կտրել ես, ո՞նց էլ հասկացել էի:

ԱՆԻ – Կատակի քիչ տուր:

ԷԴՈՒԱՐԴ – Խոստանում եմ՝ մի քիչ էլ կտամ ու վերջ:

ԱՆԻ – Ջրիիի՛կ:

ԷԴՈՒԱՐԴ – Ճիշտն ասած ես անչափ լուրջ անձնավորություն եմ, սակայն քեզ հետ շփման մեջ մի քիչ ես եմ կապերս կտրել աչքիս, բայց դրանից գումարելիների տեղերը չեն փոխվում:

ԱՆԻ – Երևի ուզում էիր ասել գումարելիների տեղերը փոխելիս, գումարը չի փոխվում:

ԷԴՈՒԱՐԴ – Հա էլի նման մի բան, մաթեմատիկայից ուժեղ չեմ, ցավոք, իմն արվեստն է:

ԱՆԻ – Տեսնես իմն ի՞նչն է:

ԷԴՈՒԱՐԴ – Ըհը՛, արդեն լավ է:

ԱՆԻ – Ի՞նչը:

ԷԴՈՒԱՐԴ – Այն որ մտածում ես՝ որն է քոնը, ոչ թե որտեղ է քոնը: Տեղանքը կապ չունի, արև՛ս, ամեն տեղ էլ կարող ես հաջողել, ուղղակի մեր նման երկրներում մի քիչ շատ պիտի տանջվես ու նեռվ քայքայես, որ աղճատված իրականության մեջ կարողանաս փայլել, ու ուշադրությունը քո կողմը գրավել:

ԱՆԻ – Ինձ թվա՞ց, թե՞ ինձ անվանեցիր «արևս»:

ԷԴՈՒԱՐԴ – Չէ՛, քեզ չթվաց, բայց մի րոպե, չեմ հասկանում էսքան երկար-բարակ կես ժամ է ճառում եմ, ու քեզ իմ այդ «բոցաշունչ ճառից» միայն ամենաանհետաքրքիր ու տեքստի հետ կապ չունեցող բա՞ռը հետաքրքրեց:

ԱՆԻ – Անտա՜շ:

ԷԴՈՒԱՐԴ – Ա՜յ դզեց: Դժվար թե ես Նահանգներում այսքան գովաբանական խոսքերի արժանանայի որևէ մեկի կողմից: Շնորհակալություն, ինձ անչափ դուր եկավ Ձեր կոմպլիմենտը: Հետո էլ ասում ես Հայաստանը մի՛ սիրիր: Բա քեզ ու մնացածներին ո՞նց չսիրեմ: Հայաստանը դուք եք, բոլորդ ու յուրահատուկ համով եք, ասեմ իմանաս: Էնպես որ հերիքա, հա՛, ոտքդ գազին դրած, ճամպրուկներդ էլ մեջքիդ խփած, անընդհատ Յուրի Գագարինի հանրահայտ ֆռազայով՝ «թռանք»՝ աջ ու ձախ քո երկրից հեռանալու փափագած երազանքդ մեջտեղ բերես:

Անին, գլխիկոր ու արդեն մի քիչ ամաչկոտ ձայնով ավելացրեց.

ԱՆԻ – Մեկ է կոպիտ ես:

ԷԴՈՒԱՐԴ – Հա բան չասեցի, կա այդպիսի բան, բայց դե մտածիր ասածներիս մասին:

Այստեղ նրանց խոսակցությունը ավարտվեց: Անին, խորասուզված տեղի ունեցած խոսակցության բանալի բառերի մեջ, որը ամենևին «արևս»-ը չէր, մտամոլոր շարունակեց քայլել դեպի

Հյուսիսային պողոտա: Էդուարդն էլ, գոհ իր վարած բանակցություններից, վեր կացավ նստարանից և ցանկանում էր շարունակել զբոսանքը, երբ հանկարծ ինչ-որ անծանոթ երիտասարդ մոտեցավ նրան: Ձեռքին մի փոքր թղթի կտոր ուներ: Նա ասաց, որ ինչ-որ մեկը խնդրել է փոխանցել իրեն այդ թուղթը: Այդ թղթի կտորի մեջ գրված էր՝ «Գառնիի տաճար, այսօր՝ կեսգիշերին», տարօրինակ վերտառությամբ գրությունը: Էդոն անարդյունք այս ու այն կողմ էր նայում խոժոռված դեմքով՝ փորձելով հասկանալ, թե դա ինչ էր նշանակում, ով կարող էր ուղարկած լինել:

Գիշերները Գառնիի տաճարն իր վեհությամբ արքայի նման խրոխտ բազմած թագավորում էր իրեն շրջապատող ժայռերը, իսկ երբ լույսը բացվում էր, նոր կեցվածք էր ընդունում, համեստությունը առաջին պլան բերում, որ սիրալիր ընդունի զբոսաշրջիկների նորանոր հոսքերին: Կեսգիշեր էր արդեն: Գառնիի համար իր թագավորությունը նորից մթության մեջ սփռելու և այն միայնակ վայելելու ժամն էր եկել թերևս: Սակայն ոմն մոլորյալ, մի ճմրթված թղթի կտոր ձեռքն առած, մինչև ականջները զարմացած զբոսաշրջիկի դեմքով, այս ու այն կողմ էր շուռումուռ գալիս: Ի՞նչ էր փնտրում՝ ինքն էլ չգիտեր: «Ա՛յ տղա, ժամին նայե՞լ ես, գնա՛ տուն, քնի՛, վաղը կգաս էքսկուրսիայի, լսո՞ւմ ես, հանգիստս մի՛ խանգարիր... վա՜յ, խուլ է էս տղեն». գոչում էր Գառնին, բայց իրեն լսող չկար. նրանք տարբեր լեզուներով էին խոսում: Էդոն դժվար թե քարերի, քամու ու ծառերի լեզուն ընկալեր, իրեն հետաքրքիր էլ չէր. ինքն այլ նպատակով էր եկել այստեղ: Եվ ահա վերջապես կծիկը սկսում էր քանդվել կամաց-կամաց: Դիմացը հայտնվեց դեպի երկինք հայացքը հառած մի կնոջ կերպարանք: Սև, երկար, ամբողջ մարմինը ծածկող զգեստ էր հագին, բավականին ճաշակով: Ազգային մոտիվներով պատրաստված և ամբողջ պարանոցը գրաված արծաթե վզնոցը հայկական ազգային տարազի տեսք էր հաղորդում նրա հագուկապին: Երկար, փարթամ և մեծ ծավալ հաղորդող ալիքաձև սև վարսերը գրկել էին ուսերը: Այնքան ծանր էին ու վսեմ, որ քամին ինչքան էլ ջանք էր թափում դրանք գոնե մի փոքր շարժեր, միևնույն է տանուլ էր տալիս

այդ անհավասար մենամարտում: Դադարեց երկինք նայելուց, երբ տեսավ Էդոյին: Արդեն սկսեց նրան նայել: Աչքերում ծով էր... ծով արցունք, որոնց ամեն գնով զսպում էր, որ չթափվեին ջրվեժի նման ցած: Սիրուն էր... շատ սիրուն: Երևի ավելի հմայիչ ու գեղեցիկ, քան երիտասարդ ժամանակ էր: Դեմքի շպարը ցայտուն արտահայտում էր նրա դիմագծերը, քարացնում նրա գեղեցկությունը, որ ոչ մի արցունքախեղդ ավերածություն ի զորու չլինի խախտել հայուհու աչքերի նուրբ ու գերող առանձնահատուկ նկարը: Այո՛, աշխարհի ամենագեղեցիկ աչքեր ունենալը հայուհիների մենաշնորհն է, ու դա չի քննարկվում: Աչքեր, որոնք շատ խորն են, լեցուն են կյանքով, բարի են ու ներող: Ցավը հույսի մեջ խեղդող աչքեր են, որ դեմքի զարդն են, ու նրա անուն ազգանունը: Երկար իրար էին նայում: Լուռ էին, երկուսն էլ մտորում էին ինչ-որ բան: Ուզում էին լռությամբ սկսել խոսակցությունը ու լռությամբ էլ ավարտել այն: Կարծես այդպես ավելի լավ իրար կհասկանային: Էդոն գլխի ընկավ՝ ով է դիմացը կանգնած: Նա այն նույն կինն էր, ում ինքը հանդիպել էր Օսկար մրցանակաբաշխության ժամանակ:

– Դու՞ք,– հարցրեց Էդոն՝ հասկացնել տալով, որ տեղն է բերել, թե որտեղից է նրան հիշում:

Արմինեն մեղմ ժպտաց, ու արցունքի առաջին կաթիլը գլորվեց ցած, որն ասես արդեն վաղորոք պարտության նշան հանդիսանար: Արմինեն զգում էր, որ չի կարողանալու խոսակցությունը ճիշտ հունով տանել. չափազանց բարդ դեպք է: Նա արդեն հուսահատության գիրկն էր ընկած, սակայն ի՞նչ կարող էր անել, արդեն այդտեղ են, իրար դեմ-դիմաց կանգնած, այնպես որ ուշ էր ժամանակը ետ տալու համար:

Էդոն որոշեց շարունակել: Պատասխան չստանալով առաջին անգամից՝ ավելի կասկածամիտ ու նյարդային դարձավ:

ԷԴՈՒԱՐԴ – Ո՞վ եք:

ԱՐՄԻՆԵ – Հիշեցի՞ր ինձ:

ԷԴՈՒԱՐԴ – Հա հիշեցի, օրօրոցայինի մեղեդին էլ հիշեցի:

ԱՐՄԻՆԵ – Ծանո՞թ երգ էր քեզ համար այն:

ԷԴՈՒԱՐԴ – Դուք ո՞վ եք:

ԱՐՄԻՆԵ – Էդպես միանգամից հա՞, առանց նախերգանքի:

ԷԴՈՒԱՐԴ – Հա ու նորից եմ հարցնում Դուք ո՞վ եք: Արդեն երրորդ փորձն է, եթե չպատասխանեք իմ այստեղ մնալն անիմաստ է ուղղակի:

ԱՐՄԻՆԵ – Մայրդ եմ:

ԷԴՈՒԱՐԴ – Ի՞նչ:

ԱՐՄԻՆԵ – Ուզում էիր սպառիչ պատասխան, ստացար այն:

ԷԴՈՒԱՐԴ – Էս ի՞նչ եք խոսում... ի՞նչ մայր: Իմ մայրը մահացել է, ինձ որդեգրած մայրս էլ ամերիկուհի է: Դուք հիմա այդ ի՞նչ եք ասում, գիտակցո՞ւմ եք գոնե: Աստվա՛ծ իմ, էս ի՞նչ խաղեր են խաղում գլխիս: Չլինի՞, հարստությանս տուրք տալով, լիքը մայրեր հերթով հայտնվեն: Չէ՛, Դուք ուղղակի ստոր եք:

ԱՐՄԻՆԵ – Ես չգիտեմ, թե քանի մայր է մինչ այս հայտնվել ու ինչ նպատակով, բայց Սառային միանշանակ գիտեմ: Ընկերուհիս է եղել, ում հանձնել եմ քեզ խնամելու համար մինչև...

ԷԴՈՒԱՐԴ – Մինչև ի՞նչ:

ԱՐՄԻՆԵ – Մինչև պատերազմն ավարտվի:

ԷԴՈՒԱՐԴ – Այսի՞նքն... չէ Դուք լռիվ ցնդե՞լ եք, հիմա ես ի՞նչ մտածեմ: Ի՞նչ ռեակցիա տամ այս ամենին, ինչի՞ համար է այս ամենը:

ԱՐՄԻՆԵ – Որ ճշմարտությունն իմանաս: Ինչքան էլ ինձ ու քեզ համար այն դժվար լինի:

ԷԴՈՒԱՐԴ – Ես գիտեմ իմ ճշմարտությունը, ես Սառայի ու Գևորգի որդին եմ:

ԱՐՄԻՆԵ – Դու գիտես միայն քո ճշմարտությունը, որը կյանքի բերումով դասավորվել է այնպես, ինչպես որ դասավորվել է, սակայն իրականությունն այլ է:

ԷԴՈՒԱՐԴ – Կյանքի բերումով, հա՞: Ասում ես կյանքի բերումո՞վ: Ուրեմն եթե հավատանք քո խոսքերին, դու ինձ ունեցել ես, շպրտել ես ուրիշի ջանին, ասել ես. «պահի, մեծացրու, ես ավելի կարևոր գործեր ունեմ», ու հիմա ինձ ասում ես «կյանքի բերումո՞վ»:

ԱՐՄԻՆԵ – Ես ստիպված էի: Ես գալու էի քո հետևից, սակայն հանգամանքներն այնպես դասավորվեցին, որ քեզ չգտա այլևս: Ազերիների հարձակումից հետո դու անհետացել էիր, ես չկարողացա ոչինչ անել:

ԷԴՈՒԱՐԴ – Եվ դա արդարացո՞ւմ է: Իսկ ինչո՞ւ ես քո ուզած տեղից խոսակցությունը զարգացնում, բա մինչև այդ ես քեզ համար ոչ մի բա՞ն էի, որ տվել էիր ուրիշին: Չնայած ես դեռ քեզ չեմ հավատում, շատ մութ բաներ ես ասում: Որտեղի՞ց համոզված լինեմ, որ ճշմարտությունը քո ասածն է:

ԱՐՄԻՆԵ – Ես պիտի կռվեի, ես պետք էի իմ ազգին, իմ հայրենիքին, 10 կտոր չէի կարող լինել... Գիտեմ մեղավոր եմ քո առաջ: Գիտեմ, որ ինձ չես ներելու, բայց չեմ կարող ներողություն չմուրալ քեզնից, քանի որ քեզնով եմ ապրում, որդի՛ս:

ԷԴՈՒԱՐԴ – Իսկ հեչ չես մտածե՞լ այս տարիների ընթացքում, որ, օրինակ, կարելի է մի քիչ փնտրել:

ԱՐՄԻՆԵ – Ես չգիտեի քո գոյության մասին:

ԷԴՈՒԱՐԴ – Յա իրո՞ք: Կամ էս ի՞նչ նոր ձև է: Երեխա ունենալ, թողնել բախտի քմահաճույքին, հետո երբ այդ երեխան եսիմ ոնց, եսիմ ինչ կյանք է քաշում, բայց կարևորը մի ձև քաշում, վերջացնում է, ինչ-որ մի պահից սկսած էլ՝ կայանում, խնդրե՛մ... Հայտնվում է ինքը՝ մեծն ծնողը: Իսկ քեզ համար միևնույն էի չէ՞ ես:

ԱՐՄԻՆԵ – Այդպես չի:

ԷԴՈՒԱՐԴ – Այդպես է: Եթե գերադասել ես այս կյանքում ինչ-որ բան ավելին, քան ես էի, ուրեմն այդպես է:

ԱՐՄԻՆԵ – Բայց Սառան էլ չէ՞, չի հասցրել քեզ խնամել, ընդամենը մի քանի տարի:

ԷԴՈՒԱՐԴ – Հա բայց նա ինձ չի լքել: Տարբերությունը հասկանո՞ւմ ես:

ԱՐՄԻՆԵ – Ես քեզ շատ եմ սիրում, տղա՛ս:

ԷԴՈՒԱՐԴ – Ատում եմ քեզ:

ԱՐՄԻՆԵ – Պատրաստ եմ լսել ու կուլ տալ քո բոլոր վիրավորանքները, կրկնում եմ արժանի եմ դրանց: Ես չեմ ասում՝ ճիշտ եմ

վարվել, բայց ինձ էլ հեշտ չէր: Ես գերադասեցի պաշտպան կանգնել բոլորին, արդյունքում կորցրեցի այն միակին, ով իմաստն է իմ կյանքի, ես միայն քեզ ունեմ: Ահավոր է, երբ նայում ու ասում ես, որ ատում ես ինձ:

ԷԴՈՒԱՐԴ – Ինչո՞ւ: Զարմանալի՞ բան կա այստեղ, թե մտածում էիր պիտի թռնեի գիրկդ ու ասեի. «մամ ջան, ինչ լավ է, որ եկար»:

ԱՐՄԻՆԵ – Ես նման բան չասացի:

ԷԴՈՒԱՐԴ – Իսկ դու ընդհանրապես ի՞նչ ասացիր: Դու քեզ լսո՞ւմ ես: Եկել ինչ-որ անհասկանալի պատմություններ ես պատմում: Ինձ դա հետաքրքի՞ր է: Անգամ եթե մայրս ես, ես քո կարիքը հիմա առանձնապես չունեմ, գիտե՞ս: Կյանքս տակնուվրա մի՛ արա, այն իր հունով շատ ընտիր գնում է, դժվարություններն անցյալում են: Հերիք չի դու ես տանջվում, մի հատ էլ այդ նույն ճահճի մեջ ինձ որոշեցիր գցել, բրավո՛, շատ մտածող մայրիկ ես:

ԱՐՄԻՆԵ – Ես մտածում էի, որ ճիշտը պետք է իմանաս, ինչքան էլ ցավոտ լինի, պետք է վերագտնես քեզ, ինչպես ես ինձ վերագտա: Բայց դու չես ուզում ճիշտը ընկալել:

ԷԴՈՒԱՐԴ – Քեզ հետ պարզ է ամեն ինչ, իսկ հայրս ո՞վ է:

ԱՐՄԻՆԵ – Չգիտեմ:

ԷԴՈՒԱՐԴ – Ի՞նչ է նշանակում չգիտեմ: Հո՞ արագությունը բացած ավտոմեքենա չի՞, արագ անցնի չհասցնես մեքենայի համարները ֆիկսել:

ԱՐՄԻՆԵ – Ասում եմ քեզ՝ չգիտեմ:

ԷԴՈՒԱՐԴ – Դու դեռ ինձ բան չես ասում, ընհակառակը հնարավորինս խճճում ես: Խոսի՛ր դե վա՛յ, պատմի՛ր՝ ով է, ինչացու է: Կարո՞ղ է մի օր էլ ինքը անակնկալ մատուցի ու մեղայականը ճակատին խփած կանգնի դիմացս:

ԱՐՄԻՆԵ – Չգիտեմ:

ԷԴՈՒԱՐԴ – Հա՛, ուրեմն այդ կարգի անտեղյակ ենք ընտանյոք հանդերձ իրարից: Վատ չի՛, սպասելի էր: Հիմա խոսելո՞ւ ես, թե՞ պետք է համոզեմ, որ մինչև վերջ պատմես: Պատմում, պատմում ես, չիմանամ՝ էլ ինչ կարելի է սպասել իմ նորելուկ ծնողներից:

ԱՐՄԻՆԵ – Նրանք երեքն էին, նրանցից էին... դե հասկացար՝ ում նկատի ունեմ, զինված էին... Դուռը հանկարծակի ջարդեցին, մտան ներս, ծնողներիս սպանեցին ու ... ու... դրա համար էլ չեմ ճանաչում:

ԷԴՈՒԱՐԴ – Չէ՛, չէ՛, այդ ի՞նչ ես ասում... չի կարող նման բան լինել, չի կարող...

Երկինքը փուլ եկավ Էդուարդի գլխին: Մարմինը դողացնում էր, դեմքի դիմագծերը անկանոն շարժումներ էին անում, աչքերը սառել էին: Աչքերն ունակ չէին տեսնելու շրջակայքը, ուզում էին փակվել, հետո բացվել ու գիտակցել, որ այսօրը չի եկել, դեռ երեկն է, և այսօրը չի գալու:

Արմինեն մի կերպ իրեն հավաքելով որոշեց խոսել:

ԱՐՄԻՆԵ – Կներես, բալե՛ս, որ այսպիսի ցավ եմ պատճառում քեզ:

ԷԴՈՒԱՐԴ – Չէ, դու խաբում ես, դա ճիշտ չի: Չեմ հասկանում դու ինձ սպանելո՞ւ համար ես եկել: Էս ի՞նչ ես ասում, գիտակցո՞ւմ ես՝ հիմա դու ինձ ինչ ես ասում, հնարավոր չի...

Էդուարդի զայրույթն անասելի էր, իսկ Արմինեն լուռ էր:

ԷԴՈՒԱՐԴ – Հիմա ուշադիր ինձ լսի՛ր, էն ինչ, որ դու ինձ ասացիր, ինձ համար ոչինչ է, լսո՞ւմ ես, ոչինչ: Իմ ծնողները մահացել են:

ԱՐՄԻՆԵ – Թուրքի գնդակը ինձ չէր կարողացել սպանել, փոխարենը դու դա արեցիր:

ԷԴՈՒԱՐԴ – Ինչո՞ւ, որովհետև նրանցի՞ց եմ:

ԱՐՄԻՆԵ – Չէ՛, քո մեջ իմ ուժն է: Դրա համար էլ քեզ հաջողվեց, դու ինձ ոչնչացրիր: Դե սպանի՛ր, ազատվեմ այս տանջանքից... սպանի՛ր, դանակը քեզ եմ տալիս:

ԷԴՈՒԱՐԴ – Մարդուն պետք չի սպանել, եթե նրան չես նկատում:

Էդոն վերջին անգամ հայացք գցեց մորն ու խելագարված վազեց հեռու այդտեղից: Արմինեն մնաց կանգնած, երկար կանգնած լաց էր լինում անձևի տակ: Ոտքերը չէր զգում, չէր կարողանում շարժել, առաջ կամ ետ գնալ, քարացել էր տեղում: Աչքի առաջ բժիշկ Դավթյանի ստվերն էր կարծես կանգնել դեմ-դիմաց, ում հետ մտովի կռիվ էր տալիս. «ա՛խր, գիտեի չէ՞, որ հասնելու ենք այս կետին»:

Էդոն էլ հակառակը՝ վազում էր անդադար: Ճանապարհը չկար իր համար, ոչինչ չկար, ինքն էր և իր խեղագարված հոգին, պղտորված ուղեղը ու պայթել ցանկացող սիրտը, որ գոռում էր ցավից ու անճարությունից: Նա չէր նկատում մարդկանց, ավտոմեքենաները, երթևեկելի ճանապարհը մայթից չէր տարբերում, անձրևին էլ ուրախ էր, որ գոնե իր պես ճչացող էլի մեկը կա: Իսկ անձրևն իսկապես հորդառատ էր, մռնչում էր երկինքն ամպրոպի ձայնից: Նրանք էին Էդոյի միակ ընկերները, որ ճիշտ և ճիշտ արտացոլում էին նրա հոգեվիճակը և սինխրոն ձայնակցում իր ողբերգությանը: Մութ գիշերով երկար թափառելով՝ հասավ իր ստուդիան: Մեծ տարածք էր, լավ կահավորված, անհրաժեշտ տեխնիկան էլ մեջը թագավորի պես տեղավորվել էր լենուբոլ տարածքում: Պատերը սպիտակին և բաց մոխրագույնին խփող տարբեր երանգների մեջ էին: Էդոն ներքին հանգստությունը նորից վերագտնելու համար սկսեց իր հին մեթոդով մուռը թափել իրեն շրջապատող ամեն ինչի վրա: Երբ վերջապես մի փոքր հանգստացավ, մեջտեղում մի աթոռ դրեց, թարս նստեց վրան ու բացեց հայկական կոնյակի շիշը: Կոնյակը սրտի դարման լիներ ասես, սակայն ինչպես վայել է այդ արիստոկրատ ըմպելիքին, որը ցանկալի է ըմպել հատուկ վայելքով, դանդաղ, դրա համար նախատեսված հատուկ սպասքից ըմբոշխնելու համար ամեն մի կումը, այս անգամ այդ ըմպելիքին նման պատիվ չէր սպասվում: Էդոն գժված սկսեց խմել միանգամից շշից: Նայում էր դիմացը՝ պահարանի վրա դրված Աստվածաշնչին, խմում, արտասվում ու կրկնում. «ես հայ եմ... հայ եմ»: Հանկարծ ներս մտան Էդոյի թիմակիցներից ոմանք, եկել էին վերջին ստեղծագործության գործիքավորման վրա մի փոքր աշխատելու ու գտան ամեն ինչ տակնուվրա արված: Դեկորացիաները պոկված, պատերի վրայի պաստառների որոշ հատվածներ դանակով քերված էին, ասես մի փոթորիկ էր այդտեղով անցել: Սակայն նրանք սխալվում էին, այդ փոթորիկը ոչ մի տեղ էլ չէր անցել, հենց իրենց դիմաց նստած էր, կոնյակ էր խմում և հեչ ուրախ չէր, որ ինչ-որ մեկը որոշել է իր թվացյալ անդորրը խախտել:

– Ես հայ եմ, հայ եմ, լսում ե՛ք, հայ եմ ու միշտ եմ հայ լինելու,– խելագարված շարունակում էր գոռալ Էդոն ավելի բարձր, քանի որ կամա թե ակամա իր ներկայացման համար հանկարծակի հանդիսատես էր հայտնաբերել:

– Հա, ախպե՛ր ջան, հայ ես: Ի՞նչ է հետդ կատարվում,– հարցնում էին նրան շրջապատողները:

Հարցուփորձն անօգուտ էր. Էդոն նրանց չէր լսում: Նա ցանկանում էր, որ իրեն լսեն ու չխանգարեն՝ ինքն իր դեմ պատերազմ տալու ժամանակ իրեն անիմաստ հարցերով շեղելով:

# Գլուխ 6

Մի քանի ամիս պահանջվեց, որ Էդոն լիարժեք ուշքի գար տարած սթրեսից: Նա շատ ուժեղ մարդ էր ներքուստ, բայց այդ ուժը կարող էր դրսևորվել տարբեր կերպ: Միանգամից խելագարի նման կարող էր պոռթկալ, այդ պահին հարձակվել պատահականորեն դիմացը հայտնված յուրաքանչյուր անձի վրա: Մյուս կողմից էլ ունակ էր ուշքի գալուց հետո ինքնուրույն վերականգնել հավասարակշռությունը և դժվարին հոգեկան ապրումների թողած նստվածքը ամբարել հոգու մի անկյունում՝ թույլ չտալով, որ առօրյա շփումների մեջ այդ նստվածքը հանդգնի խաթարել իր առօրյան: Սակայն մոտալուտ դեպքը, որ պիտի հերթական անգամ ալեկոծեր Էդոյի ներաշխարհը, նրան հունից դուրս գալու հերթական առիթը պիտի տար: Արցախ պիտի մեկներ, առաջին հերթին զորամասեր: Ջեռնամուխ էր եղել որոշ զորամասերի վերանորոգման և կահավորման ծախսերը հոգալուն: Արդեն քայլեր ձեռնարկվել էին այդ ուղղությամբ: Սակայն Արմինեի հետ առերեսվելն այնքան չկանխատեսված էր, որ նոր իրականությանը բախվելուն զուգահեռ անհետացան նաև Արցախ այցելելու խանդավառ մտադրությունները: Բայց մի խնդիր կար՝ նա արդեն խոստացել էր: Նա միշտ խոսքի տեր մարդ էր: Խոստումը պահելը արժանապատվությունը պահելու պես մի բան էր: Որևէ գրավոր պայմանագրով չստանձնած մի պարտավորություն, որն ինքն իր հետ էր կապում ու, չնայած բանավոր էր, ավելի արդիական և կիրառելի էր, քան կնիքի մեջ թաթախված բազմաթիվ A4 ֆորմատի թղթեր: Այսպես

խեղդելով իր ներսում իրարամերժ զգացողությունները՝ նա գնաց զորամասերից մեկը:

Հասան Արցախ, երեկոյան ժամերն էին: Եղանակը տրամադրող էր: Էդոն առանձնացավ իրեն ուղեկցողներից և ուզում էր մենակով զբոսնել կենտրոնական հրապարակում: Աշխուժություն էր: Մանչուկների լուսավառ ու կլորիկ աչուկները երջանկությամբ փայլփլում էին, նրանք ուրախ վազվզում էին ինչ-որ խաղալիքներ ձեռքներին: Ծնողներն էլ ընկած էին հետևներից, որ բռնեին նրանց, թե չէ մեկ էլ տեսար կորան: Չէր նկատվում, որ նրանք պատերազմ կոչվող բառի կողքով են քայլում արդեն մի քանի տասնամյակ: Սովորել էին, վախ չկար արդեն: Այդ վախն անզգայացրել էր ժամանակը:

Հաջորդ օրն առավոտյան եղանակն Արցախում նորից լավն էր, արևոտ էր, սեպտեմբերյան զով քամին յուրօրինակ թեթևություն էր հաղորդում: Բոլորը փորձում էին այս այցը հնարավորինս տպավորիչ դարձնել Էդուարդի համար: Դարպասներից ներս մտան ու սկսեցին քայլել զորամասի բակում: Դիմացից բացվում էր մի տեսարան, երբ հողին ամրացված տաբլոների վրա իրար հետևից շարված էին հերոսների նկարներով պաստառներ, որոնք լուսանկարվել էին պատերազմի օրերին: Ու այդ նկարներից մեկը Արմինեինն էր երիտասարդ ժամանակ՝ ժայռի ծայրին կանգնած ու հայացքը դեպի արցախյան բնաշխարհին ուղղված: Էդոն միանգամից մռայլվեց, սկսեց ծանր շնչել, մտքում կռիվ տալ հրամանատարության հետ, թե բա. «սա ի՞նչ գործ ունի էստեղ»: Բայց լավ է, որ կռիվը դեռ մտքում էր տանում: Զինվորական հրամանատարությունը գիտեր՝ ում որդին է Էդուարդը: Արմինեի որդու հայտնության փաստը իրար մեջ տարածվելով՝ հասել էր նաև նրանց: Ներս մտան: Ներսում ևս պատերին հերոսների նկարներ նկատեց, նրանց մեջ՝ նաև իր մորը: Նրան ցույց տվեցին Արմինեի անունը կրող ուսուցչական կորպուսը, որին կից մի փոքրիկ թանգարան կար նվիրված նրան: Այնտեղ կային նրա մասին պատմող հոդվածների պատառիկներ, տարբեր իրեր, որոնց անունը կապվում էր նրա հետ և վերաբերվում ռազմական տարբեր օպերացիաներին: Չնայած տարվող ջանքերին,

Էդոյին բացարձականապես ոչինչ չէր հետաքրքրում: Նա միայն մոր նկարը տեսնում ու խոժոռվում էր: Ներսից պայթում էր: Էդոն մտքում միայն մի բան էր ասում. «ոնց որ ինադու անեն»: Զայրույթը նկատում էին նաև ներկաները, սակայն զորամասի պետը համառում էր, որ շարունակեին նախանշված գրաֆիկով առաջ շարժվել: Այդտեղ ամենուր, ամեն ինչ հիշեցնում էր Արմինեին, նրա անցած փառահեղ ուղին, իսկ Էդոն չէր իմանում՝ ոնց հասկացնի, որ ցանկություն չունի այլևս այստեղ մնալու: Եկավ մի պահ, որ նա չդիմացավ և քաղաքավարությանն այլևս զոհ չէր ուզում գնալ: Առանց մի բան ասելու ուղղակի վերցրեց ու դուրս գնաց: Դրսում դեպի դարպասներ ճանապարհին էր փնտրում, երբ էլի աչքին զարնեց այն չարաբաստիկ մեծ պաստառը Արմինեի նկարով: Վերջ, արդեն նյարդերը տեղի տվեցին, հանեց գրպանից փոքրիկ դանակը, որ թանգարանի իրերից էր, և աննկատ թռցրել էր այնտեղից: Սկսեց դանակով քերել նկարը, պատռել առանձին մասնիկներ ու ձեռքերով ճղրտել դրանք: Հանկարծ լսվեց հեռվից դեպի իրեն վազող մի պատանի զինվորի ձայն:

– Սպասի՛ր, այդ ի՞նչ ես անում: Մի՛ արա, մի՛ փչացրու...

– Թո՛ղ, դու չգիտես:

– Վե՛րջ տուր... հասե՛ք, տղե՛րք:

– Գնա՛ այստեղից:

– Չե՛մ գնա, դու իրավունք չունես, նա մեր հերոսներից է:

– Ի՞նչ հերոս, դու ի՞նչ գիտես՝ հերոսն ինչ է: Էս հերոսին ճանաչո՞ւմ ես, որ եկել դեմս ես կտրել:

– Հա՛, ճանաչում եմ:

– Յա՜, էդ քանի՞ տարեկան ես, նորակոչի՛կ ջան, մի քիչ տարեթվերը չե՞ս խառնել:

– Չէ՛, չեմ խառնել: Նա այն մարդն է, ով հորս կյանքն է փրկել պատերազմի ժամանակ, հայրս էլ էր ազատամարտիկ:

Էդոն տեղում քարացավ շփոթմունքից: Հետո սկսեց աչքերը փախցնել. չէր կարողանում զինվորի աչքերի մեջ ուղիղ նայել: Փորձում էր հասկանալ, թե ինչ է կատարվում. ճակատագիրն ինչո՞ւ է

նորից չար կատակ խաղում իր հետ: Պապանձվել էր, կատաղած պահվածքը կամաց-կամաց մարում էր: Մտածում էր, թե ինչու եկավ այստեղ, չէ՞ որ ներսը նորից ամեն ինչ տակնուվրա արեց, հազիվ էր հանգստացրել խռոված հոգին:

Շարքային զինվորը Էդոյի թուլացած ձեռքից դանակը վերցրեց ու պահեց իր մոտ, որից հետո շարունակեց նորից խոսել.

– Հա, ինչո՞ւ զարմացար: Նա այն մարդն է, ում ես իմ ամբողջ կյանքում պարտական կլինեմ:

Մի քանի րոպե անց զինվորական ղեկավարությունը թանգարանից դուրս վազեց ու նույնպես հասավ դեպքի վայր: Արդեն հասցրել էին կատարվածի մասին տեղեկացվել:

– Հարգելի՛ պարոն Պետրոսյան, չնայած իմ անթաքույց հարգանքին Ձեր անձի հանդեպ, Ձեր քայլերը անհասկանալի և անընդունելի են, բայց ճիշտ կլինի մենք մեր զրույցը այլ տեղ շարունակենք: Եկե՛ք անցնենք իմ աշխատասենյակ, համեցե՛ք,– զորամասի զինվորական պետ Սահակ Շանթը, ձեռքը պարզելով համապատասխան ուղղությամբ, հրավիրեց Էդուարդին ուղեկցել իրեն:

Էդուարդին ոչինչ չէր մնում, քան սուսուփուս համաձայնվել. չգիտեր, թե ուրիշ ինչ դիրք կարելի էր բռնել նման իրավիճակում: Չնայած այդքան էլ համաձայն չէր զինվորականի ասածի հետ, սակայն համաձայն էր մի բանում, այն է՝ դիմակայությունը առանձին դաշտ պետք է տանել, ոչ թե բոլորի աչքի առջև:

– Պարո՛ն Շանթ, ես հասկանում եմ, իմ պահվածքը անշնորհքի պահվածքի է նման, սակայն հավատացեք ես իմ պատճառներն ունեմ այդպես վարվելու:

– Էդո՛ ջան... տղա՛ս,– երկար լռելուց հետո շատ անսպասելիորեն ջերմ տոնայնության մեջ դրեց խոսակցությունը Շանթը,– այդ պատճառներն ինձ քիչ, թե շատ հայտնի են, սակայն իրողությունը մնում է մեկը, դրա հետ հաշվի է պետք նստել:

– Ո՞նց, մի րոպե՛, Ձեզ հայտնի՞ է, թե ես ով եմ և ինչ կապ ունեմ այդ կնոջ հետ,– Շանթի խոսքից զարմացավ Էդոն:

– Երևի ուզում էիր ասել մորդ հետ,– ուղղեց նրան Շանթը:

– Ո՛չ, ամենևին էլ դա չէի ուզում ասել: Դուք չէ, որ պիտի որոշեք, թե ես ում մայր կոչեմ, ում՝ ոչ,– բարկացավ Էդոն:

– Բայց նաև դու չէ, որ պիտի որոշես՝ ով քեզ կյանք տար, ով՝ ոչ,– խրատեց նրան զինվորականը:

– Հարցը ուրիշ հարթություն եք ուզում տանել, հարգելի՛ պարոն Շանթ:

Սահակ Շանթը հայացքը սենյակի այլ պարագաների վրա ուղղելով՝ շարունակեց դաստիարակչական զրույցը.

– Բոլորովին, ընդհակառակը, ես հարցը այն հարթություն եմ մտցնում նորից, որտեղից դու այն դուրս ես հանել, և ընդհանրապես որոշել ես քո սրտից դուրս հանել ամեն ինչ, ինչը ձեռնտու չէ քեզ: Չե՞ս կարծում, որ մի տեսակ վախկոտի պահվածքի է նմանվում:

– Դուք ի՞նչ գիտեք, թե ես ինչեր եմ ապրել, որ այսպես վստահ եք խոսում իմ անձնական տիրույթին վերաբերող հարցերի շուրջ,– ծամծմված իր խոսքերը նորից մեջ բերեց Էդոն:

– Դու էլ չգիտես, թե նա ինչ է տարել, ու վատն այն է, որ չես էլ ուզում իմանալ: Հասկացի՛ր, նա քեզ աշխարհի չափ սիրում է ու երբևէ չի հրաժարվել քեզանից: Նա չի լքել քեզ: Ճակատագիրն է ձեզ բաժանել:

Խրատները տեղ չէին հասնում: Էդոն նորից համառում էր ասելով.

– Ինձ չեք համոզի, եթե նա ինձ ուրիշին չտար, ճակատագիրն էլ չէր բաժանի:

– Դու հայրենիք հասկացությունը թվում է, թե լավ պետք է իմանաս, բայց փաստորեն այնքան էլ լավ չգիտես, եթե քո մոր այդ արարքի իմաստը չես հասկանում:

– Իսկ, կներեք, Ձեզ ո՞վ է թույլ տալիս մեր հարաբերությունների մեջ այդքան խրվել: Դուք ո՞վ եք և ինչո՞ւ եք այս խոսակցությունը բացել,– ավելի բարկացած տոնով մատնանշեց խռովահույզ երիտասարդը:

Այդ խոսքերից Շանթն ավելի կատաղեց ու արդեն հարգանք-մարգանք չէր խաղացնում: Նա ասաց.

– Ես Արմինեին բավականին լավ եմ ճանաչում, ճանապարհ ենք անցել իրար հետ: Չնայած այս թեմայի մասին ոչինչ չգիտեի: Չգիտեի անգամ, որ որդի ունի, բայց նա այնպիսի համբավ ուներ և ունի այժմ, որ նրա հետ կապված ինֆորմացիան հիմա գոնե չի կարող անտարբեր թողնել մեզ: Մարդկանց, որոնք ականատեսն են եղել նրա սխրանքներին, ուժին և կամքին, անվախ բնավորությանը, թշնամու շրջանում նրա անունն անգամ խուճապ էր առաջացնում: Հասկանալի է չէ՞, որ շարքային մեկը չի մեզ համար նա, որ չանհանգստանանք: Ես գիտեմ, որ նա տանջվում է հիմա քո կարոտից, ուզում է քեզ մոտ լինել, բայց դու թույլ չես տալիս:

– Այսինքն՝ նա գիտի, որ Դուք գիտեք, և երևի ինքն է կազմակերպել այս կրկեսը, որ ինչ-որ մեկը իր փոխարեն խոսի ինձ հետ, փորձի համոզել:

– Ո՛չ, դու նորից սխալվում ես, նա չգիտի որ այստեղ ես, ավելին ասեմ ՝ նա չգիտի որ իրեն նվիրված այսքան բան կա այս զորամասում: Նա ոչինչ չգիտի,– կտրուկ տոնը բարձրացրեց նորից Շանթը՝ համբերությունը սպառելով, ապա հավելեց.– Նա զինվորական գործի հետ բավականին վաղուց արդեն առնչություն չունի, բայց նա պատմություն է կերտել, որը մեկը դու, ինչքան էլ ուզենաս, չես կարող ջնջել:

– Ես չեմ էլ ուզում ջնջել: Ես միայն ուզում եմ իմ հետ չառնչվի այն ամենը, ինչն իր հետ է կապված: Ես չեմ ընդունում իրեն որպես ինձ հետ կապ ունեցող որևէ մեկի, բայց ես նրան վատություն էլ չեմ ուզում, թող ապրի ինձանից հեռու: Ես դա եմ միայն նրանից պահանջում, իսկ ինքը այսպիսի էժանագին սցենարների է դիմում:

– Ես քեզ նորից եմ կրկնում, որ նա տեղյակ չէ մեր այս հանդիպման, առավել ևս այս խոսակցության մասին: Ես այս վերջերս եմ իմացել եղելությունը: Դե բերնեբերան անցնում է, գիտես, հայ ենք չէ՞: Ուղղակի ցավ եմ ապրում, երբ գիտեմ մայր ու որդի այսպես գժտված եք: Նա արժանի չի սրան, տղա՛ս: Հնարավորություն տուր նրան, փորձիր ճանաչել և դու կհասկանաս, թե ինչքան պետք է նա քեզ: Մայրը երբեք ավելորդ չի լինում, անկախ նրանից ընդունում ես

նրան, թե ոչ: Նրա խոսքը, նրա խորհուրդը հաստատ քեզ կյանքում դեռ շատ է պետք գալու:

– Նրա խորհո՞ւրդը, նրա խո՞սքը: Իսկ որտե՞ղ էր նրա խոսքը, նրա խորհուրդը, նրա ներկայությունը, գրո՞ղը տանի, երբ դրա կարիքը մի մատ էրեխեն ուներ: Հը՞ն, թե միայն սրտաճմլիկ նախադասություններ արտասանելով է, որ հիմա պիտի իր չարածը լրացնի: Ու ընդհանրապես բավական է, վե՛րջ տվեք էս թատրոնին:

Սա ասելով՝ Էդուարդը դուրս գնաց ու ուղղեց քայլերը դեպի զորամասի դարպասները: Նա հեռացավ կատաղած ու փոշմանած: Նրան սկսել էր արդեն հայրենիքի օդը ճնշել: Մի բան, որ երբեք չէր զգացել: Նա որոշեց, որ իրեն «թայմ աութ» է հարկավոր և մեկնեց նորից ԱՄՆ՝ ամբողջ կատարվածը մարսելու ու իր առանցքից դուրս եկած ու փոթորկված ներաշխարհը հանդարտեցնելու համար:

***

Հոգևորի կարևորությունը հայ ազգը միշտ է գիտակցել, եկեղեցու դերը եղել է ոչ միայն կրոնական, այլ նաև ազգապահպան մեր ողջ պատմության ընթացքում: Եկեղեցում մարդու հոգին հանգստանում է, հոգևոր ուժի մի մասնիկ է ստանում, որ իրեն օգնում է դիմակայել այս դժվարին կյանքում: Բայց միայն ծանր պահերին չէ, որ հիշում ես եկեղեցու մասին: Այն այցելում ենք պարբերաբար, ոմանք շատ հաճախ, ոմանք հազվադեպ: Անին դուրս եկավ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուց: Որոշեց մի փոքր զբոսնել եկեղեցու բակում, քանի որ եղանակը բավականին տրամադրող էր, իսկ ինքը շտապելու տեղ չուներ: Նա ժպտում էր, ժպտում էր արևին, արևն էլ իրեն էր ժպտում: Երջանիկ էր, կարծես մի մեծ գլոբալ մասշտաբով խնդիր իր համար հաղթահարած լիներ, ու աչքին ոչինչ այլևս նկատելի չէր: Թվում էր, թե շատ դժվար կլինի այդ պատրանքից նրան հանելը, սակայն ոմանց դա, այնուամենայնիվ, հաջողվում է: Եկեղեցու բակում որոշեց մի փոքր նստել և վայելել իր հոգու խրախճանքը մեղմ սլացող քամու հետ միասին: Նստած էր Անին, և խրախճանքը բնության հետ կիսելու ցանկությունը մի փոքր ծանձրացնող սկսեց

դառնալ: Զանգեց ընկերուհուն և սկսեց անհագ ոգևորությամբ պատմել, թե ինչքան էին իրեն հավանել ԱՄՆ-ի դեսպանատան աշխատակիցները հարցազրույցի ժամանակ: Ապշած էին մնացել նաև իր հիանալի անգլերենից, և ներքուստ համոզված էր, որ իրեն չեն մերժելու Ամերիկա մեկնելու վիզայի հարցով: Աչքերը երջանկությունից փայլում էին, ընկերուհու ասածները չէր էլ լսում, կենտրոնացել էր իր վրա ու արագորեն պատմում էր ստացած տպավորությունների մասին: Դիմացից երկու զինվորներ էին քայլում դեպի Անիի նստարանը, շատ մոտ հեռավորության վրա: Նրանք էլ էին նոր դուրս եկել եկեղեցուց, սակայն ոգևորության առիթ բնավ չունեին: Զինվորներից մեկը բռնել էր մյուսի թևից, որպեսզի օգնի ոտքից վիրավոր մյուս զինվոր ընկերոջը ձեռնափայտի օգնությամբ քայլել ճեմուղով դեպի ներքև: Նրանք երկուսով էին անցնում Անիի կողքով հենց այն պահին, երբ Անին նորից կրկնեց, որ չի համբերում՝ երբ է մեկընդմիշտ հեռանալու այս երկրից ու հաստատվի Ամերիկայում: Դա այն նույն ճակատագրական պահն էր, երբ Անիի հայացքը հանդիպեց ոտքից վիրավոր զինվորի սուր խայծող աչքերին, որով կարծես ուղիղ ճակատին ասեր. «Աղջի՛կ ջան, մենք էստեղ ձեզ համար կյանքը վտանգենք սահմանին, երկիր պաշտպանենք, իսկ դուք անհամբեր այստեղից թռնե՛լ ցանկանաք, լավ, մի կաթիլ արժեք չո՞ւնի մեր արածը»:

Անիի դեմքը մի պահ քարացավ, խոսքերը շուրթերի ծայրից անհետացան, բան չունեին ասելու այդ շուրթերը, բայց անկարող էին նաև փակվել: Ծիծաղկոտ հայացքը մթագնեց, աչքերն էլ կարծես վերջնականապես ակնհայտ հայտարարեցին, որ խրախճանքն ավարտված է: Ձեռքերը թուլացան ու այլևս ի վիճակի չէին միայն այդ պահին առերևույթ ահավոր ծանր թվացող բարակ հեռախոսի մատերիալը ականջին մոտ պահել: Ակամայից աստիճանաբար իջեցրեց ներքև բջջային հեռախոսը: Հաշվի չառավ նույնիսկ այն, որ ընկերուհին դեռ մյուս կողմից հրճվանքով խոսք էր կազմում ու արագ-արագ արտաբերում դրանք՝ ցանկանալով կրկնապատկել Անիի ոգևորությունը, որից գեթ մի փշրանք չէր

մնացել: Անին հանկարծակի հայտնաբերեց իր համար մի տարօրինակ զգացում: Դա ամոթն էր, բայց ինչո՞ւ: «Անծանոթ տղերք էին, ի՞նչ ունեմ նրանց առջև արդարանալու... հաստատ ոչինչ, թեթև ընկճվածություն է, կանցնի». մտածեց նա, բայց այնուամենայնիվ շարունակեց խորհել այդ դրվագի մասին, որ մի ամբողջ պատմություն արժեր, ու դժվար թե ստացվեր հեշտությամբ մոռացության մատնել:

Անցավ ժամանակ, և վերջապես ստացվեց պատասխանը: Անին կարող էր մեկնել իր երազանքների երկիր, սակայն նախկին խանդավառությունը մարել էր: Ծնողները նկատում էին աղջկա շարժուձևի մեջ որոշակի փոփոխություն: Միայն այն փաստը, որ վիզայի ստացման լուրը լսելուն պես չսկսեց թռչկոտել ուրախությունից և Ալիշա Քիզի երգերից երգել բազմոցի վրա՝ այն վարի տալով, արդեն արտառոց էր:

Օ՛, Աստվա՛ծ իմ, ի՞նչ է անում ֆեյսբուքը: Նորովի է կյանքը կառուցում մարդկանց. Անին չէր հասցրել տեղը-տեղին մի նորմալ գրառում կատարել, այլ ուղղակի չոր գրել էր. «Մեկնում եմ ԱՄՆ», սկսվեեեեե՛ggg: Հիմա կիարցնեք ի՞նչը, տո՛ բա էլ ի՞նչը պիտի սկսվեր, չգիտե՞ք: Ֆեյսբուքյան ռումբի էֆեկտը Անիի ընկերների շրջանում գործի դրվեց. «բա ե՞րբ ենք նշելու...../ բա մաղարիչ չկա՞...../ յա՛, էս ի՞նչ ձև ա, կարո՞ղ ա մի հատ էլ գնայիր, նոր իմանայինք...../վերջը էնքան չամռվեցիր, ուզածիդ հասար էլի..... /էրեխե՛ք, պադյոոոո՛մ, մի հատ հավաքվե՛ք, տեսնենք՝ ինչ ենք անում...../ա՛յ աղջիկ ջան, չե՞ս ամաչում, էսքան մարդու խառնիր իրար, քո տունը շինվի.....»:

Քաղաքի թոհուբոհի ամենակենտրոնում մարդկանց հոսքը մինչ ուշ ժամ չի դադարում: Այստեղ ես հասկանում, որ կյանքն այս աղքատիկ երկրում էլ եռալ գիտի, ու հեչ պարտադիր չի, որ 100 աստիճանի տակ դա տեղի ունենա: Անդադար աղմուկ է շուրջդ: Ականջներիդ մեջ հեղհեղուկ խոսակցությունների տարափ, որոնք ուզենաս էլ իրար կողքի չես կարող շարել, որ խելքին մոտիկ մի միտք ստանաս: Բայց այս ամենը աղմուկ ու աշխույժ կյանք են համարում նրանք,

ովքեր երբեք այս երկրից դուրս չեն գտնվել, որ պատկերացնեն իրական խայտաբղետ քաղաքային աշխուժությունն ինչպիսին է: Խոշոր ագլոմերացիաների մի թաղամասի չափ բնակչություն ունի Հայաստանը: Այդ պատճառով Հյուսիսային պողոտայի այդ թվացյալ աշխուժությունն էլ մեր պարամետրերով է ուրախացնող: Անիին տնից դուրս էին բերել ու այս ու այն կողմ էին հետները տանում ընկերներն ու ընկերուհիները: Վազում էին մի այգուց մյուս այգին, մի ռեստորանից՝ մյուսը: Չէին թողնում, որ նա մի բան որոշի, օրինակ՝ ո՞ւր գնալ, ի՞նչ ուտել, որտեղով քայլել: Ամեն ինչ իրենք էին գծագրում: Անիին էլ խրատում էին, որ դեռ կհասցնի ուղեղը մի միլիոն անգամ լարել կողմնորոշվելու համար՝ ուր գնալ, ինչ անել, որտեղով քայլել, երբ միայնակ օտարության մեջ հայտնվի, ու սկզբնական շրջանում խառնվի իրար անտեղյակությունից:

ԱՆԻ – Լավ, էրեխե՛ք, հեսա կհուզվեմ: Այդպիսի սրտաճմլիկ խոսակցություններով ինձ չեք մտափոխի, ուրիշ բան մտածեք:

ԱՐՍԵՆ – Իսկ ո՞վ ասաց, որ ուզում ենք քեզ մտափոխել: Մի բան էլ ուզում ենք՝ գնաս ոտիդ տեղը ամրացնես ու ասես. «չէ՛, ընկերներիս էլ պիտի բերեմ, մասնավորապես էն Արսենին...»: Գոնե այդպես, ընկերուհի՛ ջան, մի լավություն արա՛, ի՞նչ կլինի: Մենք էլ ենք ուզում աշխարհ տեսնել:

ԱՆԻ – Դե էլ մի առիթավորվի, ու ընդհանրապես քիչ գժվացրեք հա՛: Ոնց որ ես ոտս պնդացրի վաղը, դուք էլ վռազ հերթ եք կանգնում ինձ մոտ գալու համար:

ԱՐՍԵՆ – Մենք տեր-վռազն ենք, չգիտե՞ս:

ԱՆԻ – Բա լավ, պատմեք տեսնեմ՝ ինչ պլաններ այստեղ ունեք:

ՏԱԹԵՎԻԿ – Ստեփանը որոշել է ծրագրավորող դառնալ: Ես էլ կողքից կօգտվեմ էլի:

ԱՆԻ – Իսկ Ստեփանը համաձա՞յն է, որ դու կողքից օգտվես:

ՍՏԵՓԱՆ – Որ ասում եմ ես, ուրեմն Արուսը հետս ա:

ԱՆԻ – Էրեխե՛ք:

ԿԱՐԵՆ – Հը՞ն:

ԱՆԻ – Ձեզ հետ գժվել կարելի է:

ԿԱՐԵՆ – Լավ թույլ ենք տալիս գժվիր, պրծիր: Հենց պրծնես, տեղյակ կպահես:

ԱՆԻ – Իրականում ուզում էի ասել, որ ձեզ շատ եմ կարոտելու:

ՎԱՀՐԱՄ – Է՛, ես էլ գիտեմ՝ մի լուրջ բան է ասելու: Արդեն նոթատետրս հանել էի, որ Նյուտոնի երեք օրենքները, թելադրեիր, գրեի: Տնաշե՛ն, բայց դու ինչ անհետաքրքիր մարդ դուրս եկար: Հենց Ամերիկան իմացավ, որ այդքան անհետաքրքիր ես, դեպորտ կանի:

ԱՆԻ – Դեպորտի անուն չտաք, ուզում եք վախս բռնե՞լ:

ԱՐՍԵՆ – Չէ՛, Ա՛ն ջան, մենք բռնոցի խաղալու տարիքից վաղուց անցել ենք: Ուղղակի, էդ վախը շատ անդուր տիպ ա: Մարդ չի ուզում, թե բռնի, հենց բռնում ես, վախից բաց ես թողնում:

ԱՆԻ – Լավ, բա ես ձեր նման ջրիկների հավաքածու Ամերիկայում որտեղի՞ց եմ ճարելու: Դրա մասին հեչ մտածե՞լ եք:

ՎԱՀՐԱՄ – Է՛, մենք ինչի՞ մտածենք, դու մտածի: Կանոն համար առաջին Ամերիկայի կյանքի մասին՝ սովորիր քո պրոբլեմները ինքդ լուծել: Ոչ թե այստեղի նման. «Էրեխես սոված կլինի էս ժամին, վա՜յ քոռանամ ես»: Էրեխեն էլ 60 տարեկան թոռնատեր հսկա է:

ԱՆԻ – Վա՜յ, Վահրա՛մ, քո նմանը չկա, Ամերիկայում քո նման գիժ չեմ գտնի:

ՎԱՀՐԱՄ – Ո՞նց չես գտնի, բա դու չգտնո՞ղ աղջիկ ես: Ուրեմն նայիր, հասնում ես Ամերիկա, մտնում ես առաջին պատահած գժանոցը ու հարցնում. «Վահրամին էս կողմերը ոչ մեկդ չե՞ք տեսել»:

ԱՆԻ – Ժողովո՛ւրդ, հեսա կգամ: Մի քիչ դրսում օդափոխվեմ, գամ:

ՎԱՀՐԱՄ – Էս աղջիկը լրիվ զգեստապահարան ո՛նց որ լինի:

ՍՐԲՈՒՀԻ – Էդ ինչի՞ որ:

ՎԱՀՐԱՄ – Բա օդափոխվելս ո՞րն ա:

ՏԱԹԵՎԻԿ – Վահրա՛մ, սպանում ես, հյութդ խմի՛ր... ա՛յ տղա, մեղք ենք վերջապես:

Անին իրականում դուրս էր եկել մաքուր օդի, որովհետև խեղդվում էր այն մտքից, որ այս ամենից շուտով շատ հեռու է լինելու: Շուրջը ուրախ դեմքերով, կյանքից չդժգոհող մարդիկ էին ման

գալիս: Պարզ էր, որ յուրաքանչյուրն էլ, եթե ուզենար, լավ էլ դժգոհելու առիթներ կգտներ, բայց այդ պահին մարդիկ ուղղակի ցանկանում էին լիցքաթափվել: Վայելել այն քիչը, որ ունեն, ու դրանով էլ էին ուրախ: Անին, ճեմուղու մեջտեղում կանգնած, կորցրել էր տարածության զգացումը: Նայում էր գիշերային լույսերին, մթագնած երկնքին, որում անգամ ամպի նշույլ չկար, այնքան պարզ էր: Նա վայելում էր օդում պտտվող խորհրդավորությունը, զարմանալիորեն նախկինում այն երբեք չէր նկատել: Ասես նոր էր հասկանում, թե որտեղ է ինքը, որտեղ է կյանքն անցել: Սպասվող մեծ փոփոխությունների նախաշեմին, որին այդքան փափագում էր հասնել, սկսել էր վախենալ դրանցից: Դրանք անակնկալ կերպով տհաճ էին դարձել:

Մի քանի օր անց Զվարթնոց օդանավակայանում Անին սպասում էր իր թռիչքին: Նրա աչքին ժամացույցի սլաքների ընթացքը չափազանց դանդաղել էր, իսկ այդ ընթացքում մտքերն ավելի էին խճճվում, չէր կարողանում նորմալ կողմնորոշվել, հիմա ինքը ճի՞շտ է վարվում, թե՞ ոչ: Ճիշտը ո՞րն է այս դեպքում, սիրտը կասկած էր ընկել, հաճախ վեր էր կենում, մտազբաղ քայլում: Անընդհատ աչքին էին գալիս վիրավոր զինվորի հայացքը, Էդոյի հետ ունեցած զրույցը, ընկերների հետ անցկացրած պահերը, նաև նախկին հիշողություններն իր մանկությունից: Ծնողներին չէր թողել, որ գային և ճանապարհ դնեին՝ ասելով, թե ցանկանում է արդեն օդանավակայանից իրեն ինքնուրույն զգալ: Սակայն իրական պատճառն այլ էր. նա գիտեր, որ հոգեկան առանձնահատուկ խռովքի մեջ է: Այդ հոգեվիճակը ինչքան էլ տանը փորձում էր թաքցնել, հիմա՝ մեկնելուց առաջ, հաստատ չէր կարողանալու թաքցնել, քանի որ այն իր կուլմինացիային էր հասել: Նա խորասուզված էր իր փոփոխական մտքերի կծիկի մեջ, երբ նրան այդ արթուն քնից հանեց օդանավակայանի աշխատակիցը՝ զգուշացնելով, որ ժամանակը սուղ է, և պետք է շտապել.

– Ձեր թռիչի ժամն է, խնդրում եմ շտապե՛ք այս կողմ:

– Հը՞ն... ի՞նչ անեմ:

– Ասում եմ՝ շտապե՛ք, չեք հասցնի:

– Հը՞ն... ասում եք չեմ հասցնի... հա՛, շնորհակալություն: Ճիշտ եք... չեմ հասցնի:

Սա ասելով՝ արագ սլանում է լրիվ հակառակ ուղղությամբ՝ դեպի օդանավակայանից դուրս տանող ճանապարհը:

– Մի րոպե, այդ ո՞ւր եք վազում, Դուք այս կողմ պիտի գնաք, այս դարպասից պիտի ներս մտնեք, հե՜յ մի րոպե սպասե՛ք,– հետևից ձայն էր տալիս աշխատակիցը՝ մի քանի քայլ առաջանալով:

Դրսում խառնված էր իրեն պահում, կարծես նոր քաղաք ժամանած լիներ: Նորից տաքսի էր փնտրում: Առաջարկները բնականաբար չուշացան: Իրեն լրիվ միևնույն էր՝ ինչքան են ուզելու, ինչ զրույցներ են տանելու ճանապարհին: Ուզում էր շուտ հեռանալ այդտեղից, քանի որ հաստատակամորեն որոշել էր իր հետագա անելիքը:

– Կներ՛ե՛ք, Դուք ժամանողների՞ց եք, թե՞ ճանապարհ դնողներից,– հարցրեց առաջին պատահած տաքսիստը, ում մեքենան Անին համաձայնվել էր նստել:

– Փոշմանողներից,– շտապողականությունը չթաքցնելով՝ պատասխանեց Անին:

– Էդ ի՞նչ է, նոր կատեգորիա՞ է ստեղծվել,– զարմացած հոնքերը կիտեց տաքսիստը:

– Այո՛, կարող եք Ձեր «փլեյլիստում» ավելացնել,– տաքսու դռան առջևից շրջվեց Անին՝ տաքսիստին պատասխանելու:

– Իմ ինչուտո՞ւմ,– վերջին բառը ձգելով՝ որոշեց հանգամանորեն պարզաբանում ստանալ տաքսիստը, բայց դա հեչ պահի հրամայականը չէր:

– Հիմա գնո՞ւմ ենք, թե՞ չէ,– մի փոքր վրդովմունքով ակնարկեց Անին:

– Հա բա ոնց, գնում ենք, բա ինչ ենք անում,– ոտքերը վերջապես տեղից պոկեց տաքսիստը:

Տուն հասնելուն պես, երբ հայրը դուռը բացեց, մնաց շվարած կանգնած:

– Ո՞նց թե... էս դու չե՞ս մեկնել,– անակնկալից ապշած՝ իր տեղը չէր գտնում հայրը:

– Քո՛ւրս, դուռը խառնել ես, Ամերիկան մի քանի հազար կիլոմետր դուռ այն կողմ է,– կատակի տվեց փոքր եղբայրը, բայց զգաց ծնողների հանդիմանող հայացքից, որ կատակի ժամանակը չէր:

– Թռի՞չքն է հետաձգվել,– հետաքրքրվեց հայրը:

– Ո՛չ:

– Բա ի՞նչ է եղել,– հայրն ավելի մեծ զարմանքով աչքերը սևեռեց աղջկա վրա:

– Պա՛պ, Հայաստանի ամենաաղքատ մարզը ո՞րն է,– հարցրեց Անին:

– Գայո՛ւշ, ո՞ւր ես: Արի՛, աղջիկդ տաքություն ունի, տես ի՞նչ ես անում,– կնոջը ձայն տվեց հայրը:

– Պա՛պ, ես լուրջ եմ հարցնում,– իր վրա ուշադրությունը նորից սևեռեց Անին:

– Ես էլ եմ լուրջ հարցնում: Ամբողջ կյանքս քեզնից միայն մի բան եմ լսում. «պա՛պ, մի բան արա՝ Ամերիկա գնամ»,– մի պահ դադար վերցրեց հայրը, հետո նորից շարունակեց հանդիմանել աղջկան:– Ես էլ քեզ երջանիկ տեսնելու համար ոչինչ չեմ խնայի, գիտես: Ու հիմա, երբ տոմսդ ձեռքդ ճամփա էիր ընկել, ինքնաթիռը բաց ես թողել ու եկել, դիմացս կանգնել ու հարցնում ես. «պա՛պ, մեր ամենաաղքատ մարզը ո՞րն է»: Դու ինձ ձե՞ռ ես առնում:

– Պա՛պ, արի՛ խոսենք, ես կփորձեմ բացատրել:

– Նախ մի հատ նե՛րս անցիր: Հետո էլ ես խոսելու ցանկություն չունեմ, ի վիճակի էլ չեմ: Ինչ-որ բան բացատրելու կարիք էլ չկա, հասուն մարդ ես, ի՞նչ ասեմ քեզ: Ուղղակի իմ ջանքերն էին ափսոս: Քո ցանկությունը իրականություն դարձնելու նպատակով ես ամեն ինչ արել եմ, իսկ հիմա դու 180 աստիճան փոխվել ես: Ես քեզնից բան չեմ հասկանում: Նստի՛ր, մորդ հետ խոսի՛ր, կարող է ինքը քեզնից բան հասկանա: Ես դուրս եմ գալիս,– հուսահատ ասաց հայրը և դուրս եկավ տնից:

– Ո՞ւր ես գնում, պա՛պ,– ամաչկոտ հայացքը հոր վրա վախենում էր ուղղել դուստրը:

– Կատարվածը մարսելու,- տնից դուրս գալիս վերջում հասցրեց արտաբերել հայրը:

Մոր հետ Անին ցանկություն չուներ խոսելու. սրտնեղած էր և ուզում էր մենակ մնալ: Մայրը չստիպեց, իրենց ընտանիքում այդպիսի ազատ դրվածք էր. երեխաների կամքին չէին ընդդիմանում: Մեկուսացավ իր սենյակում: Լաց էր լինում, չգիտեր՝ սա էր ճիշտը, թե այնուամենայնիվ գնալը: Մի փոքր անց, չնայած դեռ ռիսկ չէր անում սենյակից դուրս գալ, նախկին ընկճվածությունը սկսում է կամաց-կամաց անցնել: Վերջնական իր համար որոշեց, որ չպիտի փոշմանի երկիրը չլքելու վերաբերյալ վերջին պահին կայացրած որոշման համար: Մի քանի օր էր անցել, բայց դեռ մի քիչ ամոթխածություն էր նկատվում Անիի քայլերում: Անգամ թվացյալ սովորական բաներում, օրինակ տան մեջ տեղաշարժվելու ժամանակ, մի տեսակ վանում էր իրեն բոլորից, խուսափում էր շփվելուց: Հայրը, չնայած բարկացած էր դստեր վրա, սակայն հասկանալով, որ եղածը եղած էր, ու նաև սրտի խորքում իրականում շատ էլ ուրախ էր, որ աղջիկն իր կողքին է մնացել, որոշեց էս աննորմալ վիճակը լիցքաթափել: Մանավանդ, որ ճիշտ էր գլխի ընկել՝ ամեն ինչ իր բարկացած վերաբերմունքից սկսվեց:

– Հը՞ն, բալե՛ս, չե՞մ խանգարի: Ընթերցանությունդ մի քանի րոպեով մի կողմ դնես, խոսենք:

– Չես խանգարի:

– Ասում ես ինչո՞ւ ես էդպես նամռոտած դեմքով գնում-գալիս տան մեջ:

– Նամռոտած դեմքով չեմ, պա՛պ:

– Լավ, նամռոտած չէ, մուննաթով, էս տարբերակը կանցնի՞:

– Չէ՛, դրա հետ էլ համաձայն չեմ,– կիսածիծաղկոտ պատասխանեց դուստրը:

– Իսկ եթե ավելի լուրջ, դեռ նեղացա՞ծ ես իմ «բարեհամբույր» դիմավորումից,– անցավ բուն հարցին հայրը:

– Ինչքան գիտեմ, դու պիտի որ նեղացած լինես:

– Դե հա, դա էլ կա, բայց ինձ մոտ ոնց որ թե բաց է թողնում: Արի մի բան արա՛, թող քեզ մոտ էլ անցնի, ինչ կասե՞ս,– առաջարկեց հայրը Անիին:

– Մի բան կանեմ,– տխուր ձայնով պատասխանեց Անին:

– Դու դեռ չես կարողանում ներել, ինչպես հասկացա,– ասաց հայրը:

– Դա այդպես չի:

– Տես է՝ մի մատ հալով հորը ուզում է ֆռացնել,– բարձրաձայն մտածեց հայրը:

– Ես այդքան էլ փոքր չեմ, պա՛պ:

– Լավ, երկու մատ հալով, դա առանձնապես բան չի փոխում: Բացի դրանից ես քեզ վաղուց փոքր չեմ համարում, եթե փոքր համարեի, այդքան ազատություն չէի տա կյանքդ ուզածդ ձևով տնօրինելու հարցում: Ուղղակի չեմ ուզում համարես, որ ինձ կարող ես խաբել: Ա՛յ դրա համար իսկապես փոքր ես:

– Կներես,– գլխիկոր ասաց Անին:

– Ներում եմ: Հիմա ասա տեսնեմ՝ այդ ադիոզ ուղեղդ ինչ է բրդել, որ որոշեցիր մնալ Հայաստանում:

– Ուզում եմ գործ դնել այստեղ,– սա ասելուց Անիի դեմքը նորից փայլեց:

– Ըհը՛ն, բոլոր երգերը երգել էինք, մնացել էր սարի սմբուլը,– արձագանքեց հայրը՝ աչքերը առաստաղի ուղղությամբ տարուբերելով:

– Է՜հ, պա՛պ, լավ էլի:

– Լավ դե, բան չասեցի, ընդունում եմ ի գիտություն: Տեսնեմ՝ էս անգամ ինչ ես մոգոնելու քեզնից դուրս, նայիր հա՛, խելառություն չանես, թմրանյութի բիզնես, զենքի ապօրինի վաճառք բան, այդպիսի բաներ չլինեն:

– Վա՛յ, պա՛պ, դու վերջն ես:

– Վերջը մերդ է, ես մեջտեղն եմ, բայց ոչինչ այսպես էլ մնա գոհ եմ, չեմ բողոքում:

– Պա՛պ:

– Հը՞ն:

– Մերսի, որ ինձ ու եղբորս էսքան ազատություն ես տվել մտածելու, կառուցելու մեր սեփական «ես»-ն ու չվախենալու սխալ քայլեր անելուց ու դրանց վրա սովորելուց նաև,– շատ հանկարծակի լրջացրեց թեման Անին: – Երեխաներն ասես դատարկ գրատախտակ լինեն, ինչ կգրես, նա էլ կգրվի: Իսկ դու թույլ ես տալիս, որ մենք ինքնուրույն գրենք, չնայած գլխներիս միշտ կանգնած ես լինում, որ լուսանցքը չանցնենք: Կարևորը այն է, որ մենք զգում ենք՝ դա մենք ենք գրում: Հա, ու գրում ենք ոչ թե քո կողմից թելադրված թելադրություն, այլ շարադրություն, որ մենք ենք, մեր ուղեղն աշխատեցնելով, հորինում: Շնորհակալ եմ այդ դժվարագույն գործին, որ կոչվում է դաստիարակություն, այսքան գիտակցաբար մոտենալու համար:

– Ա՛, մի տես է՛, աղջիկս էսօր կպած ինձ ուզում է հուզված տեսնել, ու դա քեզ մոտ ստացվեց գիտե՞ս,– աղջկա խոսքերից թեթև հուզվեց հայրը, մեկ էլ հիշեց, որ մի հոգի էլ տանը կա, որ էլի զավակ է կոչվում: – Էն միհոգավորն ո՞ւր է է՛: Ասա մի օր չֆայմեց՝ քեզ նման էլ ինքը մի խելացի միտք ճպացնի ճակատիս:

– Մի մոռացիր ինձնից փոքր է, աճելու տեղ ունի,– հիշեցրեց Անին:

# Գլուխ 7

2018 թ., ապրիլ-մայիս: Աշխարհի լրատվամիջոցները թափվել էին Երևան: Լուսաբանում էին մեծ հետաքրքրությամբ, բացառությամբ այդպիսի իրադարձություններ չսիրող երկրների լրատվամիջոցներից, որոնք միայն վերջում միացան՝ այն էլ իրենց հարմար մեկնաբանություններով: Էդոն հետևում էր հեղափոխության ընթացքի մասին պատմող լուրերին: Հայրենիքի հանդեպ կարոտը նորից գլուխ էր բարձրացրել: ԱՄՆ-ում գտնվելը չօգնեց նրան, որ կարողանա լիովին մոռանալ լսածն ու իմացածը իր կենսաբանական ծնողների մասին: Նա իրեն հարց էր տալիս. «Ինչո՞ւ եմ ես հիմա հեռու իմ հայրենիքից, քանի որ ինչ-որ դեպքերի բերումով ճիշտ գտա հեռանա՞լ, բայց հայրենիքն ի՞նչ մեղավոր էր»: Էդոյի գործունեությունը, անկախ նրանից, թե որտեղ է ինքը գտնվում, եռում էր ու անընդհատ ավարտված նախագծերին փոխարինելու էին գալիս նորերը: Սակայն մեր հերոսը սովորություն ուներ կտրուկ և անկանխատեսելի շրջադարձեր կատարել: Դրան բոլորը սովոր էին և իմունիտետ ունեին: Նայում էր հայաստանյան ցույցերի կադրերը և որոշեց՝ գնում է:

2018 թ.-ի հունիսն էր: Հայաստանը նույն իր տեղում կանգնած էր, նույն տեղադիրքն ուներ, ավիատոմսերն ինչպես միշտ թանկ էին: Արարատն էլ մի սանտիմետր անգամ չէր շեղվել իր տեղից, չնայած շատ կուզեր մի քիչ ձգվել դեպի մեզ: Բայց իրականում ամեն ինչ էլ ուրիշ էր: Մարդիկ ուրիշ էին, ուրեմն և երկիրն էր ուրիշ: Էդոն եկել էր ոչ պակաս «ոգևորության բագաժով»: Նա մեծ պլաններ

ուներ: Այնքան շփոթված էր, որ առաջին անգամ չէր կողմնորոշվում, թե ինչից սկսել: «Մեզ պետք է մի մեծ համակարգված ու սինխրոն աշխատող շղթա ստեղծել երգարվեստի ու նրան անմիջականորեն հարող այլ ոլորտներում, այդ ամենը պետք է աներևակայելի սիրուն ձևով և ճաշակով կապիտալիզացնել». բարդ-բարդ նախադասություններ էր իրար հետևից շարում մեր հերոսը: Թանկարժեք լուսային և ձայնային տեխնիկա էր բերել Հայաստան, որը համաշխարհային որակի համերգներ ստանալու համար պարտադիր նախապայման էր: Իր հետ աշխատած օտարերկրյա մասնագետների մի խումբ էլ հրավիրել էր այստեղ, որ օգնեն ու սովորեցնեն սկզբնական շրջանում մեր մասնագետներին տեխնիկապես կայանալու համար: Նա հավատում էր հայերի ներուժին, գիտեր, որ այն կա, ուղղակի պետք է մեկ տեղում բոլորին հավաքել: Նպատակադրվել էր աշխատել երգի ասպարեզում արդեն իսկ հայտնի դարձած որոշ հայ աստղերի հետ, ընթացքում բացահայտել նորերին: Թե՛ հայտնիների, թե՛ սկսնակների հարցում ընտրությունն իրենն էր, առաջարկն ինքն էր անում: Այդ ամենի հետ մեկտեղ իրար գլուխ հավաքեց արդեն գործող պարախմբերին, երգահաններին, գործիքավորողներին, դիզայներներին, կլիպմեյքերներին, օպերատորներին, համերգների նախապատրաստման տեխնիկական անձնակազմին և այլոց: Միևնույն ժամանակ անհրաժեշտ էր պատրաստել նոր կադրեր նաև նրանց շրջանում: Նա ցանկանում էր դրայվերի դեր ստանձնել այլ տաղանդավորների համար: Համոզված էր, որ համապատասխան պրոֆեսիոնալ կրթության և պրակտիկ մեծ փորձի կուտակման շնորհիվ հնարավոր է ընտիր կադրեր ունենալ: Մեծ թիմ էր հավաքվել, ամենուր եռուզեռ էր, բոլորը շտապում էին, որովհետև շտապում էր Էդոն:

2018 թ.-ի սեպտեմբերի վերջին առաջին համերգները կայացան՝ սկզբում երկու շաբաթը մեկ, իսկ հետո, երբ անձնակազմը բավականին համալրվեց, մեծացավ՝ ամեն շաբաթ: Տոմսերը այդքան էլ թանկ չդրեց. բնակչությունը վճարունակ չէր, իսկ Էդոն ցանկություն չուներ համերգին եկած տեսնել ասենք 5 հոգու և վերջ:

Նա ինքնանպատակ չէր գործում, ցանկանում էր մշտական տոն պարգևել իր ժողովրդին, իսկ ո՞ւմ էր պետք այդ տոնը, եթե ժողովրդի մեծ մասը չէին կարողանալու այն իրենց աչքերով տեղում տեսնել, չհաշված իհարկե, որ հանրային հեռուստատեսությամբ բնականաբար ցուցադրում էին: Էդոն, օգտագործելով իր կապերը մի շարք արտասահմանյան հայտնի երաժշտական և ոչ միայն երաժշտական հեռուստաալիքների հետ, կարողացավ թույլտվություն ստանալ հեռարձակելու Երևանում տեղի ունեցող համերգները, մերոնց նկարահանած տեսահոլովակները և այլն: Ինչո՞ւ էր սա պետք, քանի որ Էդուարդը գիտեր՝ միայն Հայաստանի շուկայի վրա հենվելով տանուլ է տալու: Երկար չէին ձգի, քանի որ ծախսերը շատ էին արվում, որովհետև ուզում էին կատարյալ որակ ստանալ, իսկ եկամուտը քիչ էր լինելու: Դրա համար անպայման հենց սկզբից անհրաժեշտ էր ներգրավել աշխարհը: Շուտով նախաձեռնվեց նաև ինքնուրույն մեդիա դաշտի ստեղծումը հենց միայն մեր ստեղծած կոնտենտի համար: Այսինքն՝ բացվեց առանձին հեռուստաալիք մի քանի լեզուներով, լայն սփռման սպեկտրով, որում ցուցադրվում էին համերգները, համերգների և տեսահոլովակների նախապատրաստման և ստեղծման ընթացքը, զվարճալի դրվագները, մի խոսքով՝ նաև «backstage»-ը: Հաջողվեց. լայն մասսաներ մեծ հետաքրքրություն ցուցաբերեցին հայաստանյան շոուների նկատմամբ, իսկ դա բերեց մեր երկրի հանդեպ հետաքրքրության բազմակի աճի: Դիտումները ռեկորդներ էին խփում: Համերգների ժամանակ հաճախ ցուցադրվում էին Հայաստանի գեղատեսիլ բնությունը, պատմամշակութային ժառանգությունը պատկերող կարճ տեսանյութեր առանց պատմելու, առանց խոսքի, ուղղակի պրոֆեսիոնալ մոնտաժով: Երբեմն կադրերը ավելին են խոսում, ավելի են գրավում, քան չոր պատմություն պատմելը: Դա մեծապես նպաստեց տուրիզմին: Տարբեր երկրներից ուզում էին գալ տեսնել, թե ինչ երկիր է սա, հատկապես երիտասարդությունը, որ տարված էր իրենց համար նորահայտ հայ աստղերով: Շատերն առաջին անգամ էին լսում մեր երկրի մասին և այս պռոեկտի շնորհիվ հիացմունքով խոստովանում էին, որ

ուզում են գալ ու ծանոթանալ երկրին ու մշակույթին: Բացի դրանից տուրօպերատորները իրենց հայաստանյան ուղևորությունների մեջ արտասահմանցիների համար նաև այդ համերգների տոմսերն էին կցում, ինչը բնականաբար մեծացնում էր հավանականությունը, որ զբոսաշրջիկը կնախընտրի շրջագայել Հայաստանով:

Ձևավորվեց երգահանների, գործիքավորողների լուրջ թիմ ինչպես հայ, այնպես էլ այլ ազգերի ներկայացուցիչներից, որոնք աշխատում էին բարձրորակ, համաշխարհային որակին ընդհանրապես չզիջող գործեր ստեղծելու վրա: Հաճախ երգերը մերոնք համեմում էին ազգային մոտիվներով առաջ բրդելու համար հայկականությունը: Ազգային (հայկական), դասական, հոգևոր, փոփ, ռոք, օպերա, ջազ, բլյուզ, ռեպ և այլն, և այլն... մի խոսքով ստեղծագործելու ու տարբեր ոճերի խառնուրդներ փորձարկելու խրախուսող հարթակ էր: Ոչինչ արգելված չէր, միայն թե սիրուն բան ստացվի: Երգերի ամենահաճախ հնչող լեզուներն էին հայերենը, անգլերենը, ֆրանսերենը, ռուսերենը, հատկապես ռուսական ֆոլկ երաժշտության ժամանակակից երանգներով միքսերը: Երբեմն հնչում էին նաև այլ լեզուներով ստեղծագործություններ: Այս ամենին մասնակցելու համար հետաքրքրություն սկսեցին հայտնել օտարազգի կատարողներ ևս: Երբեմն նրանք էլ էին հանդես գալիս, սակայն աշխատում էին մեր աշխատանքային թիմերում, որպեսզի ձեռագիրը պահվի: Էդոյի համար համար մեկ կանոնն էր՝ միայն կենդանի ձայն: Երաժշտական համարները բարդ էին, լի շարժունակությամբ, մեծ էներգիայով և վայրկյանական ճշգրտություն էին պահանջում: Ամենածանր դերը երգիչ-երգչուհիներինն էր: Դրայվ պարունակող երգերի դեպքում, նրանք պետք է այդ դրայվը քառապատկեին երգելով և պարելով միաժամանակ, իսկ հուզական կատարումների դեպքում դերասանական խաղի ու բեմադրությանը համահունչ էներգիան նախ պիտի զգային սեփական նյարդերով, հետո այդ զգացումները սփռեին ամբողջ դահլիճով մեկ: Գործի դրվեց մեծածավալ և թանկ լուսային էֆեկտների, օպերատորական հմտության ու պարային խորիոգրաֆիայի հետ

միասին բեմադրական կրեատիվ մտքերը կյանքի կոչելու մեծ մոտիվացիոն շարժում: Գնալով մեծացող մասշտաբը պարտադրում էր շատ կարճ ժամանակում ստեղծել բազմաթիվ նոր աշխատատեղեր ինչպես օժանդակող և կազմակերպչական օղակներում, այնպես էլ բուն ստեղծագործական թիմերում: Դրա համար ստեղծվեց այդ հսկա կառույցի անմիջական կառավարման տակ գտնվող ուսումնական կորպուս, որն իր ծավալներով շատ մեծ էր Հայաստանի համար: Այն նոր չկառուցվեց. այդքան ժամանակ չկար, այլ տարածքներ վերցվեցին, արդեն կառուցված շինություններով և որոշ կոսմետիկ վերանորոգումից հետո դրանք հարմարեցվեցին անհրաժեշտ պահանջներին: Այդտեղ քիչ փորձառություն ունեցող, սակայն մեծ պոտենցյալի տիրապետող ապագա թիմակիցների հավաքագրման և նրանց ինտերակտիվ և արագ ուսուցման կամ վերապատրաստման գործընթացն էր տեղի ունենում:

Որակը վերահսկվում էր վերևից՝ համապատասխան մասնագիտական խորհրդի կողմից: Ամեն ինչ կանոնակարգում էր մեկ ադմինիստրատիվ կենտրոն և այն պետք է ապահովեր և կազմակերպեր մնացած բոլոր օղակների աշխատանքը: Այսպիսով երգիչները, բեմադրիչները, պարողները, երգահանները, գործիքավորողները, կլիպմեյքերները, լուսանկարիչները, դիզայներները և այլոք կարող էին կենտրոնանալ միայն ստեղծագործելու վրա: «Ստեղծեք ճաշակովը, ստեղծեք յուրօրինակը, ստեղծեք ստանդարտից դուրսը, ստեղծեք՝ ինչ ուզում եք, բայց այնպես, որ արժեք ունենա, քանակի վրա չենք գնում: Տրված ազատությունն օգտագործեք ճախրելու համար, հաճույք ստացեք ձեր ամենօրյա կատարելագործումից, այլ ոչ ձեր՝ օրեցօր ավելացող եկամուտներից: Եթե կենտրոնանաք փողի վրա, ճախրանքը կկանգնի, կընկնեք ցած». մատնանշում էր Էդուարդը:

Երաժշտական պրոդյուսերների համար էլ էր հեշտ մեկ ընդհանուր կառույցի հովանու ներքո աշխատելը տարբեր թիմերի հետ: Դա ավելացնում էր արդյունավետությունը՝ մի կողմ թողնելով հաճախ նյարդայնացնող և իրենց ժամանակի առյուծի բաժինը խլող

կազմակերպչական թոհուբոհը: Գործընթացն ավելի կազմակերպված էր, խնդիրներն անհամեմատ արագ էին իրենց լուծումները ստանում: Արդյունքում՝ ծավալը մեծանում էր, ոլորտում շրջանառվող փողի շրջանառությունը ևս ու համապատասխանաբար ստեղծում ավելի մեծ նոր արժեք, ուրեմն հարկերի ավելի մեծ բազա, հետևաբար պետական բյուջեի եկամուտների աճ: Այս ամենը ազդակ հանդիսացավ նաև այլ ոլորտներում խանդավառության համար: Այսինքն՝ մշակույթը հաղթեց կամ ավելի ճիշտ մշակույթով հաղթեցինք: Այն օգնեց երկրին հաղթել «սեփական «ես չեմ կարող»-ին»: Փոքր երկրում իրականում հեշտ է, այն կարող է դինամիկ աճել, ուղղակի «մատոռն» է միացնել պետք:

Այսպես հավեսով թափ էին հավաքում, մեկ էլ էլի հայի բախտ՝ այս անգամ անունը կորոնավիրուս: Խուճապահար թպրտալ, պանիկա-մանիկա և էլի նման բաներ, չէ՛, սրանք հաստատ Էդոյի մասին չեն: Պրպտում էր ելքեր: Իսկ դրանք միշտ կան: Ժամանակավորապես դադարեցվեց համերգների հեռարձակումը դրա համար բացված հեռուստաալիքով, միայն «backstage»-ի հատվածներն ու հարցազրույցները թողնվեցին: Համերգները նույն հունով կազմակերպվում էին դատարկ դահլիճներում: Դրանք հեռարձակելու կամ գաղտնի նկարահանելու և Youtube-ում, ինչպես նաև այլ կայքերում կամ սոցիալական հարթակներում տեղադրելը բացառվում էր: Միակ տարբերակը դրանք դիտելու, դա հատուկ սարքված օնլայն պորտալն էր, որտեղ օնլայն տոմսեր պետք է վաճառվեին: Այս կամ այն համերգային համարը կամ ընդհանրապես համերգն ամբողջությամբ դիտել ցանկացողները այցելում էին այդ հարթակ, վճարում և դիտում ելույթը կամ ելույթները, նայած, թե ինչի համար են կոնկրետ վճարել: Սա ևս սկսեց աշխատել: Այդպես շրջանցեցին նաև այդ անհայտ արարած կորոնային: Մերոնց փրկեց այն, որ անցած 2019 թ.-ին կարողացել էին այնքան մեծ ճանաչում բերել իրենց պրոեկտին, որ, տեղում դիտելու համար վճարվելիք տոմսի գումարը բավականին էժանացնելով, օտար երկրներից, ինչպես նաև Հայաստանից օնլայն դրանք դիտելու

համար ավելի մեծ թվով վիրտուալ հանդիսատես էր հավաքվում, քան նախկինում՝ իրական:

***

Գյումրի, 2020 թ., օգոստոս ամիսն էր: Հատված երիտասարդների հետ կազմակերպված հանրային քննարկման հարթակի զրույցներից, որտեղ հատուկ հյուրն էր Էդուարդը: Նա իր մտքերն էր կիսում այդտեղ հավաքված հայ պատանիների, երիտասարդների և տարբեր բուհերի ուսանողների, մի խոսքով՝ ապագա սերնդի հետ: Մասնակիցները, որոնց քանակը սահմանափակ էր, հավաքվել էին բացօթյա մի հարմարավետ վայրում, դիմակներով, իրարից հեռու նստած՝ ինչպես պահանջում էր օրվա հրամայականը:

**Էդուարդ:** Երիտասարդությունը ցանկացած երկրի լույսն է, բառիս բուն իմաստով: Այն փայփայել է պետք: Հնարավորություններ է պետք ստեղծել աշխատող, եռանդուն և էներգիայի ծով պայծառ երիտասարդության համար սեփական երկրում կայանալու և արժանավայել ապրելու համար: Այն երկիրը, որ այդ խնդիրը մի կողմ է շպրտել և երկար տարիներ չի զբաղվում ու ցանկություն էլ չի ցուցաբերում զբաղվելու դրանով, երկարաժամկետում կործանված է:

**Էդուարդ:** Նկատել եմ հաճախ մասնագիտություն ընտրելիս վազում եք պրիստիժի և մոդայի հետևից: Պետք չէ եղանակի տեսությանը հետևել, եղանակ ստեղծողը դուք եղեք: Անհատականություն լինելը կարևոր է: Անհաջողակ մարդ գոյություն չունի աշխարհում: Չկա այդպիսի բան, չհավատաք: Խնդիրը այն է, որ ոչ բոլոր մարդիկ են կարողանում իրենց կյանքի ընթացքում պարզել, թե որն է իրենց իսկական առաքելությունը: Ոմանք չեն էլ փնտրում: Կողմնորոշվելու հարցը լուրջ է: Ցանկացած մարդ տաղանդավոր է ինչ-որ մի բանում: Մնում է գտնել այդ բանը: Դա հենց ինքը տվյալ մարդը պիտի անի, ո՛չ ծնողները, ո՛չ բարեկամները, ո՛չ ընկերները, ո՛չ համադասարանցիները: Ձեզանից լավ ոչ մեկ չի կարող զգալ, թե դուք ինչ եք ուզում:

**Էդուարդ։** Ենթադրենք ունեք մի հատ շատ հավես գաղափար, ասել եմ չէ՞, հիմա գաղափարների դար է, ու ուզում եք այն կյանքի կոչել։ Հիմա ի՞նչն եք կարևորում այդ ճանապարհի վրա։

Ներկաներն արձագանքում են՝

– Խելացի գործելը, լավ գործընկերներ գտնելը, ժամանակ չկորցնելը, բախտը, վճռականությունը, հավատը, ճկունությունը, քթածակը, գիտելիքը, լավ թիմ հավաքելը...

**Էդուարդ։** Քթածակը լավն էր, բախտը ևս։ Իսկ եթե ավելի լուրջ, ինչ ասում եք, ճիշտ եք ասում, ստորագրում եմ ձեր բոլոր ասածների տակ, սակայն մի կարևոր բան մոռանում եք։ Այդ ամեն ինչը չի լինի, եթե չլինի առաջին քայլը, իսկ առաջին քայլը չի լինի, եթե չլինի այդ առաջին քայլն անելու համար ռիսկի գնալու դրդումը, որը կծագի ձեր մեջ, եթե կարողանաք հաղթահարել ձեր ներքին վախերը։ Որո՞նք են դրանք, օրինակ՝ «վա՛յ աման, բա ես կկարողանա՞մ որ..... ինձ ո՞վ կօգնի..... չէ՛, ես հաստատ կձախողեմ, ես չգիտեմ ինչպես անել....., ես փորձ չունեմ, ինձ մոտ ոչինչ չի ստացվի..... լավ բա ոնց եմ անելու, ինչից սկսեմ, չէ՛, ավելի լավ է չսկսեմ.....»։ Ասելու եք չէ՞ նման բաներ ձեր մտքում։ Սրանք այն առաջին խոչընդոտներն են, որոնց բախվելու եք։ Պետք է կարողանաք արագ փլատակների վերածել այդ մտքերը, եթե դա կարողացաք անել ձեր ուղեղում, կկարողանաք անել նաև իրական կյանքում։ Շարունակեմ, ընթացքում էլ են չէ՞ լինելու լիքը անախորժ բաներ։ Նման դեպքերում առաջինը ի՞նչ եք անելու։ Իհարկե, փնտրում եք արդարացումներ։ Սա այսպես չեղավ, որովհետև....... մյուսը այնպես չեղավ, որովհետև......։ Էդ որովհետևները միշտ հեշտ է գտնել, ընդհանրապես դրանից հեշտ բան չկա։ Բայց դուք փորձեք այնպես անել, որ այդ որովհետևների կարիքը չլինի, կամ եթե այդուհանդերձ կա, մի ֆիկսվեք դրանց վրա։ Օրինակ՝ կորոնա է չէ՞։ Մեր ոլորտին ահավոր խփած ունի։ Այո՛, հենց խփած, եթե չասեմ նոկաուտ, որ լրիվ գույները չմգացնեմ։ Բայց մի թեթև վհատության նշույլ իմ դեմքին կամ իմ քայլերում նկատո՞ւմ եք, ո՛չ։ Միկրոսկոպով փնտրեք, չեք գտնի։ Կորոնա է, հա ի՞նչ անենք, առանց

փնթփնթալու սկսում ենք մտածել, թե ինչպես շրջանցել այդ չկանխատեսված անախորժությունը:

**Էդուարդ:** Էրեխե՛ք, հիմա ուզում եմ թեման փոխենք, մի քիչ ուրիշ բաներից խոսենք, ավելի ընդհանրական, բայց էլի կարևոր: եկեք խոսենք մեր մասին՝ հայերիս: Մենք մի ծայրահեղությունից «թռնում» ենք մյուս ծայրահեղությունը: Այդ ընթացքում էլ չենք փորձում մի հատ ստոպ տալ ու մտածել՝ ինչու ենք «թռնում» և ուր ենք «թռնում» կամ ինչից ենք «թռել», որ այստեղ ենք հասել: Մենք մի օր կարող ենք աստվածացնել մեկին, հաջորդ իսկ օրը քարերով խփել: Ո՛չ աստվածացնել է պետք, ո՛չ էլ քարերով խփել: Ենթադրենք ինչ-որ մեկին շատ ենք սիրում կամ հարգում նրա վաստակը, հպարտանում այդ անձնավորությամբ: Հենց նա մեր ընկալմամբ մի սխալ քայլ է անում, գնաաաաա՜ggg հայհոյանքը, անպատվելը, «չէ՛, դու հայ չես» և նման արտահայտությունների տարափը պատրաստ է այդ մարդու հասցեին, ընդ որում կապ չունի, թե ով է: Ա՛խր, զգո՞ւմ եք՝ դա նորմալ չի: Սառը դատելու հետ սեր չունենք: Մեր ազգը ապրում է էմոցիաներով, բայց պետք է ապրել ուղեղով: Մեր ազգը ապրում է երազանքով, բայց պետք է ապրել նպատակով: Անցյալով հպարտանալու ու ծովից ծով Հայաստանի մասին նոստալջիայի սկավառակը օրը 24 ժամ պտտեցնելու փոխարեն, չպիտի ալարենք մեզ մի հատ հիմա նայենք: Անցյալի պատմությունը սովորում են, ապագան՝ կառուցում, ոչ թե անցյալի կառուցված պատմությամբ ապագան երազում: Արարատի մասին պետք չէ երազել, այլ պետք է մտածել, թե որն է քո առաքելությունը այսօր որպես հայ մարդ, ինչ պիտի անես դու կյանքումդ, որ մի միլիմետրով այն մոտեցնես քեզ: Մի միլիմետրը ուղիղ իմաստով չհասկանաք: Եթե այդ գիտակցումը լինի բոլորիս մոտ, ապա 3 միլիոն միլիմետրով չէ, բայց ասենք քո կողմ նայելն անգամ նվաստացուցիչ համարող թշնամուդ կպարտադրես հարմարվել քեզ հետ հաշվի նստելու իրենց համար խիստ անհարմար և «սպանիչ» կարգավիճակին: Որպեսզի պետությանդ բանի տեղ դնեն, այն պետք է հզոր լինի: Ո՞վ է հզորացնելու, մենք, ուրիշ ոչ ոք: Իսկ մենք ի՞նչ ենք անում: Ման ենք գալիս քիչ առաջ իմ

կողմից ասվածը... ճի՛շտ եք.... որովհետևները: Էդ որովհետևներն էլ Աստված տվել չի խնայել: Ճակատագիր է, հիմա ի՞նչ ասեմ, հետը պայմանավորվել չի լինում: Միայն այժմեականներից խոսենք հերիք է. դե էլ որ մեկն ասեմ՝ պատերազմ, շրջափակում, գեոպոլիտիկ խաչմերուկ, որում պետք է շատ զգույշ խաղալ, թե չէ կտորրեն: Մեծածավալ ներդրումների հեռանկարն էլ եթե կա, ապա դե արի էդքանը բացատրի օտարերկրյա ներդրողներին, որոնք մի քանի կցկտուր բաներ են լսում այստեղից-այնտեղից Հայաստանի մասին, ու ռիսկ չեն անում քայլ անել: Մեր երկիրը Շվեյցարիայի նման անուն հանած չի, հասկացե՛ք, պարզապես չգիտեն մեր մասին: Քարտեզն էլ, որ բացում նայում են, մինիմում մի կես ժամ խոշորացույցով ման պիտի գան, որ գտնեն: Իսկ Շվեյցարիան այնպես է արել, որ չնայած փոքր է, բայց արի ու տես՝ մարդիկ իրենց տեսողությունների հերը չեն անիծում քարտեզի վրա այն փնտրելու ընթացքում, որովհետև չեն էլ փնտրում, գիտեն տեղը: Այո, մեր այսօրվա թույլ վիճակը արդարացնող լիքը հանգամանք կա, անթիվ-անհամար: Հիմա ի՞նչ, նստենք, լացենք ու ասենք էս երկիրը երկիր չի դառնա ու վե՞րջ, գնացինք էստեղից: Սա ճանապա՞րհ է: Միգուցե քեզ համար անհատապես, այո՛, ճանապարհ է, բայց երկրիդ համար՝ ոչ, իսկ եթե երկիրդ իսկապես թանկ է քեզ համար, ապա նրա ճանապարհը քո ճանապարհը պիտի լինի: Դուք նույն եք: Դուք երկուսդ էլ Հայաստան եք: Հիմա կասեք՝ ձայնս տաք տեղից է գալիս: Մարդկանց կյանքն այստեղ դժվար է, ընդունում եմ: Ընտանիք չեն կարողանում պահել: Բա իմ արածն ի՞նչ է, ի՞նչ եմ ըստ ձեզ ես անում, եկել եմ այստեղ, արժանավայել բարձր աշխատավարձով լիքը աշխատատեղեր եմ բացել ու մարդկանց եմ սովորեցնում ու վերապատրաստում, որ մասնագետ լինեն, փող աշխատեն ու ընտանիք պահեն կամ չվախենան կազմել, քանի որ արդեն ֆինանսապես ապահովված են իրենց զգում: Ըստ ձեզ սա ի՞նչ է: Սա իմ բաժին պատասխանատվության ստանձնումն է իմ հայրենիքի առջև: Այն ամենը ինչ ես նախաձեռնեցի այստեղ, հաստատ ավելի հեշտ էր անել մեկ այլ ավելի հարմար ու արդեն պատրաստի ենթակառուցվածքներ

ունեցող հարուստ երկրում, սակայն ես նախընտրեցի Հայաստանը, որովհետև Հայաստանի ուրախությամբ ուրախանում եմ նաև ես: Իմ գլխավոր նպատակն էր Հայաստանը իմ գործունեության կենտրոն դարձնելը, նրա անունը աշխարհում նոր մակարդակի հանելը, որ մեր երկրի մասին դրականը խոսեն և ուզենան ճանաչել մոտիկից: Սա է հայրենասիրությունը: Եթե շատերը, ովքեր հնարավորություն ունեն իրենց հայրենիքին հենց հայրենիքում օգտակար լինելու, համապատասխան քայլեր անեն, բոլորիս համար հեշտ կլինի: Դժվարությունները երկրի մասշտաբով ավելի արագ կհաղթահարվեն: Հետևաբար այդ անիմաստ հայրենիքապաշտ կենացները պետք է դնել մի կողմ և ռեալ գործի անցնել:

**Էդուարդ:** Հիմա, օրինակ, որ ձեզ հետ խոսում եմ, գիտե՞ք՝ ինչ հեշտ ու կարճ ճանապարհի եմ գտել, որ այստեղ հասնեմ, և որ դուք ինձ ուզենաք լսել, դուք՝ բոլորդ, դուք՝ բոլոր հայերդ, նաև ինչու ոչ Հայաստանն ինձ ուզենա լսել: Ասեմ, թե որն է այդ կարճ ճանապարհը: Պետք է գնաս արտասահման, ցանկալի է զարգացած, անուն հանած մի երկիր: Այնտեղ կայանաս, հայտնի դառնաս, ճանաչում ձեռք բերես ու նոր հետ գաս Հայաստան, որ քեզ բանի տեղ դնեն, հաշվի նստեն, քո խոսքն արժեք ունենա, միկրոֆոններով «գցվեն վրադ» ու աղաչեն, պաղատեն, որ իրենց մի խոսք բաշխես: Ի՜նչ հավես եք ծիծաղում, ժողովո՛ւրդ: Կայֆ էր չէ՞, բայց լացելու բան է: Սա ենք մենք, մենք մեր կողքինին գնահատել չգիտենք, երբ նա մեզ այնքան մոտ է, բայց երբ գնում ու դառնում է հայտնի, ընկնում ենք հետևից, որ իր ինստագրամում կամ ֆեյսբուքում մի հատ մեկնաբանություն թողնի Հայաստանի մասին: Մեռնելու աստիճան երջանկանում ենք, երբ լսում ենք, որ ինչ-որ մի հայտնի անձ աշխարհում ասում է, որ ինքը Հայաստանից է կամ հայկական արմատներ ունի: Բայց երբ նման մի տաղանդ հենց քթներիս տակ է և ուզում է իր ուղին հարթել այստեղ, չէէէէէ՜, ո՞նց կլինի, բա դա լինո՞ղ բան է, հո դու գի՞ժ չես, կտրորեն-կանցնեն, որովհետև մրցակցությունն ընկալում ենք որպես «մնացածի տակը փորեմ, թքած, թե ինձանից հազար անգամ տաղանդավոր են: Նրանց ռելսերից գցեմ, որ

ընդհանուր ֆոնի վրա ես առաջինը երևամ» տրամաբանության մեջ: Սա կործանարար է, ժողովո՛ւրդ, պիտի գոնե փորձ անենք մեզ փոխել: Հասկացե՛ք, աշխարհում դա չի աշխատում, մեզ մոտ այ էդպես ծուռ է ամեն ինչ: Ու դա մեր պրոբլեմն է: Ամոթ չէ սեփական պրոբլեմները քննարկելը, ամոթը դրանք ամեն գնով թաքցնելն է և չխոսելը:

Հանդիպման ավարտից հետո Էդոն շարժվեց փողոցի կողմ, երբ մի աղջիկ շտապելու պատճառով կտրեց նրա ճանապարհը:

– Վա՛յ, կներեք, միամիտ ստացվեց,– ներողություն հայցեց աղջիկը:

– Ոչինչ, ոչինչ, Անի դո՞ւ ես,– միանգամից տեղը բերեց նրան Էդոն:

– Հա ես եմ... էդ էլ Դուք եք,– ժպտալով ասաց Անին:

– Դու ԱՄՆ չէի՞ր մեկնում,– հետաքրքրվեց Էդուարդը:

– Իսկ հիմա ըստ Ձեզ որտե՞ղ եմ,– տարօրինակ պատասխան տվեց Անին:

– Եվ որտե՞ղ ես,– արդեն պատասխանը կռահելով՝ համենայն դեպս հարցրեց Էդոն:

– ԱՄՆ-ում, իմ Ամերիկան այստեղ է,– ուրախ-ուրախ պատասխանեց Անին:

– Հա՛, պարզ է, պարզ է: Փաստորեն ասածներս տեղ են հասել,– իր համար արձանագրում կատարեց Էդոն ու հանկարծ շարունակեց երգելով,– մի բալա՛ է է՛ս իմ յա՛րը.... Չե՞ս ուզում իմանալ՝ ով է իմ յարը:

– Չէ՛, չեմ ուզում, – մանկական բարկությամբ ձեռքերը թոթվեց Անին, մեկ էլ մի քանի վայրկյան այդպես խռոված մնալուց հետո հարցրեց,– և ո՞վ է:

– Դիմացս կանգնած դեբիլ-դեբիլ դուրս է տալիս,– քամահրական լրջություն հաղորդող ձայնով ասաց Էդոն:

– Նեռվի դե՛ղ, զզվում եմ քեզանից,– ուզում էր հարձակվել վրան Անին, բայց Էդոն ձեռքը բռնեց, չթողեց:

– Լավ, լիրիկան մի կողմ, ի՞նչ գործի ես, եթե լուրջ,– հարցրեց Էդոն:

– Հագուստի մոդելավորմամբ զբաղվող ընկերություն եմ հիմնել: Արդեն երեք մասնաճյուղ ունենք՝ երկուսը այստեղ՝ Գյումրիում, մեկն էլ Վանաձորում,– հանդարտվեց նորից Անին:

– Հրաշալի է: Դու էլ ինձ պետք ես: Գնացինք ինձ հետ,– ձեռքը բռնեց և դեպի իր մեքենայի կողմ տարավ Անիին Էդոն:

– Հե՜յ, մի րոպե՛ այդ ո՞ւր ես ինձ տանում,– ընդդիմացավ Անին:

– Ճանապարհին կասեմ,– միջանկյալ պատասխան տվեց Էդոն:

Անին միացավ Էդոյի թիմին: Նրանք ավելի մտերմացան: Ինչպես և կռահելի էր, Էդոն անտարբեր չէր Անիի նկատմամբ: Նա միանգամից հասկացել էր՝ այս աղջիկն իր համար է ծնված: Գյումրիում պատահաբար նրա հետ հանդիպելը ճակատագրի նվեր էր համարում: Այս անգամ նա հաստատ ձեռքից բաց չէր թողնի այս աղջկան, ով գերել էր իր սիրտը դեռ մի քանի տարի առաջ Հանրապետության հրապարակում ունեցած իրենց կարճատև զրույցի ընթացքում:

# Գլուխ 8

Մութ ու ամայի ճանապարհ… վարորդը սև գույնի մեքենան դանդաղ վարում էր, չէր շտապում: Ինչո՞ւ շտապեր, զգուշավորությունը միշտ էլ պետք է, մանավանդ գիշերվա հազարին: Մեկ էլ մեքենայի միջից բացվեց մի այնպիսի տեսարան, որն անհապաղ ու առանց մտածելու քայլերի դիմել կտար յուրաքանչյուր տղամարդու: Մեքենայի լուսարձակները ցույց տվեցին, թե ինչպես ճանապարհի եզրին մի անօգնական աղջիկ հայտնվել էր շնագայլի թիրախում: Դեռևս հեռու էր, բայց մոտենում էր աղջկան, իսկ աղջիկը սարսափահար կուչ էր եկել: Երիտասարդը անմիջապես կանգնեցրեց ավտոմեքենան ու վայրկյանական դուրս թռավ միջից: Աղջիկն իր կտորից պայուսակով փորձեց հարվածել գիշատչին, սակայն վերջինս ժանիքներով թեթև քրքրեց պայուսակը ու մի կողմ նետեց: Պատրաստվում էր աղջկա վրա հարձակվել, բարեբախտաբար հայտնվեց այն երիտասարդը: Մեքենայից հանել էր փայտե երկար մի ձող: Այդ փայտի օգնությամբ դրան քշեց հեռու, մի թեթև էլ քերծվածք ստացավ ուսին: Երբ վեր կացավ ու կարգի հրավիրեց իրեն, նկատեց, որ աղջիկը ոչ պակաս սարսափած է նաև իրենից: Չհասկացավ, թե ինչու, և որոշեց խոսք բացել.

– Մենակ թե չասես, որ դու այստեղ ժամադրության էիր,– հազիվ շունչը տեղը բերելով՝ ասաց երիտասարդը, սակայն տարօրինակ կեցվածք նկատեց աղջկա կողմից, ուստի շարունակեց հարցուփորձը: – Ոնց որ ես ավելի վախենալու եմ հա՞ քեզ համար: Աչքիս

չպիտի խառնվեի, էն կենդանու հետ լավ էլ լեզու էիր գտնում,– հեգնանքով ասաց տղան, ապա մի պահ դադար առնելով՝ նորից շարունակեց,– ո՞վ ես, ի՞նչ ես անում այստեղ:

Դիմացը քար լռություն, ոչ մի պատասխան: Այնպիսի տպավորություն էր, որ իրոք չի հասկանում՝ ինչ են իրեն ասում: Աղջկա շարժունձից երիտասարդը վերջապես գլխի ընկավ, որ կարող է ուղղակի չի հասկանում: Մինչև գլխի ընկավ, աղջիկը փորձեց փախչել նաև իրենից: Վազեց հետևից, կանգնեցրեց, ու քրքրված պայուսակի միջից թուրքական դրոշն աչքը ծակեց: Այդ պահին մի փոքր տհաճություն զգաց, բայց այնուամենայնիվ խոսակցությունը սկսեց այլ կետից.

– English?,– հարցրեց երիտասարդը:

Աղջիկը գլխով արեց, ու ժպիտ հայտնվեց դեմքին, ասես դրանով փորձեց բացատրել, որ վերջապես ծանոթ մի բառ է լսել նրանից: Հետագա շփումը շարունակեցին անգլերենով:

– Արթուր,– ներկայացավ երիտասարդը:

– Անգյուն,– իր անունը արտաբերեց աղջիկը՝ ի պատասխան երիտասարդի ծանոթության առաջարկին:

– Թրքուհի՞ ես,– ճշտող հարցով նորից լռությունը խախտեց Արթուրը՝ նայելով քրքրված պայուսակի միջից կիսատ երևացող պատռված դրոշին:

Գլխի դրական շարժումով հաստատեց աղջիկը:

– Արի՛, գնացի՛նք: Մեքենան մի փոքր հեռվում մնաց, գնանք, քանի դեռ էդ անտեր կենդանին ավելի մեծ ընկերական շրջապատով չի հայտնվել: Գիտես, որ սովորաբար այդպես են վարվում, ու այդ ժամանակ ո՛չ ես, ո՛չ էլ դու դրանց ձեռքից պրծնողը չենք:

Սակայն աղջիկը չէր ցանկանում սկզբում ենթարկվել, ընդդիմանում էր: Վախենում էր նրանից ոչ պակաս, քան գիշատչից:

– Լսի՛ր, հիմա ձևերի ժամանակը չի, շուտ պիտի գնանք այստեղից, քանի դրանք չեն եկել, ես արդեն բացատրեցի,– սա ասելով՝ չնայեց աղջկա կապրիզներին ու ձեռքից բռնած ստիպողաբար տարավ դեպի մեքենան:

Ճանապարհին Անգյունը կուչ էր եկել մեքենայի մի անկյունում, ոչ մի բառ չէր խոսում: Լաց էր լինում, մերթընդմերթ էլ աննկատ հետևում էր ղեկին նստած այդ սևահեր տղամարդուն՝ պարզելու համար նրա կապտավուն աչքերը պատահաբար իր կողմ նայո՞ւմ էին, թե՞ ոչ: Արթուրը մտազբաղ էր: Ամեն դեպքում մտածում էր, որ պետք էր խոսակցությունը ինչ-որ տեղից սկսել, որպեսզի հասկանա, թե ինչ է կատարվել: Ո՞վ է այդ թուրք աղջիկը, ի՞նչ գործ ուներ այդ ամայի ճամփեզրի վրա գիշերվա կեսին:

– Դու ո՞նց ես մենակ հայտնվել էդտեղ, ի՞նչ էիր կորցրել:

– Հատել եմ սահմանը, հետո ավելի էր ճանապարհս խճճվել, էլ չեմ հիշում՝ ուր էի, ինչ տեղերով ու ոնց անցա, որ հայտնվեցի այս մայրուղու վրա:

– Մի րոպե՛, հիմա ուզում ես ասել, որ դու հայ-թուրքական սահմա՞նն ես հատել,– զարմանքից քարացավ Արթուրը՝ մեքենան ճանապարհի մի կողմում կանգնեցնելով ու շրջվելով դեմքով դեպի Անգյունը:

– Հա,– ցածրաձայն պատասխանեց Անգյունը՝ հասկանալով, թե ինչ վատ իրավիճակում է հայտնվել ու այն էլ թշնամու երկրում:

– Գժվե՞լ ես: Ո՞նց ես կարողացել սահմանը հատել,– ձայնը բարձրացրեց Արթուրը:

– Ինչ կա, այն եմ ասում, կարող ես չհավատալ,– մեղավորի դեմքով դիմեց նրան Անգյունը:

Շոկից դուրս գալու համար մի որոշ ժամանակ պահանջվեց: Այնուհետև մեքենայի շարժիչը միացրեց Արթուրը և շարունակեց ընթանալ դեպի մայրաքաղաք:

– Դա հնարավոր չէ, քանի՜ հսկիչ կետ կա, վերջիվերջո փշալարեր կան, ո՞նց ես անցել դրանց վրայով: Քո պատմածն անհավանական է, դու ինչ-որ բան թաքցնում ես,– սկսեց կասկածել Արթուրը:

– Օրինակ ի՞նչ,– հարցին հարցով պատասխանեց աղջիկը:

– Դե չգիտեմ, ես էլ չգիտեմ: Լավ ենթադրենք այդպես է, բա ո՞նց հայտնվեցիր սահմանին մոտ, որ մի հատ էլ այնպես ստացվեց, որ անցար ու չբռնվեցիր:

– Արշավի էինք եկել խմբով Ստամբուլից այն լեռը բարձրանալու համար, գիտես, թե որի մասին եմ ասում: Նստել էինք հանգստանալու, իրերս թողեցի ընկերներիս մոտ, էս չարչրքված պայուսակը վերցրեցի, իբր ուզում էի մի քիչ զբոսնել մոտակա տարածքներում: Էդպես մութն ընկավ, չկարողացա հետ գնալ ու մնացածը պատկերացրիր արդեն:

– Չէ՛, չպատկերացրի, դու ինչ է չէի՞ր հասկանում, որ սահման ես հատում,– կատաղեց նորից Արթուրը:

– Հասկանում էի:

– Այդ դեպքում ինչո՞ւ հատեցիր:

– Ինձ հետաքրքիր էր, թե ինչ կա այս կողմում:

– Ե՞վ... հետո՞... հետաքրքրվածությունդ բավարարեցի՞ր, լա՞վ է հիմա:

– Չէ:

Արթուրը փոքր դադար վերցրեց բարկությունը անցկացնելու համար, սակայն չէր ստացվում հանգստանալ:

– Այս ամեն ինչը ինձ դուր չի գալիս: Սահմանախախտի եմ հիմա մեքենայիս մեջ տանում, գրո՛ղը տանի,– ճակատագրի հեգնանք համարելով՝ վրդովվեց Արթուրը:– Լավ, այս մութ ճանապարհը կտրենք-անցնենք, հասնենք ցիվիլիզացիա, տեսնեմ ինչ է խելքս կտրում, հիմա մտածել չեմ կարողանում:

Ճանապարհին Արթուրը աչքի մի ծայրով հետևում էր աղջկա պահվածքին ու չգիտեր ինչ ասեր, որ ավելի վիճակը չբարդացներ: Աղջիկը դողացնում էր ու վախեցած զննում մեքենայի տարբեր անկյուններ, իսկ ճանապարհը՝ ոչ, քանի որ մութ էր և առանձնապես զննելու բան էլ չկար: Այդ ժամին ճանապարհին հանդիպած միակ բաց մթերային խանութի մոտ Արթուրը կանգնեցրեց մեքենան ու դուրս եկավ մենակ, դռները փակեց, որպեսզի հանկարծ փորձ չանի փախչել իր «համառ պատանդը»: Վերադարձավ մի քանի րոպեից՝ ձեռքին մի տոպրակ:

– Վերցրո՛ւ, կե՛ր, սոված կլինես: Սա էլ խմելու բան եմ բերել:

Անգլուհին չվերցրեց: Կասկածանքով էր նայում նրան, չէր կողմնորոշվում՝ իրեն ինչպես պահի:

– Հասկանում եմ ներսդ ամեն ինչ խառնվել է իրար, բայց սնվելու պահանջը դեռ ոչ ոք չի հետաձգել անգամ այսպիսի իրավիճակների համար,– հանգիստ ձայնով ու մեղմ տոնով ավելացրեց Արթուրը, որպեսզի լարվածությունը մեղմացնի թե՛ իր, թե՛ նրա:

Սա ճանապարհին ասված վերջին խոսքերն էին: Դրանից հետո մինչև Երևան հասնելը երկուսն էլ լուռ էին: Ամեն մեկն էլ ինչ-որ բան էր մտածում մտքում: Արթուրը մերթընդմերթ աննկատ հայացք էր գցում աղջկա վրա: Ցանկանում էր ամեն մի շարժումի ու դեմքի միմիկայի մեջ գտնել իրեն տանջող հարցի պատասխանը. «ո՞վ ես դու, ինչո՞ւ հենց ինձ հետ պիտի սա պատահեր»: Երբ մտան Երևան, Արթուրը ասաց, որ արդեն Հայաստանի մայրաքաղաքում են: Անգլունի համար լավ առիթ էր գլխում ցնորամիտ մտածմունքները մի քիչ ցրելու համար: Մեքենայի պատուհանից սկսեց ուսումնասիրել իրեն անծանոթ ու օտար քաղաքը: Երբեք չէր մտածի, որ մի օր այս ամենի միջով անցնելու է, առավոտյան իր երկրում էր, իսկ գիշերը թշնամու մայրաքաղաքով մեկ մեքենայով ֆռում է: Արթուրը չէր խոսում, թողել էր աղջկան իր մտքերի հետ միայնակ: Հասկանում էր, որ նա այս ամենը պիտի կարողանա մարսել: Ինքը գոնե իր երկրում է, իսկ նա՞...

– Վերջապես հասանք, սա իմ բնակարանն է: Համեցի՛ր,– բնակարանի դուռը բանալով՝ ասաց Արթուրը: Ապա ներս մտնելով՝ շարունակեց,– քեզ հարմար զգա, ինչպես տեսնում ես այստեղ բոլոր հարմարությունները կան: Վաղը կարթնանանք ու կհասկանանք՝ ինչ ենք անում: Հիմա գնամ, նայեմ սենյակումդ, որտեղ գիշերելու ես, ամեն ինչ կարգին է, թե ոչ, հետո...հետո...– ընկավ մտքերի մեջ, խորը հոգոց հանեց, ապա ասաց,– հիմա կգամ:

Բնակարանը պատկառելի մեծ չափեր ուներ, հարմարավետ էր ու շենշող, եվրոպական ոճով կահավորված: Ամեն ինչ նոր տեսք ուներ, կոկիկ դասավորված, մաքրամաքուր, ավելորդություններ չկային: Կահույքն էլ բավականին ճաշակով էր, չափից դուրս շատ չէր և ոտքի տակ չէր ընկնում: Ընդհանուր տպավորությունն այն էր, որ հավանաբար ապահովված ու հարուստ մեկի տանն է հայտնվել:

Այդ ընթացքում Արթուրը լավ չէր բառիս բուն իմաստով: Մոտեցավ լվացարանին, լվացվեց, ապա նայեց հայելու մեջ: Ինքն իրեն ասես չճանաչեր, ի՞նչ է անում, ինչի՞ համար է անում: Հիշեց իր դժբախտ մանկությունը, սումգայիթյան ցեղասպանության ժամանակ իր ընտանիքի ողբերգությունը, թե ինչերի միջով է ստիպված եղել անցնել մանուկ հասակում՝ ունեզրկում, փախստականի կյանք, աղքատություն, փշրված երազանքներ: Այդ նստվածքից ազատվել, փախչել երբեմն դժվար է լինում: Չես կարողանում տիրապետել հույզերդ, սիրտդ գլուխ է բարձրացնում ուղեղիդ նկատմամբ, և բանականությունը այլևս չի կարողանում ենթարկեցնել մարմնիդ շարժումները, մանավանդ երբ հիշեցնող բան կար: «Ո՞վ է այդ թուրք աղջիկը, ինչո՞ւ հենց թուրք: Ճակատագիրը հատո՞ւկ է գլխիս այսպիսի խաղեր խաղում». մտածում էր նա: Ուզում էր անմտորեն տար հայելին ջարդեր, որ չտեսներ այլևս իրեն այդ հայելու մեջ, կարծես դա ինչ-որ բան էր փոխելու: Սկսեց ուժեղ հարվածել պատերին, հետո մի քիչ հանգստացավ, նստեց գետնին ու երեխայի պես սկսեց արտասվել: «Ախր նա մեղավոր չի, մեղավոր չիիիիի՜». կրկնում էր Արթուրը: Անգյունը լսել էր այդ բղավոցները ու մոտեցել դռան մյուս կողմին: Բան չէր հասկանում, թե ինչ է ասում, բայց զգում էր, որ լավ չի, ու դա իր հետ է կապված: Ճանապարհի վերջին խոսակցությունից հետո փոքր-ինչ հանդարտվել էր, էլ առաջվա նման չէր վախենում հայ տղայից, բայց սա արդեն լուրջ էր: Նա ելք էր փնտրում, որ փախչի այդ տնից: Սակայն ինչպե՞ս. դուռը փակ էր, բնակարանն էլ՝ տասնմեկերորդ հարկում: Մինչև նա վախը սրտում կպել էր հյուրասենյակի պատերից մեկին ու լաց էր լինում, մեկ էլ հանկարծ նորից հայտնվեց Արթուրը: Հանդարտ, գլուխը կախ, առանց շտապելու քայլում էր հյուրասենյակում: Սկզբում չէր նկատում սենյակում պատին երկու ձեռքով հենված ու լաց լինող աղջկան: Մի քանի վայրկյան, և վերջապես գլուխը բարձրացրեց ու նայեց նրա աչքերի մեջ: Արթուրի վրդովմունքը դեռ լրիվ չէր մարել, ու հոգեվիճակը փոփոխական էր:

ԱՐԹՈՒՐ – Ի՞նչ ես կպել պատից, ի՞նչը այն չէ: Վախից կուչ ես եկել, որ ի՞նչ:

ԱՆԳՅՈՒՆ – Ես ուզում եմ գնալ այստեղից, բաց թող՝ գնամ:

ԱՐԹՈՒՐ – Էդ ինչի՞, նեղվե՞լ ես, որ կարմիր գորգ չեմ փռել դիմացդ: Կներես էս ա, դուռն էլ չեմ պատրաստվում բացել:

ԱՆԳՅՈՒՆ – Քեզ ի՞նչ եղավ, ա՛խր քիչ առաջ դու այդպիսին չէիր:

ԱՐԹՈՒՐ – Իսկ ինչպիսի՞ն էի:

Անգյունը նախընտրեց չխոսել:

ԱՐԹՈՒՐ – Լսի՛ր, եթե ես քեզ ինչ-որ բան ուզենայի արած լինեի, հենա էն չոլում կանեի, չէի բերի հասցնի մարդամեջ: Էնպես որ գնա՛, սենյակդ պատրաստ է, մի ձև լուսացրու: Մի ձև էլ ես կլուսացնեմ:

Սա ասելուց հետո Արթուրը կոնյակի շիշը վերցրեց ու գնաց դեպի իր սենյակ: Նստեց մահճակալին ու, կիսաարցունքոտ աչքերը պատուհանին հառած, սկսեց խմել: Սենյակի դուռը կիսաբաց էր մնացել: Անգյունը դանդաղ մոտեցավ, բայց սենյակ չհամարձակվեց մտնել, մուտքից վախվորած ձայնով սկսեց խոսել.

ԱՆԳՅՈՒՆ – Շնորհակալություն:

ԱՐԹՈՒՐ – Ի՞նչ:

ԱՆԳՅՈՒՆ – Ասում եմ շնորհակալություն:

ԱՐԹՈՒՐ – Ինչի՞ համար:

ԱՆԳՅՈՒՆ – Ամեն ինչի, պիտի շուտ ասեի, չեմ ասել: Դու փաստացի կյանքս փրկեցիր, իսկ ես անգամ շնորհակալություն չհայտնեցի: Հիմա եմ ասում, չնայած երևի ուշ է:

ԱՐԹՈՒՐ – Շնորհակալությունն ուշ չի լինում, ինչպես և ներողությունը, բացի դրանից, դա չէ պատճառը, որ հիմա էս վիճակում եմ:

Այս նուրբ ակնարկը չհասկացավ աղջիկը, բայց զրույցը շարունակելու էին ու ամեն ինչ մեկ է բացվելու էր:

ԱՆԳՅՈՒՆ – Դա է, թե դա չէ, ինձ չի արդարացնում, պիտի ասեի:

ԱՐԹՈՒՐ – Իսկ ի՞նչն է ձեզ արդարացնում:

ԱՆԳՅՈՒՆ – Չհասկացա քեզ:

ԱՐԹՈՒՐ – Լա՛վ էլ հասկացար:

ԱՆԳՅՈՒՆ – Ես ա՛յ սրանից էի վախենում, որ չէի ուզում քեզ հետ գայի:

ԱՐԹՈՒՐ – Հա՛, բա այդպես մինչև ե՞րբ եք վախենալու:

ԱՆԳՅՈՒՆ – Ես քեզ էլի չեմ հասկանում:

ԱՐԹՈՒՐ – Կլինի քեզ ապուշի տեղ չդնես, մեծ մարդիկ ենք, ամոթ է:

ԱՆԳՅՈՒՆ – Ի՞նչ ունես ասելու, միանգամից ասա:

ԱՐԹՈՒՐ – Չէ՛, դուք այդպես հեշտ չեք պրծնելու է՛:

ԱՆԳՅՈՒՆ – Ես ինչու՞մ եմ մեղավոր, ասա՛, հա հասկանում եմ, բայց ես ինչու՞մ եմ մեղավոր: Դե սկսի մեղադրականդ շարադրել, աշխարհում որտեղ թուրք տեսնեք մեղադրականներով հարձակվեք նրանց վրա: Ի՞նչ եք փոխում դրանով, ի՞նչ-որ մեկին հետ եք բերում:

ԱՐԹՈՒՐ – Ցավն ենք մեղմացնում, ցա՛վը: Քեզ ո՞նց բացատրեմ, ախր դուք դա չգիտեք՝ ինչ է: Չէ՞ որ գլխավոր դիրիժորն եք լինում այդ ցավերի կերտման գործում:

ԱՆԳՅՈՒՆ – Այդ դուք եք իրականում ձեզ տանջում: Հիվանդացրել եք ձեզ այդ մտքերով, հանգիստ ապրել չեք կարողանում: Ընկել եք բառերի, ձևակերպումների հետևից, մոռացել ամենակարևորը:

ԱՐԹՈՒՐ – Ո՞րն է ամենակարևորը:

ԱՆԳՅՈՒՆ – Կյանքը, այսօրվա կյանքը, որը գնահատել չգիտեք, ապրում եք անցյալով միայն:

ԱՐԹՈՒՐ – Կյանքը ասում ես, հա՞: Իսկ ինչպիսի՞ն կլիներ այդ նույն կյանքը, եթե մեր ազգի կեսին չվերացնեիք, չոչնչացնեիք նրա քաղաքակրթական ժառանգությունն իր բնօրրանում: Գյավուր էիք անվանում, ստրուկ, միաժամանակ գազազում էիք այդ ստրուկ կոչվածների ստեղծագործական տաղանդից ու հաջողություններից: Չէիք ուզում խոստովանել, որ որակ կար այս փոքր ազգի մեջ:

Արթուրը թույլ հոգոց հանեց, հետո մի քանի վայրկյան անշնչացած լռություն էր տիրում: Փորձեց խաղաղվել, սակայն չէր ստացվում, մտքերը գալիս ու պահանջում էին բարձրաձայն արտասանվել: Նա էլ տեղի տվեց: Շարունակեց հոգու ճիչը հանել դուրս:

ԱՐԹՈՒՐ – Իսկ միգուցե փորձ անեիք գնահատել, ոչ միայն ձեզ նման «արտոնյալների», այլ նաև այլ մահկանացուների կյանքը ևս, որոնք թեպետ և ոչ ձեր կամքով, բայց գոյություն ունեին, ձեզ հետ էին ապրում մի տան մեջ, մի պետությունում: Հիմա ինչպիսի՞ն կլիներ Թուրքիան... ուրիշ կլիներ, շատ ուրիշ: Բայց դուք նախընտրեցիք այս Թուրքիան... կեղծը: Իրականությունն ապականված է, բայց դուք շարունակում եք համառել, որ այն այսպես էլ է գեղեցիկ, ի՞նչ է եղել որ, ոչ մի բան:

Հեգնական տոնն ավելի արտահայտիչ դարձրեց խոսքի վերջում: Այն խազում էր դիմացը կանգնած թրքուհու հոգին, խոցում մինչև խորքը, ինչն էլ պաշտպանական ռեակցիա առաջ բերեց:

ԱՆԳՅՈՒՆ – Դուք էլ ադրբեջանցիներին եք տեղահանել, դե դու էլ դրանից խոսա, ինչո՞ւ չես խոսում:

ԱՐԹՈՒՐ – Դու ցեղասպանություն և պատերազմ բառերը տարբերո՞ւմ ես ընդհանրապես:

ԱՆԳՅՈՒՆ – Մեզ մոտ էլ են ասում, որ պատերազմ էր:

ԱՐԹՈՒՐ – Ձեզ մոտ ընդհանրապես շատ խառը բաներ են ասում, իրենք էլ են խճճվում երբեմն:

ԱՆԳՅՈՒՆ – Հիմա ուզածդ ի՞նչ է, ասա անեմ, հանգստանաս:

ԱՐԹՈՒՐ – Ոչ մի բան էլ մի՛ արա, հանգիստ գնա՛ պարկի, ես իզուր եմ այս ամեն ինչը քեզ ասում:

Առավոտյան Անգյունը աչքերը փախցնում էր Արթուրից, բայց մտատանջ հայացքը ամեն ինչ մատնում էր:

ԱՐԹՈՒՐ – Նախաճաշը դրել եմ, արի՛:

ԱՆԳՅՈՒՆ – Ի՞նչ է լինելու ինձ հետ: Ինձ հանձնելո՞ւ ես:

ԱՐԹՈՒՐ – Արի՛ նախաճաշենք, լա՞վ:

ԱՆԳՅՈՒՆ – Չէ՛, դու իմ հարցին պատասխանի, ես ուտել չեմ ուզում:

ԱՐԹՈՒՐ – Կներես, երեկ հարձակվեցի քեզ վրա: Չափն անցա, պետք չէր այդպես: Ընդունում եմ, որ սխալ էի: Ու երևի դրա համար է հիմա կարմրած, լացած աչքերով կանգնել ես դիմացս ու ասում ես, որ հաց չես ուտելու: Այն վիճակում երեկ չավարտեցինք մեր խոսակցությունը, որ հիմա ախորժակ ունենաս:

ԱՆԳՅՈՒՆ – Ես պարզապես ուզում եմ իմանալ՝ ինձ հետ ինչ է լինելու:

ԱՐԹՈՒՐ – Ես հիմա ստացվում է հանցակից եմ, որ գիտեմ դիմացս սահմանախախտ է, իսկ ես նրան պատկան մարմիններին չեմ հանձնել:

ԱՆԳՅՈՒՆ – Դե հենց դա էլ հարցնում եմ, հանձնելո՞ւ ես:

Արթուրը լուռ էր: Ոչինչ չէր խոսում: Նստեցին նախաճաշի:

ԱՐԹՈՒՐ – Կներես, երեկ վրդովված էի, բայց դա դու չէիր պատճառը: Ընտանիքս սումգայիթյան ջարդերից մազապուրծ եղած մի կերպ հասել է Երևան: Տատիկս ու պապիկս չեն կարողացել փրկվել, մյուս հարազատներս չգիտեմ, թե որտեղ են... մենք իրար կորցրեցինք: Դրա համար էլ երեկ այդքան ագրեսիվ էի, բայց հիմա եմ հասկանում, որ ճիշտ չեմ վարվել:

ԱՆԳՅՈՒՆ – Սումգայիթյա՞ն:

ԱՐԹՈՒՐ – Այո՛, լսած կա՞ս:

ԱՆԳՅՈՒՆ – Եթե անկեղծ չէ, բայց մի րոպե՛, Սումգայիթը Ադրբեջանում չի՞:

ԱՐԹՈՒՐ – Այո:

ԱՆԳՅՈՒՆ – Բա մենք այդ դեպքում ի՞նչ կապ ունեք:

ԱՐԹՈՒՐ – Ո՞նց, դու հարցնում ես՝ ինչ կապ ունեք: Թուրքիան ու Ադրբեջանը հեչ կապ չունե՞ն իրար հետ:

ԱՆԳՅՈՒՆ – Դե իրականում ոչ:

ԱՐԹՈՒՐ – Լո՞ւրջ ես ասում: Չէ բայց դու լուրջ ես ասո՞ւմ:

ԱՆԳՅՈՒՆ – Հա լուրջ եմ ասում, ավելին զարմացած եմ, ինչու ես նրանց արածը կապում թուրքերիս հետ:

ԱՐԹՈՒՐ – Ասեմ՝ ինչու, դուք եք առավոտից իրիկուն գոռում, որ մեկ ազգ երկու պետություն եք: Դուք եք անընդհատ ասում, որ նրանք ձեր եղբայրներն են ու հանուն նրանց դուք ամեն ինչի պատրաստ եք:

ԱՆԳՅՈՒՆ – Մեկը ես պատրաստ չեմ, դա ինչ անհեթեթություն է ընդհանրապես: Կարող է երկրների ղեկավարներն են այդքան կապված իրար հետ, սակայն հասարակ ժողովուրդը չեմ կարծում, որ

նույն կարծիքին է: Դե Թուրքիան մեծ պետություն է և տարբեր շերտեր կան: Միանշանակ չի ամեն ինչ:

ԱՐԹՈՒՐ – Մեզ համար դուք նույն եք, նրանք ձեր չկայացած տեսակն են, որ ինչպես դուք անցյալում, այնպես էլ նրանք հիմա ուզում են մեզ սպանելով կայանալ, ինքնահաստատվելու «փայլուն» ձև են գտել, ուրիշ ի՞նչ կարող եմ ասել:

ԱՆԳՅՈՒՆ – Էդպես մի ասա էլի, մենք նորից պտտվեցինք ու եկանք հասանք մեր երեկվա տհաճ խոսակցությանը:

ԱՐԹՈՒՐ – Էդ տհաճ խոսակցությունից փախչել չի հաջողվելու, քանի դեռ արդարություն չի հաստատվել:

ԱՆԳՅՈՒՆ – Դու այդպես էլ չպատասխանեցիր, հիմա ինձ հանձնելո՞ւ ես:

ԱՐԹՈՒՐ – Այո՛:

ԱՆԳՅՈՒՆ – Իսկ եթե փախչեմ, չե՞ս վախենում, որ այդպես հստակ ասում ես, որ հանձնելու ես:

ԱՐԹՈՒՐ – Դու ոչ մի տեղ էլ չես փախչի:

ԱՆԳՅՈՒՆ – Կփախչեմ: Թող ինձ, ես գնում եմ, չպիտի քեզ հանդիպեի:

ԱՐԹՈՒՐ – Քեզ ոչ մեկ վատ չի վիրաբերվի այնտեղ, ուր որ կտանեմ: Ես համոզված եմ, որ ուղղակի կստուգեն, որ գործակալ չես ու կհանձնեն երկրիդ, այդպիսի դեպք էլի եղել է:

ԱՆԳՅՈՒՆ – Իսկ ի՞նչ գիտես, կարող է գործակալ եմ:

ԱՐԹՈՒՐ – Հա՛ գործակալ ջան, քո ասածն է: Վերարկուս փոխանցի, հետևդ է, ու դուրս գանք:

Ճանապարհին Անգյունը փորձեց փախչել, բայց չհաջողվեց, Արթուրը աչքը վրան էր պահում: Զուգահեռաբար համոզում էր, որ շուտով իր հայրենիքում կլինի... Չէր սխալվում:

# Գլուխ 9

Երեկոյան գեղեցիկ է Երևանը: Այդ ժամերին քայլելով այս քաղաքի կենտրոնական մայթերով՝ այն չի թողնի, որ շեղվես իր փայլող շուքից: Թեթևաբարո օրիորդի նման անընդհատ կանչում է քեզ, որ զմայլվես իրենով ու մոռանաս հոգսերի մեջ թաթախված կյանքդ: Լիաթոք ծիծաղես իր պես՝ քաղաքի աշխուժության մեջ կորցնելով հոգումդ թոշնած դառնությունը: Արմինեն անչափ ուզում էր կորչել վերացական պտտահողմի մեջ: Եթե անգամ մարդկանց քանակն այնքան չէր, որ այդ պտտահողմը առաջանար, սակայն ամեն դեպքում կարելի էր երևակայել իրադարձությունների նման ընթացք թեկուզ մտովի, որպեսզի հաջողացներ մոռանալ կյանքն անգույն ու մռայլ դարձնող մենակությունը: Նա կարող էր շատ հեշտությամբ ազատվել այդ մենակությունից, բայց հոգու խուլ անկյուններից մեկում ինքն իր պատանդն էր, իր կոտրված անցյալի, անբովանդակ ներկայի ու անտարբերության մեջ լող տվող ապագայի պատանդը: Նա կարող էր վերադառնալ ԱՄՆ, ջնջել ուղեղի միջից արդեն համը դուրս եկած «տառապանք» անվանումով կինոժապավենը: Կարող էր սկսել նորից, ամեն ինչ նոր էջից, ինչպես որ կյանքը մի անգամ արդեն պատվել էր նրան, բայց բնական ձևով՝ հիշողության կորստով: Ինքը վերջիվերջո կորած մարդ չէր, հաստատ շատ արագ կվերականգներ իր համբավն ԱՄՆ-ում: Սակայն դա առաջին հայացքից էր թվում շատ հեշտ կատարվելիք քայլ: Նա արդեն մխրճվել էր իր անցյալի ու ներկայի բախման խաչմերուկում տեղակայված մի սենյակի մեջ, որից դուրս գալ չի ստացվում: Պետք է սպասես

մեկը կողպված դուռը բացի ու քեզ հանի այնտեղից: Այդ մեկը հենց իրոք մեկն էր, միակն այս աշխարհում, ով կարող էր դա անել: Բայց թարսի պես այդ մեկը բացարձակ հետաքրքրված չէր որևէ կերպ նպաստելու Արմինեի հոգու փրկությանը, միայն կոպտում էր, անպատվում և դուրս էր շպրտում:

Հոգնած տուն հասավ ցնորքի տարափը լիցքաթափող հերթական զբոսանքից, ու աչքերը իրեն նորից տարան դեպի պատուհան: Նայում էր պատուհանից դուրս այնպես, ասես տարիներ շարունակ զրկված լիներ պատուհանից դուրս կատարվող կյանքի թափքին անմիջականորեն մասնակիցը լինելու իր իրավունքից: Բայց մի րոպե, չէ՞ որ այդ դրսից նա նոր էր տուն մտել: Պետք է, որ հագեցվածության պակաս չզգար, բայց չէ, ամենուր փրկություն էր փնտրում. դրսում՝ ներսից, ներսում՝ դրսից: Դռան զանգը խանգարեց Արմինեի լուռ մենախոսությանը, ինչ-որ նորության սպասումով լցվեց նա և արագ վազեց բացելու դուռը: Ա՜յ քեզ ուրախություն: Աչքերը փայլեցին փոքրիկ երջանկությամբ: Թևերն իրենք իրենց առաջ գցեցին և փաթաթվեցին դիմացը կանգնած ամրակազմ ու թիկնեղ տղամարդուն: Լևոնը մի փոքր շփոթվեց. չէր սպասում նման սրտառուչ ընդունելության: «Ի՞նչ եմ արել որ, ընդամենը հեռավոր Ամերիկայի Միացյալ Նահանգներից եկել հասել եմ այստեղ իմ վաղեմի ընկերուհուն տեսնելու և օօօօօ՜, ինչպիսի՜ ընդունելություն, քիչ է մնում հուզվեմ». մտածեց Լևոնը:

ԱՐՄԻՆԵ – Արի՛, հարազա՛տս, ինչքան ուրախացա քեզ տեսնելով, չես պատկերացնի՝ ո՜նց էի զգում քո կարիքը:

ԼԵՎՈՆ – Եթե զգում էիր, կանչեիր: Ինչի՞ց էիր քաշվում:

ԱՐՄԻՆԵ – Դրա կարիքը չեղավ. դու քո ոտքով եկար:

ԼԵՎՈՆ – Էդ թիթիզություններդ թող մի կողմ էլի: Ի նկատի ունեմ կոֆե, թեյ, խմորեղեն, նորաթուխ հարս չես, սկեսուրդ էլ գլխիդ «կոնտրոլ» չի անում, էնպես որ թող դրանք, արի՛: Կարոտել եմ, նստի՛ր: Ասա, տեսնեմ՝ ինչ է եղել, որ ինձ այսպես փրկության փարոսի նման դիմավորեցիր:

ԱՐՄԻՆԵ – Լցված էի, ուզում էի խոսել, մարդ չկար:

ԼԵՎՈՆ – Ուրեմն էս երեք միլիոնանոց երկրում մարդ չկար, պարտադիր սպասում էիր 330 միլիոնանոց երկրից ես ժամանե՞ի, որ ինձ հետ խոսեիր:

ԱՐՄԻՆԵ – Ա՛խր, ամեն ինչի մասին չէ, որ ցանկացած պատահած ծանոթի կամ անծանոթի հետ պատրաստ ես խոսել:

ԼԵՎՈՆ – Իսկ բարեկամնե՞րդ, կարծեմ մի քանիսը գտել են քեզ այս ընթացքում: Մի՞թե ոչ մեկի հետ նորմալ կապ չես պահպանում, իսկ մարտական ընկերներիդ ինչո՞ւ չես հիշում: Հա, հասկանում եմ շատերը ծերացել են, շատերը մահացել, վերջիվերջո այսքան տարի է անցել, բայց ես վստահ եմ, որ շատերն էլ կան, որ քեզ հետ շատ կուզեն հիմա մտերմություն անել: Ինչո՞ւ ես այսքան ներփակվել ինքդ քո մեջ:

ԱՐՄԻՆԵ – Մեկ է չի ստացվում: Կուժը որ ջարդվում է, ինչքան էլ սոսնձես, նույնը չես ստանա: Այո, ես հիշողությունս վերականգնել եմ, սակայն կարծես երկու կյանքերիս արանքում մնացած լինեմ:

ԼԵՎՈՆ – Իսկ եթե վերադառնաս նախկինին, դե եթե այս երկրորդը առաջ չի շարժվում:

ԱՐՄԻՆԵ – Դա էլ չեմ կարող: Ես միայն մի բան եմ ուզում, որ իմ որդին ների ինձ, բայց դա չի լինում, մնացածը իմաստազուրկ է:

ԼԵՎՈՆ – Դեռ չե՞ք հաշտվել:

ԱՐՄԻՆԵ – Ո՛չ, ավելին ասեմ՝ ինչքան ուժ ունի, ատում է ինձ:

ԼԵՎՈՆ – Հա, պարզ է: Դա լավ չի:

ԱՐՄԻՆԵ – Գիտե՞ս, թե քանի անգամ եմ գնացել մոտը, փորձել շփման եզրեր գտնել: Չէ... չի ստացվում... բետոնապատ պարիսպ է շարել իմ ու իր միջև ու այդպես նստել է: Նա չի ուզում անգամ լսել իմ բացատրությունները՝ ինչ եղավ, ոնց եղավ, ինչու եղավ: Շատ եմ փորձել, բայց չի ուզում բառ անգամ լսել: Ահավոր հուսալքված եմ:

ԼԵՎՈՆ – Տեսնում եմ, տանջված դեմքդ վկա, ամեն ինչ ասում է, անգամ չի սպասում դատավորը խոսքը իրեն տա, նոր սկսի բլբլալ: Արմի՛ն, տեսքդ քո փոխարեն խոսում է, դու այստեղ հա էլ այս վիճակում ես լինելու: Ամեն դեպքում դու փորձել ես ինչ-որ բան փոխել ու փորձել ես բազմիցս: Դե հիմա չի ստացվում, ի՞նչ անես: Դրա

համար եմ ասում՝ արի միասին մեկնենք ԱՄՆ: Ետ վերադարձիր քո նախկին ապրելակերպին, որտեղ ժպիտ կար քո դեմքին, խինդ ու ծիծաղ կար կյանքումդ, թե չէ սա ի՞նչ է, Աստծո՛ սիրուն:

ԱՐՄԻՆԵ – Հեշտ ես ասում, անցյալին էլ վերադարձ չի լինի:

ԼԵՎՈՆ – Բայց անցյալի անցյալին լավ էլ վերադարձար չէ՞, ու քեզ էս օրը գցեցիր, բա դա ո՞նց եղավ:

ԱՐՄԻՆԵ – Ուրեմն պիտի լիներ:

ԼԵՎՈՆ – Իսկ ինչո՞ւ չես ուզում ընդունել, որ քո ուժեղ կամքը կարող ես հիմա էլ ուրիշ ուղղությամբ շարժել: Կարող ես այնպես անել, որ հիմա էլ սա լինի: ԱՄՆ-ն քեզ շատ բան է տվել ու դեռ կտա, միայն թե դու ուզենաս:

ԱՐՄԻՆԵ – ԱՄՆ-ն որդուս ինձ հետ չի կարող տալ:

ԼԵՎՈՆ – Դե պարզ ասա, որ դու չես ուզում էլի, ոչ թե չի լինի:

ԱՐՄԻՆԵ – Ճիշտ ես:

ԼԵՎՈՆ – Տեսնո՞ւմ ես: Բա էլ ինչո՞ւ ես գլուխս արդուկում: Դու հիմա այն վիճակում ես, որում ինքդ ես ցանկացել լինել, դրա համար էլ ոչ մեկս ի զորու չենք քեզ այդտեղից հանել: Դու ինքդ ելք պիտի գտնես:

ԱՐՄԻՆԵ – Անգամ երբ այն չկա:

ԼԵՎՈՆ – Ելք միշտ կա, ուղղակի դրա որոնումները երբեք չի կարելի դադարեցնել: Մարդուն առաջին հերթին հուսալքությունն է կործանում, հետո նոր այն առաջացրած դժբախտությունը:

ԱՐՄԻՆԵ – Ի՜նչ լավ է, որ եկար: Սպեղանիի նման վերքիս դարման դարձար: Հիմա մի մեծ թեթևություն եմ զգում, ու դա քո շնորհիվ: Շնորհակալ եմ ընկերս:

ԼԵՎՈՆ – Բա՛, որ ասում եմ ընկերը լավ բան է, մարդիկ լուրջ չեն ընդունում:

ԱՐՄԻՆԵ – Այդ ո՞վ լուրջ չի ընդունում քեզ, ասա՛, հարցերը լուծեմ:

ԼԵՎՈՆ – Ա՛յ, հիմա իրոք երևաց, որ թեթևացել ես:

ԱՐՄԻՆԵ – Ինչի՞ց երևաց:

ԼԵՎՈՆ – Դե արդեն բացեիբաց սպառնում ես:

ԱՐՄԻՆԵ – Ո՞ւմ:

ԼԵՎՈՆ – Դու էլ չգիտես, թե ում, ուղղակի դուխդ ելել քեզ է ուտում, ուզում ես թասիբիս կանգնես, չգիտես ոնց:

ԱՐՄԻՆԵ – Գի՛ժ:

ԼԵՎՈՆ – Դու էլ պակասը չես:

***

Էդոն Ծիծեռնակաբերդի բարձունքում էր: Միայնակ քայլում էր գիշերային պարզ երկնքի հոգածության ներքո: Աստղեր գրեթե չկային, մուգ կապույտ մետաքսյա շղարշի էր նման երկինքը: Էդոն ուզում էր մոռանալ ամեն ինչ ու տրվել անծայրածիր երկնակամարի միատոն արտացոլանքին: Հաճախ էր այնտեղ լինում, հատկապես ուշ ժամերին, որ ոչ ոք չլիներ, և ինքը միայնակ ձուլվեր հողից հառնող և լուռ ճչացող քարակերտ մույթերի՝ կրակի առաջ խոնարհվող անշարժ շուրջպարին: Անմար կրակի պարի հետ հյուսում էր ողբերգության երգը մի ազգի, ում ինքը կիսով չափ էր փաստորեն պատկանում, մյուս կեսը թշնամունն էր: Այդ փաստի հետ դեռևս չէր կարողանում հաշտվել, չէր ուզում հաշտվել: Չէր ընդունում ու վերջ՝ հաշվի առնելով այն դեպքը, որի արդյունքում նա ծնվել էր: Նա չէր ուզում այդպիսի սցենարով ծնված լինել. դա չափազանց ցավոտ էր նրա համար, իսկ հորը փնտրելու կամ նրա արարքի մասին չէր ուզում մտածել անգամ, տհաճ էր: Նրա հայրենիքը Հայաստանն է, իսկ ազգակիցները՝ հայերը, ում իրենց թերություններով հանդերձ աշխարհում ամենաշատն էր սիրում: Ինքն էլ չէր հասկանում, թե այդ սերը որտեղից է այդքան ուժեղ, չէ՞ որ ամեն մեկի մոտ չէ այդպես: Իսկ ինչո՞ւ է իր մոտ այդպես: Մի՞թե այդ ազգային կոդն այդքան ամուր է խրված իր սրտում, որ ոչինչ, անգամ ճշմարտությունը չկարողացան մի կաթիլ թուլացնել իր սրտի միջի անձնուրաց սերը հայրենիքի հանդեպ, ու տեղ բացել նոր մարմնի համար: Ո՛չ, տեղ չկար: Իր հայրական կողմի կեսը անգամ մի ցող չաճեցրեց իր ներաշխարհի բնության համայնապատկերի մեջ: Այն գերազանցապես մնաց հայկական՝ մայրական կեսի տնօրինության տակ: Մոր, ում այդպես

էլ խոսել չտվեց: Մոր, ում հայտնվելը մղձավանջի նման եկավ ու անցնելու մասին մոռացավ, աղավաղեց կյանքը, մարեց գույները, սևացրեց ամեն ինչ, բայց միայն Հայաստանը իր աչքին չսևացավ: Հետևաբար և նրանում ապրող մարդիկ ևս աչքին չսևացան: Հայերի շրջապատում կյանքն էր, իր ուզած կյանքը, իր փնտրած երջանկությունը: Անշտապ քայլերով մոտեցավ հուշարձանին: Աստիճաններով իջավ ցած՝ դեպի կրակը, հետո հետ քաշվեց ու հենվեց 12 վերխոյացող մույթերից մեկին: Բոցկլտացող կրակին անվերջ նայելով՝ ուզում էր անջատվել ամեն ինչից, ինչը պահում էր իրեն երկրագնդի վրա, բարձրանալ մի պահ վերև, ստանալ իր բոլոր հարցերի պատասխանը ու ետ գալ երկիր՝ նույն տեղը: Էդոյի մոտ չստացվեց անջատվել, չստացվեց բարձրանալ և չստացվեց գտնել Նրան, ում պիտի հարցեր տար: Կարծես այդ Մեկն ասում էր. «հարցերիդ պատասխանը տեղում գտիր, հավեսդ չունեմ»: Էդոն փորձեց, մենախոսում էր, բայց այնպես էր մենախոսում կարծես հասցեատերերի մի մեծ դահլիճ էր հավաքված դիմացը… դիմացը մարդ չկար:

– Պատ է: Դատարկությամբ լցված պատ, անտեսանելի պատ, բայց այն ամենաամուր պատերից է: Հայաստանի ու Թուրքիայի միջև է այդ պատը: Մենք ընդունակ ենք ընկալել, որ եղել են թուրքեր, որ վտանգելով սեփական կյանքը՝ թաքցրել ու փրկել են շատ հայերի, որոշներին թեկուզ թրքացնելու գնով, չնայած դա էլ է գենետիկ կոդի աղավաղում, որը պակաս ցավոտ չէ, բայց այնուամենայնիվ, գոնե փրկել են: Մենք տեսնում ենք խավարի հետ միասին նաև նրա մեջ առկայծող աննշան լույսը, սակայն դուք չեք ուզում տեսնել ոչինչ, ոչ խավարը, ոչ լույսը… ընդհանրապես ոչինչ: Պատռում եք այդ էջը ձեր պատմության գրքից ու նորից սոսնձում դրա երկու հատվածները: Դուք ուզում եք մոռանալ ու մոռացնել տալ, չխորանալ, «սղացնել» այդ ամոթալի դրվագները ձեր պատմության ու անցնել առաջ: Սպառնալ բոլոր նրանց, ովքեր փորձում են դրա մասին խոսել, գրել, ճանաչելի դարձնել իրական փաստերը: Երբ ուզում ես ներսդ հեռու պահել տանջող մտքերից, փաստացի դրանցից ավելի ես տանջվում, որովհետև կրկնակի ջանք ես թափում ինքդ քեզ ու աշխարհին համոզելու, որ

ամեն ինչ ճիշտ այնպես է, ինչպես, որ դու ես ուզում: Այո՛, դուք տանջվում եք ավելի շատ, քան տանջել եք: Տանջվում եք անորոշության ու կեղծիքի մեջ, անընդհատ այդ թեման շրջանցելու, լռեցնելու, փակելու գործի մեջ հյուծում եք ձեզ: Հույս ունենալով, որ կհյուծվենք մենք: Ամեն անգամ ժխտելով եղածը՝ սուրը նորից սրտներս եք մտցնում: Ձեզ թվում է, որ մի օր կհոգնենք ու էլ չե՞նք գոռա, արդարություն չե՞նք պահանջի, կհուսալքվենք, չե՞նք պայքարի: Դուք այդպես էլ մեզ չճանաչեցիք: Չմտածեցիք, որ կոկորդներիդ կմնանք, չեք կարողանա կուլ տալ: Հա, պինդ ենք մենք, քար ենք: Աշխարհում «ֆինիշին» հասնելու են ոչ թե հզորները, այլ դիմացկունները: Կյանքն իմ ազգին այնպես է կոփել հազարամյակների ընթացքում, որ մահի դեմքն անգիր ենք արել ու երբ տեսնում ենք, ծիծաղում ենք վրան: Վիրավորա՞նք, ինչի՞ մասին է խոսքը: Ձեզ չենք վիրավորում, պիտի հասնեք այն գիտակցմանը, որ ցեղասպանությունը ճանաչելով դուք չեք ընկնելու, այլ ընկած տեղից եք բարձրանալու: Գերմանացիներն ընկած չեն բնավ, բայց խիղճները հանգիստ է, թեթևացած: Մի ամբողջ ազգի ճակատագիր ջարդուխուրդ եք արել, նրա մեծ մասին ոչնչացրել, անունը ջնջել, մշակույթը պատառ-պատառ արել, գրքերը վառել, հնադարյա հզոր մշակույթով բնիկ ժողովրդի քաղաքակրթություն եք սրբել իր հայրենի հողից ու հիմա վիրավորվո՞ւմ եք մեր կշտամբանքից: Ուրիշ ոչ մի բան չե՞ք զգում, միայն վիրավորվում եք ու վե՞րջ: Ձեզ համար անհավատ էինք, բայց մենք էլ հավատք ունենք, որը նույնքան կարևոր է մեզ համար, որքան ձերը՝ ձեզ: Դուք չեք ստեղծել մեզ, որ դուք էլ վերացնեք: Մենք բոլորս ենք Աստծո զավակներ, բոլորս, ոչ մեկն առավել չի, ու ոչ մեկը ցածր չի: Մեկ է այդ օրը գալու է, մենք իրար ենք նայելու... մենք երկուսս էլ իրար ուրիշ ձև ենք նայելու... հայն ու թուրքը... մարդն ու մարդը...

* * *

– Վերջ, չեմ ուզում լսել, գնա՛:

Տղամարդու հուժկու բղավոց լսվեց: «Մի՞թե էդոն է». մտածում էր Արթուրը: Դարպասները բացվելուն զուգահեռ տարածքից մի կին

էր լացելով փախչում: Արթուրը տարակուսեց. «տեսնես՝ ով է այս կինը: Ի՞նչ է եղել»:

ԱՐԹՈՒՐ – Ինչո՞ւ ես շվարած կանգնել, չհիշեցի՞ր: Մի՞թե այդքան փոխվել եմ:

ԷԴՈՒԱՐԴ – Արթուր դո՞ւ ես:

ԱՐԹՈՒՐ – Բա էլ ո՞վ պետք է լինի, որ այս ժամին հանդգնի իր հին ընկերոջ անդորրը խանգարել, բայց ոնց հասկանում եմ՝ մեկը ինձնից առաջ էր ընկել արդեն: Ո՞վ էր այդ կինը:

ԷԴՈՒԱՐԴ – Ուշադրություն մի՛ դարձրու, համեցի՛ր: Շատ ուրախ եմ ընկերս, որ եկել ես ինձ հյուր:

ԷԴՈՒԱՐԴ – Դե՛, պատմի՛ր, բարեկամս, ի՞նչ նորություններ ունես: Ո՞նց ես կյանքդ այստեղ դասավորել:

ԱՐԹՈՒՐ – Նախ մի հատ արի հասկանանք իրավիճակը: Մոռացե՞լ էիր ինձ, նույնիսկ չես էլ փնտրե՞լ, թե՞... Հիմա, որ ես չգտնեի քեզ, այդպես էլ իրարից հեռու, բայց նույն քաղաքում ապրելի՞ս պիտի լինեինք:

ԷԴՈՒԱՐԴ – Գիտեմ, նեղացած ես, բայց դու գիտես ինչքան թանկ ես ինձ համար: Ուղղակի իրոք գլուխս խառն էր, խառն ամեն ինչով:

ԱՐԹՈՒՐ – Տեսնում եմ, որ խառն ես: Ո՞վ էր այդ կինը:

ԷԴՈՒԱՐԴ – Դու էլի քո էշն ես քշում: Ասացի՝ արի չխոսենք այդ մասին, կլինի՞:

ԱՐԹՈՒՐ – Չէ՛, ինչո՞ւ, խոսենք: Դու այնպես բղավեցիր նրա վրա, ասես կայծակը քաշվել է մի կողմ, դու ես նրա գործը երկրի վրա անում, այս ինչ շանթահարում էր կարելի՞ է իմանալ:

ԷԴՈՒԱՐԴ – Ասեցի չէ՛ էլի, պարտադիր պիտի քոնը պնդես, մի՛ փչացրու իմ տրամադրությունը, որը չափազանց բարձրացավ քեզ տեսնելու կապակցությամբ:

Էդոն երկար դիմադրում էր, բայց վերջիվերջո տեղի տվեց. Արթուրի ձեռքից այդքան հեշտ չէր պրծնել: Դրեց ու մանրամասն պատմեց եղածը: Արթուրը հանդարտ լսում էր, չէր ընդհատում, հիշողությունները տարել էին իր մոր մոտ, կարոտել էր նրան, թաքուն

հուզմունք կար, չէր արտահայտում, բայց այն կար: Նա համբերատար սպասում էր, թե երբ է իրեն խոսքը փոխանցելու: Այդ պահը վերջապես եկավ, բայց նա չշտապեց: Դանդաղ մոտեցավ բուխարուն, հանեց խրցով դրամներ գրպանից ու նետեց կրակի մեջ:

ԱՐԹՈՒՐ – Ո՞ւմ են պետք այս փողերը, երբ նրանք չկային այն ժամանակ, երբ ես դրանցով կարող էի փրկել մորս: Ես ամեն ինչ կտայի, որ նա մի վայրկյան ավել ապրեր, մի բաժակ ջուր ավել ուզեր ինձանից: Իսկ դո՞ւ: Հիմա դու ի՞նչ ես անում: Զղջալու ես, շատ ես զղջալու: Եթե ունես գոնե մի քիչ արդարացնելու տեղ քո ծնողին, ապա պիտի դա անես: Երբ կկորցնես նրան, նոր այդ ժամանակ կհասկանաս, թե ում ունեիր:

ԷԴՈՒԱՐԴ – Բայց նա ինձ ծնող չի եղել:

ԱՐԹՈՒՐ – Իսկ ո՞նց ես դա որոշում:

ԷԴՈՒԱՐԴ – Նա ինձ լքել է:

ԱՐԹՈՒՐ – Իսկ այն որ դիմացս կանգնած ես, վերջին հաշվով դա ո՞ւմ շնորհքն է:

ԷԴՈՒԱՐԴ – Շատերի:

ԱՐԹՈՒՐ – Ո՛չ, հարազա՛տս, Նրա: Էդ շատերը չէին լինի, եթե ի սկզբանե Նա չլիներ: Նրա տան տեղը գիտե՞ս:

ԷԴՈՒԱՐԴ – Հա:

ԱՐԹՈՒՐ – Գնա՛ նրա մոտ ու խոսի՛ր, շատ չուշացնես:

ԷԴՈՒԱՐԴ – Չեմ ուզում:

ԱՐԹՈՒՐ – Դե էլ մի երեխայություն արա, հա՛, հավեսդ չունեմ:

ԷԴՈՒԱՐԴ – Ես նրան պետք չէի:

ԱՐԹՈՒՐ – Դա քեզ է թվում, թե պետք չէիր: Քո կարծիքով հայրենիքդ ինչո՞ւ ես այսքան շատ սիրում:

ԷԴՈՒԱՐԴ – Որովհետև սիրում եմ, ասենք ի՞նչ ապուշ հարց ես տալիս: Մեկը մյուսի հետ ի՞նչ կապ ունի:

ԱՐԹՈՒՐ – Կապ ունի, որ ասում եմ: Դու նրա տղան ես, չէր կարող այլ կերպ լինել: Որ խորանաս կհասկանաս, որ դու էլ նրա փոխարեն նույն բանը կանեիր: Քեզ համար էլ հայրենիքից թանկ ոչինչ չկա:

ԷԴՈՒԱՐԴ – Դե հա, այդպես է:

ԱՐԹՈՒՐ – Այդ դեպքում ինչո՞ւ ես նրան մեղադրում: Ինչո՞ւ ես նրա արարքներում քեզ առաջին պլան չմղելու հանգամանքը քննադատում, երբ լավ գիտես, որ անգամ քեզ համար դու առաջին պլանում չես: Ես ինչքան հասկացա քո պատմածներից խաղաղ պայմաններում նա այդպես չէր վարվի, իսկ պատերազմն իր օրենքներն ունի: Դու ուղղակի չես ուզում խորանալ հանգամանքների մեջ: Իսկական մերօրյա հայի կերպարի մեջ ես. էմոցիաներին տուրք տալով՝ մի բան բետոնել ես գլխումդ ու վերջ: Արցախում, որ երեխաներին ուրախ խաղալիս էիր տեսնում, մի պահ քեզ հարց տվե՞լ ես՝ «ո՞ւմ շնորհիվ եմ ես դա տեսնում»: Մորդ ու նրա նմանների: Քո մայրը չի տրվել վայելքների, կյանքը չէր վայելում այն ժամանակ, երբ դու ուրիշին էիր մայր կոչում: Նա կռիվ էր տալիս մի բանի համար, որի համար եթե պայքարող չգտնվեր, ճակատագիր կարժենար մեզ՝ բոլորիս համար, չէ՞ որ պատերազմ էր, ինչո՞ւ դա հաշվի չես առնում:

ԷԴՈՒԱՐԴ – Պատերազմից հետո կարող էր և փորձել գտնել:

ԱՐԹՈՒՐ – Իսկ դու ի՞նչ գիտես փորձել է, թե չէ կամ եթե չի փորձել, ի՞նչ պատճառով չի փորձել: Գիտե՞ս:

ԷԴՈՒԱՐԴ – Ո՛չ:

ԱՐԹՈՒՐ – Բա ո՞վ պիտի իմանա: Ինչո՞ւ չես թողնում, որ խոսի: Տեսնում ես՝ տանջվում է: Անտարբեր մայրը այդպես իրեն չէր կոտորի, մանավանդ ասում ես՝ քանի-քանի անգամ է եկել քեզ մոտ, ու դու նրան այսօրվա նման վռնդել ես: Է՛ հետո, գո՞հ ես քեզնից: Իսկ հայրական կողմիդ մասին ի՞նչ կասես: Չե՞ս մտածել երբևէ՝ ինչ կլիներ քեզ հետ, եթե, օրինակ, այս կողմում չէ, այլ նրանց կողմում հայտնվեիր:

ԷԴՈՒԱՐԴ – Այդ դեպքում մտածելու ժամանակ էլ չէի ունենա, որովհետև ուղղակի չէի լինի: Նրանց մոտ եթե հայտնվեի, ապա կհայտնվեի որպես հայ երեխա: Իսկ նման դեպքերում շարունակությունը լավագույն դեպքում... լավ, անցանք:

Այդ գիշեր Էդոն արթուն լուսացրեց: Առավոտյան շուտ դուրս թռավ տնից. շտապում էր մոր մոտ: Նա տանը չէր: Հարևաններին

հարցուփորձ արեց և հանդիպեց մեկին նրանց մեջ, ով առավոտյան պատահաբար տեսել էր Արմինեին, հարցրել էր, թե ուր է գնում:

***

Եռաբլուր՝ սրբատեղի յուրաքանչյուր հայի համար: Վայր, որտեղ հանգչում են ռազմի դաշտում հայրենիքին ամենաթանկը՝ կյանքը նվիրած հայորդիներ: Արևն այստեղ այլ կերպ է շողում: Այդ շողերից արձակվող ջերմությունն ուրիշ է, հոգևոր է, մաքրամաքուր ու ջինջ՝ գերբնական հանգստությամբ տոգորված: Մեղմ քամին շշուկով իր օրորն էր երգում: Այդ երգն ընդհատող էր հայտնվել: Մի խիստ անհանգիստ ու հուսահատության անխոնջ գերին դարձած հոգի, որ դանդաղ, անկանոն ու ճմրթված քայլերով կամաց-կամաց մոտենում էր անկոչ հյուրի պես ու խախտում շրջակայքի անդորրը: Նա կենդանի հերոսներից մեկն էր, ով հեչ գոհ չէր, որ իրեն բախտ էր վիճակվել կենդանի մնալ պատերազմի դժնդակ օրերին: Նա երնեկ էր տալիս այդ նույն մղձավանջին, քանի որ հիմա ոչ ֆիզիկապես, այլ հոգեպես հայտնվել էր մեկ այլ մղձավանջում, ուր ոչ թե մարմինդ է ոռնում թշնամու խփած գնդակից արնահոսող վերքի ցավից, այլ հոգիդ է գոռում անճարությունից: Թվում է, թե ելք չկա: Ելքը միայն մահն է, սակայն ոչ մի երաշխիք չկա, որ իրականում դա ելք է: Դա ուղղակի ելքի փորձ է, որ չգիտես՝ քեզ ուր կտանի, միայն ուզում ես, որ արագ տանի: Այդ քայլի մեջ մուրում ես փրկություն: Արցունքոտ ու հոգու խռովքով լեցուն աչքերը նա հառեց դեպի կապույտ երկինք ու առանց կտրոնով հերթագրման զրույց սկսեց Աստծո հետ: Հաստատակամ հայացքը երկնքից չկտրելով՝ ասես պահանջեր, որ Աստված աշխարհի 7.5 մլրդ մարդկանց թողնի մի կողմ ու միայն իրեն լսի... գոնե հիմա լսի.

– Ինձ հետ վերադարձրիր կյանք, բայց մոռացար ուժս ետ տալ: Հիմա այդ անցյալի ուժը չկա իմ մեջ, որ կարողանամ հաղթահարել իմ ներկան, որն ավելի շատ է խոցում, քան անցյալը: Ինչո՞ւ վերադարձրիր, եթե պիտի արժանացնեիր որդուս ատելությանը, ավելի դաժան չէի՞ր կարող վարվել ինձ հետ: Էլ չեմ կարող... էլ ուժ չունեմ:

Չկարողացա այդպես էլ կյանքը սիրել, ավելի ճիշտ այն ինձ չսիրեց: Երևի ես ինչ-որ բան սխալ եմ ընկալում: Երևի իմ ճիշտն այս կյանքում սխալ է, բայց դու ես ինձ այդպիսին ստեղծել, որ ի՞նչ հասկացնես ինձ կամ ինձնով՝ մնացածին: Ո՞վ ո՞ւմ կհաղթի այս պարագայում՝ ես մարդկա՞նց, թե՞ մարդիկ ինձ: Իմ դեպքում ամենահարազատ մարդն ինձ հաղթեց: Միայն նրա հարվածից ես ուշքի չեկա: Պարտվել եմ, այո, պարտվել եմ: Ես ազնիվ եմ միշտ եղել ինքս ինձ հետ: Դրա համար բացահայտ հայտարարում եմ՝ պարտվել եմ, որովհետև իրականում պարտվելն ամոթ չէ, ամոթ է այն չխոստովանելը: Ես այլևս ուժ չունեմ այս աշխարհում ապրելու, այն սին է ու դաժան: Չնայած անցյալում տարած արհավիրքներին, ես այն ժամանակ ամուր էի, կոտրված չէի: Չեմ հասկանում, թե դա ոնց է հնարավոր, բայց այդպես է եղել: Ի՞նչ է որդիս ինձ հետ անում, հասկանո՞ւմ է արդյոք: Երևի իրավունք ունի, ես նրա կյանքով չեմ ապրել, ինքն էլ իմ, դրա համար այսքան օտարացած ենք իրար: Հիմա, երբ որդուս գրկելու ցանկություն ունեմ, գիտեմ նա որտեղ է, բայց չեմ կարող դա անել, ապրել էլ չեմ ուզում: Ինչո՞ւ վերադարձրիր...

Հանում է ատրճանակը ու պահում այն իր գլխին: Այդ պահին հեռվից լսվում են բղավոցներ: Ինչ-որ մեկը շնչակտուր վազում էր դեպի իր կողմ: Արմինեն հոգու խորքում անսահման մեծ ցանկություն ուներ պատկերացնելու այդ մեկի կերպարանքը: Նա միայն այդ մեկին էր սպասում ու չէր սխալվում: Մոռացության տալով նախկին վերաբերմունքը մոր նկատմամբ՝ հովազի արագության հետ մրցակցող արագությամբ սլանում էր առաջ: Վազում էր օդի վրայով, ասես այդ օդն էլ էր իրեն օգնում ավելի արագ վազել: Ընթացքում շունչը մի կերպ տեղը բերելով՝ մի քանի անգամ բղավում էր նույն բառը: Մի բառ ընդամենը՝ յուրաքանչյուր մոր կյանքի ամենասպասված բառը: Բառ, որ կարող էր նորից կյանք տալ Արմինեին և փաստացի տվեց՝ «Մաաաաաա՜մմմ», «Մաաաաա՜մմմ»: Վերջին պահին Էդուարդը հասցրեց մի կողմ շպրտել ատրճանակը մոր ձեռքից ու ամուր գրկեց նրան: Անդադար կրկնում էր. «Մա՛մ, մի՛ արա, ինձ մենակ մի՛ թող: Դու ինձ պետք ես... Ես սիրում եմ քեզ»:

Երջանկություն: Երջանկություն կար նրանց սրտում: Մայր և որդի, նրանցից և ոչ մեկը այդչափ չէր պատկերացնում, որ ունենալով ամեն ինչ, չունեին ոչինչ, որովհետև չունեին իրար: Սակայն դա այն օրն էր, երբ այդ օրվանից սկսած մեկուկես ամսվա ընթացքում շատերս կորցրեցինք շատերիս: Դա այն օրն էր, երբ բոլորս արթնացանք՝ մեկ հեշթեգ մեր հեռախոսներում թնդացնելով: Մեկ համոզմունք ունեինք՝ հաղթելու ենք: Բայց ո՞ւմ պիտի հաղթեինք՝ թշնամո՞ւն, թե՞ ինքներս մեզ: Երկու տասնամյակից ավել գիտակցություններս անջատած, հաղթողի դերի մեջ հարմարավետորեն տեղավորված, մոռացել էինք ժամանակի մասին: Մոռացել էինք, որ այն գնում է, այն կանգ չի առնում մեր ուզած կետում: Սրսկել, անզգայացրել էին մեզ, իսկ մենք ուրախ էինք այդ առիթով, որ ամեն ինչ լավ է ու այդպես էլ պետք է շարունակվի:

Եթե ուզում ես երկիրդ, որի մի մասնիկն ես դու, թշնամուն հաղթի, նախ ինքդ քեզ հաղթիր: Դա միայն մի ձևով կարող ես անել. անտարբեր մի եղիր այն ամենի հանդեպ, ինչ կատարվում է քո շուրջը: Սա զինվորների մատաղ սերնդին չեմ ասում, սա ազգին եմ ասում: 18-20 տարեկան զինվորներին պետք չի ասել: Այդ նրանք մեզ ասացին ու ցույց տվեցին ինչ պետք էր: Ցույց տվեցին, որ անկախ հանգամանքներից մենք պայքարող ազգ ենք: Մահն ո՞վ է իրենց դեմ: Իրենք մահին կչափալախեն, կտրորեն ու կանցնեն: Այդպես էլ արեցին: Մահը սարսափած փախչում էր նրանցից: Այո՛, նրանք հաղթեցին մահին, ոչ թե բազմագլուխ հրեշ թշնամուն, այլ մահին... անմահացան: Տեսնելով դժոխք երկրի վրա՝ անցան դրա միջով, շատերը ողջ մնացին... մի մասը չվերադարձավ: Անմահացան՝ տանելով իրենց հետ իրենց երազանքները հեռու: Վերևում հանգիստ է, վերևում խաղաղ է: Նրանք խաղաղություն գտան երկնքում և խաղաղություն բերեցին մեր երկրին: Դա արեցին մեզ համար, նրանք պայքարեցին, որ մենք ուժեղ լինենք, իսկ մե՞նք... Մենք ավելի թույլ ենք մեզ պահում: Մեզ գցել ենք հուսալքության գիրկը, այն դեպքում, որ հենց հանուն մեր հերոս նահատակների պիտի հիմա ամեն վայրկյանը ձեռքներս քշտած աշխատենք յուրաքանչյուրս

մեր տեղում տնտեսությամբ ուժեղ հայրենիք կառուցելու համար, որ իրենք զգան՝ իրենց անձնազոհությունն իզուր չէր: Հանեք այդ հուսահատությունը ձեր միջից: Կապ չունի ինչ կետում ենք հիմա: Կապ ունի, թե դեպի որ կետն ենք ուզում գնալ: Մենք, մեզ այդքան հեռու հետ շպրտած կետը պատվով ընդունելով, պիտի վազենք ժամանակից արագ, ժամանակի վրայով... ու կվազենք: Այդպես օրերից մի օր կարթնանանք ու կտեսնենք, որ մեր երկրում ուսուցիչը մի տարվա խնայողությունների հաշվին Փարիզում մի շաբաթ հանգստի համար հինգաստղանի հյուրանոց է ամրագրում, որ մեր երկրի բժշկին Լոնդոնից խնդրում են մի երկու օրով ժամանակ գտնի գնա այնտեղ փորձի փոխանակման, որ էլ պետք չլինի «սաղ» կյանք տաքսի քշել, որովհետև իրոք Մոսկվայում «նենց» գործեր արած կլինես, որի համար պարտական կլինես հայրենիքումդ ստացած կրթությանը, ոչ թե դիպլոմներին: Այդ դեպքում պետք չի լինելու մեզ վրեժը, մենք այն հանած կլինենք:

Անցել էր երկու ամիս դաժանագույն ու անմարդկային պատերազմի ավարտից: Ցուրտ ձմեռ էր: Եռաբլուրում պատկերը սպանիչ էր... ցավ էր ու կսկիծ... լաց... սրտի մորմոք... լույսեր, որ հանգչեցին հանուն բոլորիս: Էդուարդն ու Արմինեն այնտեղ էին: Քայլում էին ու արցունքները դանդաղ հոսում էին: Արմինեն մի պահ կանգ առավ ու էլ չուզեց քայլել: Ինքն առջևում էր, Էդուարդը ետևից էր գալիս: Նա էլ կանգնեց: Արմինեի աչքերը շարունակում էին մի կետի նայել ու այդ կետը չէին նկատում, որովհետև նկատելու համար չէին նայում:

– Մա՛մ, մենք պարտվե՞լ ենք:

– Մենք միայն մի դեպքում պարտված կլինենք:

– Ո՞ր դեպքում:

– Երբ դաժանությամբ նմանվենք նրանց:

– Դե դա չի լինի:

– Ուրեմն մենք երբեք նրանց չենք կարող պարտվել:

# Բովանդակություն


Նախաբան ........ 3-4
Գլուխ 1 ........ 5-21
Գլուխ 2 ........ 22-49
Գլուխ 3 ........ 50-71
Գլուխ 4 ........ 72-89
Գլուխ 5 ........ 90-111
Գլուխ 6 ........ 112-128
Գլուխ 7 ........ 129-141
Գլուխ 8 ........ 142-152
Գլուխ 9 ........ 153-166

ԱՆԻ ՄԻՐԶՈՅԱՆ

# ՀԱՅԸ

Վեպ

Էջադրող՝ Նարինե Հովհաննիսյան

Կազմը՝ Սեաննա Գրիգորյանի

Անտարես

«ԱՆՏԱՐԵՍ» հրատարակչատուն
Երևան 0009, Մաշտոցի 50ա/1
Հեռ.՝ +(374) 58 10 59, 58 76 69
antares@antares.am
www.antares.am



9 789939 767017

Անտարես